Հ. Մ. ԵՂԱՇՅԱՆ

ԻՐԱՎԱԿԱՆ ԳԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԱՂՈՒԹԱՍՏԱՆԱՅԻ ՊԱՐԱՊԱՏԱՆԻՆ ՎԱՌԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆ

ZUUZ
ԳԻՐՔԻՆ ԱՆՈՒՆԸ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

Г. М. ЕГАНЯН

ИРАНСКАЯ ИСТОРИОГРАФИЯ ОКОЛОНИАЛЬНОЙ ПОЛИТИКЕ ИМПЕРИАЛИСТИЧЕСКИХ ДЕРЖАВ В ИРАНЕ

(ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1980

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա 64091

Հ. Մ. ԵԳԱՆՅԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՈՒԹԱՏԻՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)

Ի 52-80

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՒՆՂԱՄԵՆՅԱԼ ԳՐԵԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԵՅԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1980

9(ՈՒ)32(Իրան) ինդեքս ԳՄԴ 63.3(0)53
Ե 13

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների
դոկտոր Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Գիրքը հրատարակության է երաշխավորել գրախոս,
պատմական գիտությունների դոկտոր Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆԸ

Եգանյան, Հ. Մ.
Ե 13 *Իրանական պատմագրությունը Իրանում իմպերիալիստական տերությունների գաղութատիրական քաղաքականության մասին։ (XIX դ. երկրորդ կես) /Պատ. խմբ. Վ. Ա. Բայբուրդյան.—Եր.։ ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980.—214 էջ.*

Աշխատության մեջ առաջին անգամ շրջանառության մեջ են դրված իրանական պատմագրության երկրի կիսագաղութի վերածմանը վերաբերող նյութերը, որոնք թույլ են տալիս ամբողջապես և բազմակողմանիորեն լուսաբանել հետազոտվող պրոբլեմը։

Աշխատությունը նախատեսված է Իրանի նոր պատմությունն ուսումնասիրողների և գիտական լայն շրջանակների համար։

Ե $\frac{0504000000}{703(02)-80}$ 22—79

9(ՈՒ)32(Իրան)
ԳՄԴ63.3(0)53

© *Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

XIX դարի երկրորդ կեսին իմպերիալիստական տերությունների տնտեսական և քաղաքական ազդեցության ուժեղացումն Իրանում և երկրի վերածումը կիսագաղութի չէր կարող իր վրա չհրավիրել մինչևիսկ ֆեոդալական կամ բուրժուական պատմագրության առանձին ներկայացուցիչների ուշադրությունը։

Ղաջարական դինաստիայի թագավորության ժամանակաշրջանի սկզբնաղբյուրներից առաջին հերթին պետք է նշել «Ղաջարների պատմությունը», որը Միրզա Մոհամադ Թաղի Սեփեհրը Քաշանիի (Լեսան օլ Մուլք) «Նասխ էթ թավարիխի» հատորներից է[1]։ Հիշատակելի է նաև Նասր էդ Դին շահի վեզիր Մոհամադ Հասան խան Սանի էդ Դուլեի «Մոնթազեմե Նասերի» աշխատությունը և հատկապես նրա երկրորդ և երրորդ հատորները՝ «Մերաթ օլ բալադանե Նասերին» և «Ալ Մասեր վա այ ասարը»[2]։

«Մոնթազեմե Նասերին» փաստորեն «Նասեխ էթ թավարիխի» համառոտ վերաշարադրանքն է՝ ավելացրած ժամանակի իրադարձությունների նկարագրությունը։ Սանի էդ Դուլեն, որ կյանքի վերջում ստացավ «էթեմադ էս Սալթանե» տիտղոսը, ղաջարական դինաստիայի բարձր աստիճանավորներից էր և մեծ պաշտոններ է զբաղեցրել թե՛ երկրի ներսում և թե՛ արտասահմանում։ Բնականաբար, լավատեղյակ էր Իրանի ներքին և արտաքին քաղաքականությանը,

---

[1] میرزا تقی سپهر کاشانی ملقب بلسان الملك، ناسخ التواریخ «تاریخ قاجاریه»

[2] محمد حسن‌خان صنیع‌الدوله اعتماد السلطنه منتظم ناصری مراة البلدان ناصری، الماثر و الاثار

ղաջարական շահերի ղեկավարման մեթոդներին, ինչպես և այդ ժամանակաշրջանում երկրում առաջացած քաղաքական տարբեր հոսանքներին և նոր գաղափարներին: Փաստերկան, որ նա մոտ հարաբերության մեջ է եղել պանիսլամիզմի հիմնադիր Ջամալ էդ Դին Աֆղանիի հետ, որը մեծ ատելությամբ էր լցված Արևելքի երկրներն ստրկացնող իմպերիալիստական պետությունների հանդեպ:

Էթեմադ էս Սալթանեից մնացել է նաև նրա «Խաբնամեն»[3], որի մեջ ակնհայտ երևում է ղաջարական շահերի ինքնակալությունը և ժողովրդի նկատմամբ նրանց ծայրահեղ անտարբերությունը: Կարելի է հիշել նաև Ռեզա Ղուլի խան Հեդայաթի «Ռոզաթ օլ Սաֆայ Նասերի» աշխատությունը[4], որի հատկապես վերջին գլուխը հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Իրանի XIX դարի վերջի սոցիալ-տնտեսական կյանքի մասին:

Հայտնի են նաև Միրզա Ջաֆար խան Հաղայեղ Նեգարի «Հաղայեղ օլ ախբարե Նասերին»[5] և Հաջ Միրզա Էբրահիմ խան Աշթիանի Սադիղ օլ Մամալեքի 1324-ին (1906 թ.) Թեհրանում լույս տեսած «Մոնթախեբ օլ թավարիխե Մոզաֆարի»[6] գիրքը, որն ընդգրկում է ղաջարների ավելի ուշ շրջանի պատմությունը:

Այս մի քանի հեղինակների պաշտոնական հաղորդումները, որոնք հիմնականում քաղաքական իրադարձությունների, շահերի կյանքի և գործունեության, հատկապես նրանց ճանապարհորդությունների նկարագրություններն են միայն, երկրի սոցիալ-տնտեսական վիճակի կամ օտարերկրյա գաղութարարների՝ Իրանում վարած քաղաքականության մասին շափազանց աղքատիկ տեղեկություններ են պարունակում և այդ իսկ պատճառով առանձին արժեք չեն ներկայացնում և չեն կարող բավարար սկզբնաղբյուր հանդիսանալ XIX

---

3 اسرار انحطاط ایران یا خواب‌نامه مرحوم اعتمادالسلطنه

4 رضاقلی‌خان هدایت روضته‌الصفای ناصری

5 میرزا جعفرخان حقایق‌نگار حقایق الاخبار ناصری

6 حاج میرزا ابراهیم‌خان آشتیانی صدیق الممالك منتخب التواریخ مظفری

դարի Իրանի պատմության տարբեր հարցերի ուսումնասիրության համար։ Այս հանգամանքը նկատել են իրենք իսկ՝ պարսիկ հեղինակները, որոնք, հետագայում զաջարական շրջանի պատմությունն ուսումնասիրելիս, հանդիպել են բազմաթիվ դժվարությունների։

Այսպես օրինակ. Ալիասղար Շամիմը, 1964 թ. Թեհրանում հրատարակած «Իրանը Զաջարների թագավորության շրջանում» աշխատության մեջ, նշում է, որ չնայած այդ շրջանի վերաբերյալ տեղացի և օտարերկրյա հեղինակների հարյուրավոր հոդվածների ու աշխատությունների առկայությանը և զաջարական շրջանի դեռևս կենդանի գործիչներից ու քաղաքագետներից հարուստ նյութ ստանալու հնարավորությանը, Իրանի նոր ժամանակների և գլխավորապես զաջարական շրջանի պատմությունը գիտական մեթոդներով և անկողմնակալ շարադրելը բավական դժվար է։ Քանի որ ուսումնասիրողը բավարար նյութ ձեռք բերելու համար ստիպված է ընթերցել այդ շրջանի պատմագիրների՝ Ռեզա Զուլի խան Հեդայաթի, Լեսան օլ Մուլք Սեփեհրի և Էթեմադ էս Սալթանեի պես հեղինակների լայնածավալ գրքերը և նրանց ճոռոմ ու բծնանքով լի նախադասություններից աննշան նյութեր քաղել պատմական կարևորագույն խնդիրների և իրադարձությունների մասին, մի բան, որ ըստ Շամիմի միանգամայն անհնար է և ապարդյուն[7]։

Մեկ այլ առիթով, չհերքելով Զաջարների օրոք պատմագրության որոշ չափով զարգացում ապրելու փաստը, Շամիմը միաժամանակ ավելացնում է, որ այն (այդ շրջանի պատմագրությունը—Հ. Ե.) շարունակում էր հին ավանդությունները։ Այսինքն՝ ժամանակագրական կարգով արձանագրվում էին դեպքերն ու իրադարձությունները և նրանցում, որպես կանոն, անտեսվում էր պատմական իրադարձությունների տրամաբանական կապը և չէին բացահայտվում դրանց պատճառներն ու հանգամանքները։

Այդ աշխատություններն, անշուշտ, դեպքերի և իրադարձությունների գրանցման, ինչպես և պարզ ու մատչելի ոճի տեսակետից, շահեկանորեն տարբերվում են Սաֆավիների և

---

[7] علی‌اصغر شمیم ایران در دوره سلطنت قاجار، تهران ۱۳۴۲ صفحه الف

Աֆշարների ժամանակաշրջանի պատմական գործերից։ Սակայն ղաջարական պատմագրության ամենաուշագրավ կողմն այնուամենայնիվ այն է, որ այդ շրջանի պատմիչները, ինչպես օրինակ՝ Լեսան օլ Մուլքը, Ռեզա Ղուլի խան Հեդայաթը, Մոհամադ Հասան խան Սանի էդ Դուլեն (էթեմադ էս Սալթանեն) և մյուսները, հենց իրենք պալատականներ էին, իրենց ժամանակի քաղաքական գործիչներ, և սերը դեպի պաշտոնն ու շուքը, սարսափը ինքնակալ թագավորի զայրույթից, նրանց ստիպում էր կեղծել իրականությունը և քողարկել անթույլատրելի արարքներն ու ոճիրները։ Այդ պատմիչները վնասներից զերծ մնալու և օգուտներ քաղելու համար ջանում էին քծնել և շողոքորթել ժամանակի տիրակալին։ Ղաջարական պատմագրության ողջ էությունը բացահայտելով հանդերձ, Շամիմն, ի վերջո, հակասում է ինքն իրեն, հայտարարելով, թե այնուամենայնիվ չի կարելի ժխտել այն իրողությունը, որ ղաջարական շրջանի պատմիչներն ընդհանուր առմամբ իրենց գրքերով երկրի պատմությանը մեծ ծառայություններ են մատուցել։ Ավելին, նա նշում է, որ այդ շրջանի որոշ պատմիչներ, ինչպես օրինակ՝ Միրզա Ջաֆար Հաղայեղ Նեգարը, դեպքերն ու իրադարձություններն արձանագրելիս կարողացել են ինչ-որ չափով անկողմնակալություն պահպանել։ Այդ միտքը զարգացնելով, Շամիմն ընկնում է ծայրահեղության մեջ և այն կարծիքն է հայտնում, թե իբրև ղաջարական որոշ «շնորհալի» արքայազներ, ինչպես Ջահանգիր Միրզան և Սոլթան Մասուդ Զել էս Սոլթանը իրենց գրքերում «բացահայտել են բազմաթիվ ճշմարտություններ, որոնք քողարկվել են մեծարող և քծնող պատմիչների կողմից»[8]։

---

[8] Նույն տեղում, էջ 315։

Շամիմը նշում է, որ գիտության և գրականության (գործիչների աշխատությունների հավաքման և թարգմանության գործը ղաջարների օրոք որոշ չափով զարգացավ։ Նասր էդ Դին շահը ինքն անձամբ հատուկ ուշադրություն էր դարձնում այդ հարցին։ Նրա հանձնարարությամբ վեց գիտնականներ և գրողներ կազմեցին գիտության և գրականության գործիչների կենսագրությունները, որոնք առանձին գրքերով «Նամեե Դանեշվարան» ընդհանուր վերնագրով լույս տեսան Թեհրանում, առաջին հատորը՝ 1296 թ. (1878) և երկրորդ՝ 1312 (1894)։ Այդ գործն այստեղ ընդհատվեց ու այդպես էլ անավարտ մնաց։ Տե՛ս Շամիմ, էջ 317։

XX դարի սկզբներին, հատկապես 1905—1911 թթ. իրանական հեղափոխության տարիներին, վերելք ապրեց նաև իրանական պատմագրությունը: Սակայն, հասկանալիորեն, այդ շրջանի պատմիչները հիմնականում զբաղվում էին հենց հեղափոխության պատմությամբ, երկրում տեղի ունեցող բուռն իրադարձությունների նկարագրությամբ ու մեկնաբանությամբ, ուստի նրանց գործերն ևս շատ քիչ նյութ են տալիս XIX դարի երկրորդ կեսի պատմության մասին: Ինչ վերաբերում է 1925—1941 թթ., այսինքն՝ Ռեզա շահի դիկտատուրայի ժամանակաշրջանին, ապա այդ շրջանի պատմագրությունը կրում է պալատական պատմագրության բնույթ, որը հիմնականում զբաղված էր շահի մեծարմամբ և, եթե որևէ տեղեկություն էր հաղորդում զաջարների թագավորության պատմության, հատկապես XIX դարի երկրորդ կեսի վերաբերյալ, ապա դա կատարվում էր նոր դինաստիան նախորդին հակադրելու և այն գովերգելու ու փառաբանելու նպատակով:

Իրանական պատմագրությունը զարգացման նոր փուլ թևակոխեց երկրորդ համաշխարհային պատերազմի և նրանից հետո ընկած ժամանակաշրջանում, երբ երկրում ծավալվեց ազգային-ազատագրական հզոր շարժում: Հատկապես 1949—1953 թթ. անգլիական նավթային կոնցեսիան բեկանելու և Իրանի նավթային հարստություններն ազգայնացնելու համար մղված համաժողովրդական պայքարի տարիներին պարսիկ հեղինակները հրատարակում են բազմաթիվ աշխատություններ, որոնց մեջ առաջին անգամ շրջանառության մեջ դրվող արխիվային փաստաթղթերի հիման վրա ուսումնասիրվում է Իրանի նկատմամբ իմպերիալիստական երկրների, գլխավորապես անգլիական իմպերիալիստների, վարած քաղաքականության ամբողջ պատմությունը և մերկացվում նրանց գաղութարարական քաղաքականությունն ու գործունեությունը:

Դա իրանական պատմագրության մեջ մի բացառիկ շրջան է, որն էականորեն տարբերվում է թե՛ իր նախորդ և թե՛ հաջորդ շրջանների պատմագրությունից:

Չնայած այդ աշխատություններում ուսումնասիրվում

է Իրանի նկատմամբ իմպերիալիստական պետությունների քաղաքականությունը, սակայն շեշտն առաջին հերթին դրվում է անգլիական գաղութարարների քաղաքականության վրա։ Քանի որ XIX դարից եկող այդ քաղաքականությունն էր միայն, որ շարունակվեց մինչև XX դարի 50-ական թվականները*։

Անհրաժեշտ է հիշատակել, որ պարսիկ որոշ հեղինակներ, ուսումնասիրելով կոնցեսիաների, օտարերկրյա բանկերի, պարտքերի, փոխառությունների և իմպերիալիստական երկրների ներթափանցման հետ կապված բազմաթիվ այլ հարցեր, ինչպես կերևա մեր հետագա մեջբերումներից և հղումներից, տվել են բավական արժեքավոր փաստական նյութ, որոնք, սակայն, գիտականորեն չեն վերլուծվել։

Իմպերիալիստական տերությունների ներթափանցման և երկիրը կիսագաղութի վերածվելու պատմության ուսումնասիրման անհրաժեշտությունն ակնհայտ էր բոլոր նրանց համար, ովքեր ձգտում էին ապահովել իրենց հայրենիքի անկախությունն ու ամբողջականությունը։ Այդ տեսակետից բնորոշ օրինակ կարող է ծառայել Էբրահիմ Թեյմուրիի հարցադրումը իր «Անտեղյակության դարաշրջանը կամ կոնցեսիաների պատմությունն Իրանում» աշխատության առաջաբանում։

Թեյմուրին նշում է, որ վերջին տարիներին (XX դարի 50-ական թվականներին—Հ. Ե.), երբ երկրի ներքին գործերին օտարների միջամտությանը վերջ տալու ուղղությամբ իրանական ժողովրդի պայքարը նոր փուլ է մտել, հաճախ է խոսվում իրանական ժողովրդի շահագործման և նրա հարյուր հիսունամյա ստրկության մասին։

Իր աշխատությունը համարելով Իրանում իրենց տիրապետությունը հաստատելու և երկրի բնական հարստությունը-

---

* Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո, երիտասարդ սովետական իշխանությունը ոչ միայն հրաժարվում է ցարական բոլոր նվաճումներից, այլև Իրանի նկատմամբ վարում է բարիդրացիական քաղաքականություն և նյութական ու բարոյական օգնություն է ցուցաբերում Իրանի ժողովրդին՝ վերջնականապես թոթափելու գաղութատիրական լուծը։

ները յուրացնելու համար գաղութատիրական տերությունների պայքարի պատմությունից մի տեսարանի վերարտադրություն, Թեյմուրին հանգում է այն եզրակացության, որ իմպերիալիստական տերությունները, չարաշահելով Իրանի իշխող շրջանների տհասությունը, անտեղյակությունը և ագահությունը անփոխհատուցելի վնասներ են հասցրել երկրի անկախությանը: Հեղինակը իրանական ժողովրդին կոչ է անում քաղաքական և տնտեսական դավադրությունների ու չարամտությունների զոհ չդառնալ[9]:

XIX դարի վերջին քառորդի իմպերիալիստական տերությունների վարած քաղաքականության հետևանքով Իրանը վերածվում է կիսագաղութի և ընկնում խորը ճգնաժամի մեջ: Համարյա ամբողջովին հյուծվում են նրա արտադրողական ուժերը, Իրան ներթափանցած օտարերկրյա կապիտալը, օգտագործելով երկրի սոցիալական և քաղաքական ինստիտուտները, արգելակում է ազգային տնտեսության զարգացումը: Իսկ մյուս կողմից, Իրանի տնտեսական-հասարակական դրության և դասակարգային կառուցվածքի մեջ առաջացած փոփոխություններին Իրանի կառավարության անտարբեր վերաբերմունքն, իր հերթին, ավելի է խորացնում երկրի քաղաքական կյանքում առկա ճգնաժամը:

Իրանի հետամնացության պրոբլեմը և նրա պատճառները գրավել են պարսիկ մի շարք հեղինակների ուշադրությունը, որոնք վերլուծելով երկրի ներքին և արտաքին հարաբերությունների վիճակը, փորձել են ընդհանրացումներ կատարել և գտնել որոշակի օրինաչափություններ: Հիշյալ շրջանին վերաբերող իրանական պատմագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ հեղինակներ արագ թափով զարգացող աշխարհից Իրանի ետ մնալու պատճառը համարում են միայն ներքին գործոնների հետևանք, ոմանք էլ, ընդհակառակը, մեղքը բարդում են Իրանի նկատմամբ իմպերիալիստական երկրների վարած քաղաքականության վրա: Հեղինակների մեկ այլ խումբ, սակայն, փորձում է

---

[9] ابراهیم تیموری عصر بی‌خبری یا تاریخ امتیازات در ایران تهران ۱۳۳۲ صفحه الف

միահյուսել այդ երկու գործոնները և տալ իրավիճակի ամբողջական և իրական պատկերը։

Այսպես, Հասան Հալաջը, «Իրանի քաղաքական իրադարձությունների պատմությունը ժամանակակից դարերում» աշխատության մեջ, խոսելով XIX դարի երկրորդ կեսի մասին, գրում է. «Այդ ժամանակաշրջանում երկրի շենության և ժողովրդի բարեկեցության ուղղությամբ ուշադրության արժանի ոչ մի միջոցառում չի անցկացվում։ Դրա հետևանքով էլ թուլանում է ազգային տնտեսությունը և ցանքատարածություններն այնքան են պակասում, որ հիսուն տարվա ընթացքում մի քանի անգամ սով է տարածվում և միլիոնավոր մարդիկ են ոչնչանում[10]։

Հաբիբ Օլահ Մոխթարին իր «Իրանի զարթոնքի պատմությունը» գրքում անդրադառնալով նույն ժամանակաշրջանի երկրի վիճակին, գրում է, որ բռնապետական իշխանությունը, տիրող անարխիան, պաշտոնյաների դաժանությունն ու ոտնձգությունները, իրավական ինստիտուտների բացակայությունը, կյանքի և ունեցվածքի անապահովությունը, ինչպես նաև կառավարության և հոգևոր ղեկավարների կողմից բազմաթիվ այլ արգելքների ու դժվարությունների հարուցումը, զարգացման, առաջընթացի և լուսավորության ընդարձակման ուղղությամբ այնպիսի օրենքների բացակայությունը, որոնք լուծեին բոլոր հակասությունները և հասարակական կյանքի բախտը մի բուռ անգրագետ պաշտոնյաների քմահաճույքին չհանձնեին,—ահա այս բոլորը ստեղծել էին հեղձուցիչ մթնոլորտ և սպառել էին բոլոր դասակարգերի համբերությունը։ Մյուս կողմից՝ արևմտյան երկրներում գիտության և արդյունաբերության զարգացումը օրեցօր ավելացնում էր համընդհանուր դժգոհությունն Իրանում և մոտեցնում հեղափոխությունը[11]։

Ինչպես հայտնի է, Նասր էդ Դին շահը 1896 թ. պատրաստվում էր մեծ հանդիսավորությամբ տոնել իր թագա-

---

10 حسن حلاج، تاریخ تحولات سیاسی ایران در قرن معاصر، تهران ۱۳۷۷ صفحه ۱۰

11 حبیب‌الله مختاری، تاریخ بیداری ایران، تهران۱۳۲۶، صفحه ۳۵

վորության հիսունամյակը, երբ ատրճանակի գնդակով ըստանվեց Շահ Աբդոլ Ազիմում։ Սպանողը՝ Միրզա Ռեզա Քերմանին, Իրանում իշխող քաղաքական դրության և ժողովրդի իրավազուրկ վիճակի մասին արժեքավոր վկայություններ է թողել, որոնք լայնորեն արձագանքվել են պարսիկ բազմաթիվ պատմաբանների աշխատություններում։

Այդ ժամանակաշրջանի երկրում իշխող քաղաքական դրության խորը վերլուծություն է կատարում նաև Մեհդի Մալեք զադեն։ «Ստրուկների և ծառաների մի ամբոխ,— գրում է նա,— որն իր և երկրի ճակատագրի տնօրինման գործում ոչ կամք ուներ և ոչ էլ ձայն, Իրանի ժողովուրդ էր կոչվում և նրա կյանքն ու ունեցվածքը, հավատալիքներն ու կրոնը... ենթակա էին շահի քմահաճույքներին ու տրամադրությանը։ Այդ մարդիկ... ոչ մի իրավունք չունեին իրենց ճակատագրի մասին կարծիք հայտնելու։

...Այդ հսկայական ապարատի շարժիչը՝ ուժն ու սարսափն էր, իսկ արդյունքը՝ ոտնձգությունը, բռնությունը, կամայականությունն ու քմահաճույքը»[12]։

Անդրադառնալով երկրի առաջընթացի կասեցման գործում Նասր էդ Դին շահի դերին, Մալեք զադեն գրում է. «Ճշմարտություն է, որ Նասր էդ Դին շահը ինքը ժողովրդի զարթոնքի և զարգացման ամենամոլի թշնամին էր, հայտնի՝ որպես գիտության ամենամեծ խոչընդոտ ու արգելք։ Նա ցանկանում էր, որ իր և իր ժառանգների հաջողության, միանձնյա տիրապետության և իր քմահաճույքների համար Իրանի ժողովուրդը տգիտության և արատավոր բարքերի խավարի մեջ խարխափի, գիտության ու արդարության լույսը Իրան չներթափանցի, իրանցիները քաղաքակիրթ աշխարհից կտրված և մեկուսացված մնան»[13]։

Նասր էդ Դին շահը ամենայն դաժանությամբ խեղդում էր ազատագրական պայքարի յուրաքանչյուր տենչ ու բաղձանք, բռնակալության դարավոր լուծը թոթափելու նպատակով ձեռնարկված յուրաքանչյուր փորձ։

---

12 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران ۱۳۲۸ صفحه ٦٥—٦۴

13 Նույն տեղում, էջ 136։

Իրանի քաղաքական ու տնտեսական կյանքում էական փոփոխություններ տեղի չունեցան նաև Նասր էդ Դին շահի հաջորդի՝ Մոզաֆար էդ Դին շահի, ժամանակ։ «Այս թագավորի օրոք,—կարդում ենք «Իրանցիների դարթոնքի պատմությունը» գրքում,—կառավարության մեջ և երկրում որևէ բարեփոխում չի կատարվում, ընդհակառակը՝ մինչև իսկ հոր շրջանի հետ համեմատած դրությունը վատթարանում է. նահանգապետությունները բացահայտ աճուրդի են ենթարկվում, իսկ պաշտոններն ու կոչումները տրվում են կաշառքով, հրովարտակներն ու հրամանները ներքին և օտարերկրյա հնավաճառների միջոցով առուծախի առարկա են դառնում. թագավորական և կառավարական հրովարտակների հեղինակությունն ամբողջովին ընկնում է»[14]։

Իրանական աղբյուրներում շահերի և իշխանավորների նման կամայականությունների նկարագրությունները բազմաթիվ են, որոնց մենք կանդրադառնանք աշխատության ընթացքում։

Պետական ապարատի քայքայման լավագույն ապացույց կարող է ծառայել լայն տարածում գտած կաշառակերությունը, որն ընդգրկում էր երկրի կառավարման բոլոր բնագավառները։ Այդ հարցին անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, որոնցից շատերն այն համարել են երկրի ծանր վիճակի հիմնական նախադրյալներից մեկը։ Էբրահիմ Թեյմուրին, օրինակ, գտնում է, որ կաշառակերությունը, «որ բորոտի բացիլի պես դարեր շարունակ ապականել է այս երկրի կառավարող շրջանները և փլուզել նրանց հիմքերը», մի հիվանդություն է, որի «առաջացման կարևորագույն պատճառը Իրանի կառավարության խայտառակ վարքագիծը պետք է համարել»։ Պատասխանելով արևմտաեվրոպական բուրժուական պատմագրության մեջ հաճախ տեղ գտած այն մեղադրանքին, թե իբր Իրանի ժողովուրդը «կաշառակեր է,» և որ դա նրա բնածին հատկություններից է, Թեյմուրին

---

[14] ناظم الاسلام کرمانی، تاریخ بیداری ایرانیان یا تاریخ مشروح و حقیقتی مشروطیت ایران مجلد اول، تهران صفحه ۱۰۳

գրում է. «Բացատրության կարիք չկա, որ մեր և օտարերկրյա հեղինակները «իրանցի» բառը գործածելով՝ նկատի են ունեցել հենց կառավարող շրջաններին և այն անազնիվ փոքրաթիվ մի խմբին, որը միշտ այդպիսի արարքների միջնորդն ու մասնակիցն է եղել: Մինչդեռ բոլոր այս գործարքներում հենց Իրանի ժողովուրդն էր, որ երբեք հաշվի չէր առնվում»[15]:

Ինչպես նշվեց, պարսիկ որոշ հեղինակներ Իրանի հետամնացության հիմնական պատճառը համարում են իմպերիալիստական տերությունների գաղութատիրական քաղաքականությունը և նրանց միջամտությունն երկրի ներքին գործերին: Օրինակ, արդեն հիշատակված «Իրանը Ղաջարների թագավորության շրջանում» աշխատության հեղինակ Ալի Ասղար Շամիմը, մանրամասն քննարկելով Մոհամեդ շահի և Նասր էդ Դին շահի թագավորության ժամանակաշրջանում (XIX դարի կեսերից մինչև դարի վերջը) երկրի քաղաքական և տնտեսական կյանքում Անգլիայի և ցարական Ռուսաստանի ազդեցության շեշտակի ուժեղացումը, հանգում է այսպիսի եզրակացության. «Կարելի է գիտակցել այն դառն ճշմարտությունը, որ իրանական ժողովրդի հետագա դժբախտության և աղետային վիճակի հիմքը դրվեց Անգլիայի և Ռուսաստանի գաղութատիրական քաղաքականությունն իրականացնող գործակալների ձեռքով: Այդ երկու հզոր պետությունների քաղաքական և տնտեսական մրցակցությունն արգելակեց Իրանում որևէ բարեփոխման իրականացումը կամ առաջադիմական շարժման առաջացումը»[16]:

Նույն միտքն է առաջ քաշում նաև Մեհդի Մալեք զադեն, որն ուսումնասիրելով 1905—11 թթ. իրանական հեղափոխությանը նախորդող ժամանակաշրջանը, գտնում է, որ իմպերիալիստական տերությունների ազդեցությունն Իրանում ամենամեծ արգելքն էր երկրի զարգացման գործում:

---

15 ابراهیم تیموری، عصر بی‌خبری یا تاریخ امتیازات در ایران، تهران ۱۳۳۲، صفحه ۲۶–۲۳

16 علی‌اصغر شمیم، ایران در دوره سلطنت قاجار، تهران ۱۳۴۲، صفحه ۱۸۷

«Իրանը,—գրում է հեղինակը,—երկու դար շարունակ, որպես մի գնդակ, ենթակա էր հզոր տերությունների հարվածներին։ Երբ նա ցանկանում էր հավասարակշռություն հաստատել և չեզոք գիծ անցկացնել, ապա երկու տերություններն էլ դժգոհում էին և այնպիսի պահանջներ էին առաջադրում, որոնց իրականացումը անհնար էր մի խեղճ, անկարող և քայքայված ժողովրդի կողմից։ Երբ նա ստիպված դեմքը դարձնում էր նրանցից մեկի կողմը, ապա ենթարկվում էր մյուս կողմի հանդիմանությանը և հարձակմանը»[17]։

Իրանի հետամնացության գործում իմպերիալիստական տերությունների, առաջին հերթին Անգլիայի, դերի վերլուծությանն ու լուսաբանմանն է անդրադարձել պարսիկ մեկ այլ հեղինակ՝ Մահմուդ Մահմուդը, որն իր բազմահատոր աշխատությունը վերնագրել է՝ «Իրանի և Անգլիայի քաղաքական հարաբերությունների պատմությունը XIX դարում»։ Աշխատության չորրորդ հատորում, արծարծելով ասիական երկրների գաղութացման պատմությունը, Մահմուդը նշում է, որ չնայած Ասիայի անկախ երկրները տեսնում էին, թե ինչպես և ինչ եղանակներով էր իրենց անկախությունը վոհ դառնում մեծ պետությունների գաղութատիրական քաղաքականությանը և Ասիայի լայնածավալ երկրները ինչպիսի հեշտությամբ էին ընկնում օտարների տիրապետության տակ, բայց երբեք չէին մտածում ինչ-որ ձևով բարելավել իրենց վիճակը կամ որևէ ուժ ստեղծել երկիրը պաշտպանելու, ժողովրդի մեջ հայրենասիրական և անկախության ձգտելու զգացմունքները արթնացնելու համար[18]։ Հեղինակը գտնում է, որ «Իրանի դժբախտությունն սկսվեց այն օրվանից, երբ նա իր մուրացիկ ձեռքը երկարեց անգլիացիներին։ Իրանական բանակի հզորությունն այն օրվանից ոչնչացավ, երբ նրա ծախսերի և ռոճիկների ապահովումը կախման մեջ ընկավ անգլիացիներից ստացած գումարներից»[19]։

---

17 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایـران، جلد اول، تهران ۱۳۲۸، صفحه ۴۰

18 محمود محمود، تاریخ روابط سیاسی ایران و انگلیس در قـرن نوزدهم میلادی، تهران ۱۳۲۸، جلد ۴ ص ۱۱۲۱

19 *Նույն տեղում, հատ. 5, էջ 1419։*

Մահմուդ Մահմուդը հետաքրքիր դատողություններ է անում նաև իմպերիալիստական Անգլիայի և ցարական Ռուսաստանի՝ Իրանում վարած քաղաքականության առանձնահատկությունների մասին։

Հեղինակը հիշատակում է այն իրողությունը, որ XIX դարի ընթացքում ցարիզմը բազմիցս խաբվել է անգլիացիներից և նրանց ձեռքին գործիք դարձել։ Այդ բանը պարզորոշ նկատվում է հատկապես Իրանում։ Երբ անգլիացիները ռուսների բարեկամն էին, ապա նրանց մտահղացած բոլոր դաժանություններն Իրանում իրականացվում էին ցարիզմի ձեռքով[20]։ Ի մի բերելով իր եզրակացությունները, Մահմուդը գրում է. «Ես այս ամենը նշում եմ, որպեսզի իմ հայրենակիցները վերհիշեն օտար երկրների քաղաքականության բոլոր այն դժբախտություններն ու տանջանքները, որոնց ենթակա էին Իրանը և իրանցիները XIX դարի ընթացքում, որպեսզի նրանք տեղյակ լինեն երկրի թուլության և դժբախտության պատճառներին և ճանաչեն Իրանի քաղաքական բեմի իսկական դերակատարներին և ուսումնասիրեն, թե ինչո՞ւ և ի՞նչ հանգամանքների հետևանքով Իրանն այսքան թուլացավ և ետ մնաց»[21]։

Անդրադառնալով Իրանի իշխող շրջանների ապիկարության և օտարների ձեռքին գործիք դառնալու հարցին, Մահմուդ Մահմուդը ընդգծում է, որ Իրանի ղեկավարները երկիրը կառավարում էին «արևելյան քաղաքականության սկզբունքներով», սակայն իմպերիալիստական երկրների ներկայացուցիչների դավադրություններն ու ներքին դավաճանների սատանայական արարքները «... հենց յուրայինների ձեռքով կտրեցին Իրանի կյանքի թելը և հիմնական բարեփոխության յուրաքանչյուր քայլ արգելակեցին»[22]։

Հետաքրքիր է, որ խոսելով իմպերիալիստական քաղաքականության գործիք դարձած իրանցի ղեկավարների մասին և շեշտելով, որ «Անգլիայի և Ռուսաստանի կողմից վարժեցված ներքին դավաճանների արարքները Իրանի

---

20 Նույն տեղում, էջ 1462։

21 Նույն տեղում, հատ. 5, էջ 1473։

22 Նույն տեղում, հատ. 6, էջ 1638։

ՀԱՍԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐՍԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ժողովրդի դժբախտության և երկրի ավերման պատճառ դարձան», Մահմուդը միաժամանակ նշում է, որ չնայած բոլոր այդ ղեկավարներն օտար տերությունների գործակալներ էին, սակայն նրանց նկատմամբ նույնպես վստահություն չկար։ Օտարների աչքին նրանք ստորացած էին, եվրոպացիները լավ գիտեին, թե ինչպիսի խորամանկությամբ և դավադրությամբ են նրանց գործի ներգրավել և ինչ նպատակների հասնելու համար են նրանց մեծ պաշտոններ տվել։ «Օտար երկրների ներկայացուցիչները,— գրում է հեղինակը,— որոնք այդ մարդկանց հետ գործարքի մեջ էին, մեղսակից էին նրանց կատարած ոճիրներին, սակայն նրանք այդ ոճիրները համարում էին ծառայություն իրենց երկրներին»[23]։

Իր աշխատության յոթերորդ հատորում նշելով, որ այդ հարյուր հիսուն տարիների ընթացքում Իրանի երկու հզոր հարևանները թույլ չտվեցին զարգացման ուղղությամբ որևէ քայլ կատարել, և բոլոր նրանք, ովքեր փորձեցին նման քայլի դիմել, ոչնչացվեցին[24], Մահմուդը փորձում է բնորոշել այդ քաղաքականության իրականացման եղանակները։ Նա գտնում է, որ Իրանին սպառնալու և իր կամքին ենթարկելու համար Անգլիան միշտ երկու հաղթաթուղթ էր պահում և անհրաժեշտության դեպքում օգտագործում դրանք։ Դրանցից մեկը աֆղանների հավակնությունն էր Սիստանի նկատմամբ, իսկ մյուսը՝ իրանա-օսմանյան սահմանային վեճը, հարցեր, որոնք երբևէ չէին վերանում։ Հենց որ Իրանը Անգլիայի պահանջների առաջ անձնատուր էր լինում, այս երկու հարցերն էլ մոռացության էին մատնվում՝ մինչև հաջորդ անհրաժեշտությունը[25]։ Այս առիթով հեղինակը կրկին համեմատություն է անցկացնում Անգլիայի և ցարական Ռուսաստանի՝ Իրանում վարած քաղաքականության միջև։ Նա նշում է. «Անցած հարյուր հիսուն տարիների ընթացքում Անգլիան և Ռուսաստանն այնքան են այս երկրին հարվածել և վնա-

---

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում, հատ. 7, էջ 1838։

25 Նույն տեղում, էջ 1877։

սել, որ գրիչը անկարող է այն նկարագրել: Սակայն եթե խղճով դիտենք այս հարյուր հիսունամյա պատմությունը, ապա կտեսնենք, որ Անգլիայի դաժանություններն ու հասցրած վնասները անհամեմատ գերազանցում են Ռուսաստանի արարքներին: Իրանում Ռուսաստանի կատարած ոտնձգությունների իսկական հրահրիչը հենց «արդար» Անգլիան է եղել»[25]:

Ինչպես տեսնում ենք, Մահմուդ Մահմուդը Իրանի հետամնացության հիմնական գործոն է համարում արտաքին միջամտությունը և փաստորեն անտեսում է ֆեոդալական հասարակարգի քայքայվածությունն ու նեխվածությունը: Ֆեոդալական Իրանի իշխող շրջաններին նա համարում է ծախու դավաճաններ, որոնք ծառայում էին օտարերկրացիներին և սոսկ իրականացնում նրանց հետապնդած նպատակները: Նա չի տեսնում ֆեոդալական վերնախավի և նրա շահերի արտահայտիչ, նրա ոգևորիչ ու հովանավոր, շահի և նրա պալատի դասակարգային էությունը, նրանց հետադիմական դերը երկրի հետագա զարգացման գործում:

Սակայն կան հեղինակներ, որոնք ամենևին չանտեսելով արտաքին միջամտության գործոնի նշանակությունը, շեշտը դնում են երկրի ներքին վիճակի, նրա հասարակական կառուցվածքի վրա, որը խոչընդոտ էր հանդիսանում նոր, կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար:

Այսպես, Մահմուդ Ֆարհադ Մոթամեդը «Սեփահսալարե Ազամ» գրքում բացահայտ գրում է. «Միշտ էլ Իրանի դժբախտության պատճառները երկրի ներքին անմխիթար վիճակը և օտարների հրահրումներն են եղել»[27]: Նա ընդգծում է, որ իրանական ժողովուրդը մեծ ընդունակության և բնածին տաղանդի տեր է, որ կարող էր զարգացած ժողովուրդների հետ ընթանալ քաղաքակրթության ուղիով, եթե օտարերկրացիների դավադրությունների հետևանքով երկրի հասարակական բնագավառները լճացման չմատնվեին[28]:

---

26 Նույն տեղում, էջ 2067:

27 محمود فرهاد معتمد، سپهسالار اعظم، ۱۹۴۶، صفحه ۱۴۶

28 Նույն տեղում, էջ 146:

Քննելով Սեփահասալարի կյանքն ու գործունեությունը, Մոթամեդը վկայակոչում է Ֆարհադ Միրզայի այն կարծիքը, թե եվրոպացիները հազարավոր կիլոմետրեր հեռու լինելով հանդերձ, գալիս են Իրան և «բարեկամության ու մարդասիրության» անվան տակ ներկայացնում են պահանջներ, որոնց մեջ խորամուխ լինելու դեպքում պարզորոշ կերպով կարելի է տեսնել, որ նրանք «մտադիր են ապահովել իրենց նյութական շահերը և երկիրը հասցնել կործանման եզրին»։ «Արքայազնը այն կարծիքի էր,—գրում է հեղինակը,—որ վերջին դարի ընթացքում իրանական ժողովրդի անհաջողությունը ներքին պատճառներ է ունեցել և նրա սկզբնաղբյուրը երկրի ներսում է եղել»[29]։

Փորձելով վերլուծել երկրի ներքին անմխիթար դրությունը և բացահայտել դրա կործանարար հետևանքները, հեղինակը հատկապես գտնում է, որ Իրանում անվտանգության և ապահովության բացակայությունը, թշվառությունն ու ժողովրդի տնտեսական ակտիվության անբավարարությունը և, ի վերջո, համընդհանուր դժգոհությունը պատճառ էին դառնում, որ օտարերկրացիներն Իրանի ներսում հենարան գտնեին և դրանց միջոցով իրենց նպատակներն իրականացնեին։

Մոթամեդը չի թաքցնում իր տագնապը երկրի ոչ հեռու՝ որոշակիորեն առավել անուրախ, ապագայի նկատմամբ։ «Այժմ,—գրում է նա,—երբ օտարերկրացիներն Իրանում դեռևս ոչ մի կոնցեսիաներ և արտոնություններ չունեն, ամեն պահ խանգարում են որևէ դրական քայլի իրականացմանը երկրում, ապա ի՞նչ կլինի այն ժամանակ, երբ նրանք օգուտի ավելի մեծ աղբյուրներ ձեռք բերեն և բոնի կերպով ուզենան իրենց ցանկություններն իրականացնել»[30]։

Իրանական պատմագրությանը հետաքրքրել է նաև Իրանի հասարակական զարթոնքի խնդիրը։

Հասարակական-քաղաքական մտքի զարգացումն Իրանում XIX դարի վերջերին մեծապես թելադրվում էր այն էական տեղաշարժերով ու փոփոխություններով, որ տեղի էին

---

[29] Նույն տեղում, էջ 148։

[30] Նույն տեղում։

ունեցել երկրում: Այդ շրջանին է հատուկ ազգային ինքնագիտակցության արթնացումն ու բուրժուական նացիոնալիզմի զարգացումը: Չնայած նշված ժամանակաշրջանում արտադրական հարաբերություններն Իրանում գլխավորապես ֆեոդալական էին, սակայն մի շարք հանգամանքներ երկրի դասակարգային կառուցվածքի մեջ արդեն առաջ էին բերել զգալի տեղաշարժեր: Ոչ միայն ծագել էին նոր դասակարգեր և խավեր, այլև մինչ այդ գոյություն ունեցող դասակարգերի ու խավերի բնույթը ևս սկսել էր փոխվել: Բնականաբար, հասարակության բաղկացուցիչ տարրերի մեջ առաջացած փոփոխությունն իր հետ բերում էր նաև նոր գաղափարներ, որոնք կոչված էին պաշտպանելու նոր դասակարգերի և խավերի շահերը: Դասակարգային պայքարի վերելքի պայմաններում տեղի էին ունենում նաև գաղափարական պայքարի նորանոր դրսևորումներ: Այս պրոցեսը, սակայն, XIX դարի առաջին կեսին դեռևս դանդաղ էր ընթանում: Դրությունը փոխվում է XIX դարի երկրորդ կեսին: Բաբիների շարժումը, որը սոցիալական հակասությունների խիստ սրման արդյունք էր, նոր ուղիներ է բացում բուրժուական հարաբերությունների զարգացման համար: Եվ հենց այս շրջանում է, որ լայն տարածում են գտնում լուսավորչական գաղափարները, հող պատրաստելով հեղափոխական-դեմոկրատական գաղափարների տարածման համար:

Առաջադիմական գաղափարների ծագման, հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման բնագավառում կարևոր գործոն է եղել նաև շփումը եվրոպական քաղաքակրթության հետ:

Իրանի զարթոնքի պրոբլեմը մեծապես հետաքրքրել է պարսիկ առանձին հեղինակների, որոնք փորձել են վեր հանել այդ երևույթի արմատներն ու դրդապատճառները, ըմբռնել նրա նպատակներն ու ձգտումները:

«Թեհրանե Մոսավար» հանդեսի 1962 թ. № 935-ում Էմայիլ Ռայինը այն միտքն է հայտնում, որ ազատագրական գաղափարների տարածումը, որը հարյուր տարի հետո հասցրեց սահմանադրական շարժմանը, սկսվեց քաղաքակիրթ աշխարհի և եվրոպացիների հետ իրանցիների շփման

հետևանքով: Իրանի դիվանագիտական ներկայացուցիչների և ուսանողների այցելությունները Եվրոպա հնարավորություններ ընձեռեցին, որպեսզի ազատության, դեմոկրատական ու պառլամենտական իշխանության գաղափարները տարածվեն երկրում: Բուրժուական զարգացման կողմնակիցները հասկանում էին, որ Իրանի ապագա գոյությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որ նախ՝ արևմտյան քաղաքակրթությունը մուտք գործի Իրան ու երկիրն առաջընթաց ապրի և ապա իշխանությունը հիմնվի օրենքի վրա:

Դեռևս դարասկզբին Միրզա Սալեհ Շիրազին, որը տասնմեկ հոգու հետ միասին, Աբբաս Միրզայի հրամանով, կրթություն ստանալու նպատակով Անգլիա էր ուղարկվել, պառլամենտական կարգերի վերաբերյալ իր ճամփորդական նոթերում հետաքրքիր մտքեր է արտահայտել Անգլիայի պառլամենտական և Իրանի բռնապետական իրավակարգի մասին[31]:

Մի այլ հեղինակ՝ Ֆիրուզ Դավարը, Բոմբեյում անգլերեն լեզվով հրատարակած իր գրքում նշում է, որ «Իրանը արևմտյան երկրների հետ կապի մեջ մտավ, պայքարեց նրանց դեմ և ավերվեց նրանց կողմից, բայց այդ կապն իր հետ բերեց հսկայական մտավոր զարթոնք: Իրանը գիտակցեց անկախության արժեքը և զգաց ազատության պայքարում գլխավոր գործոններից մեկի՝ տպագիր խոսքի, նշանակությունը»[32]:

Հարցի մի այլ կողմին է անդրադառնում Աբդոլահ Ռազին, որն իր «Իրանի ընդարձակ պատմությունը» աշխատության մեջ գրում է. «... ակամա ուժեղացավ շփումն Արևմուտքի ժողովուրդների հետ: Գիտության և արդյունաբերության նրանց նվաճումները, ինչպես նաև ազատության և հավասարության հայացքներն իրանցի մտավորականներին ցույց տվեցին, որ բռնապետությունը վնաս է պետությանն ու ժողովրդին և, եթե անհրաժեշտ բարեփոխումներ տեղի չունենան, մեր ամեն ինչը կվտանգվի»[33]:

---

31 "تهران مصور" شماره ۹۳۵، ۱۹۶۰ صفحه ۶

32 *F. C. Davar*, Iran and its Culture, Bombay, 1953, p. 43.

33 عبدالله رازی، تاریخ مفصل ایران، تهران ۱۳۲۵، صفحه ۵۰۰

Մինչդեռ Իրանում հասունանում և զարգանում էին նման գաղափարները, հաքեմները, էմիրները և արքայազնները երկրի տարբեր մասերում շարունակում էին իրենց բռնակալ ինքնակալությունը, ոտնձգությունները, որոնք ավելի էին սաստկացնում ժողովրդի դժգոհությունը:

Արևմտյան քաղաքակրթության ազդեցության մասին է գրում նաև պարսիկ մի ուրիշ հեղինակ՝ Ֆերեյդուն Ադամիյաթը: Իր «Ազատության միտքը և սահմանադրական շարժման սկիզբը» խորագիրը կրող աշխատության մեջ նա բացահայտորեն շեշտում է, որ «Մտքերի զարթոնքն Իրանում արդյունք էր արևմտյան քաղաքակրթության և գիտության հետ ծանոթանալուն»[34]: Հեղինակն այն կարծիքին է, որ արևմտյան քաղաքակրթության հետ ծանոթանալը, իր հերթին, հետևանք էր Իրանի և Եվրոպայի միջև կապի հաստատման, XIX դարի սկզբներին Իրանում եվրոպական երկրների քաղաքականության տարածման և Ռուսաստանի հետ երկարատև հարևանության: Այս ամենն արևմտյան աշխարհի հետ մշտական կապերի հիմք հանդիսացան և միջազգային հարաբերությունների ընդարձակմանը զուգընթաց, նման շփումները է՛լ ավելի ներտացան[35]:

Իրանի հասարակական մտքի և ազատագրական շարժումների զարգացման հանգամանքների ու դրդապատճառների այսպիսի բացատրությունն իրանական պատմագրության մեջ, որքան էլ ընդունված ու տարածված, սակայն միակը չէ: Մեհդի Մալեք զադեն, օրինակ, գտնում է, որ ժամանակի ամենահզոր պետության՝ Անգլիայի, պատերազմը Տրանսվալում «նշանակալի ազդեցություն է ունեցել իրանական ժողովրդի մտավոր զարգացման գործում: Իրանի մտավորականները հիացմունքով ողջունում էին այդ փոքրաթիվ ժողովրդի դիմադրությունը և անձնազոհությունը՝ հանուն ազատության և անկախության, ընդդեմ ուժի, բռնության և շահագործման»:

---

34 فریدون آدمیت، فکر آزادی و مقدمه نهضت مشروطیت، تهران ۱۳۳۴، صفحه ۲۱

35 Նույն տեղում:

Հեղինակն այնուհետև համոզված շեշտում է, որ Անգլիայի և Տրանսվալի պատերազմը հույսի մի ճեղք բացեց մտավորականների և ազատասերների սրտերում և նրանց ըմբռնել տվեց, որ իր անկախության ու ազատության համար փոքրաթիվ մի ժողովրդի պայքարը աշխարհի բոլոր ժողովուրդների հավանությանն ու գովասանքին է արժանանում, և որ պատվով ընդունած մահը ավելի լավ է, քան ուժը և բռնությունը հանդուրժող ստորացուցիչ կյանքը: Մալեք զադեն այնուհետև գրում է, որ իրանցի մտավորականները երկար ժամանակ գովերգում էին այդ ժողովրդի տոկունությունն ու արիությունը և պախարակում իրենց հայրենակիցներին՝ խորը քնի մեջ գտնվելու համար: Նրանք հույս էին հայտնում, որ իրենց հայրենակիցները՝ իրանցիները ևս, որ պատմական փայլուն անցյալ ունեն, մի օր, պետք է արթնանան և թոթափեն օտարների ազդեցությունը, արձակեն ստրկության և հպատակության շղթան իրենց վզից և տեղ գտնեն աշխարհի զարգացած ու առաջադեմ ժողովուրդների շարքում[36]:

Պարսիկ մի շարք հեղինակներ աշխատել են պարզաբանել նաև 1905—1911 թթ. իրանական բուրժուական հեղափոխությունը ծնող դրդապատճառները, նրա հիմնական ակունքները:

«Իրանի ընդարձակ պատմությունը» աշխատության հեղինակ Աբդոլահ Ռազին, անդրադառնալով այդ հարցին, նշում է հետևյալ հանգամանքները.

1. Օտարերկրյա ագրեսիան, տերությունների ոտնձգությունն իրանական տերիտորիայի հանդեպ և նրանց միջամտությունը երկրի ներքին գործերին:

2. Օտարերկրացիներին տարբեր կոնցեսիաներ տրամադրելու միջոցով, փաստորեն, իրանցիների իրավունքները նրանց վաճառելը:

3. Շահի բռնությունը, նահանգապետների և արքայազնների դաժանությունն ու սանձարձակությունները:

---

36 مهدی ملکزاده، تاریخ مشروطیت ایران، جلد دوم، تهران ۱۳۳۸، صفحه ۹—۱۶۸

4. Արևմուտքի ժողովուրդների հետ հարաբերությունների մեջ մտնելը և այդ երկրների վիճակի հետ ծանոթանալը։

5. Ժողովրդի արթնացումը տարբեր ազդակների հետևանքով, օտարերկրյա գրականության ու մամուլի տարածումը, նոր գիտություններին ծանոթանալը, Եվրոպայի ազատագրական շարժումների պատմությանը տեղեկանալը, Միրզա Թաղի խանի ռեֆորմների ազդեցությունը, որոշ մտավորականների և հոգևորականների, ինչպես օրինակ, Սեյիդ Ջամալ էդ Դին Ասադ Աբադիի, Հաջի Շեյխ Նաջմ Աբադիի, Միրզա Մելքում խանի և ուրիշների քարոզները և, վերջապես, մամուլի զարգացումը։

6. Հոգևորականների մասնակցությունը հեղափոխությանը[37]։

Ակնհայտ է, որ հեղինակը, որոշ բացառությամբ, գրեթե ճիշտ է բնորոշում հեղափոխության նախօրյակին երկրում տիրող դրությունը և փորձում է որոշել այն գործոնները, որոնք հասունացրին հեղափոխությունը։

Այս հարցն այլ կերպ է դիտում պարսիկ մեկ այլ հեղինակ՝ Հասան Հալաջը։ Նրա կարծիքով, «Ազատագրական շարժման և սահմանադրության պատմությունն Իրանում պետք է սկսել այն ժամանակաշրջանից, երբ Իրանն Արևմուտքի քաղաքականության զոհ դարձավ և Միջին Ասիան ու Մերձավոր Արևելքը որոշ եվրոպական պետությունների մենքենայությունների թատերաբեմի վերածվեցին։ Հարևան պետությունների գործակալներն սկսեցին միջամտել Իրանի բոլոր բնագավառներում՝ կրոնական կյանքում, ազգային սովորություններում, տնտեսության, հասարակական, քաղաքական և զինվորական ասպարեզներում»[38]։

Հատկապես մեծ է եղել ռուսական հեղափոխական շարժման և անդրկովկասյան առաջադեմ մտածողների ազդեցությունն Իրանում ծավալված հակագաղութատիրական և հակաֆեոդալական շարժման զարգացման վրա։ Սա մի

---

37 عبدالله رازی، تاریخ مفصل ایران، تهران ۱۳۳۵، صفحه ۵۰۱

38 حسن حلاج، تاریخ تحولات سیاسی ایران در قرن معاصر، تهران ۱۳۷۷، صفحه ۱۷

պատմական ճշմարտություն է, որը չեն կարող չխոստովանել մինչև իսկ պարսիկ բուրժուական պատմաբանները։

Մեհդի Մալեք զադեն, «Իրանի սահմանադրական հեղափոխության պատմությունը» աշխատության մեջ, խոսելով ռուսական հեղափոխության նկատմամբ իրանական առաջադեմ շրջանների վերաբերմունքի մասին, գրում է. «Իրանի մտավորականները, որոնց համբերությունը հատել էր իրենց երկրի նկատմամբ ռուսական կառավարության օրըստօրե աճող ճնշումից և երկրի ներքին գործերին նրա ներկայացուցիչների միջամտությունից, մեծ համակրանքով էին դիտում Ռուսաստանի հեղափոխական շարժումը և հաջողություններ էին ցանկանում այդ երկրի ազատասեր ժողովրդին։ Չնայած բռնության երկաթյա պատնեշին, որն իրանցիներին թույլ չէր տալիս ազատ աշխարհի մամուլի հետ կապի մեջ մտնել, նրանք հնարավոր միջոցներով ձեռք էին բերում Ռուսաստանի ազատասերների շարժման ուրախություն պատճառող լուրերը և տարածում Իրանի ազատատենչ ժողովրդի մեջ»[39]։

Մալեք զադեն հեղափոխության պատմության համար անհրաժեշտ է համարում նշել մի այլ հիշարժան պարագա ևս։ Ռուսաստանի ազատասերների իրար հաջորդող շարժումները և այն համառությունն ու ինքնազոհությունը, որ նրանք երևան էին բերում բռնապետական կարգերի տապալման և ազատություն ձեռք բերելու համար, իրանցիներին քաջալերում էին հետևելու նոր գաղափարների։ Եթե Ռուսաստանը Ճապոնիայի դեմ մղած պատերազմում հաղթանակ տաներ, անկասկած, ազատության սերմերն իր երկրում կխեղդեր և այն լուսավոր ջահը, որը, ինչպես հույս ունեին աշխարհի բոլոր առաջադեմ ժողովուրդները, պետք է մի օր այդ ընդարձակ երկրի բռնապետությանը վերջ տար, կհանգչեր և այլևս Իրանում լույս չէր սփռի և մտքեր չէր լուսավորի։

«Ահա այդ էր պատճառը,—եզրակացնում է Մալեք զադեն,—որ Ռուսաստանի պարտությունից հետո հեղափոխական ու ազատասիրական շարժումները վերելք ապրեցին և

---

39 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران ۱۳۲۸، صفحه ۱۱۶

այդ դաժան կառավարությունը ստիպված եղավ որոշ չափով իրենով զբաղվել»[40]։

Վերոհիշյալ հարցն արծարծում է նաև Ահմադ Քասրավին։ Նա իրանական 1905—11 թթ. հեղափոխության ականատես էր և լավատեղյակ։ Նրա «Իրանի սահմանադրության պատմությունը» աշխատությունը մինչև այժմ էլ մնում է որպես հեղափոխության պատմության կարևորագույն սկզբնաղբյուրներից մեկը։ Քասրավիի տեսակետն այս հարցում հետևյալն է. իրանցիները համաշխարհային իրադարձությունների և եվրոպական շարժումների մասին ոչ մի տեղեկություն չէին ստանում։ Սեփահսալար Ղազվինիի շրջանից Իրանում զարթոնք սկսվեց, իսկ սկսած ծխախոտի կոնցեսիայի ժամանակից ծագեցին ժողովրդական շարժումներ, որոնք շարունակվեցին ընդհուպ մինչև սահմանադրական շարժումը։ Խոսելով վերջինիս վրա Անդրկովկասի հեղափոխական շարժումների ազդեցության մասին, հեղինակն ուղղակի գրում է. «Բնական է, որ երկրի բոլոր շրջաններն էլ շատ թե քիչ մասնակից էին դառնում այդ շարժմանը։ Ատրպատականը նույնպես մասնակից էր... Այնտեղ առկա էր այնպիսի գործոն, որպիսին Կովկասին մոտ լինելն է...

Կովկասն Ատրպատականից բաժանվում էր միայն մեկ գետով՝ Արաքսով։ Հենց այդ պատճառով էլ Կովկասն այստեղ անվանում էին «Օթայ» (այն ափը)։ Յուրաքանչյուր տարի բազմաթիվ առևտրականներ, արհեստավորներ ու բանվորներ գնում էին այնտեղ և մի քանի տարի մնալուց հետո վերադառնում հայրենիք։ Այն ամենը, ինչ նրանք լսում կամ տեսնում էին՝ Ռուսաստանի, ռուսների և այլ եվրոպացիների կյանքի մասին, փոխանցում էին իրենց հայրենակիցներին... Ընդհանրապես Ատրպատականը, հատկապես Թավրիզ քաղաքը, ավելի էին պատրաստ զարթոնքի, քան մյուս վայրերը։ Ծխախոտի կոնցեսիայի դեմ ապստամբությունը համարվում է ժողովրդական զանգվածների առաջին շարժումը, իսկ այդ ապստամբության մեջ թավրիզցիներն ավանգար-

---

40 Նույն տեղում, էջ 170—171։

դում էին գտնվում, և դա նրանց նվիրվածության ապացույցն էր»[41]։

Անդրկովկասյան առաջադեմ գործիչները մեծապես ազդում էին Իրանի գաղափարական զարգացման ընթացքի վրա։

Այդ տեսակետից հետաքրքրական է ադրբեջանցի գրող Ջամիլ Մամեդ Կուլիզադեի հետևյալ դիմումը՝ ուղղված հայրենիք վերադարձող իրանցի բանվորներին.

«Ձեր հայրենակից բանվորներին հաղորդեք, որ ռուսաստանյան ընկերները ողջույններ են հղում նրանց։ Եթե նրանք ցանկանան ընթանալ այստեղի իրենց ընկերների ուղիով, եթե ցանկանան ազատագրվել այն լծից, որը նրանց վզին են փաթաթել պարսկական բռնապետերը՝ խաները, տերերը, մոլլաները, առևտրականները, արքայազնները, եթե ցանկանան ձեռք բերել իրենց մարդկային իրավունքները, և ազատ շունչ քաշել, ապա այն ժամանակ ռուսաստանյան ընկերները՝ որպես հիշատակ, նրանց կնվիրեն սրբազան լոզունգներով զարդարված իրենց դրոշը։

Ռուսաստանի բռնապետությունը,— գրում է նա,— որը Ճապոնիայից կրած պարտությունից և ներքին հեղափոխությունից վիրավոր ու անկարող էր դարձել, 1914 թ. համաշխարհային պատերազմում պարտվեց. բռնապետական կառավարությանը փոխարինեց ժողովրդական իշխանությունը և Իրանը փրկվեց Ռուսաստանին կուլ գնալու վտանգից։ Այն, ինչ ռուսական ագրեսիվ կառավարությունը տարիների ընթացքում ուժով և բռնությամբ Իրանից կորզել էր, Լենինի ազատասեր կառավարությունն ամենայն բարյացակամությամբ ու մարդասիրությամբ Իրանի ժողովրդին վերադարձրեց և իրանցիներին իր սիրո և արդարության նկատմամբ պարտական դարձրեց։

Թող վիրավորված, թշվառ իրանական աշխատավոր ժողովուրդը կարդա այս լոզունգը. «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք»։

Թող կարդա՛ն և միանա՛ն»[42]։

---

[41] احمدکسروی، تاریخ مشروطه ایران، تهران ۱۳۴۰، صفحه ۱۲۸—۱۲۶

[42] «Кавказский рабочий листок», Тифлис, 1905, 9/22 декабря.

Հաստատելով ռուսական հեղափոխությունների անժխտելի դրական ազդեցությունն Իրանում ծավալված ազգային-ազատագրական շարժումների վրա ընդհանրապես, Մեհդի Մալեք զադեն, մասնավորաբար, հատուկ անդրադառնում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, այն հսկայական նշանակությանը, որ նա ունեցավ Իրանի պատմության հետագա ընթացքի համար[43]։

---

43 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطت ایران، تهران ۱۳۲۸، صفحه ۷۱.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԻՐԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

XIX դարի վերջերին եվրոպական կապիտալիզմը, թևակոխելով իմպերիալիստական դարաշրջան, էլ ավելի ուժեղացրեց տնտեսական և քաղաքական ներթափանցումը զարգացած, թույլ և հետամնաց երկրները: Ներխուժման այդ ալիքից դուրս չմնաց նաև Իրանը: Երկիրն արդյունաբերություն չուներ, հետևաբար, թե՛ ներքին և թե՛ օտարերկրյա կապիտալը, որը գերակշռում էր, հիմնականում ներդրվում էր առևտրի մեջ: Անհրաժեշտ է նշել, որ երկրի կիսագաղութային վիճակը խիստ ծանր էր անդրադառնում նրա ընդհանուր ֆինանսական դրության վրա: Օտարերկրյա ապրանքների զանգվածային հոսքը չէր հավասարակշռվում արտահանվող հումքի ու գյուղատնտեսական մթերքների քանակով, ուստի և՝ ճեղքվածքը պետք է փակվեր ոսկով. երկրից արտահոսում էր ոսկին:

Օտարերկրյա կապիտալի ներթափանցումն իր հետ բերեց Իրանի տնտեսական ստրկացման նոր եղանակներ՝ կոնցեսիաներ, փոխառություններ, օտարերկրյա բանկեր և այլն, որոնց մասին մանրամասն կխոսվի աշխատության վերջին գլխում:

Ներքաշվելով համաշխարհային կապիտալիստական շուկայի ոլորտը և կրելով նրա ազդեցությունը, արհեստագործական արտադրության հիմքի վրա Իրանում սկսեցին զարգանալ կապիտալիստական հարաբերությունների սաղմերը: Ճիշտ է, երկիրը մնաց ագրարային, սակայն այն վերածվեց համաշխարհային կապիտալիստական շուկայի համար գյուղատնտեսական հումքի աղբյուրի: Մյուս կողմից՝ օտարերկրյա կապիտալի ներթափանցումը չնայած որոշ չա-

փով քայքայեց տիրող ֆեոդալիզմի տնտեսական հիմքերը, սակայն օգտագործելով երկրում գործող սոցիալական և քաղաքական ինստիտուտները, արգելակեց ազգային տնտեսության զարգացումը:

Ուշ միջնադարում մեծ համբավ ուներ Իրանի արհեստագործական արտադրությունը, որը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում դեռևս շարունակում էր մնալ որպես երկրի արդյունաբերության գլխավոր ձև: Միաժամանակ սկսում էին երևան գալ նաև մանուֆակտուրային արդյունաբերության առաջին ձեռնարկությունները:

Սակայն Իրանի համար նոր, կապիտալիստական հարաբերությունների տնտեսական տեղաշարժերը սկզբից ևթ կասեցվեցին օտարերկրյա կապիտալի մուտքով, երևույթ, որ նպաստավոր պայմաններ էր ստեղծում արհեստագործական արտադրության անկման համար:

Տնտեսական այդ ընդհանուր քայքայման հետևանքով, XIX դարի վերջին, պաշտոնական տվյալների համաձայն, մի քանի տարում փակվեցին ավելի քան հիսուն արդյունաբերական ձեռնարկություններ (հատկապես գորգի, մետաքսի, ապակու, շաքարի և լուցկու): Եթե մինչ այդ երկրից արտահանվող ապրանքների մեջ նշանակալից տեղ էր գրավում արհեստագործական արտադրանքը, ապա եվրոպական կապիտալի մուտքից հետո հիմնականում սկսեցին արտահանվել հումք և գյուղատնտեսական մթերքներ: Աղբյուրները վկայում են, որ արդեն XIX դարի երկրորդ կեսից սկսած համարյա դադարում է իրանական պատրաստի գործվածքների արտահանումը, բացի գորգից, որը մինչև օրս էլ շարունակում է մնալ որպես արտահանման գլխավոր և անգերազանցելի ապրանքներից մեկը:

Հայտնի են Մարքսի հետևյալ խոսքերը Հնդկաստանում Անգլիայի վարած քաղաքականության մասին. «Անգլիան սկսեց դուրս մղել հնդկական բամբակյա գործվածքները եվրոպական շուկաներից, ապա սկսեց Հնդկաստան ներմուծել ոլորված մանվածք (twist) և վերջում բամբակե գործվածքների հայրենիքն սկսեց ողողել բամբակեղեն ապրանքներով»[1]:

[1] Կ. Մարքս. Ընտիր երկեր, Երևան, 1941, հատ. 2, էջ 650:

Նույն պրոցեսը տեղի ունեցավ նաև Իրանում։

XIX դարի վերջերին օտարերկրյա, հատկապես անգլիական և ռուսական, կապիտալի ինտենսիվ մուտքն Իրան իր հետ բերեց նաև երկրում այդ տերությունների տնտեսական և քաղաքական ազդեցության ուժեղացում։ Իրանի հարավում միահեծան կերպով իշխում էր Անգլիան՝ արգելակելով եվրոպական մյուս երկրների ներթափանցմանը, իսկ հյուսիսում տիրում էր ցարական Ռուսաստանը։

Իրանը եվրոպական պետություններին հետաքրքրում էր ոչ միայն որպես հումքի աղբյուր և իրենց արդյունաբերական ապրանքների սպառման շուկա, այլև որպես հարմար երթուղի Արևելքի մյուս երկրներ թափանցելու համար։ Սա մի այնպիսի իրողություն էր, որ չէին կարող չխոստովանել նույնիսկ իմպերիալիստական քաղաքականության ջատագովները։ Այսպես, Քերզոնը 1892 թ. գրում էր. «Մինչև իսկ նրանք, ովքեր բրիտանական քաղաքականությանը քիչ էին ծանոթ կամ անտարբեր էին նրա նկատմամբ, գիտակցում էին, որ Իրանը մի երկիր է, որը հանդիսանում է ընդարձակ և շահավետ շուկա անգլիական ու անգլո-հնդկական առևտրի համար, և որ հատկապես այդ հողի վրա նրա ղեկավարի հետ բարի հարաբերություններ ունենալը առավելագույն չափով ցանկալի է»[2]։

Իրանի տնտեսության կենսական բարձունքները նվաճելու և իրեն ենթարկելու ճանապարհին Անգլիան մի կողմից հանդիպում էր մյուս տերությունների, հատկապես ցարական Ռուսաստանի, իսկ մյուս կողմից՝ իրանական ժողովրդի աճող դիմադրությանը։ Անգլիական իմպերիալիստները ջանում էին օգտագործել նաև գաղափարական պայքարը, որ ծավալվում էր երկրում։ Պատահական չէ, որ պարսիկ որոշ հեղինակներ գաղափարական այս կամ այն հոսանքի պայքարի մեջ հաճախ արդարացի կասկածով տեսել են անգլիական իմպերիալիզմի դավադրությունը։

Հասան Հալաջն, օրինակ, գտնում է, որ Իրանի սահմանադրական շարժման պատմությունը պետք է սկսել այն ժա-

---

[2] *G. Curzon*, Persia and the Persian Question, vol. 1, London, 1892, p. 2

մանակվանից, երբ երկիրը արևմտյան քաղաքականության առարկա դարձավ[3]։

«Ռուսաստանի և Անգլիայի քաղաքական ազդեցությունն Իրանում,— գրում է պարսիկ մի այլ հեղինակ՝ պատմաբան Մալեք զադեն,— մեր զարգացման և համաշխարհային քաղաքակրթության քարավանին միանալու խոշորագույն արգելքն էր։ Դրա հետևանքով XIX և XX դարերում, երբ աշխարհը շշմեցուցիչ արագությամբ առաջանում էր գիտության, արդյունաբերության և ազատության ուղիով, Իրանի ժողովուրդը որևէ քայլ չկարողացավ կատարել երկիրը թշվառությունից և դժբախտությունից դուրս բերելու համար։

Իրանի ժողովուրդը չէր կարողանում իր բնական ու հանքային հարստություններից օգտվել և ստիպված էր օտար երկրներից ձեռք բերել այն, ինչ ինքն անհրաժեշտ քանակից ավելին ուներ։ Օտար պետությունների ագահության և բռնության հետևանքով, Իրանի ժողովուրդը՝ նստած իր երկրի ընդերքում թաքնված գանձերի վրա, մահանում էր սովից»[4]։

Ֆիրուզ Քովասջի Դավարը 1953 թ. Հնդկաստանում հրատարակած «Իրանը և նրա կուլտուրան» գրքում, պատկերավոր կերպով ներկայացնելով Իրանի նկատմամբ իմպերիալիստական երկրների քաղաքականության իսկական բնույթը, գրում է, որ վերջիններս «դաջարական ռեժիմի ուշ շրջանի Իրանի հետ վարվում էին որպես ոտքի գնդակի»։ Թվարկելով Իրանի տնտեսական և քաղաքական զիջումներն այդ տերություններին, Դավարն այն միտքն է հայտնում, որ «Իրանի քաղաքական պայմաններն այնպիսի ծայրահեղ նվաստացուցիչ և անօգնական տեսք ունեին, որ այն կարելի էր համեմատել բրիտանական տիրապետության ժամանակ Հնդկական որևէ տեղական իշխանության հետ»[5]։

Անգլիայի քաղաքական և տնտեսական ներթափանցումն Իրան այնպիսի չափերի հասավ, որ նույնիսկ անգլիական իմ-

---

3 حسن حلاج، تاریخ تحولات سیاسی ایران در قرون معاصر، تهران ۱۳۷۷، صفحه ۱۷

4 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران ۱۳۲۸، صفحه ۴۰-۴۱

5 *F. C. Davar*, Iran and its Culture, Bombay, 1953, p. 383.

պերիալիզմի ջատագով Քերզոնը ստիպված էր իր «Իրանը և իրանական հարցը» աշխատության մեջ խոստովանել, որ անգլիական լիազոր ներկայացուցիչը Բուշեհրում հանդիսանում էր Պարսից ծոցի չթագադրված թագավորը[6]։

Ինչպես տեսնում ենք, վերը բերված հատվածներում ճշմարտացիորեն նկարագրված է իմպերիալիստական երկրների քաղաքականությունն Իրանի նկատմամբ, քաղաքականություն, որը միշտ էլ ունեցել է իր տարբեր երանգներն ու դրսևորումները, և դրանով իսկ տեղիք է տվել զանազան, հաճախ հակասական, բնութագրումների ու գնահատականների։

Բերված վկայակոչումները ցույց են տալիս, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբներին իմպերիալիստական Անգլիայի և ցարական Ռուսաստանի քաղաքական ազդեցությունն Իրանում այնքան էր սաստկացել, որ երկիրը փաստորեն վերածվել էր կիսագաղութի։

Այսպիսի իրադրությունն Իրանի ժողովրդական զանգվածների կողմից ընկալվում էր ծայրահեղ բացասաբար, քանի որ նրանք անմիջապես իրենց վրա զգում էին Իրանի նկատմամբ իմպերիալիստական քաղաքականության ծանր և աղետավոր հետևանքները։

*

* *

Ինչպես վերը նշեցինք, եվրոպական կապիտալի մուտքն Իրան առաջին հերթին զարկ տվեց Իրանի առևտրական կապերին։ XIX դարի վերջերին Իրանի արտահանումների և ներմուծումների մասին եղած նյութերը ցույց են տալիս, որ եվրոպական ապրանքներն Իրան էին ներթափանցում երկու ուղղությամբ. հարավից՝ Միջերկրական ծովով, Սուեզի ջրանցքով, Հնդկական օվկիանոսով, Պարսից ծոցից և արևմուտքից՝ Միջերկրական ծովով ասիական Թուրքիայից։ Երրորդ՝ հյուսիսային ուղղությունը, 1883 թվականից միջաղ-

---

[6] *G. Curzon*, Persia and the Persian Question, vol. II, London 1892, p. 45.

գային առևտրի համար փակ էր, քանի որ դադարեցված էր Կովկասի վրայով առանց մաքսի տրանզիտը[7]։

Իրանի ներմուծումների գումարը 1893 թվականին կազմել է.

Ռուսաստանից	1,111	հազար	ֆ. ստ.
Հնդկաստանից	1,225	»	»
Անգլիայից	251	»	»
մյուս երկրներից	477	»	»
ընդամենը	3,064		

Դրան պետք է ավելացնել նաև նշանակալից ներմուծումները Բաղդադի վրայով, որոնք սովորաբար հաշվետվությունների մեջ նշվում են Թուրքիայի ներմուծումների հետ միասին և 250 հազար ֆունտ ստեռլինգից պակաս չէին։

Արտահանումներն Իրանից 1893 թ. կազմել են.

Ռուսաստան	1,649	հազ.	ֆ. ստ.
Հնդկաստան	489	»	»
Անգլիա	119	»	»
մյուս երկրները	535	»	»
ընդամենը	2,792		

Դրան պետք է ավելացնել նաև արտահանումը Բաղդադի վրայով, որը կազմում էր 118 հազար ֆունտ ստեռլինգ[8]։

Հասկանալի է, որ Հնդկաստանի բաժինը նույնպես պետք է համարել անգլիական, քանի որ նա Անգլիայի գաղութն էր։

Գեներալ-լեյտենանտ Կուրոպոտկինը, որը ցարի կարգադրությամբ 1895 թ. ճամփորդել էր Իրանում, իր հաշվետվության մեջ գրում է, որ Իրանի հետ եվրոպական տերությունների առևտրական շրջանառությունը կատարվում էր հօգուտ վերջիններիս։ Գեներալի հաշվետվության մեջ նշվում է, որ ռուսական արդյունաբերական շրջաններն ավելի մոտ են Իրանին և պետք է ավելի մեծ ջանքեր գործադրել իրանական շուկաները նվաճելու համար[9]։

Եթե XVIII դարում և XIX դարի սկզբներին Իրանի հետ

---

[7] *М. Томара,* Экономическое положение Персии, СПб, 1895, стр. 30.

[8] *Նույն տեղում, էջ 147։*

[9] Всеподданнейший отчет генерал-лейтенанта Куропоткина о поездке в Тегеран в 1895 г., СПб, 1895, стр. 37.

Ռուսաստանի առևտրի ծավալն առանձնապես մեծ չէր, ապա դարավերջին ներմուծման և արտահանման ընդհանուր գումարը հասնում է տարեկան մոտ 30 միլիոն ռուբլու։ Օրինակ, 1840 թ. այդ գումարը կազմում էր 4,200,000 ռուբլի։ Հետագա երեսուն տարիների ընթացքում այն աճում է շատ դանդաղ և 1873 թ. հասնում ընդամենը 6,000,000 ռուբլու։ Հետագայում երկաթուղու կառուցումը մինչև Թիֆլիս և ռուսական արդյունաբերության նկատմամբ հովանավորությունը արագացրին Իրանի հետ Ռուսաստանի առևտրի աճը։ 1883 թ. ներմուծման և արտահանման ընդհանուր գումարը հասավ 11,200,000 ռուբլու, իսկ 1893 թ.՝ 27,300,000 ռուբլու[10]։ Այսպիսով, քսան տարվա ընթացքում Ռուսաստանի առևտուրն Իրանի հետ աճեց ավելի քան չորս անգամ։

Կուրոպոտկինը գրում է, որ Իրանից Ռուսաստան ապրանքների արտահանման ասպարեզում մրցակիցներ չկային և Ռուսաստանը հումք էր ստանում մինչևիսկ Իրանի կենտրոնական և հարավային նահանգներից։ Այլ էր վիճակը Իրան ներմուծվող ապրանքների գործում։ Ներմուծվող հիմնական ապրանքը՝ բամբակե գործվածքեղենը, ստացվում էր գլխավորապես Անգլիայից։ Անգլիացիները գերիշխում էին ոչ միայն Իրանի հարավային և կենտրոնական նահանգներում, այլև ներթափանցվել էին հյուսիսային շուկա, հատկապես Թեհրան, Թավրիզ և Մաշհադ, որտեղ մրցում էին ռուսական գործվածքների հետ[11]։

1901—1902 թվականներին Իրանի ներմուծումները ունեին հետևյալ պատկերը[12].

Ռուսաստանից	113,755,584	դրան
Անգլիայից և Հնդկաստանից	125,253,581	»
Օսմանյան կայսրությունից	10,515,172	»
Գերմանիայից	2,382,755	»
Ֆրանսիայից և գաղութներից	23,887,076	»
Ավստրիայից	12,080,466	»
Հոլանդիայից և գաղութներից	2,167,611	»

10 Նույն տեղում, էջ 36։

11 Նույն տեղում, էջ 60։

12 محمدعلی جمال‌زاده، گنج شایگان یا اوضاع اقتصادی ایران، تهران ۱۹۱۷، صفحه ۱۵

Իրանական աղբյուրները տալիս են նաև թվական այլ տվյալներ։ Այսպես, էսֆանդիար Բահրամ Եգանեգին, 1934 թ. Նյու Յորքում անգլերեն լեզվով հրատարակած «Իրանի վերջին տարիների ֆինանսական և դրամական պատմությունը» գրքում, XIX դարի վերջերին Իրանի առևտուրը ներկայացնում է հետևյալ տեսքով.

Տարեթվեր	Ներմուծում	Արտահանում	Ընդհանուրը
1875—1877	60,000,000 դրան	60,000,000 դրան	120,000,000 դրան
1877—1880	60,000,000 »	40,000,000 »	100,000,000 »
1880—1885	126,000,000 »	100,000,000 »	226,000,000 »
1885—1890	145,000,000 »	100,000,000 »	245,000,000 »
1890—1895	154,000,000 »	110,000,000 »	264,000,000 »
1895—1900	250,000,000 »	125,000,000 »	375,000,000 »

Այսպիսով, սկսած 1875 թվականից մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը, բացառությամբ 1875—77 թվականների, Իրանի ներմուծումները գերազանցել են արտահանումներին ու գնալով ավելի են աճել և բացի դրանից, արտահանվող ապրանքների գները անհամեմատ ցածր են եղել ներմուծվող ապրանքների գներից։ Սա, իհարկե, Իրանի համար դեֆիցիտային առևտուր էր, որում իշխում էր ոչ համարժեք փոխանակությունը։ Այլ կերպ ասած, գաղութային բնույթի այս առևտուրը, երկրին օգուտ տալու փոխարեն, բացասաբար էր անդրադառնում նրա սոցիալ-քաղաքական դրության վրա, կասեցնում երկրի տնտեսական զարգացումը և մեծ չափով հարվածում ընդհանուր կենսամակարդակին։

XIX դարի վերջերին ցարական կառավարությունը որոշակի միջոցառումներ ձեռնարկեց Արևելքի երկրների հետ առևտրական կապերը ընդլայնելու ուղղությամբ։ Այդպիսի միջոցառումներից էին բամբակագործներին տրվող պարգևատրումները և, որ ամենակարևորն է, Կովկասի վրայով ազատ տրանզիտի արգելումը 1883 թվականին[13]։ Հենց այդ ժամանակներից էլ նկատվում է Իրանի հետ Ռուսաստանի

[13] П. Риттих, Железнодорожный путь через Персию, СПб, 1900, стр. 17.

առևտրի արագ աճը և աստիճանաբար նրա մենաշնորհ դիրքերի ձեռքբերումը ամբողջ հյուսիսային և արևելյան Իրանի առևտրում: Անգլիական մի աղբյուրում այդ պրոցեսը նկարագրված է հետևյալ կերպ. «Ընդհանուր առմամբ ոչ մի կասկած չի կարող լինել, որ ռուսական առևտուրն Իրանի այս մասում (խոսքը վերաբերում է Քերմանշահի շրջանին— Հ. Ե.) ոչ միայն աճում է, այլև աճում է ի հաշիվ բրիտանական-հնդկական առևտրի, կամ առնվազն, համեմատականորեն ավելի արագ»[14]:

Փաստերը ցույց են տալիս, որ 1887—1897 թթ. Ռուսաստանի արտահանումը Իրան ութ միլիոնից հասավ 16 միլիոն ռուբլու, իսկ ներմուծումը՝ 9 միլիոնից 18,5 միլիոն ռուբլու, այսինքն՝ տասը տարվա ընթացքում երկու երկրների միջև առևտուրը կրկնակի աճում է:

Իրանի արտաքին առևտրում Ռուսաստանի դերի հետզհետե բարձրացման մասին են խոսում նաև հետևյալ տվյալները: 1895 թ. Ռուսաստանից Իրան արտահանված ապրանքները կազմում էին Իրանի ամբողջ ներմուծումների 15 %-ը, իսկ անգլիական ապրանքների ներմուծումները՝ 70 %-ը, այն դեպքում, երբ 1905-ին, այսինքն՝ ընդամենը տասը տարի հետո, անգլիական ապրանքների ներմուծումը կազմում էր ամբողջ ներմուծումների 27,5 %-ը, իսկ ռուսականի ներմուծումները՝ 39,5 %-ը[15]:

Արևմտյան Եվրոպայի կապիտալիստական երկրներն ու ցարական Ռուսաստանը Իրանի հետ առևտրում գտնվում էին ամենանպաստավոր պայմաններում, քանի որ նրանց արտահանումը մշտապես գերազանցում էր ներմուծմանը: Այդ վիճակի պահպանմամբ հատկապես շահագրգռված էր ցարական Ռուսաստանը, և նրա ջանքերն այդ ուղղությամբ պատահական չէին:

---

[14] *H. J.*, The Persian Problem, London, 1903, p. 277.

[15] *М. Павлович*, Экономическое развитие и аграрный вопрос в Персии XX века, М., 1921, стр. 7.

* * *

Իրանի գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումն սկսվում է XIX դարի կեսերից։ Հողատիրության կապիտալիստական ձևերը և գյուղացիության կապիտալիստական շահագործումը, թեկուզ սաղմնային վիճակում, մուտք են գործում երկրի տնտեսության մեջ, իսկ նրա ներգրավումը համաշխարհային առևտրի ոլորտը իր հետ բերում է գյուղատնտեսության արտադրանքի ապրանքայնացում ու նրա եկամտաբերության աճ, որի հետևանքով և բարձրանում է հողի գինը։

Հողագործության ասպարեզում այդպիսի փոփոխությունը փաստորեն կապիտալ ներդրման նոր հորիզոններ բացեց և առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչներն սկսեցին մեծ հետաքրքրություն երևան բերել դեպի հողը, քանի որ այն շոշափելի եկամուտների աղբյուր էր դառնում։

XIX դարի երկրորդ կեսի Իրանի սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրամական հարաբերությունների զարգացումը և հողի եկամտաբերության աճը հողի նկատմամբ հետաքրքրություն առաջ բերեց քաղաքային դասերի, հատկապես առևտրականների ու պաշտոնյաների շրջաններում։ Հենց այդ ժամանակ է, որ շնորհիվ մի շարք հանգամանքների, ֆեոդալա-կալվածատիրական դասակարգը սկսում է սերտորեն կապվել շուկայի հետ և հանդես գալ որպես առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչ։ Բարձր հոգևորականությունը, որի ազդեցությունն Իրանում շատ մեծ էր, իր տնտեսական և հասարակական-քաղաքական շահերի տեսակետից չէր տարբերվում ֆեոդալ-կալվածատերերից և հենց այդ պատճառով էլ նա նույնպես ընդգրկվել էր այդ ոլորտի մեջ։

XIX դարի վերջը և XX դարի սկիզբը Իրանի սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման պատմության մեջ այն շրջանն է, երբ չնայած կապիտալը սկսում է հոսել հողագործության մեջ, բայց դեռևս ի վիճակի չէ փոխել երկրի գյուղատնտեսության արտադրաեղանակը։

Օտարերկրյա կապիտալի թափանցումն Իրան զգալի փոփոխություն մտցրեց երկրի հասարակական երկու հիմնա-

կան դասակարգերի՝ ֆեոդալ-կալվածատերերի և գյուղացիության, բնույթի մեջ. նատուրալ գյուղատնտեսությունը վերածվեց ապրանքայինի և դրանով իսկ դարձավ համաշխարհային կապիտալիստական շուկայի հումքի աղբյուր։ Նոր տիպի ֆեոդալ-կալվածատերը զբաղվում էր առևտրային հողագործությամբ և սերտորեն կապված էր շուկայի հետ։ Արդեն XX դարի սկզբներին զգալիորեն աճել էր օտարերկրյա կապիտալի և արտաքին շուկայի հետ կապված հողատերերի թիվը։ Հողատիրության վարձակալական իրավունքն իր տեղը զիջում էր մասնավոր սեփականությանը։ Հիշյալ հանգամանքները հասցնում էին այն բանին, որ քայքայվում էր Իրանի ֆեոդալական հասարակարգի տնտեսական հիմքերից մեկը՝ պետական համընդհանուր սեփականությունը հողի նկատմամբ, և հողը վերածվում էր մասնավոր սեփականության։

Եվրոպական կապիտալի ներթափանցումն, ընդհանուր առմամբ, էական հետևանքներ ունեցավ նաև ագրարային հարաբերությունների վրա՝ զգալի փոփոխություններ մտցնելով այդ հարաբերությունների մեջ։ Նշենք թեկուզ այն, որ գյուղացի վարձակալն ավելի մեծ կախման մեջ էր ընկնում նոր տիպի կալվածատիրոջից։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին առևտրային արտադրությունը դեռևս գերիշխող չէր ամբողջ գյուղատնտեսության մեջ, սակայն առևտրային հողագործությունն արդեն որոշակի դեր էր խաղում երկրի տնտեսական կյանքում։ Այն, անշուշտ, առաջավոր երևույթ էր Իրանի տնտեսության մեջ և, բնականաբար, նպաստում էր ոչ միայն նրա արտաքին առևտրի ընդարձակմանը, այլև ներքին շուկայի հետագա զարգացմանը։

Շնորհիվ առևտրային հողագործության, որը հիմնականում հարմարվում էր արտաքին շուկայի պահանջներին, երկրի գյուղատնտեսության մեջ ներթափանցեց բամբակի, ծխախոտի և մի շարք այլ կուլտուրաների մշակումը, որոնք նորություն էին Իրանում և պահանջում էին առևտրական տնտեսությունների գոյությունը։ Ինչ խոսք, որ վերջիններիս զարգացման և տարածման աստիճանից էլ կախված էր կա-

կապիտալիստական հարաբերությունների ներթափանցման աստիճանը: Հենց այդ ժամանակվանից էլ գյուղատնտեսության մեջ սկսում են դիտվել վարձու աշխատանքի կիրառման առանձին փաստեր:

Զուգահեռաբար տեղի էր ունենում նաև հակառակ պրոցես. կալվածատերերը միաժամանակ զբաղվում էին նաև առևտրով և վերածվում խոշոր առևտրականների:

Ատրպետի վկայությամբ շատ կարճ ժամանակում Իրանի բազմաթիվ գյուղատերեր հսկայական հարստություններ դիզեցին և կապիտալիստներ դարձան[16]:

Ջավադ Թաբրիզի զադեն իր «Իրանի տնտեսական կյանքը և նրա սաստիկ աղքատության բուժման ուղին» գրքում անդրադառնալով, ինչպես ինքն է անվանում, «վտանգավոր կապիտալիզմի» ներթափանցման և նրա հետևանքների հարցին, միանգամայն բնական է համարում այն հանգամանքը, որ գրամատերերը հակվում էին դեպի վաշխառուական եկամտաբերությունը, քանի որ կալվածքների և ընդհանրապես հողագործության եկամուտներից գրամի տոկոսներն անհամեմատ բարձր էին: Ուստի, հողային և ջրային սեփականություններն աստիճանաբար անկում էին ապրում[17]:

Անշուշտ, հասկանալի է, որ կապիտալիզմի զարգացման համար միայն ապրանքային արտադրությունը դեռևս բավարար չէր, և անհրաժեշտ էին որոշակի այլ պայմաններ ևս:

*

* *

Ինչպես արդեն ասվեց, XIX դարի վերջերին հողատիրության մեջ գնալով մեծ ծավալ էր ստանում մասնավոր սեփականությունը: Դա, անշուշտ, զգալի քայլ էր ֆեոդալականից բուրժուական սեփականություն տանող ճանապարհին:

Խոշոր և միջին բուրժուազիայի առանձին ներկայացուցիչների՝ հողեր ձեռք բերելու ձգտումն այնպիսի չափեր ընդունեց, որ արդեն 1905—11 թվականների հեղափոխության նախօրյակին նրանց կապը ֆեոդալական հողատիրության

---

[16] *Атрпет*, Мамед Али шах, Александрополь, 1909, стр. 141.

[17] جواد تبریزی‌زاده، زندگی‌اقتصادی ایران و راه چاره فقرشدید آن، جلد یکم، تهران ۱۳۲۴، صفحه ۴۷

հետ չէր կարող իրեն զգացնել շտալ քաղաքական կյանքում։

• Իրանի նման ագրարային երկրում բուրժուազիան գրեթե ամբողջովին զրկված էր արդյունաբերության բնագավառում կապիտալ ներդրումներ կատարելու հնարավորությունից և իր միջոցները հիմնականում հատկացնում էր հողին կամ մասնակցում վաշխառուական գործարքների։ Դա նրան կապում էր ֆեոդալ-կալվածատերերի դասակարգին և իր անխուսափելի ազդեցությունն ունենում քաղաքական պայքարի վրա։ Այդ է պատճառը, որ Իրանի բուրժուազիան երբեք ֆեոդալական կարգերի ոչնչացման հարց չէր դնում, այլ միայն ձգտում էր բարենորոգումների միջոցով որոշ չափով բարելավել երկրի վիճակը և պահպանել շահի իշխանությունը։

Օտարերկրյա կապիտալի մուտքն Իրան մեծապես փոփոխեց իրանական բուրժուազիայի բնույթը։ Փոխվեց նաև նրա դերը երկրի քաղաքական և տնտեսական կյանքում։

Ազգային բուրժուազիան XIX դարի վերջերին դեռևս շոշափելի ուժ չէր ներկայացնում և տնտեսապես շատ թույլ էր։ Նա, իհարկե, տառապում էր երկրում իշխող ֆեոդալական կարգերից, պայքարում էր օտարերկրյա կապիտալի ներթափանցման դեմ և ձգտում էր երկրի լիակատար անկախության։ Ստեղծված դրության մեջ ազգային բուրժուազիան պահանջում էր այնպիսի պայմանների ստեղծում, որոնք կկարողանային ապահովել ազգային տնտեսության, մասնավորապես առևտրի և գյուղատնտեսության հետագա զարգացումը։

Իրանի և օտար երկրների, հատկապես արևմտյան երկրների, միջև կատարվող առևտուրն իրականացվում էր առևտրականների որոշակի խավի կողմից, որոնք հայտնի են որպես կոմպրադոր առևտրականներ։

Հետաքրքրական է նշել, որ Իրանի կոմպրադորական բուրժուազիայի մի մասը հանդես էր գալիս նաև որպես կալվածատեր և ձգտում էր Իրանի գյուղատնտեսության մեջ պահպանել ֆեոդալական արտադրաեղանակը։ Մյուս կողմից, քանի որ կոմպրադորական բուրժուազիան շահագրգռված էր նաև մշակելի հողերի ձեռքբերմամբ, ապա նա նպաստում

էր խոշոր առևտրական բուրժուազիայի և ֆեոդալ-կալվածատերերի մերձեցմանը։

Բնական է, որ ֆեոդալական տրոհվածությունն անբարենպաստ էր արտաքին առևտրի հետ կապված կոմպրադորական բուրժուազիայի համար, և վերջինս Իրանում իշխող իրադրության մեջ իր զարգացման համար հեռանկարներ չէր տեսնում։ Նա հանդես էր գալիս երկրի ֆեոդալական տրոհվածության, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականության իշխանության դեմ, որոնց ձեռքում էին գտնվում երկրի դատական օրգանները, պայքարում էր հանուն օրենսդրության նորացման, նահանգային և տեղական ղեկավարների իշխանության և կամայականությունների սահմանափակման և ընդհանրապես երկրի տնտեսության այն բնագավառների զարգացման համար, որոնք կարող էին նպաստել նրանց գործունեության հետագա ընդարձակմանը։

Շահական բռնապետության դեմ պայքարի դուրս եկավ նաև իրանական խոշոր բուրժուազիան, որի հետագա զարգացման համար կենսականորեն անհրաժեշտ էր եղած խոչընդոտների վերացումը։ Սակայն, գտնվելով օտարերկրյա կապիտալի ճնշման տակ և սերտ կապերի մեջ լինելով ֆեոդալ-կալվածատիրական շրջանների հետ, նա ի վիճակի չէր վճռականություն և հետևողականություն երևան բերել։ Դրա լավագույն ապացույցը հենց այն էր, որ խոշոր բուրժուազիան առաջ չէր քաշում ֆեոդալական կարգերի դեմ արմատական պայքարի հարցը։ Նա միայն ձգտում էր առկա կառուցվածքը պահպանելով որոշ ռեֆորմներ անցկացնել և այդպիսով ամրապնդել երկրի վիճակն ու հնարավորություններ ստեղծել կապիտալի շրջանառության համար։

Հայտնի է, որ իրանական հեղափոխության նախօրյակին արդեն պարզորոշ ձևակերպվել էին իրանական խոշոր բուրժուազիայի պահանջները. սահմանադրության հաստատում, որը պետք է ապահովեր մասնավոր սեփականատիրական իրավունքը, օտարերկրյա կապիտալի գործունեության ոլորտի որոշ չափով սահմանափակում և ազգային արդյունաբերության ու առևտրի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում։

Իր դարն ապրած ֆեոդալական հարաբերությունների և

օտարերկրյա գերիշխանության դեմ ծավալված շարժումը գլխավորում էր ազգային բուրժուազիան, որը տվյալ ժամանակաշրջանում առաջադեմ ուժ էր ներկայացնում: Դա, իհարկե, հասկանալի է, քանի որ հակաֆեոդալական և հակաիմպերիալիստական շարժումներն Իրանում ամենասերտ կերպով կապված էին երկրում կապիտալիստական հարաբերությունների զարգացման և ազգային բուրժուազիայի առաջացման հետ:

Միանգամայն պարզ է, որ XIX դարի վերջերին Իրանում հասարակական-քաղաքական մտքի զարգացումը մեծապես կապված էր այն էական տեղաշարժերի և փոփոխությունների հետ, որ տեղի էին ունեցել երկրում: Այդ շրջանին է վերաբերում նաև Իրանում ազգային ինքնագիտակցության և բուրժուական նացիոնալիզմի զարգացումը:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Իրանում առավել ծանր էր գյուղացիության վիճակը: Օտարերկրյա կապիտալի ներթափանցումն է՛լ ավելի ուժեղացրեց գյուղացիական հոծ զանգվածների շահագործումը և նրանց պայքարի դուրս բերեց քաղաքի շքավորության և քայքայված արհեստավորների հետ կողք-կողքի: Գյուղացիության մեծամասնությունը վերջնականապես ունեզրկվում էր և ստիպված հողակտորներ էր վարձակալում մշակելու համար: Նոր պայմաններում ավելի էր մեծացել կալվածատիրոջից գյուղացու թե՛ տնտեսական և թե՛ քաղաքական կախումը: Մեծ թիվ էին կազմում նաև այն գյուղացիները, որոնք նույնիսկ ի վիճակի չէին հող վարձակալել: Ապրուստի տարրական միջոցներ հայթայթելու համար նրանք, քայքայված գյուղական արհեստավորների ընկերակցությամբ, գնում էին դեպի մեծ քաղաքները, իսկ հետագայում՝ նաև երկրից դուրս, պրոցես, որը նույնպես իր հետևանքները ունեցավ Իրանի հեղափոխական շարժման համար:

* * *

XIX դարի դաջարական շահերի իշխանությունն Իրանում ոչնչով սահմանափակված չէր և նրանք երկրի միահեծան տնօրեններն էին:

Այդ դինաստիայի իշխանության տարիներին երկրում տեղի ունեցան խոշոր իրադարձություններ։ Մի կողմից այն գաղութատիրական պետությունների նվաճողական քաղաքականության զոհ դառնալով վերածվեց նրանց մրցակցության և կատաղի պայքարի թատերաբեմի, մյուս կողմից, երկրում ծավալվեցին ազատագրական շարժումներ, որոնք ուղղված էին ինչպես ֆեոդալական հարաբերությունների, այնպես էլ իմպերիալիստական տերությունների գաղութակալական տիրապետության դեմ։

Ղաջարական դինաստիայի իշխանության տարիներին Իրանի նկատմամբ իմպերիալիստական երկրների կործանարար քաղաքականության դիպուկ գնահատական է տվել ամերիկացի իրանագետ Հասսը։ Նա գրում է. «Աղա Մոհամեդ շահի եղբորորդի և հաջորդ Ֆաթհ Ալի շահի իշխանությամբ սկսվում է Իրանի մեծ դրաման, որի ընթացքում Իրանն ավելի խորն է ներկալվում եվրոպական պետությունների ցանցի մեջ, սկզբում՝ որպես պոտենցիալ գործիք և ակտիվ զինակից, իսկ հետագայում՝ պարզապես որպես գործիք և զոհ»[18]։

Ֆրեյզերը քննելով Ֆաթհ Ալի շահի իշխանության ըսկզբունքները (որոնք նույնն էին նաև ղաջարական մյուս շահերի մոտ), գրում է, որ նա Իրանը դիտում էր ոչ որպես մի երկիր, որին պետք է սիրի, պաշտպանի և զարգացնի, այլ որպես մի ունեցվածք, որը նա վարձել է, վստահ չլինելով նրա տևական պահպանմանը և ձգտում է առավելագույնը քաղել նրանից, քանի դեռ գտնվում է իշխանության գլուխ։ Նվաճելով գահը իր ընտանիքի համար, նա ամբողջ երկրի հետ վարվում է, որպես նվաճված մի երկրի[19]։

Ղաջարական դինաստիայի դերը Իրանի նոր պատմության մեջ լայնորեն քննարկվել է իրանական պատմագրության կողմից։

Անհրաժեշտ է նշել, սակայն, որ ղաջարական դինաստիայի իշխանության շրջանի գնահատականը միշտ չէ, որ օբյեկտիվ է եղել։ Իհարկե, ինչպես մենք քիչ հետո կտես-

---

18 *W. Haas*, Iran, New-York, 1946, p. 30.

19 *J. Frazer*, Narrative of a Journey into Khorasan, London, 1825, p. 199.

ենք, զաջարական դինաստիան խիստ բացասական դեր է խաղացել երկիրը կիսագաղութի վերածելու հարցում։ Բայց չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ զաջարական դինաստիայի ոչնչացումից և Փահլավի դինաստիայի իշխանության հաստատումից հետո, հատկապես 30-ական թվականներին, երկրում առկա քաղաքական պայմաններում իրանական պատմագրությունն, ըստ երևույթին, Փահլավի դինաստիայի իշխանության գլուխ գալը արդարացնելու համար, զաջարական իշխանության շրջանը ներկայացնում է ամենամռայլ գույներով և, որպես կանոն, առանց գիտական հիմնավորման։ Այդ մոտեցումը փոխվեց 40—50-ական թվականներին, երբ իրանական պատմաբանները, շրջանառության մեջ դնելով հսկայական քանակությամբ արխիվային նյութեր, գիտականորեն վեր հանեցին զաջարական դինաստիայի իշխանության շրջանի իրադարձությունները և, չնայած հաճախ, օբյեկտիվորեն հանգեցին նույնպիսի եզրակացությունների, ինչպես նախկինում, սակայն այս անգամ արդեն հիմնված փաստական նյութերի և խորը վերլուծությունների վրա։

Բերենք մի քանի բնորոշ օրինակներ։ Մահմուդ Մահմուդը զաջարական դինաստիայի իշխանության գլուխ գալը կապում է անգլիական քաղաքականության հետ։ Նա գտնում է, որ զաջարական դինաստիայի իշխանության հաստատումից հետո Իրանը ներքաշվեց համաշխարհային քաղաքականության ոլորտ։ Շահը և նրան ենթակա գործիչները աշխարհի վիճակից կատարյալ անտեղյակ էին և նրանց յուրաքանչյուր միջոցառումը ի վնաս երկրի էր։ «Ուսումնասիրությունները հաստատում են,—գրում է Մահմուդը,—որ Ֆաթհ Ալի շահը Եվրոպայի քաղաքական վիճակից անտեղյակ էր և ի վիճակի չէր հասկանալ Ֆրանսիայի և Անգլիայի, Անգլիայի և Ռուսաստանի, կամ Ռուսաստանի ու Անգլիայի՝ Ֆրանսիայի դեմ թշնամության պատճառները։ Այդ երեք պետություններից որ մեկը, որ կամենար զաջարական շահերին իրեն գոր-

ծիք դարձնել, մի չնչին նվերով հասնում էր իր նպատակին»[20]:

Եվ իսկապես, ինչպես ցույց են տալիս աղբյուրները, դաջարական թագավորների օրոք օտարերկրացիներից կաշառք վերցնելը պարսավելի չէր: Ընդհակառակը, դարձյալ աղբյուրների վկայությամբ, վեզիրները պարծենում էին, որ իրենք անգլիական կառավարությունից ոռճիկ և նպաստ էին ստանում[21]:

Ուսումնասիրելով դաջարական դինաստիայի գործունեությունը, Մահմուդը հանգում է այն եզրակացության, որ դաջարական թագավորների իշխանության ողջ շրջանում, իրանական կառավարության բոլոր գործիչները, շահից սկսած մինչև վեզիրները և մյուս պաշտոնյաները, բացառությամբ սահմանափակ թվով մարդկանց, ծառայում էին Անգլիային և գործում հօգուտ նրա շահերի: Մինչդեռ, ինչպես վկայում է Մահմուդը, անգլիացիների քաղաքականությունը հաստատապես ուղղված էր դաջարական դինաստիայի դեմ: «Ծխախոտի կոնցեսիայի բեկանումից հետո,— գրում է նա,— անգլիացիները նոր ծրագիր մշակեցին,— որը դաջարական դինաստիան պետք է տաներ դեպի անկում: 1892 թվականից սկսած անգլիական կառավարության քաղաքականության հզոր ապարատը ձեռնամուխ եղավ ոչնչացնել շահին և մեծ վեզիրին և հինգ տարի չանցած, 1896 թվականին, իր քաղաքական մեղքերի համար Նասր էդ Դին շահը սպանվեց: Դրա-

---

[20] محمود محمود، تاریخ روابط سیاسی ایران وانگلیس در قرن نوزدهم میلادی، جلد اول صفحه ۱۸

Հեղինակն իր աշխատության 4-րդ էջում խոսելով XVIII դարի սկզբներին աֆղանների դեպի Իրան կատարած արշավանքի մասին, հավանական է գտնում, որ այն իրականացվել է ոչ առանց արտաքին հրահրիչների, և ուղակիորեն ակնարկում է Անգլիային: Ցանկանալով հաստատել իր այդ ենթադրության իրավացիությունը, հեղինակը նշում է, թե Շահ սուլթան Հոսեյնը աշխատում էր Լյուդովիգ XIV-ի հետ քաղաքական և առևտրական կապեր հաստատել և այդ նպատակով Մոահմադ Ռեզա բեկին ուղարկեց Փարիզ: Այս ամենը խիստ անցանկալի էր անգլիացիներին և նրանք դիմեցին համապատասխան միջոցների:

[21] Նույն տեղում, հատ. 6, էջ 1640:

նից հետո պետք էր սպասել անգլիական լրտեսական հզոր կազմակերպության գործունեության արդյունքներին՝ Աթաբեկի հեռացմանը և երկրի խաղաղության ու անվտանգության վերացմանը ներսում և դրսում»[22]։

Այս նույն միտքն է զարգացնում նաև Հոսեյն Մաքքին, զաջարական վերջին թագավոր Ահմադ շահի կենսագրությանը նվիրված. իր աշխատության մեջ, նշելով, որ եվրոպական տերությունների ուղղակի և անուղղակի միջամտությունները Իրանի ներքին գործերին ավելի սաստկացան՝ սկսած Ֆաթհ Ալի շահի թագավորության շրջանից և որ դրա համար, հիմնականում նպաստավոր պայմաններ էր ստեղծվել երկրում զաջարական դինաստիայի թագավորների քաղաքականությամբ։ «Այս դինաստիայի որոշ թագավորների իշխանության շրջանում,—գրում է նա,—երկրի ներքին գործերին օտարների ազդեցությունը և միջամտությունը այնքան անտանելի ու անհանդուրժելի էր, որ մինչևիսկ որոշ թագավորներ չեն դիմացել այդ ճնշումներին ու միջամտություններին ու նրանց դժգոհությունն իր արտացոլումն է գտել պատմության էջերում»[23]։

Հիշյալ հարցին անդրադառնում է նաև Աբդոլլահ Ռազին։ Նա արձանագրում է, որ զաջարների թագավորության շրջանում, Իրանում ուժեղացավ օտարների ազդեցությունը և սասանվեցին երկրի անկախության հիմքերը։ «Իրանը կորցրեց դարեր շարունակ Ասիայում ունեցած իր բարձր դիրքը և Դարյուշի երկիրը վերածվեց տարբեր քաղաքականությունների բախման թատերաբեմի»։

Աբդոլլահ Ռազին այս ամենը հետևանք է համարում, մի կողմից եվրոպացիների ագահության և ընդհանրապես Արևելքի երկրները վերջնականապես նվաճելու նրանց ձգտման և մյուս կողմից՝ զաջարական շահերի ու բարձրաստիճան պալատականների Իրանի նկատմամբ բացահայտ դավաճանական քաղաքականության, որը պայմաններ էր ստեղ-

---

22 محمود محمود، تاریخ روابط سیاسی ایران و انگلیس... جلد ششم صفحه ۱۶۸۶

23 حسین مکی، مختصری از زندگانی سیاسی سلطان احمد شاه قاجار، تهران ۱۳۲۳، صفحه ۵

ծել օտարերկրյա ներթափանցման համար, հարցականի տակ էր դրել երկրի անկախությունը, դժգոհություն էր առաջացրել ժողովրդի մեջ և հասցրել հեղափոխության[24]:

Ղաջարական դինաստիայի ավերիչ քաղաքականության հետևանքով երկրում առաջացած համընդհանուր դժգոհության սկզբնավորման և պատճառների հարցին անդրադառնում է նաև Հասան Հալաջը: Նա գրում է, որ իրանական հեղափոխության առաջացման և ղաջարական դինաստիայի տապալման պատճառներն ուսումնասիրելիս պետք է ելնել այն բանից, որ իրանական հեղափոխության արմատները սկիզբ առան այն ժամանակվանից, երբ «Իրանը ենթարկվեց Արևմուտքի քաղաքական ներխուժմանը, Կենտրոնական Ասիան և Մերձավոր Արևելքը վերածվեցին եվրոպական որոշ պետությունների դավադրությունների թատերաբեմի, և հարևան երկրների ներկայացուցիչները սկսեցին միջամտել իրանական հասարակության տնտեսական, հասարակական, քաղաքական և ռազմական բնագավառներին, նրա կրոնական և ազգային սովորություններին»[25]:

Հասան Հալաջը «ինչպես արդեն նշել ենք, երկրի հետադիմության պատճառներից է համարում նաև ղաջարական թագավորների անտարբերությունը «երկրի շինության և ժողովրդի բարեկեցության» հանդեպ, որոնց ուղղությամբ նրանք այդպես էլ որևէ քայլ չձեռնարկեցին[26]:

Այդ ժամանակաշրջանում երկրում տիրող վիճակի, ղաջարական շահերի բռնապետության, պաշտոնյաների կամայականության, օրենքների կատարյալ բացակայության հետևանքով ժողովրդի ծայրահեղ իրավազուրկ և շարքաշ վիճակի մասին վկայություններ կան նաև պարսիկ այլ հեղինակների գործերում:

Հաբիբ Օլլահ Մոխթարին, օրինակ, իր «Իրանի զարթոնքի պատմությունը» աշխատության մեջ, ինչպես արդեն

---

24 عبدالله رازی، تاریخ مفصل ایران از تأسیس سلسله ماد تا عصر حاضر، تهران ۱۳۳۵، صفحه ۴۵۱

25 حسن حلاج، تاریخ تحولات سیاسی ایران، تهران ۱۳۷۷، صفحه ۷:

26 Նույն տեղում, էջ 10:

նշել ենք, անդրադառնում է զաջարական վերջին թագավորների օրոք երկրի քաղաքական վիճակին և թվարկում է բոլոր այն գործոնները, որոնք «ստեղծել էին հեղձուցիչ մթնոլորտ և սպառել բոլոր դասակարգերի համբերությունը»[27]։

Այդ շրջանում Իրանի քայքայումն ու ավերումը Մոխթարին բացատրում է նաև նրանով, որ զաջարական շահերը զուրկ էին հայրենասիրության զգացմունքներից և որ նրանց օրոք, երբ քիչ թե շատ «հայրենասեր և ժողովրդասեր» մեկը իշխանություն էր ստանում, ապա օտարների հրահրմամբ ձերբակալվում և ոչնչացվում էր[28]։

* *

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Իրանում թագավորել են երկու շահեր. Նասր էդ Դին շահը՝ 1848—1896 թթ. և Մոզաֆար էդ Դին շահը՝ 1896—1906 թթ.։ Նրանց թագավորության տարիներն Իրանի նոր շրջանի պատմության մեջ ունեն իրենց ուրույն տեղը, քանի որ այդ ժամանակ մի կողմից Իրանը փաստորեն վերածվեց կիսագաղութի, իսկ մյուս կողմից երկրում ծավալվեցին հեղափոխական շարժումներ և դրվեց սահմանադրության պայքարի հիմքը։

Զաջարական շրջանի շահերի քաղաքականության էությունն ըմբռնելու առումով բնորոշ է Նասր էդ Դին շահի պապի՝ Ֆաթհ Ալի շահի կտակը. «Եթե ուզում ես Իրանում հանգիստ թագավորել, ջանա, որ ժողովուրդը սոված լինի և անգրագետ»[29]։

Իրանի միահեծան ղեկավարը շահն էր, որը երկիրը կառավարում էր ավանդական, մշակված ձևերով։ Շահն ինքը կառավարությունն էր, բացարձակ բռնապետ և ենթակա չէր որևէ վերահսկողության։ Նա միակ գործադիր իշխանությունն էր, իսկ նրա մինիստրները բարձրաստիճան ծառաներ էին, որոնց պարտականությունն էր կատարել շահի հրամանները։

---

27 حبیب‌الله مختاری، تاریخ بیداری ایران، تهران ۱۳۲۶، صفحه ۳۵

28 Նույն տեղում, էջ 452։

29 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران ۱۳۲۸، صفحه ۱۱۴

Բոլոր հպատակների կյանքն ու ունեցվածքը ենթակա էր նրա քմահաճույքին: Այդ իշխանությունը տարածվում էր նաև նրա որդիների, ինչպես նաև պետական բոլոր պաշտոնյաների վրա, որոնք նույնքան դաժան էին իրենց ենթակաների նկատմամբ:

Տալով Իրանի կառավարման սիստեմի պատկերը, անգլիացի Բիշոփը հանգում է այն եզրակացության, որ Իրանի թուլությունն ու քայքայվածությունն առաջին հերթին արդյունք էին իշխող վարչական սիստեմի և ոչ թե մյուս հանգամանքների, որոնք վերջին հաշվով նույնպես արդյունք էին վատ կառավարման[30]: Երևույթների նման մեկնաբանության կարելի է հանդիպել նաև իրանական և օտարերկրյա բազմաթիվ այլ հեղինակների աշխատություններում:

Իր նախորդներից չէր տարբերվում նաև Նասր էդ Դին շահը: Նա երկրի տերն ու տնօրենն էր և ստանում էր հսկայական եկամուտներ: Դժվար է շահի եկամուտների չափերի ստույգ որոշումը, բայց, որոշ տվյալներով այն մոտավորապես կազմել է տարեկան 7 միլիոն թուման կամ 14 միլիոն ռուբլի: 1888—1889 թթ. շահի եկամուտը 5,537,000 թուման էր, որից 800,000 թումանը ստացվել էր մաքսերից, 25,000 դանձարանից, 21,000 հեռագրատներից, 461,000 ուղղակի հարկերից, այդ թվում 360,000 թուման դրամով, 100 հազար հացահատիկով, դարմանով և այլն[31]:

Շահը աչքի էր ընկնում իր ագահությամբ և կաշառակերությամբ: Միսլ Ռուսթամը իր «Իրանը Նասր էդ Դին շահի օրոք» գրքում խոսելով ապօրինի ճանապարհներով Նասր էդ Դին շահի ձեռք բերած եկամուտների մասին, գրում է. «Շահը սիրում էր նվերներ, փեշքեշներ, որը նա ընդունում էր բոլորից՝ ինչ էլ որ այն լիներ: Մինչևիսկ զորահանդեսների ժամանակ գնդերի հրամանատարները նրան ոսկի դրամ էին նվիրաբերում, նայած գնդի կազմի թվին, չքաշ-

---

30 *I. B. Bishop.* Journeys in Persia and Kurdistan, vol. II, London, 1891, pp. 255—259.

31 *М. Л. Томара,* Экономическое положение Персии, СПб, 1895, стр. 82.

վելով մինչևիսկ փոքր գումարից, ինչպես, օրինակ, հարյուր թումանից»[32]։

Իր դեմ կատարված մի քանի անհաջող մահափորձերից և այլ դեպքերից հետո, Նասր էդ Դին շահը, ինչպես բոլոր միապետները, դարձավ է՛լ ավելի դաժան և բռնակալ։ Նա որոշեց ամենակատաղի կերպով պայքարել երկրում ծավալվող շարժումների դեմ, ոչնչացնել իրեն հայտնի բոլոր կազմակերպությունները՝ կրոնական, թե աշխարհիկ։ Նրան հաջողվեց ձերբակալել շարժման ղեկավարների և ամենադաժան հաշվեհարդար տեսնել նրանց հետ։ Որոշ աղբյուրներ նրա կատարած մահապատիժների թիվը հասցնում են հազարի։

Նասր էդ Դին շահի կարգադրությամբ շարժման բազմաթիվ մասնակիցներ, հատկապես արգելված գրականության և մամուլի հրատարակիչներ, ձերբակալվեցին և մահապատժի ենթարկվեցին։ Հետապնդումներից և մահապատժից խուսափելու և այս կամ այն գործչի փրկության միակ ուղին կաշառքն էր։ Հասկանալի է, որ նման բռնապետի գործունեությունը պետք է գտնվեր XIX դարի երկրորդ կեսի Իրանի պատմությունն ուսումնասիրող հեղինակների ուշադրության կենտրոնում։ Քանի որ, ինչպես իրավացիորեն նշում է Էբրահիմ Թեյմուրին, նրա «Թագավորության շրջանը ժողովրդի հետամնացության և դժբախտության պատճառների ուսումնասիրման տեսակետից Իրանի պատմության մեջ յուրահատուկ տեղ ունի»[33]։ Եվ իսկապես, պարսիկ հեղինակներն ամենալայն կերպով քննարկել են Նասր էդ Դին շահի ներքին և արտաքին քաղաքականությունը և տվել տարբեր, հաճախ հակասական գնահատականներ։ Եթե հեղինակների մեծ մասը ամենախիստ քննադատության է ենթարկում շահին և հատկապես նրա դերը երկիրը կիսագաղութի վերածելու գործում, ապա որոշ հեղինակներ. փորձում են պաշտպանել կամ արդարացնել նրան։

---

[32] *Мисль-Рустам,* Персия при Наср Эдин Шахе с 1882 по 1888 г. СПб, 1897, стр. 61.

[33] ابراهیم تیموری، عصر بی‌خبری یا تاریخ امتیازات در ایران، تهران ۱۳۳۲، صفحه ۱

«Նասր էդ Դին շահը,— գրում է Աբդոլլահ Ռազին,— կարող էր իր երկարատև թագավորության ընթացքում երկրին մեծ ծառայություններ մատուցել, սակայն ցավոք, չնայած հաստատ գիտեր, որ Իրանը անհրաժեշտ բարեփոխումների կարիք ունի, ընածին բռնության և արտակարգ ինքնավստահության հետևանքով այն բարեփոխումներն էլ, որ ուրիշներն էին նախատեսել, անավարտ թողեց և հնարավորին չափ ջանաց, որպեսզի ժողովրդի զարթոնքը կասեցվի: Բայց Իրանի ազնիվ ժողովուրդը այլևս անկարող էր բռնությանը դիմանալու ու համբերելու: Նասր էդ Դին շահի մահվան պահին հեղափոխության նախադրյալները բոլոր տեսակետներից առկա էին»[34]:

Մալեք զադեն նկարագրում է այսպիսի մի հետաքրքիր դեպք: Նասր էդ Դին շահի օրոք Մոհամադ Հոսեյն Զեքա ալ Մոլքը օտար լեզուներից որոշ գրքեր և հոդվածներ էր թարգմանում, որոնց մեջ հանդիպում էր նաև օրենք բառին: Օրինակ, գրում էր, որ այսինչ վեզիրը կամ այնինչ զորավարը կամ վաճառականը ձերբակալվեց օրենքին հակառակ արարքի համար: Կամ այսինչ մարդը օրենքի համաձայն դատապարտվեց. կամ ավելի բարձր պաշտոն ստացավ: Քանի որ օրենք խոսքը դուր չէր գալիս թագավորին և պալատականներին, այդ պատվարժան թարգմանչին ստիպում էին, որ իր թարգմանություններում օրենք բառը չօգտագործի, և նա ստիպված օրենք բառի փոխարեն (قاعده) կարգ կամ սովորություն էր օգտագործում: Օրինակ, գրում էր՝ այսինչը Լոնդոնում սովորության համաձայն երեք տարվա բանտարկության դատապարտվեց[35]:

Սակայն, ինչպես վկայում են աղբյուրները, Եվրոպայի նոր գաղափարների դեմ շահի այդ ատելությունը չէր խանգարում, որ նա մեծ հակում ցուցաբերի եվրոպական ծագում ունեցող ապրանքների նկատմամբ և ընդօրինակի եվրոպացիներին այն բոլոր բնագավառներում, որոնք վերաբերում էին զվարճալիքին:

---

34 عبدالله رازی، تاریخ مفصل ایران... صفحه ۴۹۷

35 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، ۱۳۲۸، صفحه ۱۲۵

Պատահական չէ, որ եվրոպական ապրանքների ներմուծումը Իրան Նասր էդ Դին շահի օրոք մեծ չափով ավելացավ, որի հետևանքով դեռևս Միրզա Թաղի խան Ամիր Քաբիրի ժամանակվանից (1848 թ.—Հ. Ե.) Իրանում ստեղծված գործվածքային գործարանները և ընդհանրապես արհեստները անկում ապրեցին և մեծ թվով արհեստավորներ մնացին անգործ։ Այսպիսով, ներքին արտադրությունը գնալով իր տեղը զիջում էր արտասահմանյան ապրանքներին։

Նասր էդ Դին շահի թագավորության հիսուն տարիների ընթացքում Անգլիայի և ցարական Ռուսաստանի ավերիչ մրցակցության և պալատական գործիչների ագիտության, կաշառակերության և այլասերվածության, նեխած վարչական ապարատի հետևանքով երկիրը այնպիսի վիճակի հասցվեց, որ ինչպես եզրակացնում է Էբրահիմ Թեյմուրին. «Եթե աշխարհում հօգուտ Իրանի որոշ իրադարձություններ տեղի չունենային, այսօր Իրանի անունն էլ մնացած չէր լինի»[35]։ Մեկ այլ հեղինակ, Մեհդի Մալեք զադեն գրում է, որ Նասր էդ Դին շահի օրոք օտարերկրացիներին տրված բոլոր կոնցեսիաների և այլ արտոնությունների պատմությունը ուսումնասիրելով կարելի է հետևեցնել, որ օտար երկրների հետ բոլոր երեսունվեց առևտրական և քաղաքական պայմանագրերի կնքումը «տեղի է ունեցել կաշառքի և դավաճանության միջոցով և հիմք է դրել Իրանի դժբախտության»[37]։

Բնութագրելով Նասր էդ Դին շահի բարձրաստիճան պաշտոնյաների ու պալատականների վարած քաղաքականությունը, Թեյմուրին գրում է, որ բոլոր վեզիրները կամ հաքեմները կապերի և գործարքների մեջ էին կամ ռուսական, կամ անգլիական դեսպանության հետ, հաճախ նրանցից որևէ մեկի հովանավորությամբ պաշտոն էին ստանում և նրանց դրդմամբ ու պահանջով ամեն տեսակի դավաճանության և ոճրի դիմում։ Թեյմուրին, այնուհետև, նշում է,

---

[36] ابراهیم تیموری، عصر بی‌خبری یا تاریخ امتیازات در ایران، تهران ۱۳۳۲، صفحه ۱

[37] مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران ۱۳۲۸، صفحه ۱۳۰

որ լավատեղյակ լինելով այդ ամենին, շահը, այնուամենայնիվ, ոչ միայն չփորձեց մաքրել նրանց շարքերը, և հող նախապատրաստել հայրենասեր գործիչներ դաստիարակելու համար, այլև, եթե գտնվում էին դրական գործունեության ընդունակ մարդիկ, ապա վախենալով նրանց գործիմացությունից և ենթարկվելով ստոր մարդկանց դավադրություններին, պաշտոնանկ էր անում նրանց կամ նույնիսկ ֆիզիկապես ոչնչացնում[38]:

Որոշ հեղինակներ, Նասր էդ Դին շահին արդարացնելու նպատակով, վերը նկարագրված իրադրությունը ձգտում են հետևանք համարել միայն Իրանում Անգլիայի և Ռուսաստանի քաղաքականության, նրանց կատաղի մրցակցության ու բախումների, երբ իրենց ազդեցությունն Իրանում ամրապնդելու նպատակով նրանք դիմում էին ամենաանմարդկային արարքների և կաշառված ու իրենց հավատարիմ մարդկանց՝ սադրագամի, վեզիրի և այլ պաշտոնյաների անունների տակ փաթաթում Իրանի դժբախտ ժողովրդի վզին:

Օրինակ՝ Հաջ Միրզա Յահյա Դովլաթաբադին, որը հենց զաջարների թագավորության շրջանի պաշտոնյաներից է եղել, իր հուշերում գրում է. «Նասր էդ Դին շահը անցել էր Միրզա Թաղի խան Ամիր Քաբիրի և Միրզա Հոսեյն խան Սեփահսալարի[39] մեծ վեզիրության ժամանակաշրջանը, բազմիցս ճամփորդել էր Եվրոպա, դիտել մեծ ու փոքր երկրներ, ծանոթացել աշխարհի առաջադիմությանն ու զարգացմանը: Նա ուշիմ էր ու գործունյա... և լավագույն ձևով կկարողանար Իրանը շենացնել: Բայց ափսոս, որ հարավից ու հյուսիսից եկող վտանգի նկատմամբ նրա անտարբերությունը, ինչպես և օտարերկրյա մրցակցությունը... նրան մոլորեցրին և

---

[38] ابراهیم تیموری، عصر بی‌خبری یا تاریخ امتیازات در ایران، تهران ۱۳۳۳، صفحه ۱۸

[39] Հենց այն հանգամանքը, որ հեղինակը այս երկու գործիչների մեջ հավասարության նշան է դնում, ցույց է տալիս նրա կողմնակալ մոտեցումը երևույթներին: Ըստ ամենայնի Դովլաթաբադին զաջարական ֆեոդալական ազնվականության ներկայացուցիչ էր և նրա դասակարգային շահերի արտահայտիչը:

նա այնպես տարվեց շվայտ կյանքով, որ այլևս ուրիշ որևէ գործով զբաղվելու ժամանակ չուներ»[40]։

Այդ միտքը կրկնում է նաև Հոսեյն Մաքքին, նշելով, որ «Իրանի քաղաքական պատմությունը բազմաթիվ սև էջեր է պարունակում Իրանի ներքին գործերին եվրոպական երկրների, հատկապես հյուսիսի և հարավի հարևանների, ապօրինի միջամտությունների վերաբերյալ», և այդ փաստը հաստատելու համար մեջբերում է կատարում Նասր էդ Դին շահի օրագրից, որտեղ ասված է.

«Ուզում եմ գնալ երկրի հյուսիսային մասերը, Անգլիայի դեսպանն է բողոքում։ Ուզում եմ հարավ գնալ՝ Ռուսական դեսպանն է բողոքում։ Սատանան տանի այսպիսի թագավորությունը, երբ շահը իրավունք չունի իր երկրի հյուսիսը կամ հարավը ճամփորդել»[41]։

Թեյմուրին ևս, շահին պաշտպանելու նպատակով գրում է, որ ժողովների ու խորհրդակցությունների ժամանակ, երբ Նասր էդ Դին շահը պալատականների ու կառավարության անդամների ներկայությամբ որևէ քաղաքական ու զաղտնի հարց էր արծարծում, գիտենալով օտարերկրյա դեսպանությունների հետ նրանց կապերի մասին, ակնարկներով զգուշացնում էր, որ օտարների օգտին լրտեսությունից խուսափեն և երկրի զաղտնի լուրերը նրանց չհաղորդեն, բայց, «դժբախտաբար, իր այս կարգադրությունից ու հանձնարարությունից ոչ մի արդյունք չէր ստանում»[42]։

Այս ամենն, իհարկե, ճիշտ է։ Սակայն փաստերը ցույց են տալիս, որ Նասր էդ Դին շահն իր թագավորության ամբողջ ժամանակաշրջանում մտադիր չէր որևէ չափով սահմանափակել իր միահեծան իշխանությունը, ժողովրդին հնարավորություն տալ ազատ կերպով տնօրինել իր բախտը և միշտ խուսափում էր այնպիսի գործողություններից, որոնք

---

40 حاج میرزا یحیی دولت آبادی، حیات یحیی، جلد اول، تهران ۱۹۵۷، صفحه ۴۵

41 حسین مکی، مختصری از زندگانی سیاسی سلطان احمد شاه قاجار، تهران ۱۳۲۲، صفحه ۵

42 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۲۲

հակասում էին նրա անձնական շահերին: Այդ հարցին անդրադարձել են պարսիկ մի շարք հեղինակներ:

Էբրահիմ Թեյմուրին, որը ամենախիստ կերպով մերկացնում է զաջարական դինաստիան և նրա խաղացած դերը երկիրը կիսագաղութի վերածվելու գործում, գրում է, որ Նասր էդ Դին շահը իր վեզիրներին կարգադրում էր երկրի զարգացման ու բարգավաճման համար ծրագրեր մշակել և, չնայած պարտավորվում էր դրանք իրականացնել, սակայն այդ ուղղությամբ երբեք որևէ լուրջ քայլ չձեռնարկեց: Ավելին, իր կյանքի վերջում երկրի կենսական տարբեր աղբյուրները համարյա ձրի, կոնցեսիաների ձևով տվեց օտարերկրացիներին:

Հեղինակը նշում է այն հանգամանքը, որ ոմանք Նասր էդ Դին շահի որոշ գործերը կամ հայտարարությունները հիմք ընդունելով, փորձել են նրան արդարացնել և ներկայացնել, որպես երկրի առաջադիմության ու զարգացման ջատագով, որ Նասր էդ Դին շահը, իբր, ջանում էր Իրանը տանել քաղաքակրթության ուղիով, բայց հյուսիսի և հարավի գաղութակալական քաղաքականության և դավաճան ղեկավարների պատճառով իր նպատակին չհասավ[43]:

Ինչպես տեսնում ենք, հեղինակը միանգամայն ճշմարտացիորեն է գնահատում Նասր էդ Դին շահի թագավորության ժամանակաշրջանը, չժխտելով, միաժամանակ, որ նրա թագավորության շրջանում Իրանը վերածվել էր երկու հզոր մրցակիցների՝ ցարական Ռուսաստանի և Անգլիայի բախման հրապարակի, և որ նրանցից յուրաքանչյուրն իր ազդեցությունը տարածելու և նպատակին հասնելու համար չէր խուսափում ամեն տեսակի հակամարդկային արարքներից[44]:

Հետաքրքիր է նշել, որ Թեյմուրին, այնուամենայնիվ, իր գնահատականը մինչև վերջը չի հասցնում և կարծես, նա ևս ինչ-որ կռվաններ է փնտրում Նասր էդ Դին շահին արդարացնելու համար: Հենց նույն աշխատության մեջ նա գրում է, որ չնայած Նասր էդ Դին շահը իր թագավորության տարի-

---

43 Նույն տեղում, էջ 8:

44 Նույն տեղում, էջ 5:

ներին քաղաքական բազմաթիվ և անուղղելի սխալներ է գործել և երկու հզոր մրցակիցների դավադիր և գործիմաց ներկայացուցիչները հաճախ են նրան խաբել, սակայն «ազնվությունը պահանջում է ասել, որ զաջարական դինաստիայի բոլոր թագավորներից նա ամենալավատեղյակ և համաշխարհային քաղաքականությանը ծանոթ թագավորն էր, շատ դեպքերում իր դերը հաջող է կատարել և կարողացել է Իրանը փրկել այն վտանգներից, որոնք արդյունք էին երկու հզոր հարևանների այդ տարիներին սաստիկ շափեր ընդունած մրցակցության և պայքարի»[45]:

Նասր էդ Դին շահի թագավորության շրջանի խորը վերլուծությամբ հանդես է եկել նաև Մահմուդ Մահմուդը: Խոսելով նրա թագավորության վերջին տարիների մասին, Մահմուդը նշում է, որ, չնայած Նասր էդ Դին շահի օրոք Իրանի արտաքուստ հանդարտությանն ու անդորրին, ինչպես նաև ժողովրդի հանգիստ ու խաղաղ թվացող կյանքին, Իրանն, իրականում, անկում ու քայքայում էր ապրում: Երկրում տիրող այդ վիճակը Մահմուդը հետևանք է համարում այն բանի, որ շահից սկսած մինչև պալատական փոքրագույն պաշտոնյան, ընկած անձնական շահի և հաճույքների հետևից, ամենևին չէին մտահոգվում ժողովրդի վիճակով: Հետևանքը եղավ այն, որ այդ հիսուն տարիների ընթացքում Իրանի նյութական և բարոյական ուժերը ամբողջովին հյուծվեցին, օտարերկրացիների ազդեցությունն աճեց և նրանց տրվեցին բազմաթիվ արտոնություններ, առանց երկրի ու ժողովրդի շահերը նկատի առնելու»[46]:

Մահմուդ Մահմուդն իր աշխատության հինգերորդ հատորում, ընդհանրացնելով զաջարական դինաստիայի իշխանության ամբողջ շրջանը և խոսելով, հատկապես, Խորասանի և Սիստանի նահանգների պատմության մասին, հանգում է հետևյալ եզրակացության.

«Զաջարական դինաստիայի թագավորների շարքում չի կարելի մատնացույց անել մեկին, որը խոհեմաբար որևէ լուրջ միջոցի դիմեր Խորասանը և Սիստանը պաշտպանելու

---

[45] Նույն տեղում, էջ 15:

[46] محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد چهارم، صفحه ۱۱۲۱

համար: Նրանցից ամենահզորը Նասր էդ Դին շահն էր, որը, սակայն, Իրանը պաշտպանելու որևէ հակում չի ցուցաբերել»[47]:

Նասր էդ Դին շահը կես դար թագավորելուց հետո Թեհրանից ոչ հեռու գտնվող Շահ Աբդոլ Ազիմ կոչվող վայրի մզկիթի բակում սպանվեց ոմն Միրզա Ռեզա Քերմանիի զենդակով: Վերջինս, իր իսկ վկայությամբ, այդ քայլին դիմեց, քանի որ տեսնում էր, որ երկիրը ավերված էր, տիրում էր «զուլումը» և բռնությունը, իշխում էին դավաճան տարրերը, բազմաթիվ կոնցեսիաներ էին տրվել օտարերկրացիներին և երկիրը փաստորեն ընկել էր «օտարների ձեռքը»: Նա համոզմունք էր հայտնում, որ այն թագավորը, որը հիսուն տարի իշխել է և արդյունքը եղել է երկրի ավերումն ու ղեկավարության անցումը մի խումբ այլասերված բաշիբոզուկների ձեռքը, պետք է ոչնչանա, և ի վերջո՝ «այդ ծառը պետք է կտրել, որպեսզի այլևս այդպիսի պտուղ չտա»[48]:

Բայց մի ամբողջ հասարակարգի գոյությունը նրա միահեծան ղեկավարի հետ կապելը, անշուշտ, պարզամտություն է, քանի որ շահը ոչ թե այդ հասարակարգի հեղինակն էր, այլ նրա արգասիքը: Հետագա իրադարձությունները եկան ապացուցելու այդ ճշմարտությունը:

Փաստերը ցույց են տալիս, որ դարավերջին երկիրն ապրում էր քաղաքական և տնտեսական լուրջ ճգնաժամ:

«Նասր էդ Դին շահի օրոք երկրի վատ վիճակը քողարկվում էր, սակայն նրա իշխանության ավարտից հետո ամենինչ ակնհայտ դարձավ և պարզվեց, թե երկիրը ինչ դրության մեջ է: Օտարների միջամտությունը, տնտեսական դժվարությունները, պալատականների և ձրիակերների ագահությունը, պաշտոնյաների դավաճանությունը, արքայազունների և հաբեմների դաժանությունն ու բռնությունը, ինչպես և օտարներին տրված կարևոր կոնցեսիաները դժգոհություն էին առաջացրել ժողովրդի մեջ»[49]:

Նասր էդ Դին շահի թագավորության շրջանն ամփոփե-

---

47 Նույն տեղում, հատ. 5, էջ 1324:

48 Նույն տեղում, էջ 28:

49 عبدالله رازی، تاریخ مفصل ایران، تهران ۱۳۳۵، صفحه ۵۰۷

լով կարելի է համաձայնել այն գնահատականի հետ, որ «Նասր էդ Դին շահն իր հիսունամյա թագավորության շրջանում իր բռնությամբ և դաժանությամբ մի պատնեշ քաշեց երկրի շուրջը և Իրանը մեկուսացրեց աշխարհի զարգացած երկրներից ու ազատ ժողովուրդներից: Զուլումի և խավարի այդ միջավայրում արդարության, ազատության և լուսավորության ամենափոքր նշույլն անգամ չկար: Եթե որևէ ազատամիտ մարդ մտքերը լուսավորելու ուղղությամբ որևէ քայլի էր դիմում, կամ օրենքի ու հասարակական արդարության մասին էր խոսում, նրա կյանքին վերջ էր տրվում: Շահը հաճախ ասել է. «իմ պետության ղեկավարներից ով որ բաղամը կարողանա տարբերել Բելգիայից, ինձ պետք չէ և նա պիտի վտարվի պետական ապարատից»[50]:

Նասր էդ Դին շահն իր հաջորդին՝ Մոզաֆար էդ Դին շահին, թողեց մի երկիր, որը «մինչև ուղն ու ծուծն ապականված էր, նրա յուրաքանչյուր մասը կոնցեսիաների ձևով օտարների տրամադրության տակ էր ընկել, և երկիրը ղեկավարվում էր մի բուռ ագահ, տգետ և դավաճան մարդկանց կողմից»[51]:

Գաղութակալական տերությունները Մոզաֆար էդ Դին շահի թագավորության շրջանում ևս շարունակեցին ներթափանցել Իրանի բոլոր բնագավառները: Նրա օրոք էր, որ Բահրեյնը վերջնականապես անցավ անգլիացիների տիրապետության տակ, Հիրմանդ գետի ջրերի մի մասին տիրացան աֆղանները և օսմանցիները իրանական սահմաններում ոտնձգությունների դիմեցին: Մի շարք նոր արտոնություններ տրվեցին նաև օտարերկրացիներին, ինչպես, օրինակ, նորոգվեց Ռուսաստանին տրված երկաթգծի կառուցման կոնցեսիան, գերմանացիներին տրամադրվեց «գերմանական բանկ» ստեղծելու իրավունքը, Ղասրե Շիրինի նավթը հանձնվեց անգլիացիներին և այլն[52]:

---

50 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، جلد اول، تهران ۱۳۲۸، صفحه ۱۳۴

51 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۲۰۱

52 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، جلد اول، تهران ۱۳۲۸، صفحه ۱۴۸

*
* *

Նասր էդ Դին շահը իր երկարատև թագավորության տարիներին մի քանի անգամ ճանապարհորդել է եվրոպական տարբեր երկրներ: Քանի որ այդ ճանապարհորդությունները երկրի տնտեսական և քաղաքական գաղութացման տեսակետից մեծ նշանակություն են ունեցել, ուստի և հարկ ենք համարում այդ հարցի վրա կանգ առնել առանձին:

Էբրահիմ Թեյմուրին գրում է, որ Նասր էդ Դին շահը Եվրոպա կատարած իր ճամփորդություններից ոչ միայն որևէ փորձ ձեռք չբերեց, որը կիրառեր հօգուտ Իրանի, այլև Եվրոպական տարբեր երկրներում ժողովուրդների վայելած ազատությունների հետ ծանոթությունը նրան սարսափեցրեց: Հետագայում նա արգելում էր, որ իրանցիներն ուսանելու համար Եվրոպա գնան[53]:

Պետք է նշել, որ շահի այդ կարգադրության համաձայն, մինչև սահմանադրության հաստատումը, հատկապես դեպի հանրապետական կարգեր ունեցող երկրներ ճանապարհորդելն արգելված էր և կառավարությունը թույլ չէր տալիս, որ Իրանի ժողովուրդը դրսի աշխարհի հետ կապերի մեջ մտնի և քաղաքակրթության և ազատության հետ առընչվի: Այդ շրջանում դեպի եվրոպական երկրներ ճամփորդած իրանցիների թիվը մի քանի հարյուր հոգուց ավելին չէր և նրանց մեծամասնությունը այդ երկրներն էր գնում միայն առևտրական գործերով[54]:

Իր սպանությունից հինգ ամիս առաջ, Մոհամեդ Ալի խան Ալա օլ Սալթանեի՝ Լոնդոնից ուղարկած գաղտնագրված հեռագրի վրա Նասր էդ Դին շահը մակագրել է հետևյալ խոսքերը. «Աղա Հասանը առանց իրավունքի է գնացել Եվրոպա: Չգիտեմ ձեզանից թույլտվություն վերցրե՞լ է, թե՞ ոչ: Ամեն պարագայում նրան պետք է շուտափույթ ետ վերադարձնել: Շատ վատ է, եթե իրանցիների ոտքը, այսպիսով, բացվի դեպի Եվրոպա: Եթե արգելք չհանդիսանանք, այսու-

---

53 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۵۰

54 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران ۱۳۲۸، صفحه ۱۱۳

հետև Իրանից Եվրոպա այցելողների թիվը կհասնի տասնյակ հազարների և դա շատ վատ հետևանքներ կունենա»[55]: Նման մակագրության հեղինակը մի մարդ էր, որը, ինչպես Միսլ Ռուսթամն է գրում. «Իրեն մեծ ռեֆորմատոր էր պատկերացնում և ուզում էր նմանվել Պետրոս Մեծին»[56]:

Ղաջարական վերջին շահերի Եվրոպա կատարած ճամփորդությունները նույնպես մանրամասն քննարկվել են Իրանական պատմագրության մեջ:

Այս հարցում ևս որոշ հեղինակներ փորձել են արդարացնել շահերին կամ վեզիրներին, նրանց ճամփորդությունների մեջ տեսնելով Իրանի օգուտները հետապնդող քաղաքական նպատակներ: Օրինակ, Մահմուդ Ֆարհադ Մոթամեդը իր «Իրանի և օսմանյան պետության քաղաքական հարաբերությունների պատմությունը» գրքում այն միտքն է հայտնում, որ, իբր, Նասր էդ Դին շահը անհանգստացած էր Իրանի տարբեր բնագավառներում իրենց տիրապետությունը հաստատող երկու հզոր հարևանների քաղաքականությունից և մտահոգված երկրի ապագայով և ճակատագրով, մտադիր էր գնալ Եվրոպա, մեծ պետությունների ղեկավարների հետ մոտիկից կապերի մեջ մտնել, հնարավորության սահմաններում տեղեկություններ ձեռք բերել նրանց նվաճողական ծրագրերի մասին և դրանց իրականացումը կանխելու համար շտապ միջոցների դիմել[57]: «Սակայն,—գրում է հեղինակը,—Անգլիան խուսափեց շահին ընդունել և, այդպիսով, նրան չհաջողվեց Անգլիայի ղեկավարների հետ անմիջական շփման մեջ մտնել և հասկանալ, թե Անգլիան, Աֆղանստանում իր նվաճողական քաղաքականությանը զուգահեռ, ինչպիսի քաղաքականություն է վարելու Իրանի նկատմամբ, ինչպես է օգնելու Իրանին, որպեսզի ռուսները Մերվը չգրավեն, ինչպես է ջանալու պաշտպանել և ամրապնդել Իրանը: Արդյոք անդ-

---

[55] Նույն տեղում, էջ 6:

[56] *Мисль Рустам*, Персия при Наср Эдин Шахе с 1882 г. по 1888 г., СПб., 197, стр. 57.

[57] محمود فرهاد معتمد، تاریخ روابط سیاسی ایران و عثمانی ج جلد دوم سپهسالار اعظم-تهران-۱۹۵، صفحه ۲۷

լիացիները ռուսական նվաճումները կասեցնելու ինչ մտադրություններ ունեն, կամ թե Իրանը պաշտպանելու ծրագրից հրաժարվելով այն զոհելո՞ւ են ցարական քաղաքականությանը»: Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ այս հարցերը անպատասխան մնացին, քանի որ այդ ժամանակ Անգլիայի քաղաքականությունը պահանջում էր Իրանի շահին Անգլիա չթողնել, և նրան օգնության և հովանավորության ոչ մի խոստում չտալ: Ինչպես հատուկ էր Անգլիայի քաղաքագետներին, ելնելով Անգլիայի շահերից նրանք մտադիր էին Իրանի ճակատագիրը վճռել երկրից դուրս: Ամեն պարագայում շահը այս ճամփորդությունից վերադարձավ առանց որևէ արդյունքի[58]:

Հետաքրքրական է նշել, որ մինչևիսկ այնպիսի հեղինակ, ինչպիսին է Մահմուդ Մահմուդը, որն իր բազմահատոր աշխատության մեջ մանրամասն վերլուծության է ենթարկում անգլիական իմպերիալիստների գաղութատիրական քաղաքականությունը և իրանական իշխող շրջանների դավաճանական վարքագիծը, փորձում է ինչ-որ ձևով իմաստավորել շահի և նրա վեզիրների ճամփորդությունները դեպի Եվրոպա: Օրինակ, խոսելով Նասր էդ Դին շահի Լոնդոն կատարած ճամփորդության մասին, գրում է, որ անգլիացիների կազմակերպած շքեղ ընդունելությունը և բազմաթիվ հյուրասիրությունները միայն իրանական ղեկավարներին սիրաշահելու համար էր: Սակայն իբր մեծ վեզիր Աթաբեկը հմուտ և քաղաքագետ մի անձնավորություն էր, լավատեղյակ մեծ պետությունների քաղաքականության գաղտնիքներին և չհրապուրվեց այդ ընդունելությամբ և սիրաշահումներով: Նա լավ գիտեր, թե այդ սիրալիր վերաբերմունքի արդյունքը ինչ է լինելու: Նա գիտեր, թե ինչ են պահանջում Անգլիայի շահերը և որ նրանց ագահությանը չափ ու սահման չկա: Նրանց նպատակն է քաղաքականապես և տնտեսապես Իրանն ստրկացնել, ոչնչացնել Իրանի սուվերենությունը և խորտակել նրա անկախությունը[59]:

---

58 Նույն տեղում, էջ 28:

59 محمود محمود، تاریخ روابط سیاسی.. جلد ششم، صفحه ۱۷۳۶

Հասկանալի է, որ միանգամայն միամիտ է այսպիսի դատողությունը Աթաբեկի նման մի անձնավորության հասցեին, որի կյանքն ու ամբողջ գործունեությունը անցել է իմպերիալիստական տերություններին ծառայելու նշանաբանով:

Թեյմուրին վկայում է, որ շահին Եվրոպա տանելու գործում գլխավոր դերը կատարում էին անգլիացիները, որոնք մտադիր էին մերձեցնել Անգլիան և Իրանը՝ ընդդեմ ցարական Ռուսաստանի: Անգլիայում գտնվելու ժամանակ նրանք ցուցադրեցին Անգլիայի արդյունաբերական ձեռնարկությունները և ծովային և ցամաքային ուժերը, որպեսզի սարսափ առաջացնեն նրա մեջ: Դեռևս մեկ տարի դրանից առաջ Նասր էդ Դին շահը Ռեյտերին տվել էր մի կոնցեսիա, որի վնասաբեր հետևանքները երկար ժամանակ զգացվում էր երկրում: Շահը մեծ ցանկություն ուներ զբոսնել և զվարճանալ Եվրոպայում և ստանալ մի քանի ստերլինգ կանխավճար: Նրանք այնքան էին հրապուրված այդ ամենով, որ պատրաստ էին երկիրը ամբողջովին ծախել Անգլիային[60]:

Մեր կողմից արդեն հիշատակված էթեմադ էս Սալթանեն, որն ուղեկցում էր շահին նրա ուղևորության ժամանակ, մեկնաբանելով անգլիական կառավարության կողմից շահի արտակարգ շուքով կազմակերպված ընդունելության նպատակները, միանգամայն ճիշտ է նկատում, որ այդ արվել էր շահի վրա ազդելու և Իրանը նրա օգնությամբ իրենց ենթարկելու դիտավորությամբ[61]:

1873 թվականի փետրվարին ստորագրվում է Գրենվիլ-Գորչակով հայտնի համաձայնագիրը: Այդ պայմանագրով Գորչակովը հայտարարում էր Աֆղանստանը ցարական կայսրության ազդեցության գոտուց դուրս բերելու մասին, որի համար երկար տարիներ պայքարում էր Անգլիան: Հենց այդ թվականին է, որ Նասր էդ Դին շահն իր վեզիրների հետ առաջին անգամ ճամփորդում է Անգլիա: Լոնդոնում գտնվելու ժամանակ մեծ վեզիրը տեղեկանում է այդ համաձայնա-

---

60 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۱۱–۹

61 اسرار انحطاط ایران یا خواب‌نامه مرحوم اعتمادالسلطنه مشهد ۱۹۴۵، صفحه ۸۴

գրի մասին և գրավոր պաշտոնական հարցում է կատարում Անգլիայի արտաքին գործերի մինիստրությանը: Իր պատասխանում Գրենվիլը հայտնում է, որ բարեկամական հարաբերություններ են հաստատվել Անգլիայի և ցարական կայսրության միջև և խորհուրդ է տալիս Իրանին անկեղծորեն կատարել երկու տերությունների նկատմամբ իր պարտավորությունները: Այս պատասխանը հուսահատություն է պատճառում շահին ու նրա մեծ վեզիրին և թուլացնում վերջինիս դիրքերը: Նույն ժամանակ, երբ Նասր էդ Դին շահը Եվրոպայում զվարճանում էր, անգլիական գործակալները Պարսից ծոցում Իրանին ենթակա շեյխերի հետ դաղտնի կապերի մեջ են մտնում և համաձայնություններ կնքում[62]:

Շահի երկրորդ ճամփորդությունը տեղի ունեցավ 1878 թվականին, այս անգամ նույնպես Սեփահսալարի ուղեկցությամբ: Այս ճամփորդության արդյունքը եղավ ցարական կոզակների Իրան բերելը, որոնք հետագայում մեծ դեր խաղացին երկրի քաղաքական կյանքում: Ինչպես գրում է Էբրահիմ Թեյմուրին, Իրանի կոզակային զորամասի ստեղծումով «կես դար շարունակ երկրի անկախությունն ու անդորրությունը հանձնվեց ցարական դահիճների ձեռքը»[63]:

1889 թ. կայացավ շահի երրորդ ճամփորդությունը դեպի Եվրոպա, որից հետո նա բազմաթիվ կոնցեսիաներ շնորհեց օտարերկրացիներին: Այս հանգամանքը թելադրված էր ոչ միայն Իրանի տնտեսության տարբեր բնագավառներում հաստատվելու եվրոպական տերությունների ու կապիտալիստների ձգտումով, այլև այդ բանում շահի շահագրգռվածությամբ, քանի որ, ինչպես գրում է Թեյմուրին, «...նա անձամբ դրանց դիմաց մեծ գումարներ էր ստանում»[64]:

«Այս ճամփորդության ընթացքում,—նշում է նա,—Նասր էդ Դին շահը, ասես գործերի բարելավման և թագավորության շարունակման հարցում հուսահատված և հոգնած, ուզում էր հնարավորին չափ շուտ Իրանը վաճառել օտարներին...»[65]:

---

62 محمود محمود، تاریخ روابط سیاسی...جلد چهارم، صفحه ۶—۸۹۴

63 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۱۱—۹

64 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۹

65 Նույն տեղում, էջ 9—11:

Այս կոնցեսիաները եվրոպական մոնոպոլիստական կապիտալի ներթափանցման և Իրանի տնտեսական ու քաղաքական գաղութացման տեսակետից առանձնակի նշանակություն ունեն և մենք նրանց մանրամասն կանդրադառնանք աշխատության վերջին գլխում։

Առայժմ կանգ առնենք շահի միայն այս ճամփորդության դրդապատճառների վրա։

Նասր էդ Դինի երկրորդ ճամփորդության դրդապատճառների հարցը քննարկել է Էբրահիմ Թեյմուրին, իր «1890 թ. Ռեժիի պայմանագիրը» գրքում։ Նա համոզմունք է հայտնում, որ շահի ճանապարհորդությունը Անգլիա մեծ վեզիր Ամին էս Սոլթանի միջոցով կազմակերպել էին անգլիացիները, որոնք դրանում մեծապես շահագրգռված էին, քանի որ մտադիր էին բանկի հիմնադրման և տրամվայ կառուցելու կոնցեսիաներ ստանալու խնդիրն ամրապնդել և շահին սիրաշահելով նորանոր կոնցեսիաներ ձեռք բերել։ Հենց այդ այցելության ժամանակ էր, որ առաջ քաշվեց նաև ծխախոտի կոնցեսիայի հարցը։ Նասր էդ Դին շահը, հույս ունենալով, որ կոնցեսիայի կանխավճարով ոչ միայն կհոգա իր ճամփորդության ծախսերը, այլև հնարավորություն կունենա մի նոր ճամփորդություն ևս կատարել, համաձայնվեց այդ կոնցեսիան տալ Անգլիային[66]։

Այդ ճամփորդությունների կապակցությամբ մեծ վեզիր Ամին էս Սոլթանի վարած քաղաքականությանն անդրադառնալով, Թեյմուրին գրում է, որ «Ամին էս Սոլթանը մեկ անգամ Նասր էդ Դին շահին (նկատի ունի նրա վերջին ճամփորդությունը—Հ. Ե.) և երկու անգամ Մուզաֆար էդ Դին շահին Եվրոպա տարավ և Անգլիային ու ցարական Ռուսաստանին բազմաթիվ կոնցեսիաներ տալով երկիրը մղեց դեպի անկում և ոչնչացում։ Քիչ էր մնացել, որ հենց այդ արտաքուստ անկախությունը նույնպես ոչնչանար և Իրանը պաշտոնապես օտարների գաղութը դառնար»[67]։

---

66 ابراهیم‌تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی‌تحریم تنباکو اولین مقاومت منفی در ایران، صفحه ۷۶

67 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه

Դեպի Եվրոպա կատարած շահի ճամփորդության դրդապատճառների և երկրի համար նրա ունեցած հետևանքների լավագույն գնահատականը կարելի է համարել Էբրահիմ Թեյմուրիի հետևյալ խոսքերը. «Այն ժամանակ, երբ ժողովուրդը աղքատության և չքավորության մեջ տառապում էր, արդյունաբերության և առևտրի տարբեր ճյուղերը մեկը մյուսի հետևից փակվում էին, իսկ ռուսներն ու անգլիացիները մտադիր էին Իրանը գրավել, Նասր էդ Դին շահն իր վեզիրների ուղեկցությամբ Եվրոպա էր գնում և բռնապետ ու ինքնակալ հաքիմների զուլումով և բռնությամբ, որբից ու այրուց և այլ խեղճերից բռնագրաված ժողովրդական հարստությունը նվիրում էր այսինչ պարուհուն, կրկեսի այսինչ դերակատարին կամ մսխում կաբարեներում»[68]:

Նասր էդ Դին շահի Եվրոպա կատարած երրորդ ճամփորդությանն անդրադարձած աղբյուրները վկայում են, որ շահը և մեծ վեզիր Ալի Ասղար խան Ամին էս Սոլթանը մի շարք ճոխ հյուրասիրություններից հետո գաղտնի պայմանագրեր ստորագրեցին անգլիական կառավարության հետ և հանգիստ սրտով վերադարձան Իրան: Յարական կառավարությունը տեղյակ էր այդ ամենին և խիստ բացասական վերաբերմունք ուներ: Այդ պատճառով էլ շահը և մեծ վեզիրը չհամաձակվեցին թեհրան վերադառնալ Պետերբուրգի վրայով: (Նրանք եկան Գերմանիայի և Կովկասի ճանապարհով): Մյունխենում գտնվելու ժամանակ էր, որ շահը հանդիպեց պանիսլամիզմի հիմնադիր Սեյիդ Ջամալ էդ Դին Աֆղանիին: Ամին էս Սոլթանը, որը լավատեղյակ էր ռուսների զժգոհությանը, գաղտնի հանձնարարությամբ Ջամալ էդ Դինին ուղարկում է Պետերբուրգ, որպեսզի ազդեցիկ անձանց հետ հանդիպելով հնարավորին չափ մեղմի նրանց վերաբերմունքը[69]:

Այս հարցին անդրադարձել է իրանական պետական մի այլ գործիչ՝ Յահյա Դավլաթաբադին:

Նա վկայում է, որ շահի կողմից Պետերբուրգ ոչ պաշտոնական այցելության ուղարկված Աֆղանիին հանձնարար-

---

68 Նույն տեղում, էջ 13:

69 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد پنجم، صفحه ۱۲۱۴

ված էր կապեր հաստատել այնտեղ գործող և ռուսական արտաքին գործերի մինիստրության հետ կապեր ունեցող «իրանասերների» հետ, նրանց միջոցով բանակցությունների մեջ մտնել Ռուսաստանի կառավարության հետ, ջանալ ըստ հնարավորին մեղմել ռուսների դժգոհությունն Իրանի կողմից անգլիացիներին կոնցեսիաներ տալու կապակցությամբ և նրանց փոխհատուցում խոստանալ: Ջամալ էդ Դինն ուրախությամբ ընդունում է այն միտքն, մեկնում է Պետերբուրգ, իր պարտականությունները կատարում և մեծ հույսերով վերադառնում է Իրան[71]:

Իհարկե, դժվար է ստույգ հաստատել այս փաստը, հատկապես, երբ առկա է Ջամալ էդ Դինի հետևյալ գնահատականը, որը պահպանվել է նրա նամակներից մեկում. «Եվրոպացիներն էլ հասկացել են, որ այժմ այն ժամանակն է, երբ առանց պատերազմի կարող են տիրանալ Իրանին: Հասկացել են, որ իսլամը և նրա տիրապետության շրջանները պաշտպանող հոգևորականներն իրենց հզորությունը կորցրել են և նրանց ազդեցությունը նվազել է: Այդ պատճառով էլ յուրաքանչյուր պետություն ձգտում է գրավել այս երկրի որևէ մասը»[72]:

Ջամալ էդ Դինն իր նամակը վերջացնում է. «կորչի՛ այսպիսի շահը, կործանվի՛ այսպիսի թագավորությունը» բառերով[73]:

---

71 یحیی دولت آبادی، حیات یحیی، جلد اول، تهران ۱۹۵۷ صفحه ۹۴

72 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی تحریم تنباکو اولین مقاومت منفی در ایران، تهران ۱۹۵۰، صفحه ۶۰

73 Նույն տեղում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՆԳԼԻԱՅԻ ԵՎ ՑԱՐԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼՈ-ՌՈՒՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Իմպերիալիզմի էությունը և Իրանի նկատմամբ իմպերիալիստական տերությունների քաղաքականությունը դարձել են իրանական մի շարք հեղինակների ուսումնասիրության առարկա։ Նրանցից շատերը ճիշտ կերպով կռահել են, որ XIX դարի վերջին քառորդի և հետագա շրջանների Իրանի ընդհանուր վիճակը հասկանալու համար, պետք է սկսել հենց իմպերիալիզմի, նրա էության և նրա վարած քաղաքականության ուսումնասիրությունից։

Անդրադառնալով այդ հարցին, պարսիկ հեղինակներն ընդգծում են, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանում, երբ երկրի ներքին ու արտաքին գործերին օտարերկրացիների միջամտությանը վերջ տալու ուղղությամբ Իրանի ժողովրդի պայքարը նոր փուլ էր թևակոխել, հաճախ էր խոսվում իրանական ժողովրդի շահագործման և նրա հարյուր հիսունամյա ստրկության մասին։ Մամուլում և հանդեսներում մասնավորաբար այդ հարցին վերաբերող բազմաթիվ հոդվածներ են լույս տեսել։ Բայց, ինչպես նշում է Թեյմուրին, «Դժբախտաբար դեռևս դրանց մասին (իմպերիալիստական քաղաքականության դրսևորումների մասին—Հ. Ե.) փաստաթղթերի վրա հիմնված ստույգ և լրիվ տեղեկություններ չեն հրատարակվել և ժողովրդի մեծամասնությունն այդ ցավալի իրադարձություններից շատերին անտեղյակ է»[1]։

Պարսիկ հեղինակները փորձում են վերլուծել նաև իմպերիալիստական երկրների գաղութակալական նոր մեթոդ-

---

1 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه الف

ները: Եթե անցյալում որևէ երկրի վրա իրենց տիրապետությունը հաստատելու համար գաղութարարները պատերազմի էին դիմում, զորքեր էին ուղարկում և սվիններով թույլ ժողովուրդներին գերում և ենթարկում էին, ապա XIX դարի երկրորդ կեսին նրանք հետամնաց երկրների շահագործման և գաղութացման համար կաշառքով կամ այլ զարտուղի ճանապարհներով իրենց դրածոներին իշխանության կարգելու և մի ամբողջ շարք տնտեսական արտոնություններ ձեռք բերելու միջոցով հասնում էին իրենց հետապնդած քաղաքական նպատակներին: «Իրանական ժողովուրդը,— եզրահանգում է Թեյմուրին,— պետք է իր երկրի քաղաքական պատմության այս հատվածին լուրջ ուշադրություն դարձնի և լավ ուսումնասիրի տգետ իշխողների վարքագիծը, որպեսզի ապագայում այլևս այդպիսի քաղաքական և տնտեսական դավադրություններից չխաբվի և չենթարկվի վերջին դարի նման շահամոլ և անպատասխանատու կառավարությունների»[2]:

Պարսիկ հեղինակները նկատել են, որ XIX դարի վերջին քառորդին գաղութատիրական պետությունների նվաճողական քաղաքականության մեջ տեղի ունեցած որոշակի փոփոխությունների հետևանքով համապատասխան տեղաշարժեր էին կատարվել նաև միջազգային հարաբերություններում: Օրինակ, Մահմուդ Մահմուդը նշում է, որ 1878 թ. Բեռլինի կոնգրեսից մինչև Իրանն ապդեցության գոտիների բաժանելու 1907 թ. Անգլո-ռուսական պայմանագիրն ընկած երեսուն տարվա ժամանակահատվածում «Իրանի քաղաքական պատմությունը եվրոպական տերությունների քաղաքական խաղերի առարկա էր դարձել»: Եվրոպական գաղութատիրական պետությունների քաղաքականության մեջ առաջացած փոփոխությունների հետևանքով Իրանի ճակատագիրը ևս փոխվում էր, «քանի որ Իրանի հարցը միջազգային հարցերից մեկն էր համարվում և նրա խնդիրների լուծումը կապված էր միջազգային քաղաքական խնդիրների ընդհանուր լուծման հետ»[3]:

---

[2] Նույն տեղում, էջ Բ:

[3] محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد ششم صفحه ۱۵۱۱

* *

Իրանում անգլիական գաղութարարների քաղաքականությունը XIX դարի երկրորդ կեսին ձեռք է բերում միանգամայն նոր որակ: Իմպերիալիզմի դարաշրջանում անգլիական գաղութարարները ցարական Ռուսաստանի խիստ մրցակցության պայմաններում Իրանում կիրառում են նոր քաղաքականություն, որը վերջին հաշվով պետք է ծառայեր նույն նպատակին՝ Իրանի գաղութացմանը:

Ինչպես ցույց են տալիս պատմական փաստերը, XIX դարի վերջին քառորդում անգլիական իմպերիալիստներն աստիճանաբար գրավում են Իրանի տնտեսության հանգուցային դիրքերը: Բացի ձեռք բերած կոնցեսիաներից, Անգլիան իրանական շուկան ողողում է իր արդյունաբերական ապրանքներով: Արդեն դարավերջին Անգլիային հաջողվել էր իրանական շուկայից դուրս մղել եվրոպական մյուս պետություններին և իր մենաշնորհն ապահովել երկրի արտաքին առևտրում: Միանգամայն հասկանալի է, որ տնտեսական այս գերիշխանությունն իր հետ բերում էր և քաղաքական ազդեցության ուժեղացում: Մեհդի Մալեք զադեն, անդրադառնալով այդ հանգամանքին, գրում է. «Անգլիացիները Իրան մտան որպես հաղթող մի պետություն, Իրանի բոլոր քաղաքները պաշտոնյաներ ուղարկեցին և հեծյալ զորք ըստեղծեցին իրենց հրամաններն իրականացնելու համար»[4]:

Պատմական փաստերի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ անգլիական գաղութարարների ներթափանցումն Իրան հատկապես ուժեղացավ Փարիզի պայմանագրի կնքումից հետո: Անգլո-իրանական պատերազմն ավարտվեց Իրանի պարտությամբ: Ահմեդ Քասրավին այդ մասին գրում է. «Իրանի պատերազմը այն իրադարձություններից էր, որ ավարտվեց խայտառակությամբ: Իրանցիները թե՛ Բուշեհրում ու Ֆարսում, թե՛ Մոհամարայում և Խուզեստանում չնչին դիմադրությունից հետո պարտություն կրեցին և նահանջեցին»[5]:

---

4 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران ۱۳۲۸، صفحه ۱۲۷

5 احمد کسروی، چند تاریخچه، تهران ۱۹۶۰، صفحه ۶

Պատերազմն ավարտվեց 1857 թվականի Փարիզի պայմանագրով, որը, ինչպես Ալի Ասղար Շամիմն է գրում, «Անգլիայի համար մեծ հաջողություն էր, որից հետո նա ձեռնամուխ եղավ դրա շնորհիվ ձեռք բերած դիրքերի պահպանմանը և Իրանում իր գաղութակալական քաղաքականության և ազդեցության ամրապնդմանը»[6]:

XIX դարի 50-ական թվականներից, հատկապես Փարիզի պայմանագրից հետո, Անգլիան ռազմական անմիջական զավթումներից անցավ Իրանի խաղաղ նվաճմանը: Նա ձգտում է Իրանում տնտեսական բազմաթիվ կոնցեսիաներ ձեռք բերել և խորացնել իր ներթափանցումը երկրի բոլոր բնագավառները: «Այս վերջին քաղաքականության նյութական և բարոյական վնասները,—գրում է Մահմուդը,—ոչնչով պակաս չէին նախորդ քաղաքականության հետևանքներից: Ընդհակառակը, այս նոր քաղաքականությունն անհամեմատ ավելի վնասաբեր էր և նրա բացասական արդյունքներն անհամեմատ ավելի վտանգավոր էին: Այս բոլորով հանդերձ Իրանի ղեկավարությունը և պալատականներն անտարբերության քնից չարթնացան և ոչ մի քայլի չդիմեցին»[7]: «Անգլիացիներն իրենց տնտեսական և բարոյական ազդեցությունը տարածելու համար, խարդախությամբ և նենգությամբ մի շարք տնտեսական և առևտրական կոնցեսիաներ ստացան, բայց միշտ էլ այդ կոնցեսիաներն առավելագույն չափով շարաշահում էին իրենց քաղաքական նպատակների իրագործման համար»—գրում է իրանցի մեկ այլ հեղինակ՝ Էբրահիմ Թեյմուրին, որի արխիվային փաստաթղթերով հարուստ աշխատության ուսումնասիրումը ցույց է տալիս, որ նա իսկապես փորձում է քննել իմպերիալիզմի դարաշրջանի գաղութակալական քաղաքականության առանձնահատկությունները, չնայած միշտ չէ, որ նրան հաջողվում է երևույթները ճիշտ գնահատել[8]:

---

6 علی‌اصغر شمیم، ایـران در دوره سلطنت قاجار، تهران ۱۳۴۲، صفحه ۱۷۹

7 محمود محمود، تاریـخ روابط سیاسـی... جلد دوم، صفحه ۵۳۷

8 براهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۸۵

Իմպերիալիզմի դարաշրջանում ֆինանսական մոնոպոլիաների ներթափանցման միջոցով տարբեր երկրների գաղութացման փաստը քննարկելիս բուրժուական պատմաբան Մահմուդ Մահմուդն իր աշխատության հինգերորդ հատորում նշում է, որ առևտուրն ազդու միջոց էր աշխարհակալական քաղաքականության իրականացման գործում: «Դա հենց այն զենքն էր,—գրում է նա,—որին բազմաթիվ երկրներ են զոհ գնացել»[9]: Մահմուդը նշում է, որ վերջին ժամանակներս Անգլիան բոլորից շատ է օգտվել այդ զենքից, որ եվրոպական մյուս երկրներն այդ հարցում նրանից հետ էին մնացել և զրկվել նոր նվաճումներից: Մահմուդն, իրավացիորեն, եվրոպական երկրների մեջ ծավալված պատերազմների պատճառներից մեկը համարում է հենց այդ հանգամանքը[10]:

Առևտրական էքսպանսիայի ուղղությամբ Իրանում ձեռնարկած անգլիական իմպերիալիստների միջոցառումներն ուսումնասիրել է նաև Ֆերեյդուն Ադամիաթը: Նրա կարծիքով, «Այդ շրջանում անգլիացիները ձգտում էին Իրանի հարավում ընդարձակել իրենց առևտրի ճանապարհները, բացել Քարուն գետի նավարկությունը»[11]: Թեհրանում անգլիական դեսպանությունը մեծ ջանքեր էր թափում այդ ուղղությամբ: Ֆերեյդուն Ադամիաթը մեջբերում է կատարում անգլիական դեսպանության գործերի հավատարմատար Նիքոլսոնի՝ Իրանի արտաքին գործերի մինիստրին գրած «անձնական» մի նամակից: Այնտեղ ասված է, որ Անգլիայում հասարակական կարծիքն իշխում է կառավարության քաղաքականության վրա: Իսկ Անգլիայի հասարակական կարծիքը հօգուտ Իրանի չի կարող լինել, եթե Անգլիայի առևտուրն Իրանում չընդարձակվի[12]:

Իհարկե, անգլիական հասարակական կարծիք ասելով հեղինակն ի նկատի ունի բրիտանական բուրժուազիայի կարծիքը:

---

9 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد پنجم، صفحه ۱۳۳۹

10 Նույն տեղում, էջ 1339:

11 فریدون آدمیت، فکر آزادی و مقدمه نهضت مشروطیت، تهران صفحه ۱۶۲

12 Նույն տեղում, էջ 162:

Իրանում անգլիական գաղութարարների նոր քաղաքականությունը և դրա հետապնդած նպատակները լայնորեն քննարկվել է իրանական պատմագրության մեջ և ստացել հակասական գնահատականներ։

Հայտնի է, որ անգլիական իմպերիալիստները, նրանց շահերի արտահայտիչ քաղաքական գործիչները և նույնիսկ առանձին հեղինակներ փորձում էին Իրանի նկատմամբ Անգլիայի վարած քաղաքականությունը կապել նրա խոշորագույն գաղութի՝ Հնդկաստանի պաշտպանության հետ։ Նրանք հաճախ աշխատել են հավաստիացնել, թե Անգլիան Իրանում որևէ նվաճողական ձգտում չի ունեցել, այլ պարզապես Հնդկաստանի պաշտպանության շահերից ելնելով, որոշ ակտիվ քաղաքականություն է վարել Իրանում։ Այդպիսի փորձեր են արել նաև իրանական որոշ հեղինակներ։ Օրինակ, Էբրահիմ Թեյմուրին նշում է. «Հնդկաստանի սահմանների պաշտպանության տեսակետից Պարսից ծոցում և Իրանի հարավում ազդեցություն ունենալն անգլիացիների համար կենսական նշանակություն ուներ»[13]։ Նույն միտքն է կրկնում նաև Մահմուդ Մահմուդը. «Անգլիացիները մի կողմից տեսնում էին ռուսական վտանգն Իրանում և Բալկաններում, մյուս կողմից՝ գերմանական վտանգը Փոքր Ասիայում և Պարսից ծոցում, Բաղդադի երկաթգծի ներթափանցումն Իրանի խորքերը։ Այս երկու վտանգների մոտեցումը Հնդկաստանի սահմաններին,— գրում է նա,—միանգամից դժվարացնում էր այդ երկրի պաշտպանությունը։ Անգլիացիները հանգեցին այն եզրակացության, որ պետք է այդ երկու պետություններից որևէ մեկին իրենց կողմը գրավել և այդ երկուսին իրար դեմ հանել, որպեսզի նրանք իրար ոչնչացնեն»[14]։

Հեղինակների մի խումբ, սակայն, չբացառելով Հնդկաստանի պաշտպանության նպատակները, միաժամանակ ցույց է տալիս, որ անգլիական իմպերիալիստները ձգտում էին գաղութացնել Իրանը և նրա սահմանամերձ տերիտորիաները։ Հասան Հալաջը, քննելով Անգլիայի՝ Իրանում վարած քաղաքականության հարցը, գրում է. «Անգլիական գաղութարար-

---

13 براهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۱۵۱

14 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد هفتم، صفحه ۲۱۷۸

ներն Արևելահնդկական ընկերության միջոցով վարձակալել էին հնդիկ զինվորների և ստեղծել ռազմական մի ապարատ, որը ղեկավարվում էր անգլիացի սպաների կողմից: Նրանք հնդիկ զինվորների ձեռքով ամբողջ Հնդկաստանը ենթարկել էին լոնդոնյան լորդերին և Հնդկական օվկիանոսի վրայով ոտնձգություններ էին կատարում դեպի Պարսից ծոցի կղզիները, Հնդկաստանը պաշտպանելու պատրվակով Իրանում խլրտումներ էին առաջացնում, «քաղաքական դավադրություններ էին նյութում և արգելակում իրանցիների աճն ու զարգացումը»[15]:

Այս հարցը մանրամասն արծարծել են նաև պարսիկ այն հեղինակները, որոնք խորը կերպով ուսումնասիրել են Իրանում Անգլիայի վարած քաղաքականությանը վերաբերող արխիվային փաստաթղթերը: Հենվելով այդ փաստաթղթերի վրա, նրանք հերքում են այն պնդումը, թե անգլիական գաղութարարների քաղաքականությունն Իրանում և Աֆղանստանում բխում էր միայն ցարական Ռուսաստանի վարած նվաճողական քաղաքականությունից և անգլիական գաղութարարներին նրա կողմից սպառնացող վտանգից: Այդ հեղինակները գտնում են, որ այդպիսի վտանգի առկայության պայմաններում Անգլիան, տրամաբանորեն, ոչ թե իր զինված ուժերով պետք է հանդես գար Միջին Ասիայում, զորք ուղարկեր Աֆղանստան և բարեկամական հարաբերությունները փչացներ Իրանի հետ, այլ, ընդհակառակը, բոլոր միջոցներով պետք է ձգտեր Իրանը և Աֆղանստանը միմյանց դաշնակից դարձնել, դրամով և զենքով նրանց օժանդակեր և հրահրեր ցարական Ռուսաստանի դեմ: «Բայց անգլիական կառավարության հետապնդած քաղաքականությունն այդ չէր,—գրում է Մահմուդը,—նա ինքն էր ձգտում Աֆղանստանն ու Իրանն իր ազդեցության տակ գցել և Աֆղանստանի ռազմական օկուպացիայի միջոցով տիրանալ ամբողջ Ասիային»[16]: Մահմուդն այն կարծիքի է, որ հենց այդ քաղաքականության իրականացման նպատակով էր, որ Անգլիան ցարական Ռուսաստանին զբաղեցրեց օսմանյան խնդրով և խոստումներ տվեց Ստամբուլի և Օսմանյան կայս-

15 حسن حلاج، تاریخ تحولات سیاسی... صفحه ۱۳

16 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد دوم، صفحه ۲۹۱

թության ասիական և եվրոպական այլ տերիտորիաները Ռուսաստանին հանձնելու մասին[17]։ Սակայն հետաքրքիր է նշել, որ իր աշխատության հաջորդ հատորներում Մահմուդը որոշ իմաստով ինքն իրեն հակասում է։ Մանրամասն խոսելով Լորդ Քերզոնի առաջ քաշած տեսակետների մասին, նա գրում է, որ Խորասանի հարցը մի փոքր այլ բնույթի էր, քան նա ուզել էր ներկայացնել «և դա Հնդկաստանի սահմանների պաշտպանությունն էր»[18]։

Հեղինակը հիշատակում է, որ Հնդկաստանի պաշտպանության համար նախատեսվել էր ամրությունների մի ամբողջ օղակ, որի մեջ Խորասանի և Սիստանի նահանգները ունեին առաջնահերթ նշանակություն։ Հնդկաստանի պաշտպանության այդ ծրագրերը մշակվել էին դեռ վաղուց։ «Իրանի պետության և ժողովրդի բարեբախտությունը նրա մեջ էր,—գրում է Մահմուդը,—որ ռուսները Կասպից ծովի արևելյան ճանապարհը հայտնաբերեցին և Իրանի տերիտորիայով անցնող իրենց ուղին շեղեցին։ Այդ շրջանում երկաթգծի կառուցումը Իրանին ժամանակավորապես փրկեց քաղաքական քաշքշուկներից, անգլիացիներն այլևս այդ շրջանների նկատմամբ ոտնձգություններ չկատարեցին և պայքարի թատերաբեմը Խորասանից փոխադրվեց Հերաթի դարբասից այն կողմ։ Այն, ինչ որ անգլիացիները պետք է կատարեին այդ նահանգներում, կատարեցին Հերաթում և Կանդեհարում։ Նրանք միայն մի տագնապ ունեին, չլինի թե ռուսները հասնեն Սիստան, որից հետո նրանց ճանապարհը կբացվի և հեշտությամբ կարող են հասնել Մոքրան և Պարսից ծոց»[19]։ Անգլո-ռուսական հակասություններն ու պայքարը նման ձևով նկարագրելով՝ Մահմուդը մեղադրում է նաև իրանական կառավարությանը, որը չհասկանալով ստեղծված վիճակը, կարողացավ դրանից անհրաժեշտ օգուտներ քաղել։

«Իրանի կառավարությունը,—գրում է նա,—հանցավոր է այն բանում, թե ինչո՞ւ այդ ժամանակ չմտածեց Սիստանի մասին, ինչո՞ւ չջանաց պաշտպանել այն, ինչո՞ւ Խորասանում ոչ մի քայլի չդիմեց։ Այդ ժամանակ Իրանի համար իր

---

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում, հատոր 5, էջ 1324։

19 Նույն տեղում։

գոյությունը փրկելու արտակարգ հարմար առիթ էր ստեղծվել։ Ցարիզմը շարժվում էր դեպի Հերաթ, իսկ Անգլիացիները պաշտպանության էին պատրաստվում Հերաթում և Ղանդահարում։ Երկու պետությունները զբաղված էին իրենց ծրագրերի իրականացմամբ և Իրանը այլևս ռազմական գործողությունների թատերաբեմում չէր։ Եթե Իրանը Խորասանը և Սիստանը պաշտպանելու համար հիմնական միջոցների դիմեր, ապա դա ոչ մի կասկած չէր առաջացնի երկու տերությունների միջև։ Սակայն ինչ կարելի է անել, որ Իրանը հեռատես ղեկավարներ չուներ, որ եթե երբեմն էլ այդպիսիները գտնվում էին, ապա նրանք հենված էին լինում այդ երկու տերություններից որևէ մեկի վրա։ Իսկ վերջիններս Իրանի բարձրաստիճան ղեկավարներին այլասերելու գործում այնքան հմուտ էին և վարպետացած, որ, կարելի է ասել, անգերազանցելի էին»[20]։

Հետաքրքրական է նշել, որ անգլիական գաղութարարները հաճախ քողարկում էին Իրանում իրենց դավադրություններն ու մեքենայությունները, ջանում էին իրենց իրանական ժողովրդի բարեկամն ու համախոհը ձևացնել և այնպիսի տպավորություն ստեղծել, թե այն ամենը, ինչ նրանք անում են, բխում է միայն իրանական ժողովրդի շահերից, նրա բարեկեցության համար մտահոգությունից, կամ էլ նրան ցարական Ռուսաստանի ոտնձգություններից փրկելու նպատակից։

Այդ կապակցությամբ Ալի Ասգար Շամիմը գրում է. «Իրանում Անգլիայի քաղաքականության առանձնահատկություններով է պայմանավորված այն հանգամանքը, որ անգլիական կառավարությունը միշտ իրեն ձևացնում էր Իրանի վշտակից և բարեկամ։ Իր նպատակներին հասնելու և բարեկամական ու համերաշխ հարաբերություններ պահպանելու համար, որը միշտ նրա նենգ և ատելի քաղաքականության նախերգանքն էր, (Անգլիան—Հ. Ե.) հազվադեպ էր դիմում ուժի և բռնի միջոցների։ Նա օգտվում էր ղեկավարների և պալատի հավատարիմ ծառաների թուլությունից, այլասերությունից, փառամոլությունից և պաշտոնամոլու-

[20] Նույն տեղում։

թյունից։ Իրենց նպատակներին հասնելու համար նրանք մինչևիսկ օգտագործում էին զաջարական թագավորների կանանց և սիրուհիներին, գաղտնիքներին լավատեղյակ ներքինիներին և այլն։ Այդ եղանակով ապականված և ստոր մարդկանց նշանակում էին երկրի բարձրագույն պաշտոններում և նրանց երկչոտ և ստորաքարշ հոգեբանությունն օգտագործում էին իրականացնելու այնպիսի նպատակներ, որոնց կատարումը հնարավոր չէր ուժով և բռնությամբ»[21]։

Բազմաթիվ վկայություններ կան անգլիական գաղութարարների կիրառած մեթոդների մասին։ Օրինակ, անգլիական գաղութարարներն ամեն կերպ ձգտում էին իրենց կողմը գրավել մեծ վեզիր Միրզա Ալի Ասղար խան Աթաբեկ Ազամին։ Հետագայում, տեսնելով, որ նա ամուր կապերի մեջ է ցարական Ռուսաստանի հետ և տեղի չի տալիս անգլիական քաղաքականությանը, ձեռնամուխ են լինում նրա հեռացմանն այդ բարձր պաշտոնից։ Այդ նպատակին հասնելու համար անգլիացիները մեծ գումարներով կաշառում էին շիաների՝ Իրանում և Իրաքում կենտրոնացած ղեկավարներին և օգտագործում նրանց ունեցած ազդեցությունն ու հեղինակությունը[22]։

Դովլաթաբադին վկայում է, որ անգլիական իմպերիալիստներն արդեն կորցրել էին իրենց կողմնակից մեծ վեզիրին և այժմ ոչ ոքի չունեին նրան փոխարինելու համար։ Ուստի Աթաբեկին սպառնալու և հակակշիռ ստեղծելու նպատակով պալատականների շրջանում մի բլոկ էին ստեղծել, որի գլուխ էին կանգնեցրել էյն էդ Դոլեին և Վաջիհ Օլահ Միրզային և որոնց քաջալերում և հրահրում էին պայքարելու Աթաբեկի դեմ[23]։

Անգլիական իմպերիալիստների քաղաքականությունն Իրանում ամենալայն արձագանք էր գտնում իրանական հասարակայնության ամենատարբեր շրջաններում։ Չնայած անգ-

---

21 علی‌اصغر شمیم، ایران در دوره سلطنت قاجار، تهران ۱۳۴۲ صفحه ۱۸۷

22 حاج میرزا یحیی دولت آبادی، حیات یحیی، جلد اول، تهران ۱۹۵۷، صفحه ۳۱۵

23 Նույն տեղում։

լիական գաղութարարների կիրառած մեթոդներին, իրանական ժողովուրդը մեծ ատելությամբ էր լցված նրանց դեմ և տարբեր ժամանակներում երկրում ծավալվում էին հակաիմպերիալիստական և գլխավորապես հակաանգլիական շարժումներ: Սակայն կան որոշ պարսիկ հեղինակներ, որոնք խոսում են անգլիական իմպերիալիստների նկատմամբ իրանական ժողովրդի «սիրո և համակրանքի» մասին, որը բացարձակապես չի համապատասխանում իրականությանը և չի ապացուցվում պատմական որևէ փաստով:

Օրինակ, մեր կողմից արդեն հիշատակված Մահմուդ Ֆարհադ Մոթամեդը գրում է. «1287 թ. (1870—71) անգլոֆիլ զգացմունքներն Իրանում հասան իրենց բարձրագույն աստիճանին»[24]: Ցանկանալով հիմնավորել իր այս հայտարարությունը, հեղինակն ավելացնում է. «Այս զգացմունքների առաջացման իսկական պատճառը այն վախն ու սարսափն էր, որ առաջացել էր Գերմանիայի և Ռուսաստանի միջև կնքված դաշինքից, որի հետևանքով ռուսական կառավարությունը կարող էր անարգել ձևով ներթափանցել դեպի Ասիա: Ֆրանսիայի պարտությունից հետո այդ ուղղությամբ այլևս արգելք և խոչընդոտ չկար»[25]: Հեղինակը զարգացնում է այն տրամաբանությունը, որ իբր այդ ժամանակ Անգլիան միակն էր, որ կարող էր պաշտպանել Իրանին ռուսական ագրեսիայից, և հովանավորել նրան: Այդ է պատճառը, որ Իրանը հակվեց դեպի Անգլիան: Սակայն Մոթամեդը ստիպված է խոստովանել, որ «Անգլիան այդ բարեկամությունից առավելագույն օգուտը քաղեց», մինչև որ Եվրոպայում հավասարակշռությունը նորից վերականգնվեց: Երբ ցարական Ռուսաստանի կողմից եկող վտանգը վերացավ, Անգլիան «այլևս Իրանական կառավարության կարիքը չուներ և նորից սկսեց խառնել երկրի ներքին վիճակը»[26]:

Մոթամեդի անհիմն պնդումն Իրանում գոյություն ունեցող կարծեցյալ անգլոսիրության մասին, հերքվում է պարսիկ բազմաթիվ հեղինակների կողմից: Այդ հեղինակները

---

24 محمود فرهاد معتمد، سپهسالار اعظم، تهران ۱۹۴۶، صفحه ۱۷۵

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում, էջ 177:

բացահայտել են անգլիական իմպերիալիստների՝ Իրանում վարած քաղաքականության հետապնդած նպատակներն ու մերկացրել այդ քաղաքականությունը «պաշտպանելու» ամեն մի փորձ։

Այսպես, էբրահիմ Թեյմուրին, մանրամասն ուսումնասիրելով Անգլիայի վարած քաղաքականությունն Իրանում, հանգում է հետևյալ եզրակացության. «Մոտ երեք հարյուր հիսուն տարի է, որ անգլիացիներն ագահությամբ աչք են գցել Իրանի վրա և նրան տիրանալու և մեր ժողովրդի քաղաքական ու տնտեսական անկախությունը ոչնչացնելու համար ոչ մի հակամարդկային արարքից չեն խուսափում»[27]։ Կրկնելով տարածված այն միտքը, որ «Իրանը անգլիական առևտրի համար լավ շուկա լինելուց բացի, հանդիսանում էր նաև Հնդկաստանի բանալին և ամենասարսափելի ու ամենահեշտ ճանապարհն էր դեպի Հնդկաստան հարձակվելու համար», հեղինակը նշում է, որ Անգլիան չէր կարող բացահայտ ռազմական ուժով Իրանը գրավել, քանի որ բացի բազմաթիվ խոշընդոտներից գոյություն ուներ նաև ռուս-անգլիական մրցակցությունը։ Ինչպես լորդ Քերզոնն է ասել, եթե անգլիացիները Իրանում մի քայլ էին դնում, ռուսները երկու քայլ էին առաջ շարժվում։ Քանի որ ռուսների առաջխաղացումն Իրանում սպառնում էր Հնդկաստանի անվտանգությանը, ուստի անգլիական քաղաքական ներկայացուցիչները կարգադրություն էին ստացել իրենց նպատակներին հասնելու համար, մի խումբ ստոր և ապիկար մարդկանց պաշտոնի նշանակելով ապքաությունը, հիվանդությունն ու տգիտությունը տարածել Իրանում և այն վերածել մի գերեզմանատան, որի բնակիչները կազմում էին մի խումբ շարժվող դիակներ։ Նրանք այդ անում էին, որպեսզի իրենց նպատակների իրականացման ճանապարհին ոչ մի արգելք և խոչընդոտ գոյություն չունենային[28]։

Թեյմուրին վկայում է, որ հատկապես, երբ 1887 թվականին Դորթմոնդ Վոլֆը նշանակվեց անգլիական դեսպան, Նասր էդ Դին շահի պալատը և մեծ վեզիր Ամին էս Սոլթանը

---

27 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۸۰

28 Նույն տեղում, էջ 85։

վարում էին խիստ պրոանգլիական քաղաքականություն, և որ «Անգլիայի ազդեցությունն իրանական կառավարական ապարատում իր բարձրագույն աստիճանին հասավ»[29]։

Անգլիացիներն իրենց «իրանական» քաղաքականության դրույթները հիմնավորում էին նրանով, որ Ռուսաստանի՝ Հնդկաստանի վրա հարձակվելու դեպքում, իրանական կառավարությունը, եթե նույնիսկ նրա հետ չհամագործակցեր էլ համենայն դեպս «սրտանց ուրախ կլիներ»։ Նրանք միշտ իրանական կառավարության գլուխ էին կարգում այնպիսի ազդեցիկ մարդկանց, որոնք պաշտպանում էին Անգլիայի շահերը[30]։ Անգլիայի ուշադրությունն այդ ժամանակ ուղղված էր Սիստանի, Բալուջեստանի, Պարսից ծոցի և Խուզեստանի վրա, և նա ձգտում էր հնարավորին չափ ուժեղացնել իր ազդեցությունն այդ նահանգներում։ Հիշյալ նպատակին հասնելու համար Անգլիան Իրանում կառավարության գլուխ կանգնեցրեց Հաջ Միրզա Հոսեյն խան Սեփահսալարին, որն, ինչպես անգլիացի Հենրի Ռալինսոնն է վկայում, «անգլիական կառավարության օժանդակությամբ և պնդումով հասավ Իրանի մեծ վեզիրի պաշտոնին... և մեծ ծառայություններ ցուցաբերեց անգլիական կառավարությանը»[31]։ Մահմուդն այն կարծիքին է, որ դեռևս այդ ժամանակ անգլիական կառավարությունն ու Հնդկաստանի տիրակալները համոզված էին, որ «թույլ Իրանն անհամեմատ գերադասելի է ուժեղ և զորեղ Իրանից, և եթե, երբևիցե, իրանական պետությունը հզորանա, անկասկած, ավելի շուտ կթեքվի դեպի ռուսները, քան դեպի անգլիացիները»[32]։ Անգլիական կառավարությունը վարում էր այնպիսի քաղաքականություն, որի հիմքը տասնիններորդ դարի առաջին տարիներին դրել էին անգլիական դիվանագետներ Ջոն Մալքոմը և Գոր Օզլին։ Հետագայում Իրանում գործող բոլոր դիվանագետները շարունակում էին այդ քաղաքականությունը[33]։ Մահմուդը, խոսե-

---

29 Նույն տեղում, էջ 312։

30 محمود محمود، تاریخ روابط سیاسی... صفحه ۱۸۵

31 Նույն տեղում, էջ 696։

32 Նույն տեղում, էջ 712։

33 Նույն տեղում, էջ 713։

լով իր ուսումնասիրությունների արդյունքի մասին, որում է. «Իրանի հետ ունեցած ուղղակի հարաբերությունների ժամանակաշրջանում անգլիական կառավարությունը, թեկուզ մեկ անգամ Իրանի և նրա ժողովրդի նկատմամբ անկեղծ և անշահախնդիր բարեկամություն, նյութական և բարոյական օժանդակություն չցուցաբերեց: Ես ուսումնասիրել եմ անցյալի պատմության մասին եղած գրքերի մեծ մասը, և ոչ մի տեղ չեմ հանդիպել, որ արձանագրված լինի Իրանի նկատմամբ Անգլիայի որևէ օգնությունն ու օժանդակությունը»[34]: Հեղինակը գտնում է, որ դրա մեջ չի կարելի մեղադրել միայն Անգլիային, քանի որ վերջինիս բոլոր միջոցառումներն Իրանում բխում էին իր նյութական և քաղաքական շահերից: Եթե Իրանում գոյություն ունենային թեկուզ մի խումբ գիտակ ղեկավարներ, ապա կկարողանային ստորագրվող պայմանագրերում և համաձայնագրերում Իրանի շահերը նկատի ունենալ: Եթե որևէ արտոնություն էին տալիս անգլիացիներին, դրա դիմաց որևէ արտոնություն ստանային Իրանի համար: Եթե Անգլիան որևէ բան էր պահանջում, դրա դիմաց, Իրանի շահերից և բարեկեցությունից ելնելով, որևէ բան պահանջեին Անգլիայից: Բայց Իրանի ղեկավարներն այդպիսի սովորություն չունեին: Նրանք ի նկատի էին առնում ոչ թե Իրանի, այլ միայն իրենց անձնական շահերը: Այդպիսի դեպքերում անգլիացիները նրանց անձնական շահերն հաշվի առնելով նրանց հետ լեզու էին գտնում: Եթե երբևիցե մի որևէ իմաստուն և ժամանակի գրությանը գիտակ մեկը գտնվեր և չուզենար երկրին դավաճանել, ապա շահին ստիպում էին այդ մարդուն ոչնչացնել, և դրանով գործն ավարտվում էր[35]: Հեղինակը հանդում է այն եզրակացության, որ այդ ամենի հետևանքով «այլասերված և ոճրագործ Նասր էդ Դին շահը հիսուն տարի շարունակ ամբողջ իրանական ժողովրդին վատթարագույն վիճակում էր պահում և չէր թողնում առաջադիմական մի քայլի անգամ դիմել»[36]:

---

34 Նույն տեղում, էջ 1347:

35 Նույն տեղում:

36 Նույն տեղում, էջ 1348:

Իրանական հեղինակներն արձանագրում են, որ XIX դարի ընթացքում Իրանի և Անգլիայի հարաբերություններն երկու անգամ վատացան։ Ի դեպ, առաջին անգամ 30-ական թվականների վերջերին գործը հասավ պատերազմի։ Դրա պատճառն այն էր, որ անգլիական կառավարությունը մտադիր էր Նասր էդ Դին շահին պատժել և որոշ դավադրություններից հետո զինված հարձակում կազմակերպեց դեպի Իրան, ռմբակոծեց և գրավեց Բուշեհրն ու Մոհամարան։ Երկրորդ անգամ նրանց հարաբերությունները փչացան ծխախոտի կոնցեսիայի ժամանակ։ Չնայած այս անգամ անգլիացիները զորք դուրս չբերեցին, սակայն իրանական կառավարությունից խարդախությամբ և խաբեբայությամբ հինգ հարյուր հազար ստերլինգ գանձեցին՝ որպես ծխախոտի մոնոպոլիայի փոխհատուցում։ Բացի այս երկու դեպքերից, «Նասր էդ Դին շահի թագավորության մնացած ժամանակաշրջանում Իրանն ամբողջովին գտնվում էր Անգլիայի քաղաքական գործակալների ազդեցության ներքո»,—գրում է Մահմուդը[37]։

Ուսումնասիրելով բոլոր այս իրադարձությունները, Մահմուդը հանգում է այն եզրակացության, որ «ամբողջ XIX դարի ընթացքում իրանական կառավարությունը Անգլիայի հավատարիմ բարեկամն էր, իսկ Անգլիան այդ հավատարմության դիմաց ձգտում էր իր լիակատար տիրապետությունը հաստատել Իրանի վրա և նրան դարձնել Լոնդոնի կամ Հնդկաստանի իշխանության հլու հնազանդը»[38]։

XIX դարի վերջերին Իրանում անգլիական իմպերիալիստական քաղաքականության գլխավոր նախագծողը լորդ Քերզոնն էր։ Մահմուդը, ուսումնասիրելով Քերզոնի ամբողջ գործունեությունը, տալիս է հետևյալ գնահատականը. «Անգլիական քաղաքական գործիչներից ոչ մեկը լորդ Քերզոնի չափ Իրանին թշնամի չի եղել։ Քերզոնը XIX դարի Անգլիայի ագրեսիվ, դաժան և ագրեսիվ քաղաքագետներից մեկն էր, որն իր ամբողջ կյանքի ընթացքում ջանում էր Իրանն ստորացնել և խեղճացնել։ Նա Իրանի չարակամն էր, և Անգլիայի գոյության համար ցանկանում էր իրանական ժողո-

37 Նույն տեղում, հատ. 8, էջ 2229։

38 Նույն տեղում։

վերդի ոչնչացումը։ Եթե որևէ մեկը Իրանի նկատմամբ նրա քաղաքականության հետ ծանոթանա, կզգա, թե նա ինչպիսի թշնամի է եղել Իրանի համար»[39]։

Ինչպես նշում է Մահմուդը, Քերզոնը բազմիցս խոստովանել է, որ Անգլիան այդ ժամանակ մեծ կարևորություն էր տալիս Իրանի հարցին, քանի որ խիստ անհանգստացած էր Ֆրանսիայի հետ Ռուսաստանի մերձեցմամբ և Անգլիայի ու Ֆրանսիայի՝ այդ երկու վաղեմի թշնամիների, ընդհարումներով Ասիայում և Աֆրիկայում։

Այսպիսի իրադրության դեպքում միանգամայն ճիշտ է Մահմուդի այն կարծիքը, որ Անգլիայում շահի նկատմամբ ցուցաբերված արտակարգ սիրալիր և շքեղ ընդունելությունը հենց քաղաքական արդյունքի հասնելու նպատակ ուներ[40]։

Մահմուդը նշում է, որ դեռևս շահի՝ Եվրոպա մեկնելուց առաջ երևում էր, որ կամ օտարների դրդմամբ, կամ հենց շահի կամքով իրանական կառավարությունը պատրաստ էր ամեն ձևի կոնցեսիաներ տալ օտարերկրյա և հատկապես անգլիական կապիտալիստներին։ Այս հանգամանքն ավելի ցայտուն դարձավ անգլիական նոր դեսպան Դորթմունդ Վոլֆի՝ Իրան գալուց հետո[41]։

Յահյա Դավլաթաբադին գրում է, որ «Ռուսաստանի հոգսերը Ճապոնիայի դեմ մղված պատերազմում, անգլիացիներին հնարավորություն էին տալիս ավելի խորացնելու և ընդարձակելու իրենց ազդեցությունն այդ երկրում» (Իրանում—Հ. Ե.)[42]։

Ամփոփելով Անգլիայի քաղաքականության կործանարար նշանակությունը Իրանի համար, Մահմուդ Մահմուդը գրում է. «Պատկերացրեք Իրանի վիճակը հիսուն տարի առաջ...։ Եթե այն ժամանակ ճամփորդեիք Իրանում, ապա կտեսնեիք, որ նույնիսկ գյուղացի կանանց ձեռքերն ու վզերը ոսկով էր զարդարված, այժմ քաղաքի ունևոր ընտանիքների

---

39 Նույն տեղում, հատ. 5, էջ 1480—1481։

40 Նույն տեղում, հատ. 4, էջ 1168։

41 Նույն տեղում, էջ 1170։

42 یحیی دولت ابادی، حیات یحیی جلد اول، تهران ۱۹۵۷ صفحه ۳۵۲

կանանց վրա նույնիսկ այդ շեք տեսնի... Իրանի բնակչությունը ամբողջովին աղքատացել և տեղահան է արվել: Այս բոլորը Անգլիայի դաժան և բռնի քաղաքականության հետևանք է»[43]:

Ինչպես տեսնում ենք, հեղինակը վառ գույներով նկարագրում է անգլիական իմպերիալիստների կողոպտչական քաղաքականությունը և նրա հետևանքներն Իրանի ընդհանուր կացության վրա: Չնայած հեղինակի մոտ նկատվում է անցյալի որոշ իդեալականացում, մասնավորապես Իրանի ժողովրդի վիճակի գովաբանում, որ, անշուշտ, ֆեոդալական հարաբերությունների գերիշխման պայմաններում զուրկ է իրական հիմքերից[44]:

*

* *

Իրանում իրենց քաղաքական նպատակներն իրականացնելու համար անգլիական գաղութարարները լայնորեն միջամտում էին երկրի ներքին գործերին: Նրանք կապեր էին հաստատել իշխող շրջանների հետ և ձգտում էին իրենց ցանկացած անձանց նշանակել պատասխանատու պաշտոններում: Ինչպես գրում է Թեյմուրին, այդ գործում նրանք խարդախությամբ, դավադրությամբ և ճարպիկ քաղաքականությամբ հաճախ հաջողությունների էին հասնում: Միրզա Աղախան Նուրին, Միրզա Հոսեյն խան Սեփահսալարը, Միրզա Ալի Ասղար խան Ամին էս Սոլթանը, նշում է նա, հատկապես այն մարդկանցից էին, որոնք անգլիացիների օգնու-

---

43 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد هفتم، صفحه ۲۰۸۰
Հետաքրքիր է նշել, որ Մահմուդ Մահմուդը, քննելով Անգլիայի քաղաքականությունը XIX դարում, ուշագրավ դիտողություններ է կատարում Ռուս-պարսկական պատերազմների վերաբերյալ: Նա գրում է. «Ոչ մի պետություն մտադրություն չուներ (նկատի ունի Ռուսաստանին—Հ. Ե.) Իրանի բաժանման հարցը առաջ քաշել, կամ նրան բռնի ուժով տիրանալ: XIX դարի սկզբներին Իրանա-ռուսական պատերազմը անգլիական կառավարության հրահրման հետևանք էր:

Երկրորդ պատերազմի հրահրիչը ևս, որը երկու տարի տևեց և ավարտվեց Թուրքմենչայի պայմանագրով, Անգլիան էր»:

44 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد هفتم، صفحه ۲۰۸۰

թյամբ և հովանավորությամբ հասան մեծ վեզիրի պաշտոնին: «Այսպիսով,—եզրակացնում է Թեյմուրին,—անգլիացիները ամենաազդեցիկ մարդկանց իրենց ձեռքը ունենալով, պալատը և կառավարությունը իրենց էին ենթարկում, երբեմն դրամի և պաշտոնների խոստումով, երբեմն էլ սպառնալիքով պաշտոնյաներ էին նշանակում կամ հեռացնում և իրենց ցանկությունները իրականացնում»[45]: Այդ մասին է վկայում նաև Մահմուդ Մահմուդը: Նա գրում է, որ անգլիական գաղութարարները XIX դարի սկզբից սկսած Իրանի նկատմամբ ունեցել են կայուն և որոշակի քաղաքականություն: «Որքան ես կարդացել եմ ու տեսել,—գրում է նա,—այդ քաղաքականությունը փոփոխության չի ենթարկվել և մինչև այսօր էլ նույն առանցքի շուրջն է պտտվում: Պետական գործիչները կամ պետք է գոյություն ունենային անգլիական կառավարության ցանկության համաձայն, կամ պետք է տապալվեին: Այս քաղաքականության գլխավոր արատն էլ հենց այն էր, որ երկու դեպքում էլ Իրանը անկում էր ապրում... Հատկապես պալատի դժգոհ և ստոր գործիչներից, ապականված կրոնականներից ու աշխարհականներից և ցեղերի թալանչի պետերից բաղկացած մի խումբ ծախված մարդկանց նրանք (անգլիացիները—Հ. Ե.) միշտ իրենց տրամադրության տակ ունեին»[46]:

Իրանական հեղինակներն այն կարծիքին են, որ Իրանի բոլոր մեծ վեզիրները, բացառությամբ մի քանիսի, իշխանության էին եկել անգլիական քաղաքականության հովանավորությամբ: Մահմուդը գրում է, որ ինքը՝ Աթաբեկը, ևս վեզիրության առաջին տարիներին վայելում էր անգլիացիների հովանավորությունը, սակայն, երբ հետագայում դուրս եկավ Անգլիայի ազդեցության ոլորտից և միացավ նրա թշնամիներին, անգլիացիներն այդ չհանդուրժեցին և ձգտեցին նրան հեռացնել պաշտոնից: «Անգլիայի ազդեցությունն ուժեղացել էր իրանական մեծ վեզիրների նախաձեռնությամբ,—գրում է Մահմուդը: Միայն նրանցից մի քանիսը, ինչպես Հաջի Իբրահիմ խան Շիրազին, Ղայեմ Մաղամ Ֆա-

---

45 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۸۰۵

46 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد چهارم، صفحه ۸۹۸

բահանին և Միրզա Թաղի խան Ամիր Քաբիրն էին, որ մեծ վեզիր էին դարձել առանց անգլիական հովանավորության։ Բայց նրանցից ոչ մեկն իր նպատակին չհասավ և երեքն էլ ապականվեցին։ Այժմ հերթը Աթաբեկինն էր, նա էլ պետք է հեռանար և նրա տեղը պետք է զբաղեցներ մեկը, որ կատարեր Բրիտանիայի ցանկությունները»[47]։

XIX դարում իրանական քաղաքական թատերաբեմում գործել են մի շարք պատասխանատու պաշտոնյաներ, որոնք տարբեր թելերով կապված են եղել անգլիական գաղութատերերի հետ և մեծ դեր են խաղացել Իրանը կիսագաղութի վերածելու գործում։ Դրանցից կարելի է նշել մեծ վեզիրներ Միրզա Աղախան Նուրիին, Միրզա Հոսեյն խան Սեփահսալարին, Միրզա Ալի Ասղար խան Ամին էս Սոլթանին, Իրանի հարավում տեր ու տնօրեն Ղավամ էդ Դոլեին, ինչպես նաև արքայազն Զել էս Սոլթանին և ուրիշների։

Իրանը կիսագաղութի վերածվելու պատմությունն ուսումնասիրելիս պարսիկ հեղինակները հատուկ ուշադրություն են դարձրել նաև այդ գործիչների կյանքին ու գործունեությանը և արխիվային հարուստ նյութերի հիման վրա մերկացրել նրանց կապերն անգլիական գաղութարարների հետ, ցույց տվել այն նենգ և ազգադավ դերը, որ նրանք խաղացել են Իրանի գաղութացման գործում։ Չպետք է մոռանալ, որ եղել են նաև գործիչներ, որոնք պայքարել են անգլիական գաղութարարների դեմ և հանդես եկել հանուն Իրանի անկախության պահպանման և նրա հետագա բարգավաճման։

Ինչպես հայտնի է, երբ 1848 թվականին Նասր էդ Դին շահը գահ բարձրացավ, նրա առաջին մեծ վեզիրն էր հայտնի Միրզա Թաղի խան Ամիր Քաբիրը, որը մի շարք բարեփոխումների հեղինակ է և հատկապես պայքարում էր անգլիական գաղութարարների ազդեցության տարածման դեմ։

Ամիր Քաբիրի բարեփոխությունների պատմությունը մեր աշխատության խնդիրներից դուրս է։ Ասենք միայն, որ նա իր բարեփոխումների մեծ ծրագիրը փորձեց իրակա-

---

47 محمود محمود، روابط سیاسی... جلد ششم، صفحه ۱۶۹۱.

նացնել Նասր էդ Դին շահի թագավորության առաջին տարիներին, սակայն ռեակցիոն ֆեոդալական վերնախավի և անգլիական գաղութարարների դավադրության հետևանքով շահը շուտով նրան պաշտոնից հեռացրեց, աքսորեց Քաշան, որտեղ և, հետագայում, շահի առաջադրանքով սպանվեց:

Ամիր Քաբիրի կյանքի ու գործունեության, ինչպես նաև նրա անցկացրած բարեփոխումների մասին բազմաթիվ աշխատություններ են գրվել[48]: Մենք այստեղ ուզում ենք կանգ առնել միայն այն հարցի վրա, թե պարսիկ հեղինակներն ինչպես են գնահատել Նասր էդ Դին շահի և անգլիական իմպերիալիստների վերաբերմունքը նրա գործունեության նկատմամբ:

Աբդոլլահ Ռազին, խոսելով Նասր էդ Դին շահի թագավորության մասին և հատկապես անդրադառնալով Միրզա Թաղի խանի ռեֆորմներին, այն միտքն է հայտնում, որ Նասր էդ Դին շահի երկարատև թագավորության հիմքերն ամրապնդեց Միրզա Թաղի խան Ամիր Քաբիրը: «Երեք տարվա ընթացքում,—գրում է Ռազին,—նա ներքին բոլոր խռովությունները ճնշեց և մի շարք բարեփոխումներ ձեռնարկեց, մինչդեռ Միրզա աղա խան էթեմադ էդ Դոլեն չկարողացավ այդ մեծ մարդու ծրագրերն իրականացնել: Ամիր Քաբիրի նպատակներից մեկն այն էր, որ հոգևորականությունը չմիջամտի երկրի քաղաքական կյանքին կամ աշխարհիկ գործերին, քանի որ շատ լավ տեղյակ էր, թե հոգևորականների միջամտությունը քաղաքականության մեջ թե՛ Սոլթան Հոսեյնի և թե՛ Ֆաթհ Ալի շահի օրոք ինչպիսի վնասներ էր հասցրել Իրանին: Նա մեծ ջանքեր գործադրեց հոգևորականների ազդեցությունը վերացնելու ուղղությամբ և, նույնիսկ, արգելեց Բասթի* իրավունքը[49]:

---

[48] Այդ աշխատություններից ամենահետաքրքրականներն են

حسین مکی، زندگی میرزا تقی‌خان امیرکبیر، تهران ۱۳۲۳
فریدون آدمیت، امیرکبیر و ایران، تهران ۱۳۳۴

* Պետական մարմինների համար որևէ անձեռնմխելի վայրում ապաստարան գտնելը:

[49] عبدالله رازی، تاریخ مفصل ایران، تهران ۱۳۳۵، صفحه ۴۹۷

Որոշ հեղինակներ վկայում են, որ ոչ միայն Թաղի խանի հեռացումը մեծ վեզիրի պաշտոնից, այլև նրա սպանությունը հետևանք է եղել անգլիական գաղութարարների դավադրության:

Իսա Սադեղը օտարերկրացիների այս վարմունքը պատճառաբանում է նրանով, որ Ամիր Քաբիրը իր բարեփոխումներով արգելակում էր անգլիական ներկայացուցիչների բացահայտ միջամտությանը երկրի ներքին գործերին, խանգարում նրանց խռովություններ և անկարգություններ հրահրել[50]: Եվ ահա «օտարները և նրանք, ովքեր տուժում էին այդ բարեփոխումներից, դիմեցին տարբեր բնույթի դավադրությունների»—գրում է նա[51]:

Ալի Ասղար Շամիմն իր «Իրանը զաջարների թագավորության շրջանում» աշխատության մեջ, քննարկելով Ամիր Քաբիրի անցկացրած բարեփոխումները, նշում է, որ «այդ ժամանակ Իրանի ներքին բարեփոխումներին ձեռնամուխ լինելը կապված էր մեծ խոչընդոտների հետ: Ամիր Քաբիրը նույնիսկ իր կյանքը դրանց վրա զոհեց: Երկու գաղութարար պետությունները՝ Անգլիան և ցարական Ռուսաստանը, Իրանի քաղաքական և հասարակական վիճակի նկատմամբ, իրենց շահերին համապատասխան, հատուկ մոտեցում ունեին, բայց, ընդհանուր առմամբ, համատեղ և միասին դեմ էին որևէ քաղաքական ու հասարակական շարժման, որը կարող էր Իրանում նրանց շահերին վնաս հասցներ: Ակնհայտ է, որ Անգլիայի ու Ռուսաստանի քաղաքական և գաղութարարական ազդեցության ընդարձակումն Իրանում անհամատեղելի էր արմատական և խորը բարեփոխումների հետ»[52]: Շամիմն, այնուհետև, խոսում է այն մասին, թե ինչպես անգլիական գաղութարարները, անհանգստացած Ամիր Քաբիրի անցկացրած բարեփոխումներով, դավադրություն կազմակերպեցին նրա դեմ:

Նասր էդ Դին շահը Քաշանի նահանգապետ Միրզա Նասրօլահ Նուրիին, որը հայտնի էր Միրզա Ասղա խան ա-

---

50 عیسی صدیق، تاریخ فرهنگ ایران، تهران ۱۳۲۶، صفحه ۵

51 Նույն տեղում, էջ 289:

52 علی‌اصغر شمیم، ایران در دوره سلطنت قاجار، تهران ۱۳۴۲، صفحه ۱۳۷

նունով, Թեհրան է կանչում և նրան էթեմադ էդ Դոլե տիտղոսը տալով, նշանակում է Ամիր Քաբիրի տեղակալը։ «Միրզա Աղա խան Նուրիի՝ Ամիր Քաբիրի տեղակալ ընտրելու և նշանակելու գործում,—գրում է Շամիմը,—մասնակից էր անգլիական դեսպանը։ Այս մարդը Իրանում անգլիական դիվանագիտության դրածոն էր և մինչև իր կյանքի վերջը հավատարիմ և նվիրված ծառայեց անգլիացիներին»[53]։ Իր այս վկայությունը հիմնավորելու համար Շամիմը նշում է, որ անգլիական դեսպանության պնդումը Միրզա Աղա խանին մեծ վեզիրի տեղակալ և հետագայում էլ մեծ վեզիր նշանակելու գործում արձանագրված է «դաջարների ներքին պատմության բազմաթիվ աղբյուրներում»[54]։

Ինչպես հայտնի է, այդ նշանակմանն անմիջապես հետևում է մեծ վեզիրի պաշտոնից Ամիր Քաբիրի հեռացումը և, հետագայում, նրա սպանությունը։

Հետաքրքրական է նշել, որ երբ Ամիր Քաբիրն սպանվեց, ապա Թեհրանում անգլիական դեսպանությունը մի նամակով իր կառավարության անունից բողոքեց մեծ վեզիրի սպանության դեմ, «որպեսզի,—գրում է Շամիմը,—այդ հայրենասերի սպանության գործում անգլիացիների մասնակից լինելու մեղադրանքը իրենցից հեռացվի։ Այս հանգամանքը մի շարք պատմաբանների մղել է այն բանին, որ Ամիր Քաբիրի սպանության գործում ավելի շատ ուշադրություն դարձնեն ռուսական կառավարության հակումներին և քաղաքականությանը և սպանության պատասխանատվությունը գցեն նրա վրա։ Մինչդեռ Անգլիայի կողմից Ամիր Քաբիրի հակառակորդ Միրզա Աղա խան Նուրիին ցուցաբերած բացահայտ հովանավորությունը և Նուրիի ստորաքարշ ծառայություններն ու անգլիական քաղաքականությանը անձնատուր լինելը անժխտելի են։ Հենց այս հարցը,—ինչպես գրում է Շամիմը,—Իրանում անգլիական քաղաքական դավադրությունների բացահայտ ապացույցներից է, և մեկն է մեր երկրի ներքին գործերին նրա հարյուրավոր ուղղակի և անուղղակի միջամտություններից»[55]։

---

[53] Նույն տեղում, էջ 113։

[54] Նույն տեղում։

[55] Նույն տեղում, էջ 125։

Քննարկելով Ամիր Քաբիրի սպանությունը Ռուսաստանին վերագրելու հարցը, Շամիմը գրում է, «Ամիր Քաբիրին Ռուսաստանի հետ կապելը և նրան ռուսական քաղաքականության կողմնակից ձևացնելը Իրանում անգլիական նենդ քաղաքականության գլուխգործոցներից մեկն է»[56]:

«Ամիր Քաբիրի սպանության կապակցությամբ Նասր էդ Դին շահը բացահայտորեն հասկացավ,—գրում է Ֆարհադ Մոթամեդը,—որ օտարերկրացիներն իրենց հզորությունը ավելացնելու և մտադրություններն իրականացնելու գործում, անհրաժեշտության դեպքում, թագավորի թուլությունն ապացուցող ոչ մի միջոցառման առաջ կանգ չեն առնի»[57]:

Մահմուդ Մահմուդի վկայությամբ, անգլիական դեսպանի պահանջով Ամիր Քաբիրը պետք է հեռացվեր մեծ վեզիրի պաշտոնից և նշանակվեր Քաշանի նահանգապետ: Բայց այդ գործին միջամտեց ռուսական դեսպան Դոլգորուկին, և շահը տատանվեց: Չնայած Ամիր Քաբիրն Իրանում ռուսական քաղաքականության վստանդավոր թշնամին էր, սակայն սկզբնական շրջանում ռուսական դեսպանը նրան համարում էր ճշմարտասեր, արդար և տրամաբանող մի մարդ և չէր ցանկանում, որ այսպիսի մեկը պաշտոնից հեռացվի և այն կբաղեցնի Միրզա Ազախան Նուրին, որը գտնվում էր Անգլիայի հովանավորության տակ: Նա չէր կասկածում, որ նոր վեզիրը կպաշտպանի Անգլիայի շահերը և անտարբեր կլինի ռուսական շահերի նկատմամբ: «Լավագույն ելքը,—գրում է հեղինակը,—Ամիր Քաբիրի կյանքի պաշտպանությունն էր և դեսպանը պատրաստ էր նրան վերցնել ռուսական կառավարության հովանավորության տակ»[58]: Բայց հետաքրքրականն այն է, որ հեղինակը նույն էջի տողատակում գրում է. «Ամիրի հովանավորման գործում Դոլգորուկիի միջամտությունը մի դավադրություն էր, քանի որ ռուսները նույնպես մասնակից էին Ամիրի դիրքերի թուլացմանը»[59]:

Հայտնի է, որ Ամիր Քաբիրն իր վեզիրության տարիներին մասամբ վերջ տվեց օտարերկրացիների միջամտությանը

---

56 Նույն տեղում, էջ 126:

57 محمود فرهاد معتمد، سپهسالار اعظم، تهران ۱۹۴۱، صفحه ۸۵

58 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد دوم، صفحه ۴۷۵

59 Նույն տեղում:

երկրի ներքին և արտաքին գործերին: Նա միակ մարդն էր, որ Իրանի այդ հարցերը վճռում էր առանց նրանց: Աղբյուրները վկայում են, որ նրա օրոք ոչ ոք ի վիճակի չէր մասնավոր հարաբերությունների մեջ մտնել օտարերկրացիների հետ: Նա Իրանի պետական բոլոր պաշտոնյաներին ստիպեց հարաբերությունները խզել նրանց հետ: «Միայն այդ պատիվը նրան բավական է,—գրում է Մահմուդը,—որ նրա օրոք հարևաններից և ոչ մեկը չկարողացավ միջամտել Իրանի ներքին գործերին կամ ոտնձգություններ կատարել նրա քաղաքական իրավունքների նկատմամբ»[60]:

Մինչ այդ Իրանում ընդունված էր այս կամ այն առիթով հաճախակի լսել օտարերկրյա ներկայացուցիչների կարծիքներն ու առաջարկությունները: Երկրի ներքին գործերին Անգլիայի ու Ռուսաստանի ներկայացուցիչների միջամտության ու ազդեցության չափը կախված էր շահի բարյացակամությունից և նրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Երբեմն օտարերկրյա ներկայացուցիչներին թույլ էր տրվում նույնիսկ հովանավորել իրանահպատակներին: Հենց այդ սովորության համաձայն էր, որ երբ երիտասարդ շահը Թավրիզից Թեհրան էր մեկնում, իբր անախորժություններից խուսափելու համար, Թավրիզի հայերն անգլիական հյուպատոսից խնդրեցին պաշտպանել քաղաքի հայ բնակչությանը[61]:

Ամիր Քաբիրը որոշեց ապագայում թույլ չտալ օտար ներկայացուցիչների միջամտությունն Իրանի որևէ գործում:

Պատմական փաստերը ցույց են տալիս, որ Թեհրանում գտնվող օտարերկրյա դեսպաններն ու մյուս ներկայացուցիչները ոչ մի կերպ չէին համաձայնվում հրաժարվել այդ կարգից, քանի որ դա նրանց մեծ արտոնություններ էր տալիս և այդ արտոնություններից զրկվելը նրանց համար մեծ կորուստ կլիներ[62]:

Անգլիայի ցուցումով Ռուսաստանը և Ֆրանսիան համերաշխ էին Ամիր Քաբիրի հետապնդման գործում: Նրանք Ամիրի գոյությունը արգելք էին համարում իրենց քաղաքա-

---

60 Նույն տեղում, էջ 456:

61 Նույն տեղում, էջ 469:

62 Նույն տեղում:

կան շահերին, ձգտում էին նրան իշխանությունից հեռացնել: Մահմուդը գրում է, որ այդ ժամանակ ռուսները միանգամայն համաձայն էին Իրանի նկատմամբ Անգլիայի քաղաքականությանը, քանի որ ռուսական ցար Նիկոլայ առաջինը նրանց հետ մշակել էր Իրանի և Օսմանյան երկրի բաժանման ծրագիրը[63]:

Այս հարցին անդրադառնում է նաև Ֆարհադ Մոթամեդը: Նա գրում է. նկատի ունենալով հոգևորականության զորեղությունը, խանների և բեկերի ինքնավարությունը, արքայազնների ու պալատականների ազդեցությունն ու ուժը, պարզ էր, որ մեծ վեզիրներից որևէ մեկը եթե ուզենար դրական որևէ գործ կատարել, պետք է Միրզա Էբրահիմ Քալանթարի, Միրզա Աբոլ Ղասեմ Ղայեմ Մաղամի և Միրզա Թաղի խան Ամիր Քաբիրի ճակատագրին արժանանար: Այդ ամենը տեղի էր ունենում այն ժամանակ, երբ երկու հզոր հարևանները՝ Ռուսաստանն ու Անգլիան, «մայրական հոգատարություն» էին երևան բերում և ապականված տարրերի հրահրումով յուրաքանչյուր պահ կարող էին ազնիվ և հոգատար վեզիրներին պաշտոնանկ անել[64]:

Հայտնի է, որ Ամիր Քաբիրի հեռացումից հետո Նասր էդ Դին շահը մեծ վեզիր նշանակեց հենց նույն Միրզա Աղա խան Նուրիին: Այս հարցի մասին հետաքրքիր վկայություններ ունի Աբոլֆազլ Ղասեմին «Ընտանիքների իշխանությունն Իրանում» աշխատության մեջ: Նա նշում է, որ Նասր էդ Դին շահը մեծ վեզիր նշանակեց Միրզա Աղա խան էթեմադ էդ Դոլե Նուրիին՝ «Ինտելիջենտ սերվիսի առաջին գործակալին, Անգլիային հնազանդ և կատարածու, անգլիական հետախույզ Քոլոնել Շիլի աշակերտին»[65]: Հեղինակն ընդգծում է, որ Ամիր Քաբիրից հետո այս անձնավորությանը իշխանություն բերելով, անգլիական կայսրությունը նպատակ ուներ իր գաղութարարական քաղաքականությունն իրականացնել Մերձավոր Արևելքում[66]: Սակայն, ինչպես նշում է

---

63 Նույն տեղում, էջ 473:

64 محمود فرهاد معتمد، سپهسالار اعظم، تهران ۱۹۴۶، صفحه ۱۴۶

65 ابوالفضل قاسمی، حکومت خانواده‌ها در ایران، ۳ خانواده قوام‌السلطنه، تهران ـ ۱۹۵ صفحه ۱۲۴

66 Նույն տեղում, էջ 125:

նա, այդ ժամանակ տեղի ունեցան մի շարք իրադարձություններ։ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև եղած հակասությունների սասսկացումը հանգեցրեց Ղրիմի պատերազմին, իսկ Հնդկաստանում ծավալվել էր հակագաղութատիրական հզոր մի շարժում։ Սոլթան Մուրադ Միրզա Հեսամ էս Սալթանեն, օգտվելով առիթից, հարձակվում է Հերաթի վրա և գրավում այն։ Այդ արշավանքի ժամանակ նրան ուղեկցում էր Ղավամ էդ Դոլեն, որի մասին բազմաթիվ վկայություններ կան գրագրության և այլ զեկուցումների մեջ, և որին մենք կանդրադառնանք առանձին։

Հեսամ էս Սալթանեի այս արշավանքը խիստ զայրացնում է Անգլիայի շահերի պաշտպան մեծ վեզիր Նուրին, որը անմիջապես նրան կարգադրում է Հերաթը թողնել և վերադառնալ Մաշհադ։ Հեսամ էս Սալթանեն մեծ վեզիրին ուղարկած իր պատասխանում նկարագրելով ստեղծված միջազգային հարաբերությունները, Հերաթի գրավումը միանգամայն տեղին ու արժանավայել է համարում։ Մեծ վեզիրը իր նամակում մեղադրում է Հեսամ էս Սալթանեին, որ իբր նա մտադիր է գահը բռնագրավել, և այդ պատճառով էլ մնացել է Հերաթում։ Նա պահանջում է, որ «Իրանի շահերից» ելնելով Հեսամ էս Սալթանեն հեռանա Հերաթից և վերադառնա Մաշհադ։ Սակայն վերջինս դիմադրում է մեծ վեզիրի այդ պահանջին, որի արդյունքը լինում է այն, որ կառավարությունը նրան հեռացնում է Խորասանի նահանգապետի պաշտոնից և նրա տեղը նշանակում Համզե Միրզա Հեշմաթ էդ Դոլեին[67]։

Գնահատելով Աֆղանստանում տեղի ունեցող իրադարձությունները և անգլիական իմպերիալիստների հետապնդած նպատակները, Ալի Ասղար Շամիմը գրում է. «1850-ից մինչև 1855 թվականը, այսինքն հինգ տարվա ընթացքում Աֆղանստանում տեղի ունեցող իրադարձությունները բացահայտ օրինակ էին հնդկական և անգլիական իշխանությունների ապօրինի և անթույլատրելի միջամտությունների։ Դա ցույց էր տալիս, որ անգլիական կառավարությունը մտադիր էր թուլացնել Իրանը և իրականացնել իր գաղութակալական

---

[67] Նույն տեղում, էջ 125—126։

քաղաքականությունն ինչպես այս երկրում, այնպես էլ Մերձավոր Արևելքի մյուս շրջաններում»[68]:

Իրանական հեղինակները մանրամասն քննարկել են նաև անգլիական գործակալ մեծ վեզիր Միրզա Հոսեյն խան Սեփահսալարի պրոանգլիական գործունեությունը:

Աղբյուրները խոսում են այն մասին, որ Միրզա Հոսեյն խանը դեռևս Ստամբուլում եղած ժամանակ կապվել էր անգլիական գաղութարարների հետ: Նա անդամ էր ֆրամասոնական ռեակցիոն կազմակերպության, և նրա ակտիվ գործիչներից էր: Քերզոնի կարծիքով, Անգլիայի հետ բարեկամություն հաստատելու ձգտումն Իրանում երբեք այնպիսի չափեր չէր ընդունել, ինչպես Միրզա Հոսեյն խանի մեծ վեզիր եղած ժամանակ:

Իրանցի հեղինակները հավաստում են, որ նա մեծ վեզիր էր դարձել անգլիացիների աջակցությամբ. ու հովանավորությամբ, և Ռեյտերին նրա կոնցեսիա տալը համարում են «Սեփահսալարի դավաճանության գլուխգործոցը»[69]: «Միրզա Հոսեյն խան Սեփահսալարը,—գրում է Մահմուդը,—անչափ տարված էր Անգլիայի քաղաքականությամբ և սրտանց ցանկանում էր, որ Իրանը ամբողջովին ընկնի Անգլիայի ազդեցության տակ»[70]: «Անգլիական կառավարությունը Միրզա Հոսեյն խան Սեփահսալարի համաձայնությամբ տիրապետեց ամբողջ Իրանին,—գրում է նա: Այսինքն կար Նասր էդ Դին շահը, կար Միրզա Հոսեյն խան Սեփահսալարը, կային պալատը և կառավարությունը, բայց ծրագրերը և գործերը գտնվում էին անգլիական գործակալների ձեռքում[71]: Տարբեր խարդախություններով և դավադրություններով անգլիացիները տիրեցին Բալուջեստանի կեսին, Իրանից անջատեցին Սիստանի նահանգի մեծ մասը, ստորագրվեց Ռեյտերի պայմանագիրը, որով Իրանի հարստության բոլոր աղբյուրները տրվում էին անգլիացիներին, մի պայ-

---

68 علی‌اصغر شمیم، ایران در دوره سلطنت قاجار، تهران ۱۳۴۲ صفحه ۱۳۰.

69 ابوالفضل قاسمی، حکومت خانواده‌ها در ایران، ۳ خانواده قوام‌السلطنه، صفحه ۱۳۲

70 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد سوم، صفحه ۷۱۴

71 Նույն տեղում, էջ 894:

մանագիր, որի ստորագրումից հետո շահը և Սադր Ազամը մեկնեցին Լոնդոն[72]։

Մահմուդի վկայությամբ, անգլիացիները Միրզա Հոսեյն խան Սեփահսալարին հավաստիացրել էին, որ ռուսները մոտենում են և շուտով Իրանը կկորցնի իր անկախությունը, որ Իրանի համար միակ փրկությունը Անգլիայի գրկում պատսպարվելն է, և եթե առանց վերապահումների հանձնվեն Անգլիային, ապա շահնշահի պետությունը կշարունակի իր գոյությունը և ապահով կլինի ցարական Ռուսաստանի ոտնձգություններից[73]։

Այս խոսքերում նկատվում է Միրզա Հոսեյն խանին արդարացնելու ինչ-որ տենդենց, ավելի ճիշտ, այն տեսակետը հաստատելու ձգտում, թե նա, համենայն դեպս, իր պրոանգլիական քաղաքականությունը վարում էր երկրի բարձրագույն շահերից ելնելով և «երկրի անկախությունը պաշտպանելու» նպատակով։ Մի հանգամանք, որը սկզբից մինչև վերջ հերքվում է պատմական փաստերով։ Մահմուդն ինքը մի այլ տեղ ընդունում է, որ «Միրզա Հոսեյն խան Սեփահսալարը իշխանություն եկավ անգլիացիների օգնությամբ և նրանց շահերի բերումով։ Միրզա Հոսեյն խանը, իր հերթին, ազնվորեն գործեց հօգուտ նրանց, Բալուջեստանի և Սիստանի սահմանները ընդունեց այն ձևով, ինչպես անգլիացիներն էին առաջարկել, Ռեյտերի կոնցեսիայով երկար ժամանակով անգլիացիներին հանձնվեցին Իրանի բնական հարստությունների բոլոր աղբյուրներն ու եկամուտները, Անգլիայի հզորությունն ու վսեմությունը շահին ցուցադրելու համար նրան Անգլիա տարավ։ Այդ ամենը նա անում էր, որպեսզի անգլիական կառավարությունը Իրանի հավատարիմ բարեկամը դառնա»[74]։

Պետք է նշել, որ ընդհանրապես Միրզա Հոսեյն խան Սեփահսալարի կերպարը, որպես անգլիական գործակալի, մանրակրկիտ կերպով ուսումնասիրվել է պարսիկ բազմաթիվ հեղինակների կողմից։ Վերջիններս նրան հիմնականում ներկայացնում են որպես անգլիական փորձառու քա-

---

72 Նույն տեղում։

73 Նույն տեղում, էջ 772։

74 Նույն տեղում, էջ 789։

զաքարեանների ձեռքում անկամ մի գործիք և նրանց ցանկությունների կամակատար[75]:

Ամին էս Սուլթանի կյանքն ու գործունեությունը հետազոտողները, նույնպես, հետաքրքիր փաստեր են հաղորդում նրա և անգլիական իմպերիալիստների կապերի մասին: Համաձայն այդ տեղեկությունների, մեծ վեզիրը հատկապես սերտ հարաբերությունների մեջ է եղել անգլիական ճարպիկ և գործունյա Դորթմունդ Վոլֆի հետ: Նրանց հարաբերություններն այնքան ջերմ էին, որ մեծ վեզիրը առանց նրա խորհրդի և թույլտվության պետական ոչ մի գործ չէր կատարում: Անգլիացիներն էլ, իրենց շահերից ելնելով, մեծ ջանասիրությամբ նրան պաշտպանում և հովանավորում էին: Վկայություններ կան այնպիսի դեպքերի մասին, երբ որևէ պատճառով Նասր էդ Դին շահը զայրացած է եղել մեծ վեզիրի վրա, անգլիական դեսպանը Անգլիայի պրեմիեր մինիստր Սոլզբերիի անունից կեղծ հեռագրեր է կազմակերպել այնպիսի բովանդակությամբ, որ իբր վերջինս ցանկանում է, որ Ամին էս Սուլթանը մնա մեծ վեզիրի պաշտոնում[76]:

Ամին էս Սուլթանը անգլիական իմպերիալիստներին սիրաշահելու համար ոչ մի զոհաբերության առաջ կանգ չէր առնում: Իր և իր գործակիցների համար կաշառքներ վերցնելով, նա բազմաթիվ կոնցեսիաներ էր տալիս անգլիացիներին: Թվարկելով նրա կողմից Անգլիային տրամադրված Քարուն գետի նավարկության, «Շահնշահի բանկի» հիմնադրման, ծխախոտի մոնոպոլիայի, ճանապարհների կառուցման, նավթի և այլ կոնցեսիաները, Թեյմուրին դրանցից յուրաքանչյուրը գնահատում է որպես Իրանի ստրկացմանը նպաստող մի խթան: «Եթե Ռեժիի իրադարձությունները տեղի չունենային,— գրում է Թեյմուրին,— կոնցեսիաները իրականանային, Իրանն առանց արյունահեղության, Հնդկաստանի պես հեշտ ու հանդարտ անգլիական տիրապետության տակ կընկներ»[77]:

Իր ծառայություններն անգլիական իմպերիալիստներին Ամին էս Սուլթանը շարունակեց մինչև ծխախոտի բոյկոտը և

---

[75] Նույն տեղում, էջ 1346:

[76] ابراهيم تيموري، عصر بي‌خبري... صفحه ۷۴

[77] Նույն տեղում, էջ 76:

երկրում ծավալված ընդարձակ շարժումը, որոնք հասցրեցին Իրանում անգլիական քաղաքականության ժամանակավոր պարտության: «Միայն այդ իրադարձություններից հետո էր,— գրում է Թեյմուրին,— որ իր պաշտոնը պահպանելու համար, նա փոխեց իր քաղաքական գիծը և ընկավ ռուսների գիրկը: Ամին էս Սոլթանի մտերմությունը ցարական Ռուսաստանի հետ օրեցօր ամրապնդվում էր և նրա սպանության իսկական պատճառը հենց ռուսների հետ բարեկամական կապերն էին»[78]:

Ինչպես տեսնում ենք, այստեղ ուղղակի ակնարկ կա այն մասին, որ Ամին էս Սոլթանի սպանությունը նույնպես անգլիական իմպերիալիստների գործն է եղել:

«Աթաբեկը,— գրում է Մահմուդը,— պալատում մտցրած բոլոր փոփոխություններով հանդերձ, անգլիացիների կողմից իրեն ապահով չէր զգում և վստահ էր, որ անգլիացիները նրանից վրեժ կլուծեն, դրա համար էլ աշխատում էր նրանց հետ գաղտնի հարաբերությունների մեջ մտնել: Նա ռուսներին համարում էր իր հովանավորը, ուստի չէր ուզում, որ նրանք տեղյակ լինեին անգլիացիների հետ ունեցած իր գաղտնի կապերի մասին»[79]: Հենց այդ ժամանակ էր, որ անգլիացիները հարավի նավթն էին ուզում: Հարդինգը, Աթաբեկի հետ մտերմանալով, խիստ գաղտնի ձևով այս հարցը քննարկեց[80]:

Մահմուդը գտնում է, որ եթե Աթաբեկը համաձայնվեց այսպիսի մի կոնցեսիա տալ ինչ-որ անգլիահպատակի, ապա դա միայն իր կյանքը պահպանելու համար էր: Նա նկատի ուներ Նասր էդ Դին շահի սպանությունը և ջանում էր սիրաշահել և հաշտվել անգլիական քաղաքական ներկայացուցիչների հետ[81]:

Անգլիական իմպերիալիստների հլու-հնազանդ ծառաներն են եղել նաև ֆեոդալական մի այլ ընտանիքի՝ Ղավամ օլ Մոլք ընտանիքի, անդամները: Այս ընտանիքը հայտնի էր

---

78 Նույն տեղում, էջ 75:

79 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد ششم، صفحه ۱۶۸۳

80 Նույն տեղում, էջ 1684:

81 Նույն տեղում ,էջ 1685:

նաև Շիրազի անունով, քանի որ նա գլխավորապես տիրապետում էր Ֆարսի նահանգում, որի կենտրոնն էր Շիրազը:

Նասր էդ Դին շահի թագավորության տարիներին Ղավամ Շիրազիի ընտանիքի հզորությունը մեծ չափերի հասավ: Աբոլֆազլ Ղասեմին գրում է, որ Բուշեհրի գրավումն անգլիացիների կողմից վերագրում էին Ղավամ օլ Մոլքին և նրա հորը: Մեծ վեզիր Միրզա Աղա խան Նուրին այն կարծիքին էր, որ Ղավամ Շիրազիի ընտանիքը շահից վրեժ լուծելով, Բուշեհրը տվեց անգլիացիներին: «Նրանք,—գրում է Ղասեմին,—տմարդ և դավաճան ձևով Իրանի շահին ստիպեցին լրիվ կերպով հրաժարվել Աֆղանստանից և այն հանձնել անգլիացիներին: Նրանք ուրիշ ելք էլ չունեին, քանի որ այն ընտանիքը, որն իրեն օտարների գիրկն էր գցել, պետք է կատարեր նրանց կարգադրությունները, այլապես նրանց վարձկան ծառա լինելն իմաստ չէր ունենա»[82]: Մի ուրիշ տեղ Ղասեմին նշում է. «պետք է նկատի ունենալ, թե Ղավամ էդ Դոլեն որքան հնազանդ և հավատարիմ ծառա է եղել, որ Անգլիայի վարձկան և լրտես էթեմադ էդ Դոլէի որդուն՝ Նեզամ օլ Մոլք Քազեմ խաջե Նուրին, ֆինանսների մինիստրությունից հեռացրեցին և Ղավամ էդ Դոլեին նրա տեղը նշանակեցին»[83]:

Հնդկաստանի փոխարքա Ջորջ Քերզոնը Նասր էդ Դին շահի թագավորության վերջերին ճամփորդելով Խորասան, այդ նահանգի վերաբերյալ նոր կարգադրություններ է անում նորահիմն Ինտելիջենտ Սերվիսին, և Խորասանի գաղութացման և նրա քայքայման ծրագրի լրացման ուղղությամբ նոր ակտիվություն է սկսվում: Մերվի պատերազմի պարտության հանցավորը և Իրանում ֆրամասոնական կազմակերպության առաջին հիմնադիրներից և ազդեցիկ անդամներից մեկը Միրզա Մոհամադ Ղավամ էդ Դոլեն հանձնարարություն է ստանում Խորասանում ևս ֆրամասոնական լոժա ստեղծել: «Այսպիսով,—գրում է Ղասեմին,—նա հիմք է դնում այլասերման և ինտրիգների կենտրոն

---

[82] ابوالفضل قاسمی، تاریخ سیاه یا حکومت خانواده‌ها در ایران ۳ خانواده قوام‌الملك، صفحه ۲۰—۱۹

[83] Նույն տեղում, էջ 133:

հանդիսացող մի կազմակերպության, որը հիսուն տարի շարունակ խորասանում արհեստական խլրտումների և վտանգավոր ծրագրերի հեղինակ էր հանդիսանում»[84]: Ղավամ էդ Դուլեն այդ հանձնարարությունը ստանում է անգլիական հայտնի և հմուտ գործակալ Աբդոլ Համիդ Միրզա Էյն էդ Դուլեի վեղիրության օրոք: Մոզաֆար էդ Դին շահի որդի Շոա էս Սալթանեն, որը ֆրամասոնի անդամ և հայտնի անգլիական գործակալ էր, իր օրագրում այդ մասին հիշատակում է, «1906 թվականի փետրվարի 20-ին Մահդավիների հայրը՝ Հոսեյն Աղան, ինձ մոտ գալով համոզեց, որ ես ընդունեմ խորասանի նահանգապետի պաշտոնը: Հետո նա մանրամասն նկարագրեց ֆրամասոնական լոժայի ստեղծումը: Այնուհետև եկավ Ղավամ էդ Դուլեն, որը նույնպես պատմեց այդ մասին»[85]:

Ինչպես արդեն նշել ենք, անգլիական իմպերիալիստները պայքարում էին իրենց տնտեսական և քաղաքական տիրապետությունը հաստատելու հատկապես Իրանի հարավային նահանգներում: Ուստի հասկանալի է, որ այդ նահանգների ղեկավար մարմինները Անգլիայի հլու-հնազանդ կամակատարներն էին: Փաստերը ցույց են տալիս, որ հարավային նահանգներում պաշտոնյաներ նշանակելիս իրանական կառավարությունը միշտ նկատի էր ունենում անգլիական գաղութարարների կարծիքն ու տրամադրությունները: Վերջիններս առաջարկում էին իրենց թեկնածուներին և նրանց նշանակել էին տալիս համապատասխան պաշտոնների: Այս տեսակետից հատկապես հետաքրքիր է Նասր էդ Դին շահի որդի Զել էս Սոլթանի պատմությունը: Զել էս Սոլթանը, ինչպես բնութագրում է նրան Յահյա Դովլաթաբադին, սերտ կապերի մեջ էր անգլիացիների հետ և ծառայում էր նրանց:

Անգլիացիների հետ նույնպիսի փոխհարաբերությունների մեջ էր նաև նրա որդին՝ Յազդի նահանգապետը[86]: Զել

---

84 Նույն տեղում, էջ 141:

85 Նույն տեղում:

86 یحیی دولت‌آبادی، حیات یحیی، جلد اول، تهران ۱۹۵۷، صفحه ۳۱۶

էս Սուլթանը 1875 թ. նշանակվում է Էսֆահանի նահանգապետ և նրա իշխանությունը տևում է մինչև 1907 թվականը, այսինքն, ավելի քան երեսուն տարի: Զել էս Սուլթանի կենսագիր Հոսեյն Սաադաթ Նուրին Էսֆահանում նրա իշխանության հարատևությունը բացատրում է մի շարք հանգամանքներով, որոնցից կարևորագույնը համարում է անգլիացիների կողմից նրա պաշտպանությունն ու հովանավորությունը[87]: Սակայն հետաքրքիրն այն է, որ Զել էս Սուլթանի՝ պաշտոնից հեռացման գործում էլ անգլիական դաղութարարական քաղաքականությունն անմասն չէր: «Հենց նույն պետության գործակալները,— գրում է Նուրին,— որոնք արտաքնապես նրան պաշտպանում էին, ներքուստ ջանում էին հեռացնել նրան Ֆարսի, Խուզեստանի և Արևմտյան շրջանների նահանգապետի պարտականություններից և սահմանափակել նրա իշխանության շրջանները»[88]: Անգլիական գաղութարարները լայն ծրագիր էին մշակել Խուզեստանի և Լուռեստանի համար, որոնց իրականացումը պետք է կատարվեր պատակտված և իրար հետ մրցակցող ցեղապետերին զրգռելու և նրանց խռովությունների հրահրելու միջոցով: Հոսեյն Սաադաթ Նուրին վկայակոչում է Արնոլդ Վիլսոնի «Իրանի հարավ-Արևմուտքը» գիրքը, որն արդյունք էր Խուզեստանում և Իրանի հարավարևմտյան նահանգներում հեղինակի ամբողջ յոթ տարիների շրջագայության, և որտեղ մանրամասն նկարագրված է անգլիական ծրագրերի բովանդակությունը: Վիլսոնը ևս հավաստում է, որ անգլիական ներկայացուցիչները խոստումներ էին տալիս Զել էս Սուլթանին և պահում էին նրան վատ օրերի համար:

Զել էս Սուլթանի պաշտոնանկումից մեկ տարի հետո էր, որ բարձրացվեց Քարուն գետի նավարկության հարցը և չնայած Նասր էդ Դին շահի հակառակության, ավարտվեց հօգուտ Անգլիայի:

Զել էս Սուլթանի կազմակերպած բանակն, իհարկե, այնքան զորեղ չէր, որ կարողանար դիմադրել արտաքին հարձակմանը, սակայն, այնուամենայնիվ, ներքին ապստամբ

---

87 حسین سعادت نوری، ظل السلطان، تهران ۱۳۴۷، جلد اول، صفحه ۴۳-۴۴

88 Նույն տեղում, էջ 244:

ֆեոդալների ճնշման, օտարերկրյա լրտեսների ավերիչ և վնասաբեր գործողությունները կասեցնելու և անվտանգությունը ապահովելու տեսակետից բավական ազդեցիկ ուժ էր ներկայացնում[89]: «Ակնհայտ է,—գրում է Նուրին,—որ հետզհետե ավելի ուժեղացող այդպիսի մի ռազմական կազմակերպության գոյությունը գաղութարարական քաղաքականությանը ձեռնտու չէր: Հենց այդ պատճառով էլ Զել, էս Սոլթանի հեռացումից հետո, այդ կազմակերպության հիմքերն էլ փուլ եկան»[90]:

Նշելով, որ Զել էս Սոլթանի հեռացման ժամանակ հարավարևմտյան նահանգներում էր գտնվում անգլիացի հայտնի արևելագետ Էդվարդ Բրաունը, Նուրին կասկած է հայտնում, որ նա «...բացի պարսկական գրականության ուսումնասիրությունից, հարավային նահանգներում շրջելիս ուրիշ նպատակներ և մտադրություններ էլ է ունեցել»[91]: Այսինքն, լրտեսել է հօգուտ Անգլիայի, կամ առնվազն նպաստել ու մասնակցել է Զել էս Սոլթանի պաշտոնազրկման գործին: Հեղինակը դրանով է բացատրում նաև այն, որ չնայած անգլիական կառավարությունը Զել էս Սոլթանին Հնդկական աստղ շքանշանն էր ուղարկել, սակայն Բրաունն իր գրքերում նրա հասցեին մեղադրանքներ և պարսավանք է ուղղել:

Փաստերը ցույց են տալիս, որ անգլիական դիվանագիտական ներկայացուցիչները ամենալայն կերպով միջամտում էին երկրի ներքին գործերին: Տարբեր քաղաքներում գործող անգլիական հյուպատոսները փաստորեն տեր ու տիրական էին իրենց պաշտոնավարած շրջաններում:

Հասան Հալաջը հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում անգլիական ներկայացուցիչների միջամտությունների մասին: Նա գրում է, որ իր քառասունամյա գրական գործունեության ընթացքում «տեսել է, կարդացել է և գիտի, որ Հարավային Հարևանի դեսպանության կցորդները բարեկամության անվան տակ ուղղակի կամ անուղղակի միջամտել են բոլոր գործերին և իրենց քաղաքականությունն են առաջ

---

[89] Նույն տեղում, էջ 245:

[90] Նույն տեղում, էջ 247:

[91] Նույն տեղում, էջ 264:

տարել»[92]: Անգլիական մի խումբ ներկայացուցիչներ ֆինանսական, տնտեսական և վարչական տեղեկություններ էին հավաքում և նրանց մասին գրավոր զեկուցում համապատասխան անձանց: Մի ուրիշ խումբ պրոպագանդիստական լայն աշխատանքներ էր տանում, գրվատելով Անգլիայի համաշխարհային մեծությունն ու հզորությունը: Ինչպես գրում է Հալաջը, նրանք «ժողովրդին թյուրիմացության մեջ էին գցում, բթացնում էին ազգային ոգին և անկախության համար պայքարելու ձգտումը... Նրանք երկրի բոլոր բնագավառներն իրենց ձեռքն էին վերցրել և ծառայեցնում էին անգլիական գաղութարարներին: Ժողովրդին ներշնչում էին, որ ամեն ինչ անգլիացիների ձեռքին է և պետք է հպատակվել նրանց»[93]:

Նկարագրելով Իրանում անգլիական գործակալների քաղաքականության իրականացման ձևերը, Մահմուդ Մահմուդը գրում է, որ նրանք Իրանի բոլոր քաղաքներում մեծ թվով բարեկամներ էին ձեռք բերում, անհրաժեշտության դեպքում նրանց օգտագործելու նպատակով: Հաճախ նույնիսկ իրենց նահանգապետերի միջոցով ներթափանցում էին Իրանի քոչվոր ցեղերի մեջ և թշնամացնում նրանց կենտրոնական կառավարության հետ[94]:

Այդ մասին վկայում է նաև Ֆարհադ Մոթամեդը: Նա նշում է, որ տարբեր երկրների արխիվներում հազարավոր փաստաթղթեր են պահպանվել, որոնք ցույց են տալիս, թե ինչպես անգլիացիները կենտրոնական իշխանությունների դեմ էին հրահրում շեյխերին ու սահմանամերձ ցեղերին, ստեղծում խլրտումներ ու արյունահեղություններ[95]: Նա ուսումնասիրում և համեմատում է Իրանում անգլիական և ռուսական տիրապետության մեթոդները և նշում նրանց մեջ եղած տարբերությունը: «Անգլիացիները,— գրում է

---

92 حسن حلاج، تاریخ تحولات سیاسی ایران در قرن معاصر، تهران ۱۳۱۷، ص صفحه ۹۲

93 Նույն տեղում, էջ 93:

94 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد دوم صفحه ۵۱۷

95 محمود فرهاد معتمد، تاریخ روابط سیاسی ایران و عثمانی یا جلد دوم سپه‌سالار اعظم صفحه ۱۴۲

նա,—կարողանում էին մեծ հմտությամբ և խաբեբայությամբ քողարկել իրենց գերիշխանությունը: Հենց այդ պատճառով էր, որ Պարսից ծոցի շեյխերը կարծում էին, թե իրենք անկախ են, իսկ Բուխարայի էմիրը Պետրոգրադի դրածոն է»[96]:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ անգլիացիներն օգտագործում էին նույնիսկ էթնիկական տարբեր խմբերի միջև եղած հակասությունները և թշնամություն բորբոքում նրանց մեջ: Իրանի զեկավար շրջաններում գոյություն ունեին էթնիկական տարբեր ծագում ունեցող հիմնական երկու խմբեր (Թեհրանի և Ադրբեջանի գործիչներ), որոնք իրար հետ մշտական մրցակցության ու պայքարի մեջ էին: Իրանական պալատում ադրբեջանական տարրը ուժեղանում և համարվում էր հիմնականում այն պատճառով, որ զաջարական դինաստիայի թագավորության օրոք, ըստ սովորության, թագաժառանգները նստում էին Թավրիզում: Բնականաբար, երկար տարիներ Ադրբեջանի նահանգապետ լինելիս նրանց շուրջը հավաքվում էին բազմաթիվ պաշտոնյաներ և մտերիմներ, որոնք թագաժառանգի հետ միասին հետագայում գալիս էին Թեհրան, երբ վերջինս գահ էր բարձրանում:

Իրանական պալատում մղվող այդ պայքարը երկար պատմություն ունի, սակայն հետաքրքիրն այն է, որ իմպերիալիստական տերություններն այս հանգամանքը ևս օգտագործում էին իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար:

Որոշ հեղինակներ նշում են, որ անգլիական իմպերիալիստները փորձում էին հովանավորել և հենվել պարսկալեզու տարրերի վրա, օգտագործելով նրանց նաև ցարական Ռուսաստանի դեմ, որը հակված էր դեպի ադրբեջանական ծագում ունեցող խումբը: Մահմուդ Մահմուդն, օրինակ, հայտնում է, որ անգլիացիները նույնիսկ մտադիր էին, հնարավորության դեպքում, հարավի պարսկալեզու գործիչներից մի կառավարություն կազմել, որպեսզի ավելի հեշտությամբ հասնեին իրենց նպատակներին: Նրանք պնդում

---

[96] Նույն տեղում, էջ 143:

էին, որ իսկական իրանցիները պարսկալեզու տարերն են, և նրանք են, որ պետք է անգլիացիների հետ համագործակցեն[97]։

Մեծ վեզիր Ամիր Քաբիրը ազրբեջանական ծագում ուներ և նրա դեմ մղած պայքարում անգլիացիներն օգտագործում էին պարսկալեզու էթնիկական խմբին։ Երբ Ամիր Քաբիրը հեռացվեց պաշտոնից և հետագայում սպանվեց, պալատում ասպարեզը մնաց պարսկալեզու խմբին։ «Միրզա Աղախան Նուրին,— գրում է Մահմուդը,— այժմ դարձել էր Իրանի մեծ վեզիր և կարևոր հանձնարարություններ ուներ, որ պետք է իրականացներ հօգուտ Անգլիայի»[98]։

Հետաքրքիր է նշել, որ անգլիական գաղութարարներն օգտագործում էին ոչ միայն ծագումնային տարբերությունների մոմենտները, այլև ամեն կերպ գրգռում էին կրոնական ու աղանդավորական տարաձայնությունները և դրանք ծառայեցնում իրենց նպատակներին։

Ինչպես հայտնի է, դեռևս XIX դարի կեսերին Իրանում ծավալվել էր հակաֆեոդալական հզոր մի շարժում, այսպես կոչված՝ Բաբիների շարժումը, որը, սակայն, Նասր էդ Դին շահի կառավարության կողմից ամենադաժան կերպով ճընշվեց։ Այդ շարժման պատմությունն, անշուշտ, մեր խնդրից դուրս է։ Սակայն, քանի որ բաբիները և նրանցից հետո բահայիները շարունակում էին իրենց ակտիվ գործունեությունը երկրում և դարձել էին գաղութարար պետությունների միջամտության առարկա, ուստի մի քանի խոսքով կանգ առնենք այս վերջին հանգամանքի վրա։

Դովլաթաբադին վկայում է, որ Իրանում ցարական Ռուսաստանի ազդեցության աճին զուգընթաց, մեծանում էր նաև բաբիական աղանդի հետևորդների ակտիվությունը։ Աշխաբադում ստեղծվել էր բաբիական աղանդավորական մի կենտրոն, որը հովանավորվում էր ցարական Ռուսաստանի կողմից։ Ռուսաստանին հաջողվել էր նաև կառավարական ապարատ խծկել մի շարք բահայիների և լայնորեն օգտագործել նրանց հօգուտ իր նպատակների։ Այս հանգամանքը,

---

97 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد دوم صفحه ۴۸۰

98 Նույն տեղում, էջ 481։

ինչպես նկատում է Դավլաթաբադին, չէր կարող վրիպել անգլիական իմպերիալիստների աչքից։ Անգլիացիները, որոնք պայքարում էին Իրանում իրենց կորցրած դիրքերը վերականգնելու համար, ձգտում էին իրենց հզոր մրցակից՝ ցարական Ռուսաստանից խլել նրա քաղաքական ղեկը։ Այդ ղեկը, տվյալ դեպքում, պետական տարբեր հիմնարկներում բարձր պաշտոնների դրված բահայիներն էին, որոնց Անգլիան փորձում էր դուրս բերել Ռուսաստանի ազդեցությունից և գրավել իր կողմը[99]։ Հենց այդ ժամանակներից էլ սկսվում է ծավալվել և ընդարձակվել բահայիների գործունեությունը, որն ամբողջովին ծառայում էր իմպերիալիստական պետությունների շահերին։

Մահմուդ Մահմուդը խորամուխ լինելով կրոնական և աղանդավորական շարժումների պատմության մեջ, հանգում է այն եզրակացության, որ երբ ժողովուրդների մեջ սրվում են կրոնական վեճերը (իսկ այդ հակամարտությունների հրահրիչները միշտ քաղաքական գործիչներն են եղել), ապա նրանք անկում են ապրում[100]։ Խոսելով Իրանում կրոնական և աղանդավորական հակասությունների մասին, ընդհանրապես, Մահմուդն անդրադառնում է նաև օտարերկրացիների կողմից այդ հակասություններն արհեստականորեն բորբոքելու և դրանք որոշակի նպատակներով օգտագործելու փաստերին։

Նա մասնավորապես նկատում է, որ XIX և XX դդ. Իրանում տարբեր աղանդների մարգարեների երևան գալուն անմիջապես մասնակից էր օտարերկրյա իմպերիալիզմը։

Իրանցի հեղինակների ուսումնասիրություններում հաճախ են հիշատակվում օտարերկրյա առանձին գործիչներ, որոնք դեր են ունեցել Իրանի ներսում միջաղանդավորական բախումների կազմակերպման գործում։ Նույնիսկ, ականավոր բանասեր, գրականագետ-արևելագետ Էդվարդ Բրաունի՝ Իրանում ծավալած գործունեությունը որոշ հեղինակներ համարում են կրոնական տարաձայնություններ ստեղծելու քաղաքականության հետևանք։ Հոսեյն Սաադաթ Նուրին

---

[99] یحیی دولت آبادی، حیات یحیی، جلد اول تهران ۱۹۵۷ صفحه ۳۱۵

[100] محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد پنجم صفحه ۱۲۸۵

գրում է, որ Բրաունը իր «Մեկ տարի իրանցիների մեջ» գրքում քողարկված ձևով արտացոլել է այն փաստը, որ նա հանձնարարություն է ունեցել կրոնական փոքրամասնությունների մեջ տարաձայնություն ստեղծել և հովանավորել որոշակի աղանդի[101]:

Օտարերկրյա իմպերիալիստների ձեռքին բարձր հոգևորականության գործիք դառնալու մասին է վկայում նաև Յահյա Դովլաթաբադիի բերած հետևյալ փաստը: Խոսելով այն մասին, որ Անգլիան և Ռուսաստանը Էսֆահանում առանձին հյուպատոսություններ էին հիմնել, և որ միմյանց հետ «քաղաքական ու առևտրական մրցակցության մեջ էին», հեղինակն, այնուհետև, նշում է, որ օտարերկրացիների ազդեցությունը թուլացնելու համար իշխանությունները ստիպված էին արգելել հոգևորականության անվան տակ կատարվող մի շարք միջոցառումներ[102]:

Ավելորդ չէ հիշել նաև Օսմանյան պետության և Իրանի փոխհարաբերությունների հարցում անգլիական իմպերիալիստների խաղացած դերը:

Հայտնի է, որ Օսմանյան կայսրության և Իրանի միջև հակամարտություններն ու պատերազմները երկարամյա պատմություն ունեն: Օսմանյան կայսրությունը միշտ էլ ձգտել է գրավել իրանական տերիտորիաները, կամ, առնվազն, թուլացնել Իրանին Մերձավոր Արևելքի թատերաբեմում:

XIX դարում, և հատկապես իմպերիալիզմի դարաշրջանում, թուրք-իրանական կոնֆլիկտները լայնորեն օգտագործում էին իմպերիալիստական տերությունները՝ նրանցից որևէ մեկի վրա ճնշում գործադրելու նպատակով: Իմպերիալիստական տերությունների քաղաքականության այս կողմը հետաքրքրել է նաև Մահմուդ Ֆարհադ Մոթամեդին:

Նա գրում է, որ երբ Անգլիայի քաղաքականությունը պահանջում էր Իրանի ուշադրությունը Աֆղանստանից շեղվի

---

101 حسین سعادت نوری، ظل السلطان، تهران ۱۳۴۷ جلد اول صفحه ۲۶۴

102 یحیی دولت آبادی، حیات یحیی، جلد اول، تهران ۱۹۵۷، صفحه ۸۷

դեպի արևմուտք, անմիջապես արևմտյան սահմաններում ինչ-որ իրադարձություններ էին տեղի ունենում, «իրադարձություններ, որոնք միշտ ավարտվում էին ի վնաս Օսմանյան պետության ու Իրանի, բայց հօգուտ Անգլիայի»[103]:

Որպեսզի Իրանը թուլանա և Անգլիայի համար Հնդկաստանում որևէ վտանգ կամ անհանգստություն չառաջացնի, անգլիական քաղաքականությունն ուժեղացնում էր թուրք-իրանական հակամարտությունը և թույլ չէր տալիս, որ այդ երկու տերությունների միջև հաշտություն կայանա: Վերոնասածը հաստատելու համար հեղինակը բերում է հետևյալ օրինակը: Երբ Մոհամադ շահը արշավանք ձեռնարկեց դեպի Հերաթ, թուրք-իրանական թշնամանքը սաստկացավ: Իրանը մեծ դժվարությամբ կարողացավ խուսափել պատերազմից: Մոհամադ շահի թագավորության վերջին շրջանում և Միրզա Աղասիի մեծ վեզիրության ժամանակ երկու պետությունների հարաբերությունները նորից սրվեցին, քանի որ անգլիական քաղաքականության շահերն այդ էին պահանջում[104]: «Հաստատված փաստ է,— գրում է Մոթամեդը,— որ Դերվիշ փաշայի արշավանքը դեպի Խոյ, և Ղոթուրի շրջանի գրավումը կատարվել է անգլիական կառավարության ցանկությամբ և համաձայնությամբ: Անգլիան այդ ժամանակ շահագրգռված էր, որ Իրանի արևմտյան սահմանները խախտվեն և թուրք-իրանական հարաբերությունները բորբոքվեն: Նրան ցանկալի էր, որ խլրտումներ առաջանան նաև արևելքում, այսինքն՝ Խորասանում և այդ պատճառով էլ Ասեֆ էդ Դուլեի որդին՝ Սալարը, ապստամբություն բարձրացրեց: Անգլիական կառավարությունը, նույնիսկ, ծրագրում էր Խորասանում անկախ պետություն ստեղծել, որպեսզի Իրանը առավելագույն չափով թուլանա»[105]:

Խոսելով թուրք-իրանական սահմանային վեճերի մասին, Մահմուդ Մահմուդը նշում է, որ դաջանների օրոք՝ այն ժամանակվանից, երբ Իրանը ներքաշվեց միջազգային քա-

---

103 محمود فرهاد معتمد، تاریخ روابط سیاسی ایران و عثمانی یا جلد دوم سپهسالار اعظم، صفحه ۲۹.

104 Նույն տեղում, էջ 36:

105 Նույն տեղում, էջ 50:

զաքականության ասպարեզը, այդ վեճերը ևս «Քաղաքական դավադրությունների ոլորտը» մտան։ «Երբ անգլիական կառավարությունն անհրաժեշտ էր գտնում, գրգռում էր օսմանյան կառավարությանը, և Իրանի սահմանները ենթարկվում էին սպառնալիքի և ոտնձգության։ Հենց որ նրանց քաղաքական նպատակը իրականանում էր, մեկ ցուցումով օսմանյան կառավարությունն ևս հանդարտվում էր»[106]։

Մահմուդը մեկ ուրիշ կապակցությամբ նորից է անդրադառնում հիշյալ հարցին։ «Նասր էդ Դին շահի թագադրման հենց առաջին տարում իրանա-օսմանյան սահմանային վեճ առաջացավ,—գրում է նա։ Սա այն նուրբ հարցերից մեկն էր, որ տարիներ շարունակ ծագում էր Իրանի և Օսմանյան կայսրության միջև։ Այն առաջ էր քաշվում օտարների ցանկությամբ և որոշ ժամանակ դրա շուրջը քաշքշուկ էր տեղի ունենում, բայց հենց որ նրանց նպատակներն իրականանում էին, այդ հարցը նույնպես լռում էր։ Մինչև վերջերս էլ, երբ օտար խառնակիչներն անհրաժեշտ էին գտնում, մուսուլմանական այս երկու պետությունների միջև հարաբերությունները խզվում էին և պատերազմ էր սկսվում»[107]։

*
* *

Մենք արդեն խոսել ենք ցարական Ռուսաստանի՝ Իրանում վարած քաղաքականության մասին, սակայն անհրաժեշտ ենք համարում այդ հարցի վրա կանգ առնել ավելի հանգամանորեն։

Ցարական Ռուսաստանը ասիական ներթափանցելով երկրի տարբեր բնագավառները, XIX դարի վերջերին, փաստորեն, ուժեղացրել էր իր տնտեսական, քաղաքական ու ռազմական ազդեցությունը և իր տիրապետությունը հաստատել Իրանի որոշ շրջանների վրա։ Արդեն ձևավորվում էր այն գիծը, որով պետք է անցներ ցարական Ռուսաստանի և Անգլիայի տիրապետության սահմանը։ Ճիշտ է այդ սահմանագիծը վերջնականապես ձևակերպվեց 1907 թ. պայմանա-

---

106 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد دوم صفحه ۴۹۷

107 Նույն տեղում, էջ 450։

գրով՝ Իրանը ազդեցության գոտիների բաժանելու կապակցությամբ, սակայն դրա նախադրյալները գալիս էին XIX դարի վերջին քառորդից։

Ցարական կառավարությունն իր տիրապետությունն էր հաստատել երկրի հյուսիսային շրջաններում, իսկ Անգլիան՝ հարավային։ Եթե իմպերիալիստական Անգլիային համարյա չէր հաջողվում ներթափանցել հյուսիսային շրջանները, ապա ցարական Ռուսաստանը կարողանում էր թափանցել երկրի հարավային մասերը՝ անգլիական ազդեցության գոտին։

Աղբյուրների վկայությամբ XIX դարի վերջին քառորդին ռուսական ազդեցությունը հարավային Իրանում բավական ուժեղացել էր։ Ռուսական նավերը նավարկում էին դեպի Պարսից ծոցը, ցարական պաշտոնյաները ազատ կերպով գործում էին հարավում, կապեր հաստատում հարավային շրջանների զորեղ ցեղերի ղեկավարների հետ։ Ցարական պաշտոնյաները լայն գործունեություն էին ծավալում հատկապես Բախտիարի ցեղերի մեջ, ցեղեր, որոնք անգլիական իմպերիալիստների ուշադրության կենտրոնում էին։ «Անգլիայի քաղաքական ներկայացուցիչները,— գրում է Մահմուդը,— շատ անհանգիստ էին և զայրացած, որ առաջվա պես չեն կարողանում դիմադրել ռուսական քաղաքականությանը»[108]։

Այդ մասին է վկայում նաև ժամանակի պետական գործիչ Յահյա Դովլաթաբադին։ Նա, մասնավորապես, հիշատակում է ցարական ազդեցության ուժեղացումը Էսֆահանում։ «Ռուսները,— գրում է հեղինակը,— որոնք այս քաղաքում որևէ դիրք չէին գրավում, այժմ մեծ ուժ են ձեռք բերել»[109]։

Ցարական Ռուսաստանը իր հյուպատոսությունն էր հիմնել Էսֆահանում և լայն պայքար էր ծավալել ռուսական ազդեցությունն ուժեղացնելու ուղղությամբ։

Ռուսաստանից անընդհատ վերցվող պարտքերը ուժեղացնում էին նրա ազդեցությունն ամբողջ երկրում և, ինչպես գրում է Դովլաթաբադին, «գործը այնտեղ էր հասել, որ Իրանում ռուսական պաշտոնյաները վարվում էին այնպես,

---

108 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد هشتم صفحه ۲۱۸۰

109 یحیی دولت آبادی، حیات یحیی، جلد اول تهران ۱۹۵۷ صفحه ۸۷

ինչպես հաղթող բանակը կվարվեր պարտված երկրում: Օրեցօր նրանք նորանոր պահանջներ էին ներկայացնում կառավարությանը և ուժեղացնում իրենց միջամտությունները երկրի գործերին»[110]:

Իրանական պատմագրությունը, բնականաբար, ամենալայն կերպով քննարկել է Իրանում ցարական Ռուսաստանի քաղաքականությունը, նրա նվաճողական բնույթը և երկրի համար ունեցած նրա հետևանքները:

Անդրադառնալով Իրանի նկատմամբ ցարական գաղութարարների վարած քաղաքականությանը, Հասան Հալաջը գրում էր, որ ցարական կառավարությունը Թուրքմենչայի պայմանագրից հետո պահպանում էր իր գերիշխանությունը իրանական պալատում՝ դաջարական թագավորների վրա: Ռուսական հաշվառու-վարկատու բանկի, կովկասյան դաշտջիների շուկայում դաստիարակված «խարդախ առևտրականների» միջոցով իր ազդեցությունն էր տարածում Իրանի տնտեսության վրա: Այդ ժամանակ Բաքվի նավթի և ռուսական շաքարի առևտուրն ամբողջ Իրանում ցարական առևտրականների ձեռքին էր, իսկ կողակային զորամասը ղեկավարվում էր ցարական սպաների կողմից, ուստի կենտրոնական իշխանությունն իրենց ձեռքն ունենալով, ցարիզմը, բնականաբար, ձգտում էր թափանցել հարավ»:[111]:

Աղբյուրները հաստատում են, որ Եվրոպա կատարած ճամփորդություններն այնքան էին շահին սարսափեցրել, որ նա «խաղաղասիրության» անվան տակ կատարում էր եվրոպական երկրների բոլոր պահանջները: Շահն ամենից շատ վախենում էր ռուսներից: Նա ներքուստ իրեն ռուսների հովանավորության տակ էր համարում, և գրեթե բոլոր հարցերում հարմարվում էր նրանց ցանկություններին: Որպես դրա հաստատում Հասան Հալաջը բերում է այն օրինակը, թե ինչպես Միրզա Հոսեյն խան Մոշիր էդ Դոլեի ջանքերով ավստրիացի հրահանգիչներ էին հրավիրել իրանական բանակը վարժեցնելու համար, սակայն ռուսների ցուցումով ավս-

---

110 Նույն տեղում, էջ 313:

111 حسن حلاج، تاریخ تحولات سیاسی ایران، تهران ۱۳۷۲، صفحه ۱۷

տրիացիները հեռացվեցին և դրա փոխարեն կոզակային զորամաս ստեղծվեց»[112]։

Օրեցօր աճող ռուսական ազդեցության մասին է խոսում նաև Մեհդի Մալեք զադեն։ Թվարկելով Իրանում Ռուսաստանի դիրքերի ամրապնդումն ապահովող գործոնները (կոնցեսիաներ, պարտքեր, փոխառություններ և այլն), Մալեք զադեն դրանց թվում հիշատակում և առանձնապես կարևոր է համարում նաև Իրանի պետական ապարատում ռուսական քաղաքական պաշտոնյաների ազդեցության ձեռքբերումը։

Ինչպես նշում է Մալեք զադեն, նրանք ցանկության դեպքում կարող էին մեծ վեզիրներին, վեզիրներին և նահանգապետերին փոխել և նրանց տեղը նշանակել իրենց վստահելի անձանց։ «Դրա հետևանքով,—գրում է նա,—իրանական կառավարության շատ գործիչներ գլուխ խոնարհեցին այդ պետության քաղաքականության առջև և, փաստորեն, ռուսական դեսպանի կամակատարները դարձան»[113]։ Հայտնի է, որ ցարական Ռուսաստանը երկար տարիներ պայքար էր մղում Իրանի հյուսիսարևելյան, և դեպի արևելյան սահմանները տանող շրջաններում իր ազդեցությունն ուժեղացնելու ուղղությամբ։ Դա շատ կարևոր էր նաև Ասիայում ցարական տիրապետության ամրապնդման տեսակետից։ Այդ հարցում ևս ցարական Ռուսաստանը հաջողության հասավ և Իրանը ստիպված եղավ ճանաչել ռուսական նվաճումները երկրի հյուսիս արևելյան շրջաններում։ 1857 թվականի Փարիզի պայմանագրից հետո, Նասր էդ Դին շահը կատարված փաստի առաջ կանգնեց և ստիպված եղավ ընդունել Արևելյան Իրանի սահմաններում հօգուտ Անգլիայի որոշ տերիտորիալ կորուստները։ «Նա,—գրում է Շամիմը,—ստիպված եղավ գլուխ խոնարհել նաև իր հյուսիսային հզոր հարևանի և Անգլիայի քաղաքական և գաղութակալական մրցակցի առջև։ 1881 թվականի դեկտեմբերին Թեհրանում

---

112 ناظم‌الاسلام کرمانی، تاریخ بیداری ایرانیان، مجلد اول تهران صفحه ۹۹

113 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران ۱۳۲۸ صفحه ۱۱۶

ստորագրված պայմանագրի համաձայն պաշտոնապես ճանաչվեց ռուսական տիրապետությունը խորասանի հյուսիս արևելյան, արդեն ձեռքից գնացած ամբողջ սահմանում»[114]:

Միրզա Հոսեյն խան Սեփահսալարի մեծ վեզիր եղած ժամանակ, որոշ բանակցություններից հետո որոշվում է ստեղծել իրանական և ցարական ներկայացուցիչներից բաղկացած մի հանձնաժողով, որը տեղում, հենվելով համապատասխան փաստաթղթերի վրա, որոշեր երկու երկրների սահմանագիծը և վերջ տար տարաձայնություններին: Ենթադրվում էր, որ հանձնաժողովի աշխատանքները կտևեին ընդամենը երեք-չորս ամիս, բայց նրանք շարունակվեցին մոտ երեք տարի և, վերջապես, 1881 թվականի դեկտեմբերի 9-ին ստորագրվեց «Ախալի և խորասանի պայմանագիրը»: Այն որոշում էր Կասպից ծովի արևելյան մասում Իրանի և Ռուսաստանի սահմանները. Իրանը կորցնում էր Մարվը Ախալը և Թուրքեստանի մյուս մասերը: Քանի որ այս պայմանագրի ստորագրմամբ ցարական Ռուսաստանը կարող էր առանց որևէ արգելքի շարունակել իր առաջխաղացումը Կասպից ծովի արևելյան մասերում, ապա դա, բնականաբար, վտանգ էր ստեղծում անգլիական տիրապետությունների համար և հակասում էր Անգլիայի շահերին: Անգլիացիները խիստ դժգոհ էին այդ պայմանագրից և իրանական կառավարությանը հանդիմանում էին այդ արարքի համար:

Միրզա Մալքոմ խանը Լոնդոնից գրած իր մի զեկուցագրում նշում է անգլիական զեկավարների այդ դժգոհության մասին: Նասր էդ Դին շահը զեկուցագրի վրա մակագրում է. «Պետք է պատասխանել, որ մենք ռուսներին ոչինչ չենք տվել: Ինչ որ տրվել է, իրականում դուք՝ անգլիացիներդ եք տվել: Եթե սկզբից ևեթ պաշտոնապես և հաստատ կերպով արգելեիք ռուսների այսքան առաջխաղացումը դեպի Ախալ և Թուրքմենիա, ապա ռուսներն ավելի փոքր ասպարեզ կունենային, գուցե և նրանց չհաջողվեր էլ այդ շրջանները մտնել: Եթե ձեզ նման հզոր մի պետություն չկարողացավ ռուսների մտադրությունների և ճանապարհի պատնեշ դառնալ, մենք առավել ևս չէինք կարող: Ռուսներն եկան և Ա-

114 علی اصغر شمیم، ایران در دوره سلطنت قاجار، تهران ۱۳۴۲ صفی ۱۹۰

խալը գրավեցին։ Մենք ի՞նչ կարող էինք անել։ Հետո ասացին, որ Խորասանի և Թուրքմենիայի բնական սահմանը պետք է որոշել, մենք ի՞նչ կարող էինք անել։ Եթե չընդունեինք, ապա, ինչպես Ախալը իրենց ագահությամբ գրավեցին, այնպես էլ Խորասանի հետ Թուրքմենիայի բնական սահմանը ուժով կգրավեին։ Այդ ժամանակ արդյո՞ք մենք պետք է ռուսների հետ պատերազմ մղեինք։ Արդյո՞ք դուք բանակով, զենքով և դրամով մեզ կօգնեիք։ Եթե ռուսները Ախալը գրավել էին, բնականաբար, Մերվին էլ պետք է տիրանային։ Մենք ինչպե՞ս կարող էինք ասել Մերվ մի գնացեք, այն մի գրավեք։ Եթե մենք նրանց արգելեինք, ապա բացի նրանց հետ թշնամանալուց, այլ բանի չէինք հասնի։ Նրանք դարձյալ իրենց գործը կանեին։ Այս դեպքում իրանական զեկավարներին որևէ բանում մեղադրել չի կարելի։ Մենք ռուսներին դիմավորելու չենք գնացել, նրանց չենք բերել, և երբեք էլ այդ իրադարձությունների կողմնակից չենք եղել։ Զեղ հետ գաղտնի խոսակցություն ունեցած մինիստրին հենց այսպես էլ պատասխանեք։ Այժմ անգլիական կառավարությունը պետք է Իրանի հետ միասին արգելակի ռուսների էլ ավելի առաջխաղացումը։ Պետք է այսուհետև բանակցել, միանալ, որևէ բան մտածել, որ ավելի մեծ դժվարությունների չհանդիպենք։ Պատասխան պահանջեցեք»[115]։ Թեյմուրին մեջ բերելով Նասր էդ Դին շահի՝ անգլիացիներին ուված այս բացատրությունը, միաժամանակ նշում է, որ շահը ռուսների հետ այս հարցի մասին խոսելիս նրանց բոլորովին հակառակն էր ասում[116]։

Սահմանային հարցի շուրջն Իրանի և Ռուսաստանի միջև բանակցությունների ընթացքում, անգլիացիների կողմից տարածվող լուրերի պատճառով, Նասր էդ Դին շահը շափազանց անհանգիստ էր և վախեցած։ Որպեսզի այդ լուրերը անձամբ ցարի կողմից հերքվեն, շահը իր ձեռքով մի նամակ է գրում և կարգադրում, որ այդ ցույց տան Թեհրանի ռուսական դեսպանին և պահանջեն, որ նա դրա բովանդակությունը հեռագրի Պետերբուրգ[117]։

---

115 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۱۶

116 Նույն տեղում, էջ 18։

117 Նույն տեղում։

Ցարական Ռուսաստանը նաև պայքարում էր Իրանում նորանոր կոնցեսիաներ ձեռք բերելու համար։

Երբ իրանական կառավարությունը 1872 թվականի հունիսի 25-ին ստորագրեց Ռեյտերի հայտնի կոնցեսիան, ապա ցարական կառավարությունը հակառակեց դրան։ Ֆարհադ Մոթամեդը գրում է, որ «ցարական կառավարությունը դեմ էր Անգլիայի հետ կնքված ամեն մի պայմանագրի։ Նա չէր ցանկանում, որ այդ պայմանագրերով ուժեղանա Անգլիայի հզորությունն Իրանում։ ...Մյուս կողմից էլ ցարական Ռուսաստանը արգելակում էր Իրանի վիճակը բարելավելու ամեն մի միջոցառում և Թուրքմենչայի պայմանագրով ձեռք բերած արտոնություններն օգտագործելով խլրտում էր մտցնում Իրանի ներքին կյանքում»[118]։

Միրզա Հոսեյն խանը, որը մեծ վեզիր դարձավ, բացասաբար էր տրամադրված Ռուսաստանի հանդեպ և վարում էր պրոանգլիական քաղաքականություն։ Պարսիկ հեղինակ Ֆարհադ Մոթամեդը, խոսելով Միրզա Հոսեյն խանի նման քաղաքականության մասին, փորձում է այնպես ներկայացնել, որ իբր «իրանական ժողովրդի ընդհանուր հակումը դեպի Անգլիան էր»[119], և որ դա դժգոհություն էր պատճառում ցարական Ռուսաստանին։ Ինչպես արդեն նշել ենք, Իրանում Անգլիայի վարած քաղաքականության մասին խոսելիս, դա միանգամայն անհիմն պնդում է, քանի որ իրանական հասարակայնության ամենալայն շրջաններն երկրի բոլոր դըժբախտությունների պատճառը հենց Իրանում Անգլիայի քաղաքականության մեջ էին տեսնում։ Ցարական Ռուսաստանը Անգլիայի օգտին իրականացվող քաղաքականությունը ամբողջովին վերագրում էր Մոշիր էդ Դոլեի կառավարությանը։ Մոթամեդը համենայն դեպս ստիպված է ընդունել, որ նկատի ունենալով Իրանում Ռուսաստանի և Անգլիայի մրցակցությունը, միանգամայն պարզ է դառնում, թե ինչու Ռուսաստանը այդքան զայրանում էր, երբ Անգլիայի քաղաքականությունն Իրանում գերազանցող էր դառնում։ Հատկապես «Ռեյտերի կոնցեսիայի ստորագրումից հետո, որով

118 محمود فرهاد معتمد، سپهسالار اعظم تهران ۱۹۴۶ صفحه ۱۶۲

119 Նույն տեղում, էջ 172։

Իրանը ամբողջովին ընկնում էր Անգլիայի ազդեցության դ-
լորտը»[120], ռուսների կասկածները Միրզա Հասեյն խանի
նկատմամբ հաստատվեցին և նրանք լուրջ կերպով ձեռնա-
մուխ եղան նրան մեծ վեզիրի պաշտոնից հեռացնելու դոր-
ծին: Շահի և նրա մեծ վեզիրի Եվրոպայից վերադառնալու
ժամանակ Թեհրանում առաջացած խռովությունը նույնպես
պետք է վերագրել մեծ վեզիրից ցարական Ռուսաստանի
դժգոհությանը: Թեհրանում ցարական ներկայացուցիչները
խստորեն քննադատում էին Միրզա Հասեյն խանին և ժողո-
վրդին հրահրում նրա դեմ: Որոշ հեղինակներ փորձում են
ձևացնել, որ իբր Նասր էդ Դին շահը այդ հանգամանքն օգ-
տագործում էր. քաղաքական հավասարակշռությունը պահպա-
նելու նպատակով: Պահպանված է շահի մի նամակը՝ ուղղ-
ված մեծ վեզիր Միրզա Հասեյն խանին: Նամակում ասված
էր. «Ձեք կարող պատկերացնել, թե ինչքան օգտավետ են
ռուսների կասկածները մեր նկատմամբ: Հակառակ դեպքում
կարող էին լուրջ հետևանքներ լինել»[121]:

Տեսնելով, որ ցարական կառավարությունը չի հանդուր-
ժում Միրզա Հասեյն խանին և այդ պատճառով էլ վերջինս ի
վիճակի չէր կարգավորել երկու երկրների հարաբերություն-
ները, Նասր էդ Դին շահը փորձում է հաշտեցնել ցարական
ներկայացուցիչներին և Սեփահսալարին: Դա հատկապես
ակնհայտ դարձավ այն բանից հետո, երբ Սեփահսալարը
նշանակվեց արտաքին գործերի մինիստրի պաշտոնում: Որոշ
աղբյուրների վկայությամբ, Նասր էդ Դին շահը լավ գիտեր,
որ օտարերկրացիները միայն այն ժամանակ են կառավա-
րության անդամների նկատմամբ դրական տրամադրվում,
երբ նրանք գործում են հօգուտ այդ պետության: Ուստի, իր
գրած նամակներից մեկում Նասր էդ Դին շահը հուշում է, որ
խորասան ճամփորդելու իր մտադրությունից հրաժարվելը,
ճամփորդություն, որն անցանկալի էր ցարական Ռուսաստա-
նին, ռուսական դեսպանին ներկայացնեն որպես նրա ցան-
կություններից բխող ակտ: Մոթամեդը հանգում է այն եզ-
րակացության, որ իբր Միրզա Հասեյն խանը շահի ցուցումների
և միջոցառումների հետևանքով աստիճանաբար իրեն մոտեց-

[120] Նույն տեղում:

[121] Նույն տեղում, էջ 173:

նում է ռուսներին, կարողանում է ինչ-որ ժամանակ Իրանում հավասարակշռություն հաստատել: Նա կարողանում է, ինչպես դա անհրաժեշտ է որևէ արտաքին գործերի մինիստրի համար, օտարերկրյա երկու պետությունների հակադիր քաղաքականությունը օգտագործել ի շահ Իրանի[122]:

Ի վերջո ցարական կառավարությանը հաջողվում է Սադր Ազամին պաշտոնանկ անել, մի ակտ, որին արդեն կողմնակից էին նաև անգլիական իմպերիալիստները: Հիշյալ հարցի վերաբերյալ Մոթամեդը գրում է. «Սադր Ազամի հեռացման հարցում Ռուսաստանի և Անգլիայի միջև ստեղծվեց կարծիքների ժամանակավոր համապատասխանություն: Սակայն, ինչպես միշտ, ռուսներն այդ քայլին դիմեցին բացահայտ, իսկ անգլիացիները՝ գաղտնի»[123]:

Ինչպես նշվեց, ցարական կառավարությունը չէր հանդուրժում Իրանի կողմից Անգլիային տարբեր կոնցեսիաների տրամադրումը: Նա կամ պահանջում էր այդ կոնցեսիաների բեկանումը, կամ էլ ձգտում էր համապատասխան կոնցեսիա ձեռք բերել նաև իր համար:

Էբրահիմ Թեյմուրին, հաստատելով Ռուսաստանի այսպիսի քաղաքականությունը, գրում է. «Ռուսները երբեք հանգիստ չէին նստում և դիտում, թե ինչպես է Իրանի ամբողջ շուկան գտնում անգլիացիների առևտրական մոնոպոլիան և, այդպիսով, գնալով ընդարձակվում նրանց քաղաքական ազդեցությունը»[124]: Օրինակ, երբ Քարուն գետի նավարկության և «Շահնշահի բանկի» հիմնման կոնցեսիաները տրվեցին անգլիացիներին, ռուսները խստորեն հակառակեցին այդ բանին և ճնշումներ գործադրեցին իրանական կառավարության վրա: Աղբյուրները վկայում են, որ ռուսական մամուլը քննադատում էր իրանական կառավարությանը և նրան պատժելու տարբեր առաջարկներ անում: Այդ ժամանակ ցարական դեսպան Դոլգորուկին բացակայում էր, և դեսպանության գործերի հավատարմատարը միջոցներ է ձեռնարկում անգլիացիների գործունեությունը չեզոքացնելու համար: Նա հայտնում է Նասր էդ Դին շահին և Ամին էս Սոլթանին,

---

122 Նույն տեղում

123 Նույն տեղում, էջ 177:

124 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۳۱۲

որ իրանական կառավարության վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ թշնամական է, և որ ցարական կառավարությունը, իր երկրի անվտանգությունը ապահովելու համար, ստիպված է խիստ միջոցների դիմել։ Նասր էդ Դին շահը և Ամին էս Սոլթանը ռուսական սպառնալիքներից սարսափահար, ելք գտնելու հույսով որոշում են խորհրդակցել անգլիական դեսպան Վոլֆի հետ։ Շուտով Դոլգորուկին վերադառնում է Թեհրան և սպառնում է Ամին էս Սոլթանին, որ եթե իրանական կառավարությունը անմիջապես իր քաղաքականությունը չփոխի և վիճակը չշտկի, երկու երկրների հարաբերությունները կխզվեն և հետագա իրադարձությունների պատասխանատվությունը ամբողջովին կընկնի իրանական կառավարության վրա[125]։

Այսպիսով, անգլիական դեսպան Վոլֆի ցուցումներն արդյունքի չհասան և ցարական Ռուսաստանն է՛լ ավելի ուժեղացրեց իր ճնշումն Իրանի վրա։

Թեյմուրին գրում է, որ «Դոլգորուկին իր առաջարկությունները ընդունել տալու գործում շատ էր շտապում։ Նրա անբարտավան և կոպիտ վարվելակերպը խիստ վիրավորական և ստորացուցիչ էր և Նասր էդ Դին Շահը չափազանց զայրացած էր ռուսական դեսպանի այդ վերաբերմունքից»[126]։

Նասր էդ Դին շահը, այլևս չդիմանալով ռուսական ճնշմանը, կարգադրում է մեծ վեզիր Ամին էս Սոլթանին և արտաքին գործերի մինիստր Ղավամ էդ Դոլեին, բանակցությունների մեջ մտել ռուսական դեսպան Դոլգորուկիի հետ և Ռուսաստանի պահանջները բավարարող պայմանագրի նախագիծ կազմել։ Թեյմուրին վկայում է, որ գաղտնի հոդվածներ ունեցող այդ պայմանագրի բովանդակությանը տեղյակ էր անգլիական դեսպան Վոլֆը, որը համաձայնություն էր տվել ամբողջ պայմանագրին, բացի նրա վեցերորդ հոդվածից, որը ողջ Իրանում երկաթգծի կառուցման մենաշնորհը հանձնում էր Ռուսաստանին, և որը հակառակ էր անգլիական շահերին։ Վոլֆը մեծ ակտիվություն երևան բերեց, որպեսզի իրանական կառավարությունն այդ հոդվածը չընդունի։ Վերջապես, որոշ բանակցություններից հետո, պայմանագրի տեքստը

---

125 Նույն տեղում, էջ 315։

126 Նույն տեղում, էջ 319։

պատրաստվեց և Նասր էդ Դին շահի կողմից ստորագրվեց[127]։

Այս և նման այլ կոնցեսիաները, որոնք ցարական ներկայացուցիչների ճնշմամբ, տարբեր պատրվակներով պարտադրվում էին իրանական կառավարությանը, «մեծ պատուհաս էին դառնում Իրանի համար և լրացուցիչ հնարավորություններ ստեղծում ռուսական ներկայացուցիչների միջամտությանը երկրի ներքին գործերին»[128]։

Ամին էս Սոլթանի քաղաքականության փոփոխությունը ցարական Ռուսաստանի նկատմամբ ուղի էր բացում հետագայում վերջինիս նորանոր կոնցեսիաներ տալու համար։

Գնահատելով Ամին էս Սոլթանի այս քաղաքականությունը, Թեյմուրին գրում է. «Ռուսական բանկի», խճուղիների և երկաթգծի կառուցման, հյուսիսի հանքերի օգտագործման, անտառների շահագործման և այլ կոնցեսիաներից բացի, որոնք որպես փոխհատուցում Անգլիային տրված կոնցեսիաների տրվեցին ցարական Ռուսաստանին, երկու մրցակիցների միջև հավասարակշռությունը պահպանելու նպատակով նորանոր կոնցեսիաների տրամադրումը ռուսներին, ծանր պայմաններով պարտքեր վերցնելը, մաքսատները նրանց հանձնելը և այլն, այնպիսի հարվածներ էին Իրանի անկախությանը, որ դժվար թե որևէ հայրենասեր մարդ իր երկրի նկատմամբ այդպիսի քայլերի դիմեր[129]։

Իրանական կառավարության հետ ցարական Ռուսաստանի հաջորդ բախումը տեղի ունեցավ ծխախոտի կոնցեսիան անգլիացիներին հանձնելու ժամանակ։ Այդ և հետագա իրադարձությունների ընթացքում կենտրոնական դերը Աթաբեկն էր, որի գործունեության մասին կան հակասական վկայություններ։

Մենք արդեն նշել ենք, որ ծխախոտի կոնցեսիան չեղյալ հայտարարելուց հետո Աթաբեկն անցավ Ռուսաստանի կողմը և ինչպես Մահմուդ Մահմուդն է նշում. «Սկսած 1892 թվականից Նասր էդ Դին շահը և Աթաբեկը ռուսների ձեռ-

---

127 Նույն տեղում, էջ 321—322։

128 Նույն տեղում, էջ 249։

129 Նույն տեղում, էջ 77։

քերն Իրանում ազատ արձակեցին և Անգլիայի հետ ունեցած բարեկամությունից հրաժարվեցին»[130]։

Անգլիայի դեսպան Չիրոլը երկարատև ուսումնասիրությունից հետո գալիս է այն եզրակացության, որ հոգևոր ղեկավարներին պետք է հրահրել և «հայրենիքն օտարներին է վաճառել» լոզունգի տակ ժողովրդին դուրս բերել Աթաբեկի դեմ։ Անգլիացիները հույս ունեին, որ ժողովրդական այդ հուզումներից վախենալով շահը պաշտոնից կհեռացնի Աթաբեկին։

Հետաքրքիր է նշել, որ Մահմուդ Մահմուդը Աթաբեկի գործունեությանը տալիս է այլ գնահատական, որը, սակայն, պատմական փաստերով չի հաստատվում։ Նա այն կարծիքն է հայտնում, որ Իրանում Անգլիայի ազդեցության ոչնչացման միակ պատճառը Աթաբեկն էր, որն այդ տարիներին վայելում էր ռուսական կառավարության հովանավորությունը։ Նա ներքուստ ռուսներին չէր սիրում, սակայն անգլիական գործակալների դավադրությունից զերծ մնալու համար արտաքուստ ռուսներին բարեկամ էր ձևանում, որից ռուսները առանձնապես օգուտ չէին ստանում։ «...Աթաբեկի գոյությամբ,— գրում է Մահմուդը,— ոչ Անգլիան և ոչ էլ Ռուսաստանը չէին կարողանում Իրանում ազդեցություն կիրառել»[131]։

Մինչդեռ Ֆրեյդուն Ադամիաթը գտնում է, որ անգլիացիները խստորեն դեմ էին Աթաբեկին և, «նույնիսկ, կարելի է ասել ոխ էին պահել նրա նկատմամբ»[132], նրա պրոռուսական քաղաքականության պատճառով։ Հետագայում Աթաբեկի դեմ երկրում առաջացած հակառակությունների մեծ մասն անգլիացիների հրահրումով էր։ Ճիշտ է, Աթաբեկն իսկական բոնակալ էր և նրանից դժգոհ բոլոր պալատականները նաև սարսափում էին նրանից, այնուամենայնիվ, հենց որ Իրանում Անգլիայի քաղաքականությունը ակտիվանում էր, ուժեղանում էր նաև դիմադրությունը Աթաբեկի դեմ։ Անգլիան, հատկապես, օգտագործում էր հոգևոր ղեկավարներին,

---

130 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد هشتم صفحه ۲۱۲۹

131 Նույն տեղում, էջ 2140—2141։

132 فریدون آدمیت، فکر آزادی و مقدمه نهضت مشروطیت، تهران صفحه ۲۵۹

որոնք անհրաժեշտության դեպքում ջանում էին հավատացյալ մասսաներին դուրս բերել Աթաբեկի դեմ։

Այս բոլորը ցույց է տալիս, որ ցարական Ռուսաստանի քաղաքականությունը իրականացնող իրանական կառավարության դեմ ամեն մի դժգոհության արտահայտություն կամ խռովություն դեռևս երկրում ծավալվող հակաիմպերիալիստական շարժման մի մասը համարել չի կարելի, քանի որ դրանք հրահրվում էին մրցակից մյուս գաղութարար պետության՝ Անգլիայի կողմից։

* *

Իրանը կիսագաղութի վերածելու համար իմպերիալիստական տերությունների պայքարը տեղի էր ունենում խիստ և մոլեգին մրցակցության պայմաններում։ Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր իր տիրապետությունը հաստատել Իրանի կամ առնվազն նրա մի մասի վրա և հանդիպում էր մյուս կողմի կատաղի դիմադրությանը։ Իրանական պատմագրությունը ամենամանրամասն կերպով քննարկել է գաղութատիրական պետությունների, առաջին հերթին Անգլիայի և ցարական Ռուսաստանի մրցակցությունը, նրանց հետապնդած նպատակները, այդ ամենի կործանարար հետևանքները երկրի համար և դրանց հետ կապված մի շարք հարցեր, որոնց վրա մենք կփորձենք կանգ առնել։

Որոշ պատմաբաններ իրենց ուշադրությունը բևեռում են այն երկրամասերի վրա, որոնց շուրջը կատաղի պայքար էր գնում Անգլիայի ու ցարական Ռուսաստանի միջև։

Նրանք գտնում են, որ Անգլիայի և Ռուսաստանի մրցակցությունը Ասիայում բարձրագույն աստիճանի էր հասել և նրանցից յուրաքանչյուրը ջանում էր շտապ կերպով քաղաքական, ռազմական և առևտրական արտոնություններ ձեռք բերել այդ աշխարհամասում։ «Այդ ժամանակ,—գրում է Մահմուդը,—Անգլիան ամբողջովին իրեն էր ենթարկել մուսուլմանական մի շարք երկրներ՝ Թուրքիան, Աֆղանստանը, Իրանը և «բարեկամության» անվան տակ իր քաղաքականությունը նրանց վզին փաթաթել։ Կարելի է ասել, որ ռուսական վտանգը Անգլիայի նկատմամբ մեծ չափեր էր ընդունել,

և անգլիացիները վախենում էին, որ ռուսները մի փոքր ռազմական շարժումով կարող են մինչև Հնդկաստանի սահմանները հասնել»[133]։

Հայտնի է, որ ամբողջ XIX դարի ընթացքում և նույնիսկ XX դարի առաջին տարիներին Անգլիայի և ցարական Ռուսաստանի պայքարը ծավալվում էր Կենտրոնական Ասիայի շուրջը։ Սկզբում այդ պայքարը զգալի չէր, բայց 1860 թվականից հետո այն սաստկացավ։ «Կողմերից յուրաքանչյուրը ձգտում էր այդ երկրներում բարեկամներ ձեռք բերել և բնակչությանը սիրաշահել»[134]։ 1874 թվականից հետո Կասպից ծովի արևելյան շրջանների թուրքմենաբնակ վայրերը, ինչպես նաև Խորասանի նահանգի հյուսիսային և արևելյան ընդարձակ շրջանները վերածվում են Անգլիայի և Ռուսաստանի մրցակցության ասպարեզի։ Այդ թվականներին ցարական Ռուսաստանի առջև երկու կարևոր խոչընդոտներ կային. մեկը Իրանի կառավարությունն էր, իսկ մյուսը՝ այդ շրջանների թուրքմենները։ «Եթե Անգլիան,—գրում է Մահմուդը,—հնարավորություն ունենար Ասիայում ռուսների դեմ պատերազմի մեջ մտնել, անկասկած այս երկուսը, այսինքն՝ Իրանի կառավարությունը և թուրքմենները կարևոր և ազդեցիկ գործոն կարող էին լինել»[135]։ Սակայն անգլիամոլ Միրզա Հոսեյն խան Սեփահսալարի պաշտոնանկ լինելուց և 1881 թ. Իրանի և Ռուսաստանի միջև Խորասանի և Ախալի սահմանների վերաբերյալ պայմանագրի կնքումից հետո դրությունը փոխվեց, ցարական Ռուսաստանի ներթափանցումն Իրան սաստկացավ, Կենտրոնական Ասիայի երկրներին տիրելու հարցը արտակարգ նշանակություն ձեռք բերեց և անգլիացիները սկսեցին ջանալ ամեն գնով ռուսների առաջխաղացումը կասեցնել։ «Անգլիական կառավարությունը,—գրում է Մահմուդը,—ջանում էր թուրքմենների, աֆղանների և, հնարավորության դեպքում, նաև Իրանի ու Օսմանյան պետության օգնությամբ մի ամուր պատնեշ

---

133 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد پنجم صفحه ۱۲۳۴

134 محمود محمود، تاریخ روابط سیاسی...جلد چهارم صفحه ۹۲۶

135 Նույն տեղում։

ստեղծել ռուսների դեմ»[136]: Ռուսների՝ Հերաթին մոտենալու պատճառով, այդ ժամանակ հատկապես մեծ նշանակություն էր ստացել Խորասանը: Անգլիան և ցարական Ռուսաստանը իրենց ուշադրությունը կենտրոնացրել էին Խորասանում և նրանց պայքարն այդ նահանգում ավելի ուժեղ էր, քան Ասիայի որևէ այլ մասում: Խորասանի կենտրոն Մաշհադում երկու տերությունների հյուպատոսությունների ստեղծումը սկիզբ հանդիսացավ ամբողջ նահանգով մեկ խլրտումների, անարխիայի և պոռթկումների առաջացմանը[137]: Այդ իրողությունն են հաստատում Ֆարհադ Մոթամեդի հետևյալ խոսքերը. «գոյություն ունեն հազարավոր փաստեր և նամակներ, որոնք ցույց են տալիս, թե հյուսիսային և հարավային երկու հարևանները ոչ մի սպառնալիքից և ուժ գործադրելուց չէին խուսափում Խորասանը պառակտելու և Աֆղանստանը, Բալուջեստանը և Թուրքեստանը Իրանից անջատելու համար»[138]:

Աղբյուրները վկայում են, որ, երբ Գլադստոնը հեռացավ իշխանությունից և Սոլզբերին կրկին կառավարման ղեկն իր ձեռքը վերցրեց, ապա մշակեց հատուկ քաղաքական գիծ, որի հիմքում ընկած էր կենտրոնական Ասիայում ցարական Ռուսաստանի ազդեցության և հզորության թուլացումը և առաջընթացի կասեցումը դեպի Հնդկաստան: Այդ նպատակով Իրան ուղարկվեց Դորթմունդ Վոլֆը, որպեսզի բոլոր հնարավոր միջոցներով, նախկինի պես սիրաշահի իրանական կառավարությանն ու շահին, և ինչ անվան տակ էլ որ լինի, նորից բարեկամական հարաբերություններ հաստատի Իրանի և Անգլիայի միջև: «Եվ այսպես,—գրում է Մահմուդը,—շահը և Ամին էս Սոլթանը հրապուրվեցին Վոլֆի լավ բնավորությամբ և, կարելի է ասել, ամբողջովին անձնատուր եղան անգլիացիների քաղաքականությանը: Անգլիացիներն ստացան այն ամենը, ինչ ուզեցին, և Ամին էս Սոլթանը կատարեց նրանց բոլոր ցանկությունները»[139]: Այս անգամ էլ, ինչպես տարիներ առաջ Միրզա Հոսեյն խան Սեփահսալարի

---

136 Նույն տեղում, էջ 956:

137 Նույն տեղում, էջ 1123:

138 محمود فرهاد معتمد، سپهسالار اعظم، تهران ۱۹۴۶ صفحه ۸۱

139 Նույն տեղում, էջ 1163:

օրոք, նախապես ծրագրվածի համաձայն շահին Լոնդոն հրավիրեցին և ճոխ հյուրասիրություն ցուցաբերեցին։ «Այս բոլոր ներկայացումներն այն նպատակն ունեին,— գրում է Մահմուդը,— որ շահն ու վեզիրը, այդ փաղաքշանքներով տարվելով, Իրանի նյութական և բարոյական ուժերը տրամադրեին անգլիական կառավարությանը՝ Հնդկաստանի սահմանները պաշտպանելու համար»[140]։

Անգլիայի և ցարական Ռուսաստանի միջև մրցակցությունն ու թշնամանքը հատկապես ուժեղացավ 1885—1892 թվականների ժամանակահատվածում։ Անգլիական կառավարությունը, բնականաբար, ավելի շատ կարիք ուներ Իրանի բարեկամությանը։ «Արդեն հզոր հակառակորդը,— գրում է Մահմուդը,— հասել էր Հնդկաստանի դարբասները և անգլիական կառավարությունը ուրիշ ելք չուներ, բացի այն, որ բոլոր միջոցներով իրանական ղեկավարներին իրեն կողմը գրավեր և շահին տեղեկացներ Իրանի նկատմամբ Ռուսաստանից եկող վտանգներին։ Կասկած չկա,— շարունակում է հեղինակը,— որ անգլիական քաղաքական ներկայացուցիչները կարողացան շահին և Ամին էս Սուլթանին իրենց կողմը գրավել»[141]։

Այդ տարիներին Իրանում պաշտոնավարել են անգլիական երեք դեսպաններ՝ Արթուր Նիքոլսոնը, Հենրի Դորթմունդ Վոլֆը և Ֆրանկ Ռասելը, որոնք Անգլիայի ականավոր գործիչներից էին։ Նրանք սիրաշահելու քաղաքականություն էին վարում և «կարողացան շահին և Ամին էս Սուլթանին ամբողջովին իրենց ձեռքը վերցնել»[142]։ Հենց Դորթմունդ Վոլֆի ջանքերի շնորհիվ էր, որ անգլիական «Շահնշահի բանկի», հանքերի, Ասֆալտ—Թեհրան ճանապարհի, Քարուն գետի նավարկության և այլ կոնցեսիաներ տրվեցին անգլիացիներին և որ շահը երկրորդ անգամ անգլիական թագուհու հետ հանդիպելու համար մեկնեց Լոնդոն։ Այս բոլոր միջոցառումներն, իհարկե, տվեցին իրենց արդյունքը։ Քերզոնը վկայում է, որ Իրանի մեծ վեզիրն իրեն ասել է. «որոշ ժամանակ առաջ Իրանում Անգլիայի քաղաքականության ոչ մի

140 Նույն տեղում։

141 Նույն տեղում, էջ 1164։

142 Նույն տեղում։

հետք չկար, իսկ այժմ իրանական կառավարության քաղաքականությունը հակված է Անգլիայի կողմը»[143]։

Սակայն, ինչպես հայտնի է, միջազգային հարաբերությունները տարբեր գործոնների ազդեցության ներքո մշտապես ենթակա են փոփոխության։ Հետևաբար, չնայած այդ ժամանակ շահը և մեծ վեզիրը Անգլիայի նկատմամբ խիստ բարեկամաբար էին տրամադրված և նրանց բոլոր պահանջները կատարում էին, երկու տարի անց վիճակը փոխվեց, և նախկին բարեկամական հարաբերությունները մոռացվեցին։ Իրանը նորից կանգնեց միջազգային բարդ հարաբերությունների առջև։ Անգլիացիները սկսեցին ձգտել ռուսական ազդեցության շրջանը սահմանափակել Սիստանից մինչև Գորգան, Յազդ, Էսֆահան, Քերմանշահ և Խանեղին։ Այդ շրջանն արդեն ընդունելով որպես ռուսական գոտի, նրանք սկսեցին պայքարել մնացած տերիտորիան իրենց պահելու ուղղությամբ։

Մահմուդ Մահմուդը պատմական փաստերի խորը ուսումնասիրման հիման վրա հանգում է հետևյալ եզրակացության. «Սկսած XIX դարի սկզբներից Իրանն ենթարկվեց Եվրոպայի քաղաքակիրթ երկրների ներխուժմանը՝ հյուսիսից և հարավից։ Ավելի քան հարյուր հիսուն տարիների ընթացքում Իրանը և իրանցիները ոչ մի պահ հանգիստ չունեին նրանց բանակների ոտնձգություններից, քաղաքական դավադրություններից, տնտեսական կողոպուտից և անթիվ այլ վնասներից։ Նրանցից յուրաքանչյուրը բազմաթիվ չարիքներ և տանջանքներ է պատճառել Իրանին»[144]։ Հեղինակն Իրանի «հանցանքն» այն է համարում, որ այդ դարաշրջանում վերջինս գտնվում էր երկու հզոր և ագահ պետությունների՝ Անգլիայի ու Ռուսաստանի կայսրությունների ընդարձակման ուղու վրա։ Ռուսները պայքարում էին դեպի ազատ ծով և Հնդկաստան հասնելու, իսկ անգլիացիները հարավից ջանում էին նրանց կասեցնել, որի հետևանքով հյուծվում էին Իրանի նյութական և բարոյական ուժերը։ «Եթե ուսումնասիրենք այդ տարիների պատմությունը,— գրում է Մահմուդը,— ապա կտեսնենք, որ կողմերի միջոցառումները պատճառ էին դառնում Իրանի և իրանական ժողովրդի թուլացման։ Նրանցից

143 Նույն տեղում, էջ 1165։

144 Նույն տեղում, հատ. 6, էջ 1606։

յուրաքանչյուրը վախենում էր, որ հակառակորդը Իրանի հետ միանալով մյուս կողմին դուրս կվռնդի: Եվ այսպիսով,— եզրակացնում է հեղինակը,—երկու կողմերը Իրանի անկումն ու քայքայումը հասցրեցին իր բարձրագույն աստիճանին, մինչև որ մի երրորդ պետություն՝ Գերմանիան, խանեղինի սահմանով, Բաղդադի և Բասրայի ճանապարհով երևան եկավ Պարսից ծոցում»[145]:

Այս նույն միտքն է առաջ քաշում նաև Էբրահիմ Թեյմուրին[146]: Շարադրելով Ռուսաստանի և Անգլիայի հետապնդած նպատակները, հեղինակն այնուհետև նշում է, որ «եթե աշխարհում մի շարք իրադարձություններ տեղի չունենային, այսօր Իրանի ու իրանցու անունն էլ չէր մնա»[147]:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին ցարական Ռուսաստանն Իրանում ավելի մեծ հաջողությունների հասավ, քան Անգլիան, որը չնայած դրան շարունակում էր իր պայքարը: Յահյա Դավլաթաբադին նշում է, որ անգլիացիները ջանում էին վերականգնել իրենց կորցրած ազդեցությունը, իսկ ռուսները՝ չկորցնել իրենց նվաճած դիրքերը: Ճապոնիայի հետ պատերազմում Ռուսաստանի դժվարությունները Անգլիային կրկին հնարավորություն տվեցին ընդարձակել իր քաղաքական գործունեությունն Իրանում:

Պետք է ասել, որ անցյալում անգլիացիների ժամանակավոր անհաջողություններն Իրանում տարբեր հեղինակներ տարբեր ձևով են բացատրում:

Մեր կարծիքով, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում դեպքերին մասնակից և ականատես Յահյա Դավլաթաբադիի հետևյալ վկայությունը: Նա նշում է այդ տարիներին Թեհրանում անգլիական մի պաշտոնյայի հետ ունեցած իր զրույցը, որի առանձին հատվածներն անհրաժեշտ ենք համարում մեջբերել: Դավլաթաբադիի այն հարցին, թե ինչու անգլիացիներն «այս երկրում ասպարեզը թողել են ռուսներին», պաշտոնյան պատասխանում է. «Լոնդոնում Իրանի նկատմամբ գոյություն ունի երկու տարբեր քաղաքա-

---

145 Նույն տեղում, էջ 1606:

146 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۲۴۲

147 Նույն տեղում, էջ 1:

կանություն: Դրանցից մեկը նպատակ ունի ամեն գնով ուժեղացնել Իրանում Անգլիայի քաղաքականությունը և ռուսների ոտնձգությունները կասեցնել: Մյուս խումբն այն կարծիքին է, որ Անգլիայի քաղաքականությունը Իրանում ուղղակի իմաստ չունի, այլ նա պետք է հետապնդի գեպի Հնդկաստանի սահմանները ռուսական ոտնձգությունները կասեցնելու նպատակը: Երբ նկատվի, որ այդպիսի վտանգ է ստեղծվում, պետք է նրա առաջն առնել և կարիք չկա Իրանի ներսում անգլիական քաղաքական ազդեցությունն ուժեղացնելու համար անտեղի հսկայական գումարներ ծախսվեն: Որոշ ժամանակ իշխանության գլուխ էին երկրորդ քաղաքականության կողմնակիցները, որի հետևանքով և անգլիական ազդեցությունն Իրանում թուլացավ: Այժմ Լոնդոնի վիճակը փոխվել է, հակառակ խումբն է գործի գլուխ անցել: Անգլիայի քաղաքականությունն Իրանում նույնպես փոխվել է և դրա արդյունքները շուտով կերևան»[148]: Ինչպես պարզորոշ կերպով երևում է, այստեղ, թեկուզ քողարկված ձևով, նկատվում է Իրանում անգլիական դաղութարարների վարած քաղաքականության արդարացման միտում: Համենայն դեպս, ելակետ է ընդունվում ցարական ագրեսիան, և երկրորդ պլան է մղվում անգլիական իմպերիալիստների նվաճողական քաղաքականությունը:

Այսպիսի մոտեցման լավագույն պատասխան կարող է լինել Մահմուդ Ֆարհադ Մոթամեդի՝ Իրանի նկատմամբ անգլիական իմպերիալիստների կիրառած քաղաքականության մասին գնահատականը: «Ոմանք կարծում են,— գրում է Մոթամեդը,— որ անգլիացիները սիրահարված են իրանական ժողովրդի աչքերին և նրանց համար նեղություն են քաշել և Իրան են եկել, որպեսզի կասեցնեն դարերի ընթացքում ռուսների ներթափանցումը դեպի Իրան: Այս փուչ մտքերը և երևակայական պատկերացումները... հրամցնում են ժողովրդին և նույնիսկ անտեղյակ մարդկանց ստիպում են ընդունել իրենց սխալ տրամաբանությունը»[149]:

---

148 یحیی دولت آبادی، حیات یحیی، جلد اول تهران ۱۹۵۷ صفحه ۳۱۴

149 محمود فرهاد معتمد، تاریخ روابط سیاسی ایران و عثمانی یا جلد دوم سپه‌سالار اعظم، تهران—۱۹۵۰، صفحه ۱۴۲

Հեղինակն այնուհետև շարունակում է. «Անգլիայի քաղաքականությունը Մերձավոր Արևելքում նվաճողական քաղաքականություն է եղել և այդ երկրներում տարբեր դասակարգերի և տարբեր ժողովուրդների միջև հակասություններ ստեղծելու և ապիկար ղեկավարներին հովանավորելու միակ նպատակը այն է եղել, որ նրանք չկարողանան միանալ և դիմադրել, այլ առանց այլևայլության անձնատուր լինեն»[150]: Այնուհետև, խոսելով անգլիական քաղաքական դավադրությունների մասին, հեղինակն այն միտքն է հայտնում, որ եթե Անգլիան իսկապես վախենում էր, որ Ռուսաստանը կգրավի Իրանը և Թուրքիան, ապա դրա կանխման լավագույն միջոցն այն էր, որ նա ինքը այդ երկու երկրների միջև թշնամություն չստեղծեր: Մինչդեռ, ինչպես հավաստում է Մոթամեդը, արխիվներում պահպանված հաղարավոր փաստաթղթերը վկայում են, որ անգլիացիները գրգռում էին սահմանամերձ շեյխերին և ցեղերին, և մղում նրանց անարխիայի ու արյունահեղության: Հեղինակն իրավացիորեն նշում է, որ անգլիացիները մտադիր էին գրավել Իրաքը, Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը և Օսմանյան պետության արաբական մյուս տերիտորիաները: Մյուս կողմից՝ նրանք ցանկանում էին, որ իրենց քաղաքական հակառակորդի, այսինքն՝ Ռուսաստանի բաժինը հյուսիսային Իրանում կամ Բալկաններում այնպիսին լինի, որ վնաս չհասցնի անգլիացիների հզորությանը և գերիշխանությանը: Մերձավոր Արևելքի երկրներին տիրելու նրանց և Ռուսաստանի քաղաքականության մեջ որակի տեսակետից որևէ տարբերություն չկար: Միայն նրանք երբեմն այնպիսի քայլերի էին դիմում, որոնք ամանց թույլ էին տալիս ենթադրելու, որ Անգլիան դարեր շարունակ Իրանի անկախության պաշտպանն է եղել[151]:

Սակայն մի շարք հեղինակներ անգլիական իմպերիալիստների և ցարական գաղութարարների մրցակցության մեջ տեսնում էին Իրանի անկախության պահպանման երաշխիքը: Այդ տեսակետից հետաքրքիր է իրանական ականավոր հասարակական գործիչ Սայիդ Նաֆիսիի հետևյալ միտքը, որ նա արտահայտել է իր «Իրանի հասարակական

150 Նույն տեղում:

151 Նույն տեղում:

և քաղաքական ժամանակակից պատմությունը» աշխատության առաջին հատորում։ «Քանի դեռ այս երկու քաղաքականությունների մեջ հավասարակշռություն կար,— գրում է նա,— Իրանը կարող էր նորմալ կյանք վարել, իր գոյությունը պահպանել և այդ քաղաքական հավասարակշռության շնորհիվ զերծ մնալ իր անկախությանն ու գոյությանը հարվածող վնասներից։ Բայց երբ համաշխարհային ընդհանուր իրադարձություններն այս երկու քաղաքականությունից որևէ մեկին ուժեղացնում և մյուսին թուլացնում էր,— շարունակում է Նաֆիսին,— ապա Իրանը մեծ կորուստներ էր ունենում և երկրի անկախությունը վտանգվում էր»[152]։

Ինչ խոսք, որ Իրանի իշխող շրջանները խելացի և ճարպիկ քաղաքականություն վարելու դեպքում կարող էին երկու գաղութատիրական պետությունների միջև եղած մրցակցությունն օգտագործել երկրի անկախության պահպանման կամ առնվազն վնասներն ու կորուստները նվազագույն չափի հասցնելու համար։ Սակայն իր դարն ապրած, նեխված ֆեոդալական հասարակարգը և նրա իշխող շրջանները ի վիճակի չէին և չէին էլ ուզում այդպիսի քաղաքականություն վարել։ Իմպերիալիստական տերությունները ստեղծված դրությունը հմտորեն օգտագործում էին իրենց օգտին։ Պարսիկ հեղինակները միաբերան հաստատում են, որ ամբողջ XIX դարի ընթացքում անգլիական կառավարության քաղաքականության հիմքն Իրանում այն էր, որ թույլ չտա Իրանի և Ռուսաստանի մերձեցումը։

Մահմուդ Մահմուդը գրում է, որ անգլիացիները ջանում էին շահին ու պալատականներին մշտական սարսափի մեջ պահել ռուսներից և, այդ նպատակով, ամեն առիթով մատնացույց էին անում և հիշեցնում ռուսների պատճառած չարիքները Թուրքեստանում, Օսմանյան կայսրության տերիտորիաներում և այլուր։ Լավ ծանոթ լինելով XIX դարի Իրանում անգլիական քաղաքականությանը, Մահմուդն այն կարծիքն է հայտնում, որ այս երկրների բոլոր դժբախտությունների ու նրանց կրած վնասների պատճառը հենց Անգլիան էր։

Երկու գաղութակալական տերությունների մրցակցու-

---

[152] سعید نفیسی، تاریخ اجتماعی و سیاسی ایران در دوره معاصر مجلد اول، تهران ۱۳۳۵ صفحه ٦

թյան պայմաններում իրանական իշխող շրջանների վարած քաղաքականության հարցը նույնպես լայնորեն քննարկվել է իրանական պատմագրության մեջ։

«Կառավարությունը,— գրում է Դովլաթաբադին,— հեռատես ու եռանդուն գործիչներ չունենալու և իր ապիկարության պատճառով, միակ ելքը նրա մեջ էր տեսնում, որ երկու կողմերին էլ բավարարի..., որի հետևանքով օրեցօր է՛լ ավելի էր ծանրանում իր իսկ բեռը»[153]։

«Իրանական կառավարության արտաքին քաղաքականության գլխավոր գիծը,— շարունակում է հեղինակը,— հյուսիսային և հարավային երկու հարևաններին բավարարելն էր, թեկուզ այն երկրի բեռն է՛լ ավելի էր ծանրացնում և երկու պետությունների ազդեցությունն ուժեղացնում։ Անգլիացիներն արտոնություններ են պահանջում, ռուսներն էլ փոխհատուցում են ուզում, և վերջապես երկուսն էլ հասնում են իրենց նպատակներին, իսկ պալատականներն ուրախանում են, որ արտաքին քաղաքականությունը լավ են վարել, շահին բավարարել են և նա կարող է շարունակել իր շվայտ կյանքը»[154]։ Կառավարության ղեկավարների մեջ եղած երկպառակտումները, հատկապես վեզիրության պաշտոնի համար ձգտություն ունեցող մրցակցությունը մեծ չափով նպաստում էր օտարերկրյա միջամտությունների աշխուժացմանը։ «Դրսից եկող դժբախտությունները ներքին ուժերի ձեռքով են երկիր մտնում», գրում է Դովլաթաբադին։ Նա նշում է նաև, որ չնայած երկիրը վերածվել էր գերեզմանատան, բայց արդեն լույսի շողեր էին երևում։ Ժողովրդի համբերությունը հատել էր և նրանց այդ զգացմունքները օրեցօր ուժեղանում էին և ալեկոծվում[155]։ Դովլաթաբադին փորձում է պարզաբանել իրանական կառավարության դիրքորոշումն անգլո-ռուսական պայքարի և մրցակցության պայմաններում։ Նա հանգում է այն եզրակացության, որ այդպիսի վիճակը միանգամայն բավարարում էր Իրանի կառավարությանը, և նա, նույնիսկ, երբեմն դիտավորյալ, ավելի էր գրգռում այդ մրցակցությունը, հուսա-

---

153 یحیی دولت آبادی، حیات یحیی، جلد اول تهران ۱۹۵۷ صفحه ۱۰۵

154 Նույն տեղում, էջ 103։

155 Նույն տեղում։

լով դրանով իսկ ապահովել Իրանի և իր ժամանակավոր հանգստությունը[156]:

Պարսիկ հեղինակների մեծ մասը, սակայն, այն խոր համոզման է, որ անգլիական իմպերիալիստների և ցարական գաղութարարների մրցակցությունը անսահման աղետներ է պատճառել Իրանին:

Այսպես, Էբրահիմ Թեյմուրին նշում է, որ երկու հզոր գաղութատիրական պետությունների մրցակցության հետևանքները դեռևս երկար տարիներ հնարավոր չի լինի վերացնել[157]:

Այնուհետև վկայակոչում է Քերզոնի այն խոսքերը, թե «Իրանը վերածվել էր ճատրակի տախտակի, որի վրա կողմերից յուրաքանչյուրը մյուս կողմի հակաքայլին էր հանդիպում: Այս երկու գաղութակալ մրցակիցները ձգտում էին միմյանց մատ անել և հակառակորդին ասպարեզից հեռացնել»[158]:

Սակայն, այս ամենը նշելով հանդերձ, չգիտես ինչ փաստերի հիման վրա հեղինակը գրում է, որ «հաճախ այսպիսի պարագաներում Նասր էդ Դին շահը օգուտ էր քաղում այս երկու հակառակորդների մրցակցությունից»[159]:

Հասկանալի չէ, թե արդյոք հեղինակը նկատի ունի Նասր էդ Դին շահի անձնական օգո՞ւտը, այսինքն կաշառքները, նվերները և այլն, թե՞ երկրի շահերը:

Բոլոր դեպքերում Թեյմուրին գտնում է, որ այն բանից հետո, երբ անգլիական հմուտ դեսպան Դորթմունդ Վոլֆը Մոհամեդ Ալի Ասղար խան Ամին էս Սոլթանի՝ մեծ վեզիրի, օգնությամբ ձեռք բերեց Քարուն գետի ազատ նավարկության իրավունքը, որին անգլիացիները ձգտում էին ավելի քան հիսուն տարի, «գործերի ընթացքը միանգամայն այլ բնույթ ընդունեց»: Դրանից հետո ռուսներն ու անգլիացիներն իրար գործունեությունը չեզոքացնելու փոխարեն, հակառակորդին տրված արտոնության դիմաց համապատասխան արտոնություն էին պահանջում, և Իրանի կառավարությունը մշտապես

156 Նույն տեղում, էջ 45:

157 ابراهيم تيموري، عصر بی‌خبری... صفحه ۸۹

158 Նույն տեղում:

159 Նույն տեղում, էջ 90:

բավարարում էր նրանց այդ պահանջները։ «Իրանցի թվացող վարձկան ծառաները,— գրում է հեղինակը,— հայրենիքը ծախելու և այն աճուրդի դնելու մրցակցության մեջ էին մտել, և իրենց վարձատրությունը ստանալով, ոչնչացնում էին երկրի անկախությունը»[160]։

Նույն գաղափարն է առաջ քաշում և Իսա Սադեղը։ Ամիր Քաբիրի սպանությունից հետո տեղի ունեցած կարևոր իրադարձությունները Անգլիայի և Ռուսաստանի մրցակցության ու պալատի և իշխանության նեխածության ու թուլության հետևանք համարելով, նա գրում է. «երկու նշված հարևանները տիրապետում էին թույլ Իրանին և նրանցից յուրաքանչյուրը ջանում էր օգուտներ քաղել իր համար։ Օրինակ՝ գրավել երկրի մի մասը, կամ կառավարությունից որևէ կոնցեսիա վերցնել։ Հենց որ նա հաջողության էր հասնում, մյուս կողմն էլ ավելի մեծ բաժին էր պահանջում։ Մեր անկարող կառավարությունը ջանում էր արտաքին կողմը պահպանել և հնարավորության դեպքում նրանց պահանջները սահմանափակել»[161]։

Սակայն փաստեր կան նաև այն մասին, որ ժողովրդի հոգեբանությունն արդեն փոխվել էր։ Վախենալով օտարների քաղաքականությունից, ժողովուրդն այլևս չէր հավատում դատարկ հայտարարություններին և խոստումներին։ Ղեկավար շրջաններից որևէ մեկն օտարերկրացիների օգնությամբ ինչ քայլի էլ դիմեր, կասկածի առիթ էր տալիս։ Անգլո-ռուսական մրցակցության պայմաններում կառավարության ձեռնարկած յուրաքանչյուր քայլ մեկնաբանվում էր ամենաբացասական ձևով և առելություն էր առաջացնում ժողովրդական զանգվածների մեջ[162]։

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ պարսիկ հեղինակները նույնիսկ Նասր էդ Դին շահի սպանությունն արդյունք են համարում երկու գաղութատիրական պետությունների մրցակցության։ Մահմուդ Մահմուդը գրում է, որ 1896 թվականին Նասր էդ Դին շահի սպանությունը, Միրզա Ռեզա

---

160 Նույն տեղում։

161 میسی صدیق، سیر فرهنگ در ایران و مغرب زمین، تهران ۱۳۳۲ صفحه ۵۷۶

162 محمود فرهاد معتمد، سپهسالار اعظم، تهران ۱۹۴۶ صفحه ۱۴۷

Քերմանի ձեռքով, քաղաքական սպանություն էր և ոչ թե անձնական վրեժ: Միրզա Ռեզան Սեյեդ Ջամալ էդ Դինից ցուցում էր ստացել սպանել շահին կամ մեծ վեզիրին: «Նրանց հանցանքը կայանում էր նրանում,—գրում է Մահմուդը,—որ նրանք անգլիացիների ազդեցությունից դուրս էին եկել և մոտեցել ռուսներին: Շահի և մեծ վեզիրի այդ քայլը չէր համապատասխանում Անգլիայի վաղեմի քաղաքականությանը»[163]:

Նասր էդ Դին շահի թագավորության ժամանակ, Իրանի ներքին գործերին միջամտելու և երկիրը կիսագաղութի վերածելու գործում, օտարերկրացիների և հատկապես Անգլիայի և Ռուսաստանի ունեցած դերի և նրանց վարած նենգ քաղաքականության վերաբերյալ պարսիկ պատմաբանների հայացքները գլխավորապես համընկնում են: Սակայն պետք է նշել, որ որոշ հեղինակներ անհիմն կերպով ձգտում են այդ փաստերը ծառայեցնել Նասր էդ Դին շահի և իրանական իշխող շրջանների վարած քաղաքականության արդարացման համար:

---

163 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد ششم صفحه ۱۶۳۷

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՄՈՆՈՊՈԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄՆ ԻՐԱՆ

Իրանի կողմից իմպերիալիստական երկրներին տրված տարբեր բնույթի կոնցեսիաների պատմությունը ամենալայն կերպով քննարկվել է իրանական պատմագրության մեջ։ Պետք է ասել, սակայն, որ ուսումնասիրվող հարցերին առանձին հեղինակների մոտեցումը միատեսակ չէ։ Եթե որոշ հեղինակներ ճիշտ կերպով մեղադրել և դատապարտել են կոնցեսիաների ամբողջ սիստեմը, բացահայտել նրա ճակատագրական նշանակությունն Իրանի համար, ինչպես և ցույց տվել զաջարական դինաստիայի և ընդհանրապես Իրանի իշխող շրջանների դավաճանական դերն այդ հարցում, ապա ոմանք էլ տարբեր դատողություններով փորձել են այս կամ այն չափով արդարացնել, կամ առնվազն անխուսափելի ձևացնել իրանական իշխող շրջանների վարած քաղաքականությունը։

Էմայիլ Ռայինը Միրզա Մալքոմ խանի կյանքին ու գործունեությանը նվիրված իր աշխատությունում գրում է. «Նասր էդ Դին շահի թագավորության վերջին շրջանում փողասիրությունն ու ագահությունը նրան հաղթեց։ Շահի ճամփորդությունները արտասահման և այդ նպատակով միլիոնավոր ղրան դրամի ծախսումը պատճառ դարձան, որ շահն ու պալատականները կոնցեսիաներ տան օտարներին և երկիրը աճուրդի դնելով, անկման եզրին կանգնեցնեն։ Հատկապես Նասր էդ Դին շահի Եվրոպա կատարած երրորդ ճամփորդության ժամանակ, նրան ուղեկցողներն իրենց հայրենիքն օտարերկրացիներին վաճառելու մրցության մեջ մտան և տեղի-անտեղի, նրանցից յուրաքանչյուրն իր անձնական շահից ելնելով շահին մատնացույց էր անում դավաճանության տարբեր ուղիներ։ «Այդ ժամանակ դրամ ձեռք բերելու

ձգտումն այնքան էր շահին ոգահացրել, որ եթե Իրանի տերիտորիայի որևէ մասի վաճառք էլ առաջարկվեր, շահը կհամաձայնվեր»[1]։

Ինչպես տեսնում ենք, հեղինակն ամենավառ գույներով մերկացնում է դաջաբական իշխող շրջանների ազգադավ քաղաքականությունը։

Այդ քաղաքականությանը նույնպիսի գնահատական է տալիս նաև Նազեմ օլ էսլամ Քերմանին։ Ամբողջ հանցանքը գցելով անձամբ Նասր էդ Դին շահի վրա, նա գրում է. «Իրանի պալատի այլասեռումն սկսվեց Նասր էդ Դին շահի ժամանակներից»[2]։ Վկայակոչելով Նասր էդ Դին շահի պատմիչներից մեկին, Քերմանին նշում է, որ շահի հիսունամյա թագավորության ընթացքում օտար պետությունների կամ նրանց հպատակների հետ ստորագրվել է առևտրական, քաղաքական, սահմանային և կոնցեսիոն ուխտներեք համաձայնագիր՝ բոլոր դեպքերում ի վնաս Իրանի։ Դրանցից մոտ երեսունհինգը, այդ թվում Ռեժի ծխախոտի, «Շահնշահի բանկի», ռուսական բանկի, երկաթգծի, խճուղիների և այլ կոնցեսիաները օտարերկրացիներին են շնորհվել կաշառքի ու նվերների միջոցով։

Իրանական արխիվներում պահպանվել է պանիսլամիզմի հիմնադիր և հակաիմպերիալիստական տրամադրություններ ունեցող Սեյիդ Ջամալ էդ Դին Ասադաբադիի մի նամակը՝ ուղղված շիական հոգևոր ղեկավար Միրզա Շիրազիին։

Ջամալ էդ Դինն իր նամակում թվարկում է հետևյալ կոնցեսիաները, որոնցով շահը «երկրի գլխավոր մասը և նրա եկամուտները վաճառեց Իսլամի թշնամիներին»[3]։ 1—Հանքերը և դեպի հանքերը տանող ճանապարհները, ինչպես նաև հանքերից դեպի երկրի կարևոր մասերը տանող գծերը։ 2—Ամբողջ երկրում խճուղիների շրջակայքում կառուցվող քարվանսարաներն, ինչպես նաև այդ ճանապարհների շրջակայքում գտնվող ցանքատարածություններն ու այգիները։ 3—Քարուն

---

1 اسماعیل رائین، میرزا ملکم‌خان، تهران ۱۳۵۰ صفحه ۹۳

2 ناظم‌الاسلام کرمانی، تاریخ بیداری ایرانیای، مجلد اول تهران صفحه ۶۸

3 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۱۲

գետը և նրա երկու ափերին կառուցվող իջևանատները, ինչպես նաև այդ գետի շրջակայքում եղած արոտավայրերը։ 4—Ահվազից Թեհրան տանող ճանապարհը և նրա շրջակայքում գտնվող շինությունները, իջևանատները, այգիները և ցանքատարածությունները։ 5—Մխախոտը և նրա արտադրության համար անհրաժեշտ բոլոր պարագաները, ցանքսերը, պահապանների տները, փոխադրական միջոցները և կրպակները։ 6—Խաղողի բերքահավաքը և գինի պատրաստելու համար անհրաժեշտ գործարաններն ամբողջ երկրում։ 7—Օճառ, մոմ և շաքար արտադրող գործարանները։ 8—Բանկերը։ Բնութագրելով մասնավորապես «բանկ» հասկացությունը, Ջամալ էդ Դինը գրում է. «Բանկը նշանակում է ժողովրդի ղեկավարությունն ամբողջովին տալ իսլամի թշնամիներին, մուսուլմաններին նրանց սարուկը դարձնել և անհավատների տիրապետությունը հաստատել երկրում»[4]։

Հիշատակելով անգլիական իմպերիալիստներին տրված այս արտոնությունները, հեղինակը գրում է, որ երկրի մյուս կեսն էլ՝ Կասպից ծովի մի մասը, էնզելիի ճանապարհը մինչև Խորասան ու նրա շուրջը գտնվող տները, իջևանատները, այգիները և այլն, տրվել էին ցարական Ռուսաստանին՝ նրան լռեցնելու համար։ Սակայն ցարական Ռուսաստանը «այդ նվերը չի ընդունում»[5]։ Նա պահանջում է, որ անգլիացիներին տրված կոնցեսիաները ոչնչացվեն, այլապես նա «Խորասանը կդարձնի իր գաղութը, կտիրանա Ադրբեջանին և Խորասանին»[6]։

Այս ամենից հետո Ջամալ էդ Դինը եզրակացնում է. «Ահա այս տխմար մարդու (Նասր էդ Դին շահի—Հ. Ե.) քաղաքականության առաջին արդյունքները։ Կարճ ասած, այս հանցագործ մարդը Իրան երկիրը աճուրդի է դրել և Մոհամադի տունն ու մուսուլմանական երկրները օտարներին է վաճառել, սակայն իր ստորության և նենգության պատճառով վաճառել է ցածր արժեքով և չնչին գումարի դիմաց։ Երբ

---

[4] Նույն տեղում, էջ 12։

[5] Նույն տեղում։

[6] Նույն տեղում։

նվաստությունն ու ստրկությունը ժլատության և խեղճության հետ միակցվեն, այսպես կլինի»[7]:

Ինչպես ցույց է տալիս նամակի բովանդակությունը, Ջամալ էդ Դինը ամենախիստ քննադատության է ենթարկում իրանական իշխող շրջաններին՝ օտարերկրացիներին տրված արտոնությունների համար: Սակայն ակնհայտ է նաև, որ դա կատարվում էր իսլամի դոգմաների և պանիսլամիզմի դիրքերից: Ջամալ էդ Դինն ընդհանրապես դեմ էր եվրոպական քաղաքակրթության տարածմանն Իրանում, համարելով այն վնասակար և իսլամի դոգմաներին հակառակ:

Սակայն մի շարք հեղինակներ Իրանի համար կործանարար բոլոր այդ կոնցեսիաները գնահատում են որպես երկրի առաջընթացին նպաստող գործոն: Այսպես օրինակ, Միրզա Յուսուֆ խան Մոսթաշար էդ Դոլեն, որն Իրանում ու արտասահմանում մի շարք բարձր պաշտոններ է զբաղեցրել, պատասխանելով Իրանի տերիտորիայում երկաթգիծ կառուցելու հակառակորդներին, որոնք պնդում էին, թե դա պատճառ կդառնա օտարերկրացիների ներթափանցմանն ու նրանց միջամտությանը երկրի ներքին գործերին, ասում էր. «Կառավարության և ժողովրդի համար լավն այն է, որ եվրոպացիների մուտքը Իրան քաջալերվի, քանի որ Իրանում կտարածվի գիտությունը, արհեստներն ու եվրոպական մշակույթը, և ամբողջովին կփոխվի երկրի վիճակը»[8]:

Մի ուրիշ հեղինակ, Ալի Ասղար Շամիմը իր «Իրանը դաջարական թագավորության շրջանում» աշխատության մեջ գրում է. «այն կոնցեսիաները, որ Նասր էդ Դին շահը տվեց օտար երկրների, հատկապես Ռուսաստանի և Անգլիայի հպատակներին, եվրոպական ժամանակակից քաղաքակրթության արտահայտությունը հանդիսացող արդյունքների ձեռքբերման առումով, այն էլ մի երկրի համար, որը նոր էր ուզում այդ քաղաքակրթության հետ ծանոթանալ, անհրաժեշտ և օգտավետ էին: Այս իմաստով Նասր էդ Դին շահին քննա-

---

[7] Նույն տեղում, էջ 7—12:

[8] فریدون آدمیت، فکر آزادی و مقدمه نهضت مشروطیت ایران صفحه ۱۸۴

դատել չի կարելի»[9]: Այսպիսի հայտարարությունից հետո հեղինակն, այնուամենայնիվ, որոշ վերապահում է անում: Նա նշում է, որ կոնցեսիաները ստացող երկրների և Իրանի միջև քաղաքական և ռազմական տեսակետից ոչ մի հավասարակշռություն գոյություն չուներ: Կոնցեսիաների համար երկու շահագրգռված կողմերի միջև բանակցությունները տարվում էին ոչ միանման պայմաններում: Բացի այդ, կոնցեսիաների մեծ մասն այնպիսի ժամանակ էր Իրանին պարտադրվել, երբ երկրի գանձարանը դատարկ էր, կառավարությունը ծանր վիճակի մեջ էր, իսկ շահը՝ ոգևորված Եվրոպա ճանապարհորդելու մտքով, քիչ էր հետաքրքրվում երկրի գործերով: Հետևաբար, այդ կոնցեսիաները հեշտությամբ շռայլվում էին չնչին գումարների դիմաց, որոնք միայն կարճ ժամանակով կարող էին բավարարել գանձարանի կարիքները: Շամիմի վկայությամբ, այդ գումարները շուտով վատնվեցին շահի և նրան ուղեկցող անձանց Եվրոպա կատարած ճանապարհորդության ծախսերը հոգալու, և արքայազններին ու պալատականներին մեծ թոշակներ տալու նպատակով: Անդրադառնալով Իրանում Անգլիայի և Ռուսաստանի քաղաքականությանը, Շամիմը գրում է, որ սկսած Ֆաթհ Ալի շահի թագավորության ժամանակներից մինչև Նասր էդ Դին շահը, ինչպես նաև Թուրքմենչայի ու Փարիզի պայմանագրերի ստորագրմամբ, այդ երկու երկրներն ավարտել էին Իրանի ռազմական շրջափակումը և շուտով ձեռնամուխ եղան նաև նրա տնտեսական շրջափակմանը:

Շամիմը դրա կարևոր խթան է համարում Իրանի և մի շարք երկրների (Բելգիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի, Միացյալ Նահանգների) միջև առևտրական և այլ պայմանագրերի կնքումը: «Այս պայմանագրերի ստորագրումը,—գրում է հեղինակը,—Իրանի հզոր հարևաններին՝ Ռուսաստանին և Անգլիային մղեց այն բանի, որ Իրանի տնտեսական լծակներն իրենց ձեռքը գցելու համար ավելի շատ թափանցեն երկրի քաղաքական և վարչական բնագավառները՝ մի կողմից իրենց օգտին մի շարք առևտրական պայմանագրեր պարտադրեն Իրանին, մյուս կողմից նոր կոնցեսիաներ ձեռք

---

[9] علی اصغر شمیم، ایران در دوره سلطنت قاجار، تهران ۱۳۴۲ صفحه ۲۰۰ و ۲۲۰

բերեն տնտեսության բնագավառում: Այսպիսով, Ռուսաստանը և Անգլիան Մոզաֆար էդ Դին շահի ժամանակ էլ նախկին կոնցեսիաների ժամկետները երկարաձգեցին, և նոր կոնցեսիաների և մաքսատների մեջ ներթափանցելու շնորհիվ ավարտեցին Իրանի տնտեսական շրջափակումը»[10]:

Ինչպես տեսնում ենք, հեղինակը փաստորեն ինքն իրեն հակասում է: Կամ, ավելի շուտ, աշխատում է օտարերկրյա տնտեսական և քաղաքական ներթափանցման մեջ տեսնել դրականը, չնայած զգում է նաև, թե այդ ներթափանցումն ի՞նչ նպատակով է իրականացվում և ի՞նչ հետևանքներ կունենա Իրանի համար:

Վերլուծելով կոնցեսիաների ամբողջ սիստեմը որոշ հեղինակներ գտնում են, որ, հավանաբար, շահն ու մեծ վեզիրը կարծում էին, թե երկրի ֆինանսական վիճակը կարելի է կարգավորել միայն օտարերկրացիներին կոնցեսիաներ տալու միջոցով: «Շահի և մեծ վեզիրի այս քայլը,— գրում է Մահմուդ Մահմուդը,— Իրանի ավերման սկիզբն է, և ապացուցում է, թե նրանք որքան անտարբեր էին երկրի նկատմամբ: Դրամ ձեռք բերելուց բացի նրանք այլ մտահոգություն չունեին և չգիտեին, որ ուրիշ եղանակով ևս կարելի է Իրանի հարստության աղբյուրները գործի դցել և չթողնել, որ դրանք օտարերկրացիների ձեռքն ընկնեն...: Նասր էդ Դին շահի թագավորության վերջում ոչ միայն շահը, մեծ վեզիրը, այլև մյուս պալատականները, պետական պաշտոնյաները և ունևոր մարդիկ ևս նույն մտքին հանգելով, իրենց շահերի համար օտարերկրացիներին մատակից էին դարձնում բոլոր հարցերին[11]:

Մեկ այլ հեղինակ՝ էբրահիմ Թեյմուրին, այդ առթիվ գրում է. «Նասր էդ Դին շահը և Ամին էս Սոլթանը երկրի հարստության աղբյուրները աճուրդի էին դրել և չնչին գումարի դիմաց, առանց հետևանքներից վախենալու, երկրի շենությունն ապահովելու և օտար կապիտալներն Իրանում ներ-

---

[10] Նույն տեղում:

[11] محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد چهارم صفحه ۱۱۷۲–۱۷۱

դնելու անվան տակ, ամեն տեսակի կոնցեսիաներ տվեցին օտարերկրացիներին»[12]։

Փաստերը ցույց են տալիս, որ Նասր էդ Դին շահի հաջորդ Մոզաֆար էդ Դին շահի իշխանության շրջանում երկրի դրությունը է՛լ ավելի վատացավ։ Ռուսաստանից վերցրած նորանոր պարտքերը և դեպի Եվրոպա կատարած ապարդյուն ճամփորդությունների շռայլ ծախսերը, անտեղի նվիրատվություններն ու առատաձեռնությունը հող էին պատրաստում նորանոր շարժումների համար։

*

* *

Ինչպես ասացինք, օտարերկրյա կապիտալի ներթափանցումն իր հետ բերեց Իրանի տնտեսական սարկացման նոր եղանակներ՝ կոնցեսիաներ, պարտքեր, փոխառություններ, օտարերկրյա բանկեր և այլն։

Օտարերկրյա առաջին կոնցեսիաները հեռագրային կոնցեսիաներ էին, որոնց անհրաժեշտությունը ծագեց 1857—59 թթ. Հնդկաստանում անգլիական գաղութային տիրապետության դեմ ծավալված Սեփահիների ապստամբության ժամանակ։ Անգլիային հարկավոր էր հեռագրային կապ հաստատել Հնդկաստանի հետ և հատկապես Իրանի վրայով, քանի որ այն մի կողմից կամրապնդեր Անգլիայի գաղութային տիրապետությունը Հնդկաստանի վրա, իսկ մյուս կողմից նոր հնարավորություններ կստեղծեր ուժեղացնելու Անգլիայի ազդեցությունն Իրանում։ Անգլիան Իրանին հեռագրային կոնցեսիաներ պարտադրեց 1862, 1865 և 1872 թվականնե-

---

[12] Նասր էդ Դին շահի թագավորության վերջին տարիներին, երբ բազմաթիվ կոնցեսիաներ էին տրվում օտարերկրացիներին, իբր թե ընկերությունների կողմից կոնցեսիաների պայմանները ճիշտ կատարելու նպատակով մշակվեց մի կանոնադրություն, համաձայն որի Հութում Շինդլերի ղեկավարությամբ ստեղծվեց հատուկ հիմնարկություն։ Վերջինիս մեջ ընդգրկվեցին մի շարք ինժեներներ, թարգմանիչներ, կատարածուներ և այլն։ Եթե որևէ օտարահպատակ ցանկանար իրանական կառավարությունից կոնցեսիա ստանալ, պետք է դիմեր այդ հիմնարկին և Հութում Շինդլերը այդ առաջարկության մասին պետք է զեկուցեր մեծ վեզիրին։

ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۳۲۷

ին։ Դրանք անգլիացիներին իրավունք էին տալիս իրանական կառավարության հաշվին հեռագրային գծեր կառուցել խանեղին—Թեհրան—Բուշեհր ուղղությամբ, որը միանալու էր դեպի Հնդկաստան տանող գծին։

1868 թ. իրանական կառավարությունը ստիպված եղավ նույն ընկերությանը Ջուլֆայից Թեհրան հեռագրային գիծ կառուցելու կոնցեսիա տալ։ Այն միանալու էր Եվրոպա տանող գծին։ Հետագայում, 1901 թ. ստորագրված համաձայնագրով իրանական կառավարությունը հանձն առավ Անգլիայից վերցրած վարկով կառուցել Բալուջեստանի հեռագրային գիծը՝ Յազդի և Քերմանի ուղղությամբ դեպի Հնդկաստան։

Հեռագրային բոլոր այս գծերի շահագործումը կատարվում էր անգլիացիների միջոցով, որոնց հիմնական նպատակը Անգլիայի և Հնդկաստանի միջև կապի ապահովումն էր։

Ինչպես ասվեց, այս գծերը կառուցվում էին Իրանի հաշվին, որը, սակայն, միջոցներ չունենալով, ստիպված վարկեր էր վերցնում Անգլիայից։ Այդ վարկերը 1869 թ. արդեն կազմում էին 47 հազար ֆունտ ստեռլինգ, որն Իրանը պետք է վճարեր 20 տարվա ընթացքում։

Հեռագրային այս գծերի վրա աշխատող անգլիացիներն ունեին էքստերիտորիալ իրավունք, մի հանգամանք, որը նրանք լայնորեն օգտագործում էին Իրանի ներքին գործերին միջամտելու համար։

Մահմուդ Մահմուդը, անդրադառնալով հեռագրային կոնցեսիաների խնդրին, հանգում է այն եզրակացության, որ «այդ հարցը ևս կապված էր Իրանում Անգլիայի վարած քաղաքականության շղթայի հետ, որովհետև որտեղից որ անցնում էր հեռագրային լարը, այնտեղ էլ հաստատվում էր անգլիական կառավարության ազդեցությունը[13]։ Հեղինակը ճիշտ է մեկնաբանում Իրանում հեռագրային գծերի անցկացման նպատակները և նրանց շահագործման համար Իրան ուղարկված հիսուն հոգիանոց խմբի գործունեությունը, որի անդամները միանգամայն անկախ էին և չէին ենթարկվում

---

13 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد سوم صفحه ۱۰۶

Իրանի ներքին օրենքներին: Մահմուդը անգլիացիների այս նախաձեռնությունը համարում է մեծ հմտությամբ մշակված ծրագրի իրականացում, որն ուղղված էր անգլիայի գաղութային տիրապետությունների պաշտպանությանը[14]:

Հեղինակը նկատում է, որ անգլիական սպաների տեղն այժմ հեռագրատների պաշտոնյաներն էին զբաղեցնում, այսինքն՝ իրականում հեռագրիչները հենց անգլիական կերպարանափոխված զինվորականներ էին: «Այլևս նպատակահարմար չէր,— գրում է նա, որ Իրանը որևէ ուժ ներկայացնող բանակ ունենա, որի գլուխ կանգնած լինեին անգլիական սպաները: Ավելի ձեռնտու էր, որ այդ սպաները հեռագրիչների դերում հանդես գային, իրենց գործը կատարեին և աղմուկ չբարձրանար»[15]:

*

* *

Օտարերկրյա մոնոպոլիաներին տրված կոնցեսիաներից համեմատաբար ավելի մեծը 1872 թ. հուլիսին Բարոն Ռեյտերին տրված կոնցեսիան էր, որը պարտադրվեց անգլիացիների կողմից և հղի էր երկրի տնտեսության համար ծանր հետևանքներով:

Կոնցեսիայի ժամկետը 70 տարի էր: Այն ընդգրկում էր տարբեր բնագավառներ: Կոնցեսիայով Ռեյտերին թույլատրվում էր երկրի տարբեր վայրերում երկաթուղու և տրամվայի գծեր կառուցել: Նա իրավունք էր ստանում շահագործել Իրանի ստորերկրյա հարստությունները, հատկապես նավթը[16]: Բացառություն էր կազմում ոսկու, արծաթի և թան-

---

[14] Նույն տեղում, էջ 612:

[15] محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد سوم صفحه

[16] Ավստրալիացի Դ'Արսին 1901 թվականին հաջողվեց ձեռք բերել Իրանի ամբողջ տերիտորիայում (բացի հյուսիսային շրջաններից) նավթային հարստությունների շահագործման կոնցեսիան: Դ'Արսին այս կոնցեսիայի դիմաց իրանական կառավարությանը պետք է վճարեր ընդամենը 20 հազար ֆունտ ստեռլինգ: Նավթի շահագործումն սկսելուց հետո ընկերությունը իրանական կառավարությանը տալու էր եկամտի 16%-ը: Անշուշտ, այդ ժամանակ դեռևս լավ չէին գիտակցվում այդ կոնցեսիայի կործանարար հետևանքները, քանի որ, համաշխարհային մասշտաբով,

կարժեք քարերի շահագործումը։ Կոնցեսիան ընդգրկում էր ամբողջ ոռոգման աշխատանքները, այդ թվում ստորերկրյա և վերերկրյա ջրանցքների կառուցումը և այլն։ Իրանի տընտեսությանը մեծ հարված էր հասցնում նաև մաքսային եկամուտների հավաքման իրավունքի հանձնումը անգլիացիներին։ Կոնցեսիոն պայմանագիրը նախատեսում էր 25 տարի ժամանակով, ընդամենը 20 հազար ֆունտ ստեռլինգ գումարի դիմաց, Ռեյտերին հանձնել ամբողջ Իրանի մաքսատների գործի կառավարումը։ Հետաքրքրական է նշել, որ ինքը՝ Ռեյտերը, միաժամանակ պետք է ազատվեր բոլոր տեսակի մաքսերից։ Կոնցեսիան նախատեսում էր հետագայում նրա իրավունքները տարածել նաև երկրի ֆինանսների, բանկերի հիմնադրման, հաղորդակցության ճանապարհների, գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների կառուցման վրա։ Ըստ որում, այդ բոլորի համար անհրաժեշտ հողամասերը և բանվորական ուժը պետք է անվճար տրամադրվեր իրանական կառավարության կողմից։ Կոնցեսիայի պայմանների համաձայն կառավարությունն ստանալու էր ամբողջ եկամուտների ընդամենը 15—20 %-ը։

Ռեյտերին տրված այս կոնցեսիան, փաստորեն, առաջին ամենախոշոր և Իրանի համար ամենավնասաբեր կոնցեսիան էր, որ իրանական իշխող շրջանները տալիս էին որևէ օտար պետության։ Այն երկրի ամբողջ տնտեսությունը, գործնա-

---

գեռևս նավթը չուներ այն նշանակությունը, ինչ նա ստացավ հետագայում։

Իրանի նավթային հարստությունները շահագործող անգլիական ընկերությունը, որը կոչվում էր Անգլո-պարսկական նավթային ընկերություն, կազմակերպվեց ավելի ուշ՝ 1909 թ., իսկ նրա ազդեցությունն ավելի մեծացավ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ անգլիական կառավարությունը գնեց ընկերության ակցիաների մեծ մասը։

Իմպերիալիստական պետություններին տրված կոնցեսիաներից իր կորստաբեր հետևանքներով հատկապես աչքի է ընկնում այս կոնցեսիան, որն իր գործունեությունը շարունակեց մինչև 1951 թ.; երբ ազգային-ազատագրական շարժման վերելքի պայմաններում ազգայնացվեց։ Նավթային կոնցեսիան և նրա հետևանքները ամենալայն կերպով քննարկվել են իրանական պատմագրության մեջ։ Քանի որ նրա գործունեության շրջանը մեր ընդգրկած ժամանակաշրջանից դուրս է և, բացի այդ, այն կարող է կազմել առանձին մենագրության թեմա, մենք այստեղ այդ հարցի վրա կանգ չենք առնում։

կանում, հանձնում էր օտարերկրյա մոնոպոլիաների տնօրինությանը և ուղի հարթում երկիրը կիսագաղութի վերածելու համար։

Այս կոնցեսիան նույնպես լայնորեն քննարկվել է իրանական պատմագրության մեջ։ Սակայն պետք է նշել, որ որոշ պատմաբաններ փորձել են արդարացնել նրա տրամադրումը անգլիացիներին, պնդելով, որ իբր կոնցեսիայի իրանական հեղինակները հետապնդել են հեռուն գնացող քաղաքական նպատակներ և, որ, իբր, դրա շարժառիթը եղել է երկրի անկախության ապահովումը և նրա հետագա զարգացումը։

Այսպես օրինակ, Մահմուդ Ֆարհադ Մոթամեդն իր «Իրանի և օսմանյան պետության քաղաքական հարաբերությունների պատմությունը» գրքի երկրորդ հատորում մանրամասն վերլուծելով ժամանակի մեծ վեզիր՝ Ռեյտերին տրված կոնցեսիայի հեղինակ, Միրզա Հոսեյն խան Մոշիր էդ Դոլեի կյանքն ու գործունեությունը, հանգում է հետևյալ եզրակացության։

Միրզա Հոսեյն խանը տրամադրված էր հօգուտ եվրոպացիների, հատկապես անգլիացիների։ Նա համոզված էր, որ անգլիացիները Իրանից ստացած օգուտների դիմաց կձգտեն պահպանել Իրանի ամբողջականությունը ու բարգավաճման հնարավորությունը։ Մոթամեդն այն կարծիքն է հայտնում , որ հենց այդ սկզբունքից ելնելով էլ Միրզա Հոսեյն խանը Ռեյտերի հետ պայմանագիր կնքեց և նույնիսկ անգլիացիների օգտին մեծ զիջումներ արեց։ Սակայն հեղինակը տարօրինակ ձևով այդ զիջումները բացատրում է ոչ թե իր հայրենիքի նկատմամբ Միրզա Հոսեյն խանի անտարբերությամբ, այլ նրա այն հույսով, որ միգուցե Իրանում անգլիացիներին որոշ արտոնություններ տալով հնարավոր լինի նրանց շահագրգռել Իրանի ճակատագրով և նրանք ձգտեն Իրանի առաջընթացին, զարգացմանն ու բարգավաճմանը։

Մոթամեդն այնուհետև գրում է, որ իբր Եվրոպա կատարած իր առաջին ճանապարհորդությունից հետո, երբ մեծ վեզիրը համոզվեց, որ իր զիջումների և զոհաբերությունների դիմաց Անգլիան ամենաչնչին օգնություն իսկ պատրաստ

չէ ցուցաբերել Իրանին, դեռ ավելին, քաղաքական համերաշխության համար կնքված հենց նույն պայմանագիրն օգտագործում է իրեն պաշտոնից հեռացնելու նպատակով և ծառայեցնում է արտասահմանում տարբեր քաղաքական սակարկությունների ու իրենց օգտին պայմանագրերի կնքմանը, իր կյանքի վերջում անգլիացիներից հիասթափվեց: Սակայն, ինչպես նշում է հեղինակը, անգլիացիների հետ ունեցած բարեկամության հետևանքով Միրզա Հոսեյն խանը կորցրել էր իր հեղինակությունը և իր կատարած զիջումների համար «բացի խղճի խայթից այլ պարգև չստացավ: Այն ուղիով, որ նա ընթացել էր և այն սխալը, որ թույլ էր տվել, այլևս անվերադարձ և անուղղելի էր»[17]:

Նույն միտքն է առաջ քաշում նաև Ֆերեյդուն Ադամիաթն իր «Ազատության գաղափարը և սահմանադրական շարժման սկիզբը» գրքում:

Խոսելով այն մասին, թե ինչպես Միրզա Հոսեյն խանը Ռեյտերին տրված կոնցեսիայով նախատեսում էր նաև երկաթգծի կառուցումը Ռաշտից Թեհրան և Թեհրանից Պարսից ծոց, որը Կասպից ծովը կմիացներ Պարսից ծոցին, նշում է, որ դա բխում էր Իրանի տնտեսական զարգացման և բարգավաճման նպատակից: Հեղինակը պարզորոշ ասում է, որ նման ընդարձակ և բովանդակալից կոնցեսիայի հանձնումը Անգլիային «մեկ ընդհանուր և հիմնական գաղափարի» արգասիք էր, այսինքն նոր աշխարհի կողմից շտապ և վճռական միջոցառումների կիրառումը՝ Իրանի հետամնացությունը վերացնելու ուղղությամբ»[18]:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ պարսիկ հեղինակները փորձում են արդարացնել Իրանի ժամանակի իշխող շրջանների ազգադավ քաղաքականությունը, ձգտելով ներկայացնել այն, որպես «ազգային բարձր շահերից» բխող քաղաքականություն:

Սակայն պարսիկ մի շարք այլ հեղինակներ ըստ արժանվույն մերկացրել են իմպերիալիստական տերությունների

---

[17] محمود فرهاد معتمد، تاریخ روابط سیاسی ایران و عثمانی یا جلد دوم سپهسالار اعظم تهران—۱۹۵۰ صفحه ۱۳۹

[18] فریدون آدمیت، فکر آزادی و مقدمه نهضت مشروطیت، صفحه ۸۶

գաղութարարական քաղաքականությունը և ցույց տվել նրա բացասական հետևանքներն Իրանի համար։

Այսպես, Աբուլֆազլ Ղասեմին «Ընտանիքների իշխանությունն Իրանում» գրքի երրորդ մասում այն միտքն է հայտնում, որ Միրզա Հոսեյն խանի, Ղավամ էդ Դոլեի և ժամանակի այլ վեզիրների ամենամեծ դավաճանություններից մեկն անգլիացիների հետ Ռեյտերի կոնցեսիա անունով պայմանագրի կնքումն էր։ «Այս պայմանագիրը կարելի է անվանել Իրանի ստրկության փաստաթուղթ և ամբողջ Իրանի վաճառքի կալվածագիր», գրում է նա։

Ղասեմին շեշտում է, որ պայմանագրի հոդվածների վրա մի պարզ հայացք գցելով, կարելի է համոզվել նրա հեղինակների դավաճանության մեջ, և այն բանում, թե ինչպիսի շտապողականությամբ էին նրանք իրենց երկիրը վաճառում։ «Սակայն չպետք է կարծել,—զգուշացնում է նա,—որ այս պայմանագիրը անգլիացիներին տրվեց ձրի և անվճար։ Ռեյտերը այդ կոնցեսիան ստացել էր իրանական վեզիրներին կաշառելով»[19]։

Այս հարցին անդրադարձել է նաև Էբրահիմ Թեյմուրին։ «Երբ Միրզա Հոսեյն խան Սեփահսալարը դարձավ մեծ վեզիր,—գրում է նա,—Ռեյտեր անունով մի անգլիացու այնպիսի մի կոնցեսիա տվեց, որն Իրանը դարձնում էր Անգլիայի գաղութ»[20]։ Թեյմուրին այդ կոնցեսիան համարում է եվրոպացիների, հատկապես Անգլիայի և ցարական Ռուսաստանի կողմից Իրանի կենսական հարստությունների շահագործման սկիզբ, որից հետո, իրենց տնտեսական և քաղաքական ազդեցությունն Իրանում տարածելու համար, նրանք ձեռնամուխ եղան մի շարք այլ կոնցեսիաների ձեռքբերման։ «Շատ դեպքերում,—գրում է Թեյմուրին,—երբ այդ երկրների կապիտալիստներն ու ընկերությունների ներկայացուցիչները որևէ կոնցեսիա ձեռք բերելու համար Իրան էին գալիս, և ինչ-որ պատճառներով իրանական կառավարությունը նրանց պահանջները չէր բավարարում, կամ նրանց պայմանների

---

19 ابوالفضل قاسمی، حکومت خانواده‌ها در ایران ۳ خانواده قوام‌السلطنه تهران ۱۹۵۰ صفحه ۱۳۴–۵

20 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۸۷

հետ չէր համաձայնվում, ապա դա համարվում էր անգլիական կառավարությանը հասցված վիրավորանք, և անգլիական դեսպանությունը հանդես էր գալիս խիստ բողոքով, քանի որ այդ դեպքում ինքը ևս նոր կոնցեսիաներ պահանջել չէր կարող»[21]:

Թեյմուրին նշում է, որ օտարերկրացիներին տրված կոնցեսիաներում երբեք Իրանի շահերը և պահանջները հաշվի չէին առնվում, քանի որ կոնցեսիա տվողները միայն մտահոգված էին նրա կանխավճարով և հետագա եկամուտներով, իսկ կոնցեսիաներ ստացողները՝ Իրանից օգտվելու և իրենց քաղաքական նպատակներն իրականացնելու հարցով: Հեղինակը հիշեցնում է նաև, որ միայն բռնի ուժով և սպառնալիքով չէ, որ կոնցեսիաներ են տրվել օտարերկրացիներին և, որ չի կարելի նրանց հեղինակների այդ քայլը համարել հարկադրված: «Հաճախ գավաճան և խավարամիտ գործիչներին ոսկի լիրա տալու միջոցով էր, որ երկարատև ժամկետներով կոնցեսիաներ էին ստանում», գրում է նա[22]:

Թեյմուրին այն կարծիքին է, որ Ռեյտերի կոնցեսիան, որն Իրանն ամբողջովին դնում էր Անգլիայի տրամադրության տակ և վերածում նրա գաղութի, նասր էդ Դին շահի և Միրզա Հոսեյն խան Սեփահսալարի մեծագույն և անփոխհատուցելի սխալներից էր[23]: «Դա կատարվեց նրա (Սեփահսալարի—Հ. Ե.) վեզիրության սկզբնական շրջանում,—գրում է Թեյմուրին,—և ինքն էլ միշտ խոստովանում էր այդ սխալը»[24]: «Իրականում,—գրում է Թեյմուրին,—Սեփահսալարի այս արարքը ճանապարհ բացեց օտարերկրացիների համար, և նրանք հետագայում կարողացան մեծ թվով կոնցեսիաներ ձեռք բերել և ստրկության շղթան գցել իրանական ժողովրդի վիզը»[25]: Որպես օրինակ նա նշում է, որ Ռեյտերի կոնցեսիայից հետո ռուսները պահանջեցին երկաթգծի, անգլիացիները՝ բանկի և վերջապես, կրկին ռուսները՝ բանկի և այլ, և այլ կոնցեսիաներ:

---

21 Նույն տեղում, էջ 88:

22 Նույն տեղում, էջ 89:

23 Նույն տեղում, էջ 97:

24 Նույն տեղում, էջ 39:

25 Նույն տեղում:

Անդրադառնալով անգլիացիների և ռուսների հետ Սեփահսալարի փոխհարաբերություններին, Թեյմուրին գրում է. «Դժբախտաբար Սեփահսալարն օտարերկրացիների հետ ունեցած այս մերձեցումից և բարեկամությունից ոչ միայն չկարողացավ որևէ օգուտ քաղել Իրանի համար, այլև հատկապես անգլիացիների օգնությամբ նրանց ազդեցությունը տարածեց երկրում»[26]:

Թեյմուրին վկայում է, որ անգլիացիները Ռեյտերի կոնցեսիան ստանալու համար Սեփահսալարին հիսուն հազար ստերլինգ կաշառք էին տվել, և այնուհետև ավելացնում, թե ոմանք ձևացնում են, որ իբր Սեփահսալարի մտադրությունը Իրանի զարգացումն ուվսեմացումն է եղել և կարծել է, թե անգլիացիներն Իրանը կշենացնեն և ժողովրդի երջանկությունը կապահովեն[27]:

Սեփահսալարը շուտով զգում է, որ իր ճարպկությամբ հանդերձ խաբվել է անգլիացիներից: Հենց այդ ժամանակ էլ Անգլիայի ու ցարական Ռուսաստանի միջև ստորագրվում է Ասիայում երկու պետությունների ազդեցության շրջանները որոշող մի պայմանագիր, որը հայտնի է Գորչակով-Գրանվիլի պայմանագիր անունով: Այդ հանգամանքից հուսահատված Սեփահսալարը գանգատվում է անգլիացիներին, բայց հասկանալի է, որ վերջիններս այլևս իրենց բարեկամի խոսքերին ոչ մի նշանակություն չեն տալիս[28]:

Թեյմուրին բերում է Լորդ Քերզոնի վկայությունն այն մասին, որ երբ կոնցեսիայի լուրը հրապարակվեց եվրոպական մամուլում, բոլորը զարմացան: Ոչ ոք չէր պատկերացնում, որ կարելի է այդպիսի պայմաններով կոնցեսիա տալ օտարերկրացիներին, կոնցեսիա, որն Իրանն ամբողջովին հանձնում էր անգլիացիներին և նրանք իրավունք էին ձեռք բերում յոթանասուն տարի շարունակ երկրի ամբողջ կենսական աղբյուրները իրենց տիրապետության տակ գցել և այն վերածել գաղութի: «Գաղութ, որը ձեռք է բերվում առանց կռվի և արյունահեղության, առանց տանջանքի և միայն Ի-

---

[26] Նույն տեղում, էջ 50:

[27] Նույն տեղում, էջ 52:

[28] Նույն տեղում:

բանի իշխող շրջաններին տրված մի քանի լիրա կաշառքով»—գրում է Թեյմուրին[29]:

Ռեյտերի կոնցեսիան, իհարկե, չիրականացավ, քանի որ պայմանագրով նախատեսված 15 ամսվա ընթացքում նա չկարողացավ աշխատանքները կազմակերպել, կոնցեսիան չեղյալ համարվեց և բանկում նրա կողմից դրված 40,000 ստերլինգն անցավ իրանական կառավարությանը: Սակայն, ինչպես միանգամայն ճիշտ են նկատել իրանցի պատմաբանները, չնայած Ռեյտերի կոնցեսիան բեկանվեց, բայց նա պատճառ դարձավ, որ հետագայում բազմաթիվ կոնցեսիաներ տրվեին Անգլիային և ցարական Ռուսաստանին, որոնք մեծ շարիքներ բերեցին Իրանին: Ինչպես նշում է Թեյմուրին, այդ կոնցեսիաներն իրենց սկզբնավորումն ստացան հենց Ռեյտերի կոնցեսիայից[30]:

Ըստ Թեյմուրիի, երբ Նասր էդ Դին շահը Եվրոպայում էր, երկրի ներսում և արտասահմանում տեղի ունեցան որոշ իրադարձություններ, որոնք շահին և մեծ վեզիրին համոզեցին, որ Ռեյտերին կոնցեսիա տալը սխալ է եղել, և որ նրանք վերջապես որոշեցին այն չեղյալ հայտարարել: Նրանք այդ իրադարձություններից են համարում, նախ և առաջ, Ռուսաստանի խիստ հակառակությունը և, այնուհետև, որոշ ղեկավարների և հոգևորականության դիմադրությունը[31]:

Պետք է ասել, որ այս պնդումն անհիմն է և ոչ մի այլ աղբյուրով չի հաստատվում: Նասր էդ Դին շահից և նրա մեծ վեզիրներից որևէ գրավոր վկայություն չի մնացել, որն ապացուցեր, որ նրանք գիտակցել էին իրենց սխալը և զղջացել: Ընդհակառակը, հետագայում հենց Նասր էդ Դին շահի կողմից տրված բազմաթիվ կոնցեսիաները, վերցրած պարտքերը և Իրանում օտարերկրացիների դիրքերի ամրապնդմանն ուղղված քայլերը գալիս են հաստատելու, որ իրանական իշխող շրջանները շարունակում էին նույն ազգադավ քաղաքականությունը: Ինչ վերաբերում է Ռեյտերի կոնցեսիայի բեկանմանը, ապա դա նույնպես չի կարելի վերագրել շահին

---

29 Նույն տեղում, էջ 118:

30 Նույն տեղում, էջ 97:

31 Նույն տեղում, էջ 119:

և նրա մեծ վեզիրին։ Ինքը Ռեյտերն էր, որ ի վիճակի չեղավ այդ էտապում իրականացնել կոնցեսիան։

Հետաքրքիր է նշել, որ քննելով ցարական Ռուսաստանի դերն այդ հարցում, որոշ անգլիացի հեղինակներ ջանացել են Ռեյտերի կոնցեսիայի բեկանումը վերագրել ռուսների հակառակությանը։ Սակայն պարսիկ հեղինակները դրա հետ համաձայն չեն և գտնում են, որ դա, իհարկե, ինչ-որ նշանակություն ունեցել է, սակայն անգլիացիներն ամբողջ XIX դարի ընթացքում երբևէ մտադրություն չեն ունեցել ներթափանցել Իրանի հյուսիսային շրջանները, էլ չասենք՝ այնտեղ երկաթգծեր կառուցել կամ նրա ստորերկրյա հարստությունները շահագործել։ Նրանք իրենց շահերը տեսնում էին երկրի հարավային մասերում, Պարսից ծոցի շրջանում, Խուզեստանից սկսած մինչև Սիստան և Խորասան, քանի որ շատ լավ գիտակցում էին ցարական Ռուսաստանի հետաքրքրության ոլորտը, հյուսիսային շրջանները ներթափանցելու վտանգները։ Այդ ժամանակ էլ անգլիական կառավարությունն այն կարծիքին էր, որ Աֆղանստանի սահմանները չթափանցելու վերաբերյալ ռուսների հետ կայացրած համաձայնությունը Անգլիայի շահերի տեսակետից ավելի կարևոր է, քան Ռեյտերի կոնցեսիան և Իրանին անմիջականորեն տիրապետելը[32]։

Միանգամայն հասկանալի է, որ Ռեյտերի կոնցեսիայի ստորագրումը մեծ դժգոհություն առաջացրեց իրանական հասարակայնության լայն շրջաններում։ Էմայիլ Ռայինը գրում է. «Ընայած շահը և մեծ վեզիրն, իրականում, ամբողջ Իրանը Ռեյտերին տրամադրող այս կոնցեսիան մեծ բավականությամբ հանձնեցին կոնցեսիոներին, բայց հենց որ նրա լուրը Իրան հասավ..., իրանական ժողովրդի մեծամասնությունն սկսեց դիմադրություն ցույց տալ՝ «ամբողջ Իրանն անգլիացիներին հանձնելուն»[33]։ «Երբ նասր էդ Դին շահը դեռևս Եվրոպայում էր գտնվում,— գրում է Թեյմուրին,— երկրի մի խումբ ղեկավար գործիչներ և հոգևորականներ, առիթը հարմար գտնելով, Ռեյտերի կոնցեսիան դրոշ դարձնելով,

---

[32] محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد سوم صفحه ۷۹۱–۷۸۹

[33] اسماعیل رائین، میرزا ملکمخان، تهران ۱۳۵۰، صفحه ۳۴–۳۲

ձգտեցին Միրզա Հոսեյն խան Սեփահսալարին պաշտոնից հեռացնել»[34]:

Փաստերը ցույց են տալիս, որ Նասր էդ Դին շահը տեսնելով երկրում ծավալված դժգոհությունը, Եվրոպայից վերադառնալիս, գնում է Ռաշտում Սեփահսալարին պաշտոնանկ է անում և, այդպիսով, կոնցեսիայի հանցանքը գցում նրա վրա:

Աղբյուրները վկայում են, որ Ռեյտերի կոնցեսիայի բեկանումից հետո է, որ Սեփահսալարը հակվում է դեպի ռուսները: Չնայած հետագայում նա նորից անգլիացիների հետ մերձենալու որոշ փորձեր է անում, սակայն «այլևս ոչ Սեփահսալարն անգլիացիներից որևէ հույս ուներ, և ոչ էլ վերջիններս նրա նկատմամբ վստահություն»:

Ցարական Ռուսաստանը դեմ էր Սեփահսալարին միայն այն պատճառով, որ նա սերտ հարաբերությունների մեջ էր անգլիացիների հետ և նրանց էր հանձնել Ռեյտերի կոնցեսիան: Հետագայում ցարական դեսպանությունը Սեփահսալարի ամուր հենարանն էր, և նրան օգտագործում էր իր քաղաքականությունն իրականացնելու նպատակով:

Անհրաժեշտ է նշել, որ կոնցեսիայի բեկանումից հետո Ռեյտերը ճամփորդեց Ռուսաստան: Արտաքուստ, Ռեյտերի նպատակն այս ճամփորդությունից այն էր, որ կոնցեսիայի մի մասը վաճառի ռուս կապիտալիստներին և նրանց այդ գործին մասնակից դարձնելով, ռուսական կառավարության համաձայնությունը ձեռք բերի՝ կոնցեսիան Իրանում իրագործելու համար:

Ռեյտերի և իրանական կառավարության վեճը տևեց մոտ տասնյոթ տարի:

Աղբյուրները վկայում են, որ երբ ուրիշ պետությունների քաղաքացիները Իրանում որևէ կոնցեսիա ձեռք բերելու համար քայլերի էին դիմում, անգլիական կառավարությունն այդ քայլերը չեզոքացնելու համար Ռեյտերի պահանջներն ու բողոքները զենք դարձնելով՝ պաշտոնական բողոքներ էր ներկայացնում Իրանի կառավարությանը[35]:

---

34 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۱۲۳

35 Նույն տեղում, էջ 146:

* *

Իմպերիալիստական տերությունները ձգտում էին իրենց ձեռքը վերցնել նաև Իրանի ֆինանսները։ XIX դարի 80-ական թվականներին Իրանում դեռևս ժամանակակից ֆինանսական սիստեմ գոյություն չուներ։ Իրանում բանկ հիմնադրելու առաջին փորձը կատարվեց 1888 թ., երբ Լոնդոնում կազմակերպվեց այսպես կոչված «Արևելքի նոր բանկը»։ Այդ բանկի համար ոչ մի կոնցեսիա չէր տրվել, առկա էր միայն շահի համաձայնությունը։ Բանկը իր գործունեությունը պետք է ծավալեր Ասիայի հարավային շրջաններում, այդ թվում նաև Իրանում։ Էմայիլ Ռայինը գրում է. «Բանկի անգլիացի կառավարիչներն ուզում էին արագ կերպով իրենց քսակները լցնել ոսկով և հեռանալ Իրանից։ Կարճ ժամանակում նրանք ջանացին մայրաքաղաքի առևտրի մոնոպոլիան իրենց ձեռքը վերցնել։ Նրանք հույս ունեին Թեհրանի անգլիական դեսպանության, պալատում և իրանական պետական մարմիններում ունեցած իրենց գործակալների և ներկայացուցիչների օգնությամբ կարճ ժամանակում իրականացնել իրենց այդ մտադրությունը։ Սակայն սարաֆների և առևտրականների կատաղի պայքարի հետևանքով այդ բանկը շուտով փակվեց»[36]։

Իրանի ֆինանսների մեջ ներթափանցելու և երկիրը տնտեսական կախման մեջ գցելու ուղղությամբ, կարևորագույն քայլերից էր անգլիական բանկի՝ «Բանքե շահնշահիի» հիմնադրումը։

Ռեյտերի 1872 թ. կոնցեսիայի բեկանումից հետո, 1889 թ. նրա ժառանգներին, որպես փոխհատուցում, 60 տարի ժամանակով բանկ հիմնադրելու կոնցեսիա տրվեց։ Բանկի իրավունքների մեջ էր մտնում նաև թղթադրամների բացթողումը։ Այդ թղթադրամները պետք է պարտադիր կերպով շրջանառության մեջ մտնեին ամբողջ Իրանում[37]։ Բանկի սկզբնական կապիտալը չորս միլիոն ֆունտ ստեռլինգ էր։

---

36 اسماعیل رائین، میرزا ملکم‌خان، تهران ۱۳۵۰ صفحه ۱۷

37 محمدعلی جمال‌زاده، گنج شایگان یا اوضاع اقتصادی ایران، برلن ۱۳۳۵ صفحه ۱۰۹

Բանկի իրավունքների մեջ էր մտնում նաև ստորերկրյա հարստությունների շահագործումը: Հետաքրքրական է, որ բանկը կարող է անհրաժեշտության դեպքում այդ իրավունքը վաճառել[38]:

«Շահնշահի բանկը» արտաքուստ համարվում էր իրանական բանկ, բայց փաստորեն այն ղեկավարվում էր անգլիացիների կողմից և իրականացնում էր անգլիական իմպերիալիստների տնտեսական քաղաքականությունն Իրանում: Բանկի վարչությունը մշտապես գտնվում էր Անգլիայում և այն ենթակա չէր իրանական օրենքներին:

Ստացած բոլոր արտոնությունների դիմաց բանկը պարտավոր էր իրանական կառավարությանը վճարել մաքուր եկամտի ընդամենը վեց տոկոսը:

Շուտով բանկն իր բաժանմունքները հիմնեց Իրանի բոլոր ծայրամասերում և երկրի դրամական համարյա ամբողջ շրջանառության գործը վերցրեց իր ձեռքը: Տարբեր նահանգներում պետությանը տրվելիք հարկերը կենտրոն էր փոխանցվում բանկի միջոցով: Բանկը ֆինանսական գործարքներ էր կատարում ոչ միայն պետական մարմինների և հիմնարկների, այլև մասնավոր անձանց հետ: Նա պարտքեր էր տալիս առանձին մարդկանց և ի պահ վերցնում նրանց գումարները:

Բանկն ամբողջ երկրով մեկ ընդարձակ գործունեություն ծավալեց և վճռական դեր խաղաց Իրանում անգլիական իմպերիալիզմի գերիշխանության հաստատման գործում:

Ղաջարական դինաստիայի իշխանության ժամանակ մեծ պաշտոններ զբաղեցրած և մի շարք գործերի հեղինակ էթեմադ էս Սալթանեն հետաքրքիր մանրամասնություններ է հաղորդում անգլիական բանկի կոնցեսիայի շնորհման պատմության մասին: Նա վկայում է, որ անգլիական խոշոր բանկատեր Ռեյտերը բանկի կոնցեսիոն իրավունքը ստանալու համար իրանական ղեկավարներին, այդ թվում և իրեն՝ էթեմադ էս Սալթանեին, մեծ գումարների կաշառքներ տվեց: Ռեյտերի հետ ունեցած հարաբերությունները պարզելու համար, շահի հրամանով հրավիրվում է հատուկ խորհրդակցություն, որին մասնակցում էին Նայեբ էս Սալթանե Ազոդ

---

[38] Նույն տեղում, էջ 111:

օլ Մուլքը, Սահեբ Դիվան Մոշիր էդ Դուլեն, Ամին էդ Դուլեն, Մոխբեր էդ Դուլեն, Ղավամ էդ Դուլեն, Ամին Հոզուրը, էղբալ օլ Մուլքը, Հաքեմ օլ Մամալեքը և ինքը՝ էթեմադ էս Սալթանեն: Բացման խոսք է ասում ինքը՝ Նասր էդ Դին շահը: Նշելով, որ խորհրդակցությունը հրավիրել է Ռեյտերի կոնցեսիայի հարցը քննարկելու նպատակով, Շահն ասում է. «Այնպես արեք, որ տասը տարի հետո Իրանի պառավ կանայք ինձ՝ Իրանի շահիս, չանիծեն և ծերունիները չպախարակեն»: Նիստի մասնակիցներին շահն, այնուհետև, տեղեկացնում է, որ Ռեյտերի ներկայացրած փաստաթղթերի համաձայն Իրանի կառավարությունը նրան մոտ մեկ քրուր (տասը հազար—Հ. Ե.) թուման փոխհատուցում պետք է տա, որպեսզի նախկին կոնցեսիայի փաստաթղթերը կարողանա ետ վերցնել և այն բեկանել: Նա հայտնում է, որ Ռեյտերն առաջարկում է նաև մեկ այլ՝ Իրանի համար օգտակար և նպատակահարմար ելք, այն է, թույլ տալ բանկ ստեղծել Իրանում, որի դեպքում նա պատրաստ է ոչ միայն առանց փոխհատուցման չեղյալ հայտարարել նախկին կոնցեսիան, այլև նույնիսկ համաձայն է Իրանին լրացուցիչ գումար տալ[39]:

Էթեմադ էս Սալթանեն վկայում է, որ այդ կոնցեսիան ստանալու համար հիսուն հազար լիրա կաշառք տրվեց մեծ վեզիր Միրզա Հոսեյն խանին, քսան հազարական լիրա՝ Միրզա Մալքոմ խանին, Հաջ Մոհսեն խան Մոյին օլ Մուլքին, Մոշիր էդ Դուլեին և այլն: Կաշառքների ընդհանուր գումարը կազմում էր մոտ երկուհարյուր հազար լիրա, իսկ այլ ծախսերն էլ՝ հարյուր հազար լիրա[40]:

Իսկ ինչպես էին վերաբերվում այդ հարցին ցարական իշխանությունները:

Անդրադառնալով Իրանում անգլիական բանկ հիմնելու հարցի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշմանը, էթեմադ էս Սալթանեն գրում է, որ ռուսական դեսպան Դոլգոռուկին իր կառավարությունից խիստ ցուցումներ ստանալով, հանդիպում է իրեն և պահանջում, որ անգլիական բանկի պայմա-

---

[39] اسرار انحطاط ایران یا خواب مرحوم اعتمادالسلطنه مشهد صفحه ٦٦—٦٨

[40] Նույն տեղում, էջ 75:

նագիրը բեկանվի, այլապես ռուսական բանակը կներխուժի Իրան։ Նա ավելացնում է նաև, որ ցարական կառավարությունը ոչ մի դեպքում թույլ չի տա շահի ճամփորդությունը դեպի Լոնդոն ռուսական տերիտորիայի վրայով[41]։

Էթեմադ էս Սալթանեն այցելում է ռուսական դեսպանատուն և Դոլգոռուկիին հայտնում, որ անգլիական բանկի կոնցեսիայի դիմաց, որը, իբր, առանձնապես չի ուժեղացնում Անգլիայի ազդեցությունը, պատրաստ է այլ կոնցեսիաներ տալ ցարական Ռուսաստանին, որպեսզի նա ամրապնդի իր սասանված դիրքերն Իրանում։ Մի քանի օր հետո Դոլգոռուկին գալիս է Էթեմադ էս Սալթանեի մոտ և հայտնում, որ ցարական Ռուսաստանը պահանջում է Էնզելիից Թեհրան տանող ճանապարհի կառուցման կոնցեսիան, այդ ճանապարհով հետագայում երկաթգիծ կառուցելու պայմանով[42]։

Անգլիական բանկի հիմնադրման, նրա խաղացած դերի և կործանիչ հետևանքների հարցը մանրամասն քննարկել է Էբրահիմ Թեյմուրին։ Նա անգլիական «Շահնշահի» կոչվող բանկի ամբողջ գործունեությունը գնահատում է այսպես. «Շահնշահի բանկը անգլիական այն հիմնարկներից մեկն էր, որը մոտավորապես կես դար տնտեսական ստրկության շղթա գցեց Իրանի ժողովրդի ոտքերին»[43]։

Ներկայացնելով կոնցեսիայի պատմությունը, հեղինակը գրում է, որ որպես նրա տրամադրման նախապայման, Նասր էդ Դին շահն Իրանում անգլիական դեսպան Դորթմունդ Վոլֆից և Ռեյտերից պահանջում է հարյուր հազար թումանի (քառասուն հազար անգլիական լիրա) պարտք՝ շահի Եվրոպա նախատեսվող ճամբորդության ծախսերը հոգալու համար։ Այսպիսով, Ռեյտերն Իրանում վաթսուն տարի ժամանակով, թղթադրամների բացթողման մենաշնորհ ունեցող, բանկ հիմնելու կոնցեսիա ստացավ։ «Այս բանկը,—գրում է Թեյմուրին,—վաթսուն տարիների ընթացքում և հատկապես այն քառասուն տարիներին, երբ թղթադրամների բացթողման մենաշնորհ իրավունքն ուներ, էականապես միջամտում էր Իրանի հասարակական, տնտեսա-

---

41 Նույն տեղում, էջ 77։

42 Նույն տեղում, էջ 78։

43 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۱۷۸

կան և քաղաքական բոլոր բնագավառներում, ցանկության պահին, հօգուտ Անգլիայի քաղաքականության, դժվարություններ էր ստեղծում իրանական կառավարության համար և տեղի-անտեղի, սննդամթերքի, ածխի և առաջնահերթ ու անհրաժեշտ այլ ապրանքների զնումով արհեստական սով էր ստեղծում: «Շահնշահի բանկը» պալատի և կառավարության ազդեցիկ անձանց, հոգևորականներին և այլոց տարբեր անվանումների տակ կաշառքներ էր տալիս և նրանց գնում էր: Երբ նրանից պարտք էին ուզում, դյուրին պայմաններով երկարաժամկետ պարտքեր էր տալիս և, այդպիսով, օգտագործում էր իր ազդեցությունը պետական ապարատում ու անօրինական միջամտություններ կատարում: Իրականում այս բանկն անգլիական դեսպանության գանձարանն էր և մշտապես վայելում էր անգլիական կառավարության հովանավորությունը»[44]:

Ելնելով կոնցեսիոն իրավունքի պայմաններից, «Շահնշահի բանկը» որոշ ժամանակ անց Իրանի ստորերկրյա հանքանյութերի արդյունահանման և օգտագործման իրավունքը 150 հազար ստերլինգի դիմաց վաճառում է անգլիական մի ընկերության, որը կոչվում էր «Իրանի հանքերի փայատեր բանկ», և որի բաժնետերերի մեջ կային նաև ռուս և բելգիացի կապիտալիստներ: Բանկն անմիջապես գործունեություն է ծավալում. նա մասնագետներ և տեխնիկա է ուղարկում հարավային շրջանները, հատկապես Քերմանի նահանգ՝ նախնական հետազոտությունների համար: Սակայն այդ ժամանակ ոչջ երկրով մեկ պայքար էր գնում ծխախոտի կոնցեսիայի դեմ: Նման պայմաններում, բնականաբար, անգլիացի մասնագետները հանդիպեցին տարբեր տեսակի դժվարությունների, և, վերջիվերջո, նրանց գործունեությունը խափանվեց[45]:

Հասկանալի է, որ անգլո-ռուսական ընդհանուր մրցակցությունն արտահայտվում էր նաև Իրանի ֆինանսների բնագավառում, և ցարական Ռուսաստանն այդտեղ ևս ջանում էր ետ չմնալ իր ախոյանից: Անդրադառնալով այդ հարցին, Ալի Ասղար Շամիմը նշում է. «Ցարական կառավարությունը

---

[44] Նույն տեղում, էջ 209:

[45] Նույն տեղում, էջ 211—213:

տնտեսական և քաղաքական կոնցեսիաներ ձեռք բերելու գործում Անգլիայի չափ հաջողություններ չուներ։ Համենայն դեպս, անգլիական կառավարության կամ նրա հպատակներին տրված յուրաքանչյուր արտոնության դիմաց ռուսահպատակները նույնպես ջանքեր էին գործադրում նման արտոնություններ ձեռք բերելու համար»[46]։

Իրանի ֆինանսներում Ռուսաստանի ազդեցության ուժեղացմանն ուղղված կարևոր միջոցառումներից էր ռուսական բանկի հիմնադրումը։ 1890 թ. ապրիլի 21-ին ռուս հայտնի ֆինանսիստ Պոլյակովը իրանական կառավարության հետ մի կոնցեսիոն պայմանագիր կնքեց, որը նրան իրավունք էր տալիս հիմնադրել մի խոշոր բանկ՝ «Պարսկաստանի հաշվավարկատու բանկ» անունով։ Կոնցեսիայի տևողությունը սահմանվում էր 75 տարի։

Աղբյուրները որոշ մանրամասնություններ են հաղորդում Պոլյակովին տրված կոնցեսիայի մասին։

Թեյմուրին գրում է, որ էմին էս Սոլթանն անգլիական իմպերիալիստներին մի շարք կոնցեսիաներ տալուց հետո, մի կողմից Ռուսաստանին հանգստացնելու և մյուս կողմից երկու տերությունների միջև մրցակցությունը սրելու նպատակով հանդիպում է ցարական դեսպան Դոլգոռուկիին և խոստանում նման կոնցեսիաներ, հատկապես բանկի հիմնադրման կոնցեսիա տալ նաև ցարական Ռուսաստանին։ Որոշ բանակցություններից հետո նրանց միջև այդ առթիվ համաձայնություն է կայանում, սակայն պայմանով, որ Պոլյակովի գործողությունները չհակասեն անգլիական բանկի կոնցեսիայի պայմաններին[47]։

Այսպիսով, ցարական կառավարությունն Իրանում ստեղծում է մի բանկ, որը ոչ միայն պետք է հակադրվեր անգլիական բանկին, այլև պետք է ջանար ընդարձակել երկրում Ռուսաստանի տնտեսական և քաղաքական ազդեցությունը։

Ռուսական այս բանկը փաստորեն ցարական բանկի մի

---

46 علی اصغر شمیم، ایران در دوره سلطنت قاجار، تهران ۱۳۴۲ صفحه ۱۹۷

47 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۳۴۷

մասնաճյուղն էր։ Այն իր գրասենյակներն ուներ Իրանի տարբեր քաղաքներում և իր գործունեությամբ մեծապես նպաստում էր Ռուսաստանի տնտեսական ներթափանցմանն Իրան։ Բանկը ոչ միայն խոշոր գումարներ էր պարտք տալիս Իրանի կառավարությանը, այլև միջնորդում էր Իրանից տարբեր կոնցեսիաներ ստանալու գործում։ Ալի Ասղար Շամիմը գրում է, որ հաշվավարկատու ռուսական բանկն «արտաքուստ մի առևտրական հիմնարկ էր, բայց, իրականում, Իրանում ցարական Ռուսաստանի տնտեսական և քաղաքական ազդեցության հաստատման և ընդարձակման միջոց էր»[48]։

Հասկանալի է, որ ցարական իշխանությունները այս բանկն օգտագործում էին ոչ միայն իրենց տնտեսական և քաղաքական ազդեցությունն Իրանում ուժեղացնելու համար, այլ նաև իրենց հակառակորդ ու մրցակից Անգլիայի դեմ պայքարելու և Իրանում նրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով։

Էբրահիմ Թեյմուրին գրում է, որ ռուսական բանկը, անգլիական բանկի «միակ մրցակիցն» էր, և որ նրանց մրցակցությունը, երբեմն, իրանական ժողովրդի համար վտանգավոր հետևանքներ էր ունենում[49]։ Նա նշում է նաև, որ մրցակցելով, այդ երկու բանկերը հաճախ չեզոքացնում էին միմյանց գործունեությունը։ Դեռ ավելին, որոշ աղբյուրներ բացահայտ նշում են, որ ռուսական բանկը առևտուր չէր անում, օգուտի հետևից չէր ընկած, որ ռուսական կառավարության հատուկ գործակատարն էր և ցարական Ռուսաստանի քաղաքականությունն էր առաջ մղում։ Նա՝ իրանցի բոլոր առևտրականներին իր կողմն էր գրավել[50]։

Սակայն հասկանալի է, որ այդպիսի մրցակցության առաջացումը բխում էր նաև իրանական շրջանների որոշ հեռատես ներկայացուցիչների քաղաքականությունից, որոնք, հակադրվելով երկու խոշոր հարևաններին, հույսեր ունեին ստեղծված վիճակը փրկել։

---

48 علی اصغر شمیم، ایران در دوره سلطنت قاجار، تهران ۱۳۴۲، صفحه ۱۹۸

49 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۲۰۹

50 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد ششم صفحه ۱۶۵۴

Մալեք զադեն խոսում է ռուսական բանկի քաղաքական ազդեցության և այն դերի մասին, որ նա խաղում էր Իրանի նեխած վերնախավին կաշառելու և կախման մեջ գցելու տեսակետից: Նա գրում է. «Մի քանի տարի իսկ չանցավ, որ Իրանի ղեկավարների, արքայազների, պալատականների, հոգևորականների և առևտրականների իննսուն տոկոսը ռուսական վարկատու բանկին գումարներ պարտք մնացին և հզոր ու ագրեսիվ Հարևանի քաղաքական տիրապետության և ազդեցության տակ ընկան: ...Ռուսները մի քանի միլիոն ռուբլով գնեցին իշխող դասակարգերին ... և, եթե Իրանի ապագա ղեկավարները ցանկանան իրազեկ լինել այս ճըշմարտությանը, կարող են դիմել Հաշվավարկատու բանկի մատյաններին, որոնք ռուսական հեղափոխությունից հետո հանձնվեցին Իրանին»[51]:

Ռուսական բանկի քաղաքականությանը նույնպիսի գնահատական է տալիս նաև Մոհամադ Ալի Ջամալ զադեն: «Այս բանկի հիմնադրման պատճառը,—գրում է նա,—պետք է համարել ռուսական կառավարության՝ Իրանում իր ազդեցությունն ընդարձակելու մտադրությունը: Սկզբում բանկի գործունեությունը սահմանափակվում էր անգլիական «Շահընշահի բանկի» հետ մրցակցությամբ և անգլիական ազդեցության թուլացմանն ուղղված պայքարով: Իսկ այնուհետև ռուսական ազդեցությունն ուժեղացնելու նպատակով նաև բանկը մեծ ջանքեր թափեց, հսկայական գումարներ պարտք տվեց պալատականներին, ազնվականներին, ազդեցիկ անձանց և հոգևորականներին: Հաճախ պարտքի գումարը մի քանի անգամ գերազանցում էր պաշտոնյայի վճարելիք հարկերի գումարից: Այդ հարցում բանկն այնպիսի շափազանցությունների մեջ ընկավ, որ երբ 1322 թ. (1904—1905 թթ.) Ռուսաստանի ֆինանսների մինիստրությունը բանկի վարկերը դադարեցրեց, պարզվեց, որ 30 միլիոն ռուբլի նախնական կապիտալից գանձարանում մնացել է միայն երեք միլիոն ռուբլի, իսկ մնացածը պարտք է տրվել ազնվականներին, առևտրականներին և հոգևորականությանը:

---

[51] مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران ۱۳۲۸ صفحه ۱۶۴

Միայն Թեհրան քաղաքում բանկի ստանալիքը 16 միլիոն ռուբլի էր»[52]:

Ինչպես տեսնում ենք, պարսիկ հեղինակները խորը կերպով վերլուծելով անգլիական և ռուսական բանկերի գործունեության երկարամյա պատմությունը, ցույց են տալիս նրանց որոշիչ դերը երկիրը կիսագաղութի վերածելու գործում:

*

* *

Պարտքերը գաղութատիրական պետությունների համար հնարավորություններ էին ստեղծում իրենց քաղաքական և տնտեսական ազդեցությունը տարածելու և Արևելքի թույլ զարգացած ու հետամնաց ժողովուրդներին ստրկական կախման մեջ պահելու համար:

Նույնը տեղի ունեցավ նաև Իրանում: Մինչև XIX դարի 70-ական թվականները Իրանը Արևելքի այն բացառիկ պետություններից էր, որ պարտք չուներ: Անհրաժեշտության դեպքում, երբ ուրիշ երկրներում, օրինակ, կառավարությունները դիմում էին ներքին կամ արտաքին պարտքերի, Իրանի շահը հարցը լուծում էր յուրովի. գանձարանը լցնելու համար նա պարզապես ժողովրդի վրա նոր հարկեր էր բարդում, չնայած դրանք առանց այն էլ ծանր էին[53]:

Սակայն սկսած 70-ական թվականներից, Իրանի կառավարությունը և անձամբ շահը երկրի քայքայված տնտեսության ու քաղաքական անարխիայի պայմաններում, իրենց ծախսերը հոգալու համար շարունակ խոշոր գումարի պարտքեր էին վերցնում օտար երկրներից, հատկապես իմպերիալիստական Անգլիայից և ցարական Ռուսաստանից:

Առաջին անգամ 1873 թվականին էր, որ Նասր էդ Դին շահը փորձեց պարտք վերցնել Անգլիայից: Նա առաջին անգամ ճանապարհորդելու էր Եվրոպա, և նախապես կարգադրել էր ճամփորդության ծախսերը հոգալու համար դիմել Ջուլիոս Ռեյտերին և երկու հարյուր հազար ստերլինգ

---

[52] Տե՛ս նույն տեղում, էջ 348:

[53] Э. Вульфсон., Персы в их прошлом и настоящем. Москва, 1909, стр. 110.

պարտք վերցնել։ Պարտքի համաձայնագիրն ստորագրվեց 1873 թվականի ապրիլի 6-ին։ Շահի այս պարտքը նրա վերադարձից հետո վճարեց մեծ վեզիր Միրզա Հոսեյն խան Սեփահսալարը։

Իրանական աղբյուրներում ճիշտ կերպով նշվում է, որ այս պարտքը, այնքանով, որքանով կապված չէր որևէ պայմանի հետ, արտակարգ նշանակություն չուներ, սակայն նախադեպ հանդիսացավ, որպեսզի հետագայում շահն իր զբոսանքների և շվայտ կյանքի ծախսերը հոգալու համար դիմի նման միջոցի։

Անգլիայից երկրորդ անգամ պարտք վերցվեց 1889 թվականի հունվարին, նորից Նասր էդ Դին շահի եվրոպական ճանապարհորդության ծախսերի համար։ Պարտք վերցվեց քառասուն հազար ստեռլինգ։

Նասր էդ Դին շահը նախապես «Շահնշահի բանկի» կոնցեսիոն պայմանագիրն ստորագրելիս, Ռեյտերից գրավոր պարտավորություն էր պահանջել քառասուն հազար ստեռլինգ պարտք տալու համար։ Ռեյտերը 1889 թվականի հունվարի 3-ին պատասխանել էր, որ եթե իրանական կառավարությունը նրան վերադարձնի այն քառասուն հազար ստեռլինգը, որը իրանական կառավարության հաշվին, որպես երաշխիք 1872 թվականի կոնցեսիայի, տրվել էր անգլիական բանկին, ապա Ռեյտերը կհամաձայնվեր այդ պարտքը տալ։

Միայն այն բանից հետո, երբ իրանական կառավարությունը թույլատրեց անգլիական բանկին քառասուն հազար ստեռլինգը վերադարձնել Ռեյտերին, վերջինս համաձայնվեց այդ գումարը տալ Նասր էդ Դին շահին[54]։

Ավելի խոշոր գումար էր կազմում 1892 թվականի մայիսին՝ ծխախոտի կոնցեսիայի բեկանման կապակցությամբ վերցրած պարտքը։

Երբ համընդհանուր դժգոհության հետևանքով այդ կոնցեսիան բեկանվեց և ընկերությունը ստիպված լուծարքեց իր ստեղծած կազմակերպությունները, երկու կողմերի միջև կայացած համաձայնությամբ, Իրանը պարտավորվեց, որ-

---

54 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۳۶۸—۳۶۷

պես վնասների փոխհատուցում ընկերությանը վճարել հինգ հարյուր հազար ստերլինգ։ Թեյմուրին գրում է, որ կառավարությունը ստիպված սկզբում դիմեց անգլիական «Շահընշահի բանկին», բայց վերջինս շատ ծանր պայմաններ առաջարկեց։ Բանկն առաջարկում էր պարտքի ժամկետը սահմանել տասնհինգ տարի, 10 տոկոսով, և, ամենակարևորը, որպես երաշխիք այդ գումարի չափով թագավորական զարդեղենները պահ տալ բանկում։ Նասր էդ Դին շահը չհամաձայնվեց այդ պայմաններին և կարգադրեց, որպեսզի Իրանի ներկայացուցիչներն անհապաղ բանակցություններ սկսեն Ռուսաստանի և Օսմանյան կառավարությունների, ինչպես նաև գերմանական, իտալական և ավստրիական բանկերի հետ։ Երբ հատկապես Ռուսաստանի հետ բանակցություններն սկսեցին հաջող ընթանալ, անգլիական կառավարությունն անմիջապես միջամտեց, և նրա համաձայնությամբ «Շահնշահի բանկը» պատրաստակամություն հայտնեց հինգ հարյուր հազար ստերլինգ պարտք տալ Իրանին՝ վեց տոկոսով և քառասուն տարի ժամկետով[55]։

Այդ պարտքի երաշխիքը պետք է լիներին հարավի մաքսային եկամուտները։ «Անհրաժեշտ է նշել,—գրում է Թեյմուրին,—որ «Շահնշահի բանկից» այս պարտքը վերցնելուց հետո, պալատի և կառավարության քաղաքականությունը թեքվել էր դեպի Ռուսաստան։ Նասր էդ Դին շահը, և հատկապես նրա վեզիր Ամին էս Սոլթանը, մտադիր էին Ռուսաստանից յոթ հարյուր հազար ստերլինգ պարտք վերցնել՝ անգլիական բանկի պարտքը վճարելու, իսկ մնացածն իրենց անիմաստ ծախսերին հատկացնելու համար։ Սակայն այդ ուղղությամբ տարվող բանակցություններն արդյունքի չհասան՝ Նասր էդ Դին շահն սպանվեց»[56]։

Պարտք վերցնելու փորձ կատարվեց նաև 1898 թվականին։

Երբ թագաժառանգ Մոզաֆար էդ Դինը հոր մահից հետո գահին նստելու համար իրեն շրջապատող մարդկանց հետ Թավրիզից Թեհրան եկավ, մեծ գումարներ ծախսվեցին։ Իսկ երբ նա մտադրվեց նաև Եվրոպա ճամփորդել, պարտք վերց-

---

55 Նույն տեղում, էջ 368։

56 Նույն տեղում, էջ 370։

նելու անհրաժեշտությունն ավելի սաստկացավ։ Թեյմուրին վկայակոչում է, որ Ամին էդ Դոլեն ցանկանում էր երկրի տարբեր բնագավառներում բարեփոխումներ անցկացնել։ Պետական եկամուտներն ավելացնելու նպատակով նա որոշում է որևէ չեզոք երկրից, ինչպես օրինակ, Բելգիայից մասնագետ խորհրդատուներ հրավիրել, իսկ ֆինանսական ճգնաժամը վերացնելու և շինարարական աշխատանքներ ծավալելու նպատակով գարձյալ որևէ չեզոք երկրից պարտք վերցնել։ Նոր մեծ վեզիր Ամին էդ Դոլեն, որը հակառակ Ամին էս Սոլթանի, անգլիական կողմնորոշում ուներ, Մոզաֆար էդ Դին շահի պնդմամբ անգլիացիների հետ բանակցությունների մեջ մտավ՝ երկու միլիոն ստերլինգ պարտք վերցնելու համար։ Այդ բանակցությունները, սակայն, որևէ արդյունք չտվին։ Անգլիացիները գտնում էին, որ իրանական կառավարության պահանջած գումարը շատ մեծ է, իսկ նրա երաշխիքը անբավարար։ Մյուս կողմից էլ, անգլիական կառավարության առաջարկած պայմաններն արտակարգ ծանր էին։ Անգլիացիների հետ Ամին էդ Դոլեի վարած բանակցությունների հետևանքն եղավ այն, որ անգլիացիները համաձայնվեցին մեկ միլիոն երկու հարյուր հիսուն հազար ստերլինգ պարտք տալ Իրանին՝ հիսուն տարի ժամկետով և հարյուրին հինգ տոկոսի պայմանով։ Դրա դիմաց նրանք պահանջեցին իրենց տրամադրել երկրի ամբողջ հարկերի և մաքսային եկամուտների հավաքման գործը։ Չնայած Մոզաֆար էդ Դին շահը պնդում էր այդ գործարքն ավարտել, սակայն Ամին էդ Դոլեն, մի կողմից՝ ծանր պայմանների և մյուս կողմից ցարական Ռուսաստանի սպառնալիքի ազդեցության տակ ձգձգում էր նրա ստորագրումը։ Վերջապես, Ամին էդ Դոլեն ստիպված եղավ 1898 թ. հունիսի 5-ին հրաժարական տալ, և գործարքը չկայացավ[57]։

Երբ մեծ վեզիրին փոխելու հարց ծագեց, անգլիացիները, զգալով, որ Իրանի քաղաքական թատերաբեմում նորից կարող է հայտնվել ռուսական կողմնորոշում ունեցող Ամին էս Սոլթանը, իրանական կառավարությանը հանձնեցին մի հուշագիր, որն, իրականում, վերջնագրի բնույթ էր կրում։

---

[57] Նույն տեղում, էջ 374։

Նոր մեծ վեզիր Ամին էս Սոլթանը, պաշտոնի անցնելով, ընդունեց անգլիացիների պահանջը և, միաժամանակ, բանակցություններ սկսեց Թեհրանում ռուսական դեսպանության հետ, որոնք 1900 թվականի հունվարին ավարտվեցին Ռուսաստանի կողմից Իրանին նոր պարտք տրամադրելու մասին պայմանագրի ստորագրմամբ:

Պարտքի գումարը կազմում էր 22 և կես միլիոն ռուբլի, հարյուրին հինգ %-ով վերադարձնելու պայմանով: Պարտքի երաշխիք էին համարվում Իրանի մաքսային եկամուտները (բացի Ֆարսի և Պարսից ծոցի մաքսերից): Հետաքրքրական է նշել, որ այս 1900 թվականի պարտքի պայմանների մեջ մտցված էր մի կետ, որի համաձայն նախքան ամբողջ պարտքը մարելը Իրանը, առանց Ռուսաստանի համաձայնության իրավունք չուներ որևէ ուրիշ պետությունից պարտք վերցնել՝ երաշխավորված կամ չերաշխավորված: «Խեղճ իրանցիներն էլ ստիպված էին ընդունել երկրի անկախությունը խախտող այդ պայմանը», գրում է Դովլաթաբադին[58]:

Անդրադառնալով այս հարցին Դովլաթաբադին նշում է, որ անգլիացիները միայն դրանից հետո ղգացին, թե այդ պարտքերի շնորհիվ ինչքան է ուժեղացել ցարական Ռուսաստանի ազդեցությունն Իրանում, և իրենք էլ ձեռնամուխ եղան Իրանին պարտքեր տալուն, բայց ռուսները նրանց ճանապարհն արդեն փակել էին:

1900 թվականի հունվարի 2-ին կնքված պայմանագրով Ռուսաստանից վերցրած այս պարտքը առաջին ուժեղ հարվածն էր Իրանում Բրիտանիայի հեղինակությանը: Այդ ժամանակից էլ սկսում է Անգլիայի ազդեցության անկումն Իրանում:

Ռուսաստանից վերցրած այս պարտքը իր բնույթով և ունեցած հետևանքներով շատ ծանր էր Իրանի համար: Այդ մասին են վկայում իրանական մի շարք հեղինակներ:

Քննարկելով նրա շուրջը ծավալված պայքարի պատմությունը, վերոհիշյալ հեղինակները, հատկապես, փորձում են տալ այն հարցի պատասխանը, թե ինչո՞ւ անգլիացիները,

---

58 یحیی دولت آبادی، حیات یحیی جلد اول تهران ۱۹۵۷ صفحه ۳۱۴

որոնք սկզբում իրենք էին լրջորեն մտադիր Իրանին պարտք տալ, խիստ միջոցների չդիմեցին և թույլ տվեցին Իրանի կառավարությանը պարտք վերցնել Ռուսաստանից: Ոմանք գտնում են, որ դրա պատճառը Անգլիայի մեծ հոգսերն էին աշխարհի տարբեր մասերում, հատկապես հեռավոր Արևելքում և Հարավային Աֆրիկայում, Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ ունեցած տարաձայնությունները: Այդ պայմաններում նրան ձեռնտու չէր Մերձավոր Արևելքում բախման մեջ մտնել Ռուսաստանի հետ[59]:

«Երբ Մոզաֆար էդ Դին շահը և Ամին էս Սոլթանն այդ պարտքը վերցրին ցարական Ռուսաստանից և այդ ստրկացուցիչ պայմանագիրը ստորագրեցին,—գրում է Թեյմուրին,—ժողովրդի համընդհանուր ատելությունն իրենց նկատմամբ նվազեցնելու համար թերթում պաշտոնական հայտարարություն հրապարակեցին և որոշ անհամոզիչ պատճառներով փորձեցին արդարացնել իրենց արարքը: Չնայած իրանական ժողովրդին խոստանում էին այդ պարտքի գումարների մի մասը տրամադրել երկրի բարեկեցությանն ու շենությանն ուղղված որոշ միջոցառումների, սակայն, վճարելով միայն «Շահնշահի բանկի» չորս հարյուր հազար ստերլինգը, մնացած դրամը վերցնելով մեկնեցին Եվրոպա՝ յոթ ամիս շարունակ շրջեցին Եվրոպական տարբեր երկրներում և ուրախ կյանք վարեցին»[60]: Ցարական Ռուսաստանից վերցրած այս պարտքը մեծ դժգոհություն առաջացրեց երկրում: Իրանական հասարակայնության լայն շրջանները գիտակցում էին, որ ստացված գումարները ծախսվելու էին ոչ թե երկրի բարեկեցության համար, այլ պետք է ծառայեին շահին ու նրան շրջապատող պորտաբույծ տարրերին:

«Ցավոք սրտի,—գրում է Մալեք զադեն,—իրանցի հայրենասերների ջանքերը և աշխարհի ազատատենչ մամուլի արձագանքներն այս պարտքի դեմ որևէ արդյունքի չհասան: Դավաճան զեկավարներն ու շահամոլ պալատականները Իրանի անկախության և պատվի գնով այդ նենգ պարտքն իրականացրին: ...Թույլ, աղքատ և քայքայված Իրանի

---

59 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۳۸۴

60 Նույն տեղում:

պարտքը հարևան հզոր պետությունից, որ մի ամբողջ դար փայփայում էր Իրանը կաղուցացնելու մտադրությունը և գնալով ավելացնում էր իր ազդեցությունն այս խեղճ ժողովրդի մարմնի և հոգու վրա, այն էլ այնպիսի պայմաններով, երբ հաստատվում էր ուժեղ պետության գերիշխանության իրավունքը թույլ երկրի մի մասում, ամենածանր հարվածն էր, որ հասցվեց Իրանի ժողովրդի կյանքին: Դա, միաժամանակ, պատմական մեծագույն մի արատ էր, որը դաջարական բռնապետական կառավարությունն իրենից հիշատակ թողեց, քանի որ մինչև այսօր էլ չի լսվել, որ մի ժողովրդի ղեկավարները հաճույքի համար իրենց երկիրը օտարներին վաճառեն»:

Այս ամենն արձանագրելուց հետո հեղինակը հանդում է միանգամայն ճիշտ եզրակացության:

«Կասկած չկա,—գրում է նա,—որ եթե 1914 թվականի համաշխարհային պատերազմը տեղի չունենար և Ռուսաստանում կարգերը չփոխվեին, Իրանի կառավարությունն ի վիճակի չէր լինի ռուսներից վերցրած դրամը վերադարձնել և նրանց օրեցօր աճող ազդեցությունը պակասեցնել և գուցե այսօր Իրանի հնագույն երկրից աշխարհում ոչ մի հետք չմնար»[61]:

Հեղինակն այսպիսով ընդունում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության դերը Իրանի պատմության հետագա զարգացման և Իրանի անկախության ու ամբողջականության պահպանման գործում:

Հիշատակված հարցին է անդրադառնում նաև Ահմադ Քասրավին իր «Իրանի սահմանադրության պատմությունը» արժեքավոր աշխատության մեջ: Մանրամասն նկարագրելով Ռուսաստանից պարտք վերցնելու ողջ պատմությունը, Քասրավին նշում է, որ այն մեծ դժգոհություն առաջացրեց ժողովրդական զանգվածների մեջ, և որ նրանք այդ բանում մեղավոր էին ճանաչում Աթաբեկին, համարելով նրան «հյուսիսային հարևանի քաղաքական գործիք»[62]:

Այդ իրադարձությունների նկատմամբ Անգլիայի գրված

---

[61] مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران تهران ۱۳۲۸ صفحه ۳–۱۶۲

[62] احمد کسروی، تاریخ مشروطه ایران، تهران ۱۳۴۰ صفحه ۳۵–۱۴

դիրքի մասին հետաքրքիր վկայություններ կան պարսիկ հեղինակների աշխատություններում: Մահմուդ Մահմուդն, օրինակ, հաղորդում է, որ անգլիացիներն Աթաբեկին համարում էին իրենց երդվյալ թշնամին, այդ պատճառով էլ պատրաստ էին Ամին էդ Դոլեին օգնություն ցույց տալ: Եվ, անկասկած, եթե Անգլիայի համար համաշխարհային քաղաքական դրությունը նպաստավոր լիներ, ապա նա Իրանին պարտք կտրամադրեր: Սակայն անգլիացիներն այնպիսի վիճակում էին, որ չէին կարող Իրանում բախվել Ռուսաստանի հետ, որն այդ ժամանակ ռազմական տեսակետից բավական ուժեղ էր[63]:

Մահմուդը գրում է, որ իրանցիները ցարական Ռուսաստանի բարեկամը չէին և, նույնիսկ, նրանց ատում էին: Անգլիայի պարտության համար նա հանցավոր է համարում հենց իրենց՝ անգլիացիներին, որոնք «Մոզաֆար էդ Դին շահի թագավորության սկզբում և Ամին էդ Դոլեի մեծ վեզիրության ժամանակ տնտեսական ոչ մի օգնություն չցուցաբերեցին Իրանին: Եթե այդպիսի օգնություն լիներ, ապա Իրանը երբեք դեպի Ռուսաստան չէր թեքվի»[64]:

Պարսիկ հեղինակներն անդրադառնալով Իրանի ժողովրդի մեջ այս պարտքի առաջացրած զայրույթին, հիշատակում են Իրանի ղեկավարների այն համոզմունքը, որ նրանց պարտքերի դեմ իրենց երկրում ոչ ոք չի համարձակվի բողոքել և այս մեծ դավաճանության համար վրեժ լուծել: Մալեք զադեն այդ առթիվ գրում է. «Նրանք այդ գումարի փշրանքներով կաշառել էին որոշ հոգևորականների և նրանց բերանը փակել: Դրա համար էլ այդ մեծ դավաճանության ժամանակ, որը խոշոր հարված հասցրեց Իրանին և մեծ աղմուկ հանեց բաղաքակիրթ երկրներում, ծխախոտի կոնցեսիայի շուրջն այնքան իրարանցում բարձրացրած հոգևորականներն ամենաչնչին քննադատություն և հակառակություն չցուցաբերեցին և այս նենգ գործարքն իրագործվեց որպես մի հասարակ ակտ»[65]:

---

63 محمود محمود، تاریخ روابط سیاسی. ۰ جلد ششم صفحه ۲-۱۶۸۱

64 Նույն տեղում, էջ 1725:

65 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران تهران ۱۳۲۸ صفحه ۱۵۷

Թեյմուրին քննարկելով այս պարտքի հետ կապված բոլոր մանրամասնությունները, հանգում է հետևյալ եզրակացության. «Պարտք վերցնելու համար Մոզաֆար էդ Դին շահի ու Ամին էս Սոլթանի՝ ցարական Ռուսաստանի հետ ստորագրած պայմանագիրն Իրանի քաղաքական պատմության մեջ ստորագրված ամենանենգ պայմանագրերից է, որն իրանական ժողովրդին երկար տարիներ ռուսական ցարերի ստրուկը դարձրեց»[66]:

Պետք է նշել, որ իրանական աղբյուրները խոսելով այս պարտքի և Իրանի համար նրա ունեցած քաղաքական հետևանքների մասին, իրավացիորեն գտնում են, որ իրանական կառավարությունն իր այս քայլով բացահայտ կերպով խախտեց քաղաքական հավասարակշռությունն Իրանում: Մահմուդ Մահմուդը նկատում է, որ առաջներում արտաքուստ միշտ այնպես էր թվում, թե իբր Իրանն երկու հարևան երկրներից ոչ մեկի նկատմամբ հատուկ համակրանք չունի: Այժմ արդեն հնարավոր չէր քողարկել Իրանի արտակարգ լավ վերաբերմունքը ցարական Ռուսաստանի հանդեպ, որն, ինչպես գրում է Մահմուդը, «... իր կամքով և մեծ հաճույքով պատրաստ էր հոգալ Իրանի նյութական կարիքները...: Իմ կարծիքով,—շարունակում է նա,—Իրանի անցած հարյուր տարվա պատմության մեջ առաջին անգամն էր, որ Իրանն այսքան մոտենում էր Ռուսաստանին և իրեն վտանգի ենթարկում»[67]:

Ռուսաստանից հաջորդ պարտքն Իրանը վերցրեց 1902 թվականի ապրիլին: Այս անգամ ևս այն կապված էր Մոզաֆար էդ Դին շահի Եվրոպա ճամփորդելու հետ, որի համար անհրաժեշտ էին նոր գումարներ: Որոշ բանակցություններից հետո Ռուսաստանը նույն պայմաններով համաձայնվեց Իրանին պարտք տալ տասը միլիոն ոսկի ռուբլի: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, Իրանը որոշ փոփոխություններ մտցնի Օսմանյան կայսրության և Ռուսաստանի հետ ունեցած առևտրի մաքսային տարիֆներում, այն հաշվով, որ աճեն Իրանի ներմուծումները, և դրանց համապատասխան նաև մաքսային եկամուտները: Մյուս պայմանն այն էր, որ

---

66 ابراهیم تیموری، عصربی‌خبری... صفحه ۳۷۱

67 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد ششم صفحه ۱۶۴۸

Ջուլֆան Ղազվինին միացնող խճուղու կառուցման կոնցեսիան հանձնվի ռուսական բանկին։

Էբրահիմ Թեյմուրին այս պարտքի մասին գրում է. «Այն ժամանակ, երբ իրանական ժողովուրդն այրվում էր աղքատության և թշվառության կրակում, պետական գանձարանը դատարկ էր, իսկ Ռուսաստանից վերցրած դրամներն արդեն սպառվել էին, իշխող խավերը նորից ձեռք մեկնեցին դեպի ռուսները, քանի որ 1900 թվականի պարտքի պայմանագրի համաձայն բացի Ռուսաստանից, ուրիշ պետությունից պարտք վերցնել չէին կարող»[68]։

Պատկերելով այդ պարտքերի նկատմամբ իրանական ժողովրդի վերաբերմունքը, Թեյմուրին գրում է. «1900 և 1902 թթ. պարտքերի պայմանագրերը, որոնք ստրկության շղթաներ հագցրին Իրանի ժողովրդի ոտքերին, երկրի բոլոր մասերում առաջ բերեցին հայրենասերների զայրույթն ու վրդովմունքը, և օրեցօր ավելացավ ժողովրդի ընդհանուր ատելությունը Մոզաֆար էդ Դին շահի և Ամին էս Սոլթանի հանդեպ։ Արտասահմանում մի խումբ ազատասեր իրանցիներ Իրանի իշխող խավերի դեմ հոդվածներ էին տպագրում և մատնանշում այդ պարտքերի վտանգներն ու վնասները։ Իրանի տարբեր վայրերում գաղտնի միություններ էին կազմակերպվում, որոնք Ամին էս Սոլթանի և Մոզաֆար էդ Դին շահի դեմ խիստ քայլերի էին դիմում և պրոկլամացիներ, կամ, այսպես կոչված, «շաբնամաներ» տարածում»[69]։

1903 թ. ապրիլին Իրանի կառավարությունը պարտք վերցրեց Անգլիայից, որը նույն թվականի փետրվարին Իրանին պարտադրել էր անգլո-իրանական մաքսային պայմանագիրը։ Պարտքի երաշխիքը պետք է լիներին Կասպից ծովի ափերի Շիլաթ ձկնորսական ընկերության, փոստի և հեռագրի, ինչպես նաև հարավի մաքսատների եկամուտները։ Մի տարի հետո, 1904 թվականին վերոհիշյալ պայմանագրին կցվում է ևս մի նոր պայմանագիր, որի համաձայն նույնպիսի պայմաններով Իրանին պարտք է տրվում հարյուր հազար ստերլինգ։

Անդրադառնալով օտար պետություններից վերցրած

---

68 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۳۸۶

69 Նույն տեղում, էջ 29։

պարտքերի այս ամբողջ շարքի քաղաքական և տնտեսական հետևանքներին, իրանական տարբեր հեղինակներ մանրամասն վերլուծել և մերկացրել են իմպերիալիստական պետությունների հետապնդած նպատակները և նրանց իրականացման խարդախ եղանակները։

Այսպես օրինակ, էբրահիմ Թեյմուրին գրում է. «Ռուսաստանի և Անգլիայի գաղութարարական տերությունների կողմից իրանական ժողովրդին ճնշելու նպատակով օգտագործվող միջոցներից մեկն էլ Իրանի նեխած կառավարությանը պարտք տալն էր։

Այն պարտքերը, որոնք ռուսներն ու անգլիացիները ստրացուցիչ և ստրկացուցիչ պայմաններով պարտադրեցին Իրանին, ...նրան հասցրին քայքայման և ոչնչացման եզրին։ Այս պարտքերը երկար տարիներ Իրանի ժողովրդին օտարների ստրուկն ու ծառան դարձրին և Իրանի ժողովրդի բարեկեցության համար երբեք դրանցից ոչ մի գրոշ չծախսվեց, և ամբողջը հատկացվեց շահի և այլասեռված պալատականների ճամփորդություններին ու շվայտ կյանքին»[70]։

«Տեղին է ասել,—գրել է Սեյեդ Մոհամադ Ջամալ զադեն,—որ հենց այս պարտքերի շղթան Իրանի ստրկացման շղթան է դարձել, և մեր մեծ ու հին ժողովրդին դատապարտել ագահ ու անխիղճ օտարների կամայականություններին։ ...Իհարկե, պարտքերի պայմանները տարբեր են լինում. երբեմն, ինչպես այդ տեսնում ենք Իրանում, պայմանները հասցնում են մի ամբողջ պետության և ժողովրդի հիմնական իրավունքներից զրկվելուն։ Էական և կարևոր խնդիրը հենց այդ է»[71]։

Այդ նույն կարծիքին է նաև «Իրանի քաղաքական իրադարձությունները ժամանակակից դարերում» աշխատության հեղինակը՝ Հասան Հալաջը. «Պալատականների տգիտության և անտեղյակության հետևանքով,—գրում է նա,—սնանկացումը և ժողովրդի տնտեսական աղքատությունը այնպիսի աստիճանի էր հասել, որ Մոզաֆար էդ Դին շահի օրոք... պետական գանձարանում դրամ չէր մնացել և ղեկավար-

---

[70] Նույն տեղում, էջ 365։

[71] محمدعلی جمال‌زاده، گنج شایگان یا اوضاع اقتصادی درایران برلن ۱۳۳۵ صفحه ۱۰۹

ները շահի՝ Եվրոպա կատարելիք ճամփորդության և արտակարգ ծախսերի համար հյուսիսի և հարավի մաքսերը գրավ դրեցին և ցարական Ռուսաստանից, անգլիական և ռուսական բանկերից պարտք վերցրին... Այդպիսով նրանք երկիրը կործանեցին և ծիծաղեցին ժողովրդի վրա»[72]: Մի ուրիշ տեղ հեղինակը գրում է. «Հայրենադավ պալատականների վերցրած այս պարտքերի հետևանքով, ժողովուրդը սև օրի հասավ, երկիրը քայքայվեց, նրա տնտեսական, քաղաքական և դատական անկախությունը սասանվեց և ազգային աղբյուրները օտարների տրամադրության տակ ընկան»[73]:

Հալաջն այդ պարտքերի հարցը դիտում է զաջարական դինաստիայի թագավորության ամբողջ պատմության ֆոնի վրա, և նշում, որ զաջարական դինաստիան իր թագավորության շրջանում Նադեր շահի, Քյարիմ խան Զանդի կուտակած ամբողջ հարստությունն, ինչպես և ազգային կապիտալները վատնեց, Ռուսաստանից և Անգլիայից վերցրած պարտքերով երկրի դարբասները, այսինքն՝ մաքսատները որպես գրավական և տոկոս օտարներին տվեց, իսկ երկրի ներսում Շահնշահի բանկի, Կասպից ծովի Շիլաթի և այլ կոնցեսիաների միջոցով Իրանի տնտեսության վրա օտարների տիրապետությունը հաստատեց: Հալաջը հիշատակում է նաև այն վտանգը, որ երկրի ներքին գործերին օտարերկրացիների միջամտության պատճառով սպառնում էր Իրանի անկախությանը: «Սակայն երկրում հզոր շարժում առաջացավ,— գրում է նա,— ազգն ու երկիրը փրկելու համար ժողովուրդը ոտքի ելավ, և օտարերկրացիների դեմ պայքարելով երկիրը փրկեց կործանումից[74]:

Նապեմ օլ էսլամ Քերմանին պատկերավոր է նկարագրում մեկ այլ՝ ծիսախոտի կոնցեսիայի բեկանումից հետո ընկերությանը փոխհատուցելու կապակցությամբ Իրանի վերցրած պարտքերը: «Կառավարության ղեկավարները տեսան,— գրում է նա,— որ ոչ մի կողմից փրկության դուռ չկա, քանի որ իրենց վրա են վերցրել ընկերության վնասները և մի մեծ ժողովրդի պարտքի տակ գցել:

---

72 حسن حلاج، تاریخ تحولات سیاسی ایران... صفحه ۱۱

73 Նույն տեղում, էջ 12:

74 Նույն տեղում, էջ 184:

Փողերը պալատներ կառուցելու և կանանց վրա ծախսվեցին, իսկ պարտքերը մնացին Իրանի կառավարության և ժողովրդի ուսերին:

Օ՜հ դժբախտություն: Այս պարտքը ո՞վ պետք է տա, եթե ոչ խեղճ ժողովուրդը... այս փողերի հատուցման աղբյուրը հենց նույն գյուղացիները և հողագործները, հենց նույն խեղճերն ու թշվառներն են, քանի որ այն փողը, որ մտավ աղայի, խանի, շահի, վեզիրի և հարուստների քսակը, այլևս դուրս չի գա»[75]:

Հետաքրքրական է նշել, որ ժամանակի առաջավոր մտածողները պարզորոշ կերպով գիտակցում էին Իրանի համար օտար երկրներից վերցրած պարտքերի կործանարար հետևանքները, և բացահայտ հանդես էին գալիս դրանց դեմ: Օրինակ, Միրզա Մալքոմ խանի կազմակերպած գաղտնի «Մարդկայնության ընկերության» փաստաթղթերից պարզվում է, որ մեծ լուսավորիչը լավ էր գիտակցում օտարերկրյա պարտքերի քաղաքական ինքնատիպ հետևանքները և դեմ էր դրանց: Նա գրում է, որ այդ պայմաններով պարտքեր վերցնելը «կփորի Իրանի անկախության գերեզմանը»[76]:

*

* *

Իր քաղաքական հետևանքների, ինչպես և առաջացրած համընդհանուր զայրույթի և նրա դեմ երկրում ծավալված շարժման տեսակետից խոշոր իրադարձություն պետք է համարել ծխախոտի հայտնի կոնցեսիան:

1890 թվականին Նասր էդ Դին շահը «Տալբոտ» անգլիական ընկերությանը տվեց ամբողջ Իրանի ծխախոտի մշակման և օգտագործման կոնցեսիան, որի ժամկետը հիսուն տարի էր[77]: Ընկերությունն Իրանի կառավարությանը պետք

---

[75] ذاظم الاسلام کرمانی، تاریخ بیداری ایرانیان... مجلد اول صفحه ۴۴

[76] فریدون آدمیت، فکر آزادی و مقدمه مشروطیت تهران صفحه ۱۶۷

[77] Իրանում օգտագործվող ծխախոտի քանակը, մաքսատան կառավարիչների տվյալներով, կազմում էր 18 մլն ման, կամ մոտ 52230 տոննա: Մոտ 1,500,000 ման կամ 4650 տոննա փոխադրվում էր Բաղդադ, Բեյրութ, Կահիրե, Արաբիա, Հնդկաստան և Աֆղանստան: Տե՛ս

محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد چهارم صفحه ۱۱۷۵

է վճարեր տարեկան 15,000 ֆունտ ստեռլինգ, եկամուտների մեկ քառորդը և կապիտալի հինգ տոկոսի շահութամասը՝ դիվիդենտը: Ըստ պայմանագրի, ամբողջ Իրանում ծխախոտի մշակումը և վաճառքը կենտրոնանում էր ընկերության ձեռքում: Ծխախոտի գինը որոշում էր ընկերությունը, որն իրավունք ուներ հսկելու նաև ամբողջ երկրում ծխախոտի ցանքսերի վրա:

Կոնցեսիոն իրավունքով հիմնադրված ընկերությունը պետք է կոչվեր «Իրանի կայսերական ծխախոտի կորպորացիա»: Նրա կապիտալն էր 650,000 ստեռլինգ, բաղկացած 64,740 սովորական 10 ստեռլինգանոց բաժիններից: Իրանական կառավարությունը հանձն էր առնում պաշտպանել և հովանավորել կորպորացիային՝ իր գործերն իրականացնելու համար: Այդ պարտավորության մեջ ավելացված էր նաև հետևյալ ծիծաղաշարժ նախադասությունը. «նա (իրանական կառավարությունը—Հ. Ե.) դրանում ուղղակի շահագրգռված է, քանի որ բաժին ունի ստացվող եկամուտներից»[78]:

Անհրաժեշտ է նշել, որ այս կոնցեսիան ձեռք բերելու գործում անգլիական իմպերիալիստները դիմեցին ամենախարդախ միջոցների: Ինչպես վկայում են պարսիկ բաղմաթիվ հեղինակներ, նրանք, նույնիսկ, կաշառքներ տվեցին իրանական առանձին ղեկավարների: Օրինակ, Էբրահիմ Թեյմուրին ծխախոտի կոնցեսիային նվիրված հատուկ աշխատության մեջ գրում է, որ «անգլիացիները մեծ գումարի դրամ ծախսելով հասան իրենց նպատակին: Ինչպես այն ժամանակ հայտնի էր, ծխախոտի կոնցեսիայի ընկերությունը, որին անվանում էին Ռեժի, չորս հարյուր հազար թումանի սահմաններում կաշառք էր տվել Ամին էս Սոլթանին, փոխարքա Քամրան Միրզային և այլ ազդեցիկ պալատականների»[79]: Որոշ հեղինակներ, սակայն, ինչպես նշում է Թեյմուրին, փորձում են քողարկել կաշառքի հանգամանքը, հիմնականում հենվելով այն փաստերի վրա, որ Բաղդադում Իրանի գործերի հավատարմատար Մոշիր էլ Վոզարան, նաև

---

[78] ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، تحریم تنباکو اولین مقاومت منفی در ایران تهران ۱۹۵۰.

[79] Նույն տեղում, էջ 27։

էդ Դին շահի կողմից ուղարկվելով կոնցեսիայի խիստ հակառակ շիա հոգևոր ղեկավար Միրզա Շիրազիի մոտ, նրան փորձում է այնպես ներկայացնել, որ այդ կոնցեսիայի հանձնման իսկական պատճառն Իրանի անկախության պաշտպանությունը և նրա ազատումն է ցարական Ռուսաստանի ճիրաններից։ «Սակայն պետք է հաստատ իմանալ,—գրում է Թեյմուրին,—որ անգլիացիներին տրված կոնցեսիայի հիմնական պատճառն այն հսկայական գումարներն էին, որ այդ նպատակի համար ծախսվեցին»[80]։

Իհարկե, հեղինակի հետ չի կարելի համաձայնվել այն հարցում, թե կոնցեսիայի հանձնման հիմնական պատճառը իրանական ղեկավարներին տրված կաշառքն է եղել։ Սակայն կարևորն այստեղ հենց կաշառքի փաստն է, որը ցույց է տալիս Իրանի իշխող շրջանների կորուպցիան։ Կաշառքի փաստի մասին է խոսում նաև Նազեմ օլ էսլամ Քերմանին։ Նա գրում է, որ 1890 թվականին Ռեժի ընկերությունը Նասր էդ Դին շահից ստացավ ծխախոտի մշակման և վաճառման կոնցեսիան, որի դիմաց մի քանի տասնյակ հազար տվեց շահին և պալատականներին[81]։

Պետք է նշել, որ կոնցեսիայի պայմանները բավականին ծանր էին Իրանի համար։ «Իրանի սահմանադրության պատմության» հեղինակ Ահմադ Քասրավին այդ մասին գրում է. «Այս կոնցեսիան Իրանի համար շատ վնասաբեր էր, քանի որ ամբողջ ծխախոտի և թանբաքույի վաճառքը թե՛ երկրի ներսում և թե՛ դրսում հանձնում էր մի անգլիացու, որի դիմաց իրանական կառավարությունը պետք է ստանար ընդամենը տասնհինգ հազար ստերլինգ և շահույթի մեկ քառորդը։ Մինչդեռ օսմանյան պետության մեջ, որի ծխախոտը և թանբաքուն ավելի քիչ են, միայն ծխախոտի վաճառքը երկրի ներսում տրվել էր մի ընկերության, օսմանյան կառավարությանը տարեկան յոթը հարյուր հազար ստերլինգ և եկամուտի մեկ հինգերորդը վճարելու պայմանով։ Տեսեք, թե տարբերությունն ուր է հասնում»[82]։

---

80 Նույն տեղում, էջ 39։

81 ناظم‌الاسلام کرمانی، تاریخ بیداری ایرانیان مجلداول صفحه ۱۱

82 احمد کسروی، تاریخ مشروطه ایران، تهران ۱۳۴۰ صفحه ۱۶–۱۵

Քանի որ խոսքը վերաբերեց օսմանյան պետությանը, անհրաժեշտ է նշել, որ Իրանի կողմից անգլիական ընկերությանը տրված ծխախոտի այս կոնցեսիայից մեծապես դժգոհ էին նաև օսմանյան իշխող շրջանները: Այդպիսի տրամադրություն արտահայտող մի հոդված է լույս տեսել թուրքական «Սաբահ» թերթում, որը թարգմանաբար տպագրվել է Ստամբուլում լույս տեսնող պարսկերեն «Ախթար» թերթում (1890 թ. նոյեմբերի 11-ին):

«Սաբահ»-ն իր այդ հոդվածում իրանական կառավարությանը քննադատում է այն բանի համար, որ նա այդքան կարևոր նշանակություն ունեցող և այդքան լայն իրավունքներով կոնցեսիա է տվել օտարերկրացիներին՝ չնչին մի գումարի, այսինքն՝ տարեկան 15 հազար Ստեռլինգի դիմաց:

«Ընդհանրապես կարելի է ասել, որ Իրանի ծխախոտի ամբողջ գործը ձրիաբար օտարներին է տրվել,—գրված է հոդվածում,—և չի կարելի անգամ երևակայել, թե այդպիսի մի գործարք կարող էր տեղի ունենալ»: Այնուհետև, վկայակոչելով օսմանյան պետության ծխախոտի մոնոպոլիան, հոդվածի հեղինակը գրում է. «Օսմանյան երկրի Ռեժիի կոնցեսիան միայն երկրի ներսին էր վերաբերում, նրա արտաքին առևտուրը միանգամայն ազատ էր: Իրանի կառավարությունը թերացել է, նախապես անհրաժեշտ ուսումնասիրություններ չի կատարել և այդ հարցը հաշվի չի առել: Օսմանյան Ռեժիի մոնոպոլիան միանգամայն այլ հարց է: Իրանական կառավարության տված կոնցեսիան ոչ մի նմանություն չունի նրա հետ: Եթե իրանական կառավարությունը մտադիր էր հարկեր գանձել իրանական ծխախոտից, անհրաժեշտություն չկար, որ այդպիսի մի կոնցեսիա տրվեր օտարերկրացիներին: Մի փոքր նեղություն կրելով, կարող էր այդ ճանապարհով մեծ գումար ձեռք բերել, մի բան, որը ճշտությամբ կարելի էր իրականացնել առանց օտարների միջամտության: Կարիք չկար այսպիսի մի ծանր բեռ դնել իրանական ժողովրդի ուսերին[83]:

Ծխախոտի կոնցեսիայի նշանակությունը և Իրանը կիսագաղութի վերածելու գործում նրա ունեցած հետևանք-

---

83 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی، تحریم تنباکو... تهران ۱۹۵۰.
صفحه ۳۳

ները ևս լայնորեն քննարկվել են իրանական պատմագրության մեջ։

Միրզա Յահյա Դուլլաթաբադին իր հուշերում գրում է, որ իրանական կառավարությունն իր հարևանների նկատմամբ այնպիսի քաղաքականություն էր վարում, որ օրեցօր կորցնում էր իր բարոյական անկախությունը, բավարարվելով իր ժամանակավոր անդորրով։ Դուլլաթաբադին օտարերկրացիներին տրված կարևորագույն կոնցեսիաներից էր համարում ծխախոտի կոնցեսիան, որը «նասր էդ Դին շահի կատարած վերջին ճամփորդության ընթացքում տրվեց անգլիական մի ընկերության, կոնցեսիա, որը արտաքուստ առևտրական էր, սակայն իրականում՝ քաղաքական»[84]։ Հեղինակը ճշմարիտ կերպով նշում է, որ այդ կոնցեսիայի շնորհիվ Մերձավոր Արևելքում ուժերի հարաբերակցությունը փոխվեց հօգուտ Անգլիայի, որը և լրջորեն անհանգստացնում էր Ռուսաստանին և մղում նրան վճռական միջոցառումների։

Նույն միտքն է առաջ քաշում նաև Հասան Հալաջը, որը գրում է. «Ռեժիի կոնցեսիան արտաքուստ վերաբերում էր ծխախոտի և թանբաքույի մոնոպոլիային, իսկ ներքուստ ընդգրկում էր երկրի բոլոր հանքերը և խճուղիները։ Այն հաստատում էր ընկերության գործակալների տիրապետությունը ամբողջ երկրում»[85]։

Այս հարցին ավելի մանրամասն անդրադարձել է Մահմուդ Մահմուդը։ Նշելով, որ ծխախոտի կոնցեսիան մի մեծ շարիք դարձավ Իրանի համար և նրա բեկանումից հետո Իրանն ընկավ 500,000 ստերլինգ պարտքի տակ, որի միայն տոկոսները կազմում էին տարեկան 30,000 ստերլինգ (մինչդեռ կոնցեսիան հանձնելու դիմաց շահը և մեծ վեզիրը ստացել էին միայն մի քանի հազար ստերլինգ), հեղինակը հանգում է հետևյալ եզրակացության. «Այս կոնցեսիայի հանձնումը և բեկանումը կարելի է դաջարական դինաստիայի կործանման գլխավոր պատճառներից մեկը համարել, քանի որ մինչ այդ իրանական ժողովուրդը, հոգևորականությունը և այլ խավերը երբեք շահի և նրա կառավարության նկատ-

---

84 یحیی دولت‌ابادی، حیات یحیی جلداول تهران ۱۹۵۷ صفحه ۱۰۶

85 حسن حلاج، تاریخ تحولات سیاسی ایران... صفحه ۲۵

մամբ այդքան դիմադրություն չէին ցուցաբերել»[86]: Մեկ ուրիշ առիթով նա կրկնում է. «Եթե Ռեժիի հարցը առաջ չդար, նասր էդ Դին շահի թագավորությունը այսքան շուտ չէր ավարտվի և Իրանը տարիներ շարունակ կարող էր Ռուսաստանի և Անգլիայի երկու քաղաքականության արանքում ապրել[87]:

Որոշ հեղինակներ քննարկել են նաև այս հարցում Իրանի նկատմամբ Անգլիայի վարած քաղաքականությունը և նրա հետապնդած նպատակները:

Նազեմ օլ էսլամ Քերմանին գրում է, որ Անգլիան Իրանի համար այդ դժբախտ կոնցեսիան ձեռք բերելով, իր շահամոլությունից և հեռատեսությունից ելնելով, եվրոպական այլ երկրների ևս ներքաշեց այդ գործի մեջ, գործը մեծացրեց և ընդարձակեց, այն մտադրությամբ, որ իրանական կառավարությունն այլևս չհամարձակվի պայմանագիրը բեկանել[88]:

Ինչպես նշում է Քերմանին, ծխախոտի կոնցեսիայի հարցում ցարական Ռուսաստանի դիրքորոշումը միանգամայն պարզ էր. նա բացարձակապես կողմնակից չէր, որ անգլիացիները հաջողության հասնեն: «Նա գիտակցում էր, որ եթե ծխախոտի կոնցեսիան իրականանա, ապա Իրանի ինչպես հարավային, այնպես էլ հյուսիսային մասը կընկնի անգլիական ազդեցության տակ: Մինչդեռ Հերաթից ու Աֆղանստանի սահմանից մինչև Ադրբեջանի սահմանները ամբողջովին ռուսական ազդեցության գոտի էր»[89]:

Ծխախոտի կոնցեսիան հանձնելուց հետո Թեհրանում կազմակերպվեց համապատասխան հիմնարկություն, որը հսկայական գործունեություն ծավալեց ամբողջ երկրում, իր մասնաճյուղերը բացեց տարբեր նահանգներում և քաղաքներում: Ընկերությունը և նրա գործակալները ամենալայն հովանավորություն էին ստանում անգլիական կառավարու-

---

86 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد ششم صفحه ۱۶۳۳

87 Նույն տեղում, էջ 1768:

88 ناظم الاسلام کرمانی، تاریخ بیداری ایرانیان مجلد اول صفحه ۴۰

89 اسرار انحطاط ایران یا خواب نامه مرحوم اعتمادالسلطنه مشهد صفحه ۱۰۸

թյունից և Իրանում գտնվող նրա դիվանագիտական ներկայացուցիչներից։

Իրանական աղբյուրները բազմաթիվ փաստեր են պարունակում Մխախոտի ընկերության գործունեության և երկրի ներքին գործերին նրա միջամտության վերաբերյալ։

Թեյմուրին վկայակոչում է Աբբաս Միրզա Մալեք Արայի խոսքերը. «Անգլիացիները Իրան եկան, որպես Իրանի նկատմամբ հաղթանակ տարած մի պետություն։ Երկրի բոլոր նահանգները ներկայացուցիչներ ուղարկեցին, որոնք ձիավորներ վարձեցին՝ իրենց հրամաններն իրականացնելու համար։ Տհաս վեզիրների հետ այդ առթիվ ոչ մի պայմանավորվածություն չկար, այլ, ուղղակի, ընկերությունն իրավատու էր համարում ամեն ինչ անել, քանի որ ասպարեզը լրիվ դատարկ էր և անարգել։ Նրանք ռայաների հետ վարվում էին ամենախիստ ձևով. տեղական իշխանություններին ոչ մի տեղ հաշվի չէին առնում։ Կառավարության ղեկավարների կողմից, որոնք բոլորն էլ ընկերությունից կաշառքներ էին վերցրել, ամեն օր նահանգապետներին հրամաններ էին արձակվում, որ նրանք ջանան ընկերության ներկայացուցիչների գործերի առաջընթացի համար և ոչ մի վայրկյան չզլանան նրանց օժանդակել և նրանց հետ համագործակցել»[90]։

Մխախոտի ընկերության ուշադրությունը առաջին հերթին կենտրոնացավ Ֆարսի նահանգի վրա, քանի որ Իրանի ծխախոտի գլխավոր մասը և լավագույն արտադրանքն ստացվում էր հենց Ֆարսում։ «Բացի այդ,—գրում է Թեյմուրին,—անգլիացիները համարում էին, որ Իրանի հարավը իրենց է պատկանում և ամեն տեսակի արարքներում իրենց ազատ էին զգում։ Ռեժի ընկերության կողմից նույն ձևով ներկայացուցիչներ ուղարկվեցին նաև Իրանի մյուս քաղաքները։ Այդ ներկայացուցիչները տարբեր քաղաքների բավագույն վայրերում ընկերության հիմնարկների համար շքեղ շենքեր գնեցին։ Միայն Թավրիզն էր, որ ընկերության ներկայացուցիչներին ճանապարհ չտվեց»[91]։ Իսկ ինչո՞ւ հատկապես Ադրբեջանի բնակչությունը չթույլատրեց ընկերության գործունեության ծավալումը։ Այդ հարցին պատասխանում

---

90 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رزی... صفحه ۴۳

91 Նույն տեղում։

է էթեմադ էս Սալթանեն։ Նա գրում է, որ չնայած Ադրբեջանում մշակվող ծխախոտը մեծ քանակ չէր կազմում, սակայն կարելի է ասել, ամբողջ Իրանի ծխախոտի արտահանումը արտասահմանյան երկրներ, հատկապես Օսմանյան կայսրություն, ադրբեջանական առևտրականների ձեռքով էր կատարվում։ «Ռուսները,— գրում է էթեմադ էս Սալթանեն,— համաձայնության գալով Ադրբեջանի գործակատար Ամիր Նեզամի հետ, որը ամենազոր էր Ադրբեջանում, ... վաճառականներին քաջալերեց և խոստում առավ, որ ծխախոտի ընկերության ներկայացուցիչներին չթողնեն Թավրիզ և Ադրբեջանի մյուս քաղաքները»[92]։

Անհրաժեշտ է նշել, որ ծխախոտի ընկերությունը Իրանում ծավալում էր ոչ միայն տնտեսական գործունեություն։ Աղբյուրները վկայում են, որ ընկերությունը որոշ քանակի զենք էր փոխադրել Իրան, որը հետագայում հայտնաբերվեց և անգլիացիներին մերկացնող փաստ հանդիսացավ։

Թեյմուրին հայտնում է, որ կոնցեսիոն պայմանագրի ընկանումից հետո մի քանի արկղ ապրանք է հասնում Իրանի հարավային մաքսատները, որոնք կրում էին ընկերության նշանը և հասցեագրված էին կոնցեսիայի տիրոջը։ Ընկերության ներկայացուցիչը ցանկանում էր խանգարել արկղների ստուգումը, սակայն մաքսատան աշխատողները Թեհրանից թույլտվություն ստանալուց հետո արկղները բացում են, և պարզվում է, որ նրանք լիքն են հրացաններով, փամփուշտներով, նռնակներով, անծուխ վառոդով և այլն։

Իրանական կառավարությունը բողոքում է անգլիական դեսպանությանը, սակայն վերջինս պատասխանում է, որ կոնցեսիայի տերը, որն, իբր, այդ քայլը կատարել է առանց իր գիտության, դեսպանատան կողմից ձերբակալվել է, և շուտով ուղարկվելու է Անգլիա՝ դատական պատասխանատվության։ Թեյմուրին գրում է, որ այս հարցը խիստ բացասական տպավորություն էր թողել երկրում, և ամենուրեք խոսում էին, թե անգլիացիները զենքը բերել էին Իրանի քաղաքները գրավելու համար[93]։

---

92 اسرار انحطاط ایران یا خواب‌نامه مرحوم اعتمادالسلطنه مشهد ۱۹۴۵ صفحه ۱۰۹

93 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ زری... صفحه ۲۲۱–۲۲۰

* *

Ծխախոտի կոնցեսիան մեծ զժգոհություն առաջացրեց իրանական հասարակայնության բոլոր դասակարգերի և խավերի մեջ: Շարժումն ընդունեց մինչև այդ նմանը չունեցող չափեր:

Իրանում առաջին նշանակալից ցույցը տեղի ունեցավ 1891 թ. ծխախոտի մենաշնորհի դեմ երկարատև և հաջողությամբ ավարտված համաժողովրդական բողոքի ժամանակ:

Անգլիացի պատմաբան-բանասեր Բրաունը նշում է, որ ծխախոտի կոնցեսիան շատ կողմերով բացասական հետևանքներ ունեցավ Իրանի համար: Նախ, Իրանը մենաշնորհի բեկանումն ապահովելու համար, որպես փոխհատուցում 500 հազար ստերլինգ տվեց, որը պետք է պարտք վերցվեր «Շահընշահի բանկից» վեց տոկոսով (այսինքն, Իրանն ստիպված էր տարեկան 30 հազար ստերլինգ տոկոս վճարել): Երկրորդ, Բրիտանիայի հեղինակությունը լրջորեն տուժեց, իսկ ռուսական ազդեցությունը համապատասխանորեն շահեց, քանի որ Իրանում ժողովրդայնություն չվայելող այս կոնցեսիան տրվել էր անգլիական մի ընկերության, որը, ի վերջո, ստիպված եղավ տեղի տալ: Երրորդ, Նասր էդ Դին շահի սպանությունը 1896 թ. մայիսի 1-ին, նույնպես, անուղղակիորեն այդ չարաբաստիկ կոնցեսիայի արդյունքն էր, որի դեմ պայքարելու համար Միրզա Մոհամադ Ռեզա Քերմանին որոշեց վրիժառու լինել, իսկ հետո բանտարկվեց և խոշտանգման ենթարկվեց[94]:

Բրաունը հետևյալ կերպ է նկարագրում ծխախոտի կոնցեսիայի բեկանման պատմությունը: Սկզբում ծխախոտի մենաշնորհի բնույթը և մասշտաբը քիչ էր գիտակցվում: Բայց հենց որ գիտակցվեց, ամբողջ երկրով մեկ հանդիպեց սուր և ուժգին դիմադրության: Այդ շարժումների գործում գլխավոր դերը խաղաց Թավրիզը: Ծխախոտի կորպորացիայի պլակատները պատռվեցին և նրանց տեղը հեղափոխական պրոկլամացիաներ փակցվեցին: Թավրիզի բնակչությունը բողոքի հեռագրեր ուղարկեց Թեհրան՝ իրենց իրավունքները

---

[94] *E. Browne*, A Brief Narrative of Recent Events in Persia, London, 1909, p. 7.

օտարերկրացիներին ծախելու դեմ, և իրենց վճռականությունը հայտնեցին ուժով պաշտպանել այդ իրավունքները: Շահը դիմեց ռուսական կառավարությանը, և խնդրեց միջամտել Թավրիզում կարգ ու կանոնը վերականգնելու համար, բայց վերջինս հրաժարվեց, նշելով, որ միակ փրկությունը կոնցեսիայի բեկանումն է: Դեկտեմբերի վերջերին պատերին պլակատներ էին փակցվում, որոնք օտարերկրացիներին սպառնում էին մահով, եթե ծխախոտի կոնցեսիան չբեկանվի: Դա մեծ սարսափ առաջացրեց օտարերկրացիների և դեսպանությունների մեջ: Եվ դեկտեմբերի 28-ին շահը հայտարարեց կոնցեսիայի բեկանումը: «Ծխախոտի կոնցեսիան վերացավ,—գրում է հեղինակը,—սակայն նրա հետևանքները մնացին, որոնցից մեկը, անկասկած, Անգլիայի հեղինակության մեծ կորուստն էր»[95]:

Իրանական կառավարությունը կոնցեսիայի տերերին որպես փոխհատուցում առաջարկում էր 300 հազար ստերլինգ, իսկ նրանք պահանջում էին 650 հազար: Վերջապես նրանք ստացան 500 հազար ստերլինգ, որը 1892 թ. ապրիլի 27-ին վեց տոկոսով պարտք վերցվեց Իրանի «Շահնշահի բանկից»: Այսպիսով, համաձայնագիրը պարսիկ ժողովրդին պարտադրում էր մի խիստ, ոչ ձեռնատու լրացուցիչ ծախս՝ տարեկան 30 հազար ստերլինգի չափով: Պարսից ծոցի մաքսերը տրամադրվեցին որպես այդ տոկոսների վճարման երաշխիք, իսկ պարտքը պետք է ետ վճարվեր քառասուն տարվա ընթացքում:

Սակայն այս ամենն ունեցավ մի կարևոր հետևանք, և դա իրանական ժողովրդի զարթոնքն էր: Բոլոր կողմերին պարզ դարձավ, որ այլևս իմպերիալիստների և նրանց դրածոների համար դժվար կլինի քմահաճորեն խաղալ ժողովուրդների բախտի հետ:

Ծխախոտի կոնցեսիայի, և ընդհանրապես օտարերկրյա մոնոպոլիաների կործանարար գործունեության դեմ ծավալված շարժումն ամենալայն կերպով քննարկվել է իրանական պատմագրության մեջ: Իրանական հեղինակներն օգտագործելով հսկայական քանակությամբ փաստական նյութ, այդ

---

[95] *E. Browne*, The Persian Revolution of 1905—1909 Cambridge, 1910, p. 55.

թվում և արխիվային մինչ այժմ չհրապարակված նյութեր, վեր են հանել շարժման ամբողջ պատմությունը և մերկացրել իմպերիալիստական տերությունների գաղութարարական քաղաքականության էությունը:

Ինչպես արդեն նշեցինք, ծխախոտի կոնցեսիայի և նրա հետևանքների պատմությանը հատուկ աշխատություն է նվիրել Էբրահիմ Թեյմուրին[96]: Գրքի առաջաբանում ժամանակակից իրանական պատմաբան Աբբաս Էղբալը գրում է, որ, անկասկած, Նասր էդ Դին շահի թագավորության վերջին, Իրանի պատմության կարևորագույն իրադարձություններից պետք է համարել Լոնդոնում կազմակերպված Իրանի ծխախոտի ընկերությունը և նրա կողմից Իրանի ծխախոտի և թանբաքուի մոնոպոլ կոնցեսիայի իրավունքի ստացումը, Ռեժիի հիմնարկի ստեղծումը Թեհրանում, իրանցիների ապստամբությունը և վերջապես կոնցեսիայի բեկանումը: «Այդ շարժումը հաջողությամբ ավարտվեց և երկրի համար ունեցավ որոշակի հետևանքներ: ...Ժողովրդական շարժումը ծխախոտի կոնցեսիայի բեկանման գործում ձեռք բերած հաջողությունը ցույց տվեց, որ դիմադրությամբ և ապստամբությամբ լավագույն կերպով կարելի է կանխել բռնապետական ապարատի ինքնագլուխ գործունեությունը և ի վնաս ժողովրդի նրա կիրառած միջոցառումները: Հենց այդ հանգամանքը նախադրյալ հանդիսացավ ժողովրդական հետագա շարժումների համար»[97]—գրում է Էղբալը նույն այդ առաջաբանում: Նույն աշխատության ներածականում կարդում ենք. «Իրանում կարևորագույն և առաջին նեգատիվ դիմադրությունը առաջացավ ծխախոտի և թանբաքուի կոնցեսիայից հետո: Չնայած, որ այս հարցը շատ տեսակետներից մեծ նշանակություն ունի և կազմում է Իրանի պատմության փայլուն էջերը, ցավոք, շատ քիչ է ուշադրության արժանացել...»[98]:

Ծխախոտի կոնցեսիայի դեմ ժողովրդական շարժումը, որն ավարտվեց կոնցեսիայի բեկանումով, Թեյմուրին համարում է իրանական ժողովրդի գարթոնքի սկիզբը և օտարերկրացիների ու իրանական թագավորների բռնապետության

---

96 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی... تهران ۱۹۵۰

97 Նույն տեղում, էջ 1:

98 Նույն տեղում, էջ 10:

դեմ նրա առաջին պայքարը՝ իր իրավունքների ձեռքբերման համար։ Հեղինակն իր այս միտքը զարգացնելով, նշում է, որ «Նասր էդ Դին շահի սպանության և սահմանադրության հաստատման պատճառները ևս պետք է որոնել այդ իրադարձությունների մեջ»[99]։

Ծխախոտի կոնցեսիայի դեմ ծավալված շարժման մասնակիցներին Թեյմուրին բաժանում է հետևյալ երեք խմբերի.

1. Ցարական Ռուսաստանի ներկայացուցիչները և նրանց հետ կապված իրանցիները։ «Եթե որևէ պետություն Իրանում ինչ որ արտոնություններ էր ձեռք բերում,— գրում է Թեյմուրին,— մյուս պետություններն իրենց շահերը վնասված համարելով գործի էին անցնում, ընդարձակ պրոպագանդա մղում և հնարավորին չափ խանգարում կոնցեսիաների իրականացումը։ Ծխախոտի կոնցեսիայի հանձնումը, որի արդյունքն առնվազն անգլիացիների ազդեցության ուժեղացումն էր, հակասում էր Ռուսաստանի քաղաքականությանը և հենց այդ պատճառով էլ, կոնցեսիայի բեկանման գործում ռուսները ոչ մի միջոցառումից չխուսափեցին»։

2. Իրանական առևտրական բուրժուազիան, անկախ այն բանից նա կապված էր ծխախոտի վաճառքի հետ, թե ոչ։ Կոնցեսիայի հոդվածների իրագործումը նրան սնանկացնում և անփոխհատուցելի վնասներ էր հասցնում, և նա միացավ շարժմանը համոզված, որ եթե այսօր ծխախոտի կոնցեսիան է տրվել անգլիացիներին, վաղն էլ մյուս բնագավառների կոնցեսիա կտրվի ուրիշներին։

3. Հոգևոր ղեկավարները և հայրենասիրական տարրերը, որոնք կոնցեսիան համարում էին շարիաթին հակառակ և երկրի անկախության և արժանապատվության հետ անհամատեղելի[100]։

Ինչպես տեսնում ենք, այստեղ ամբողջովին անտեսվում է աշխատավորական զանգվածների, ծխախոտագործ գյուղացիության, կամ քաղաքային չքավոր խավի դերը, որոնց շահերին կոնցեսիան հարվածում էր անմիջականորեն և որոնք ամենալայն մասնակցություն ունեին կոնցեսիայի դեմ ծավալված շարժմանը։

---

[99] Նույն տեղում։

[100] Նույն տեղում, էջ 48—49։

Անշուշտ, կան նաև բուրժուական պատմաբաններ, որոնց աչքից չի վրիպել այս հանգամանքը և նրանք արձանագրել են ժողովրդական լայն զանգվածների դերն օտարերկրյա մոնոպոլիաների դեմ ծավալված շարժումներին:

Մահմուդ Մահմուդն իր գրքի վեցերորդ հատորում այսպիսի մեջբերում է կատարում Ջիրոլի գրքից. «Ամբողջ Իրանում երևում է, որ ժողովուրդը դժգոհ է վիճակից: Նրանք հարցնում են, թե նոր պարտքերի այս հսկայական գումարները ո՞ւր են գնում: Բոլորը պարզ կերպով խոսում են այդ մասին: Այդ խոսակցություններն սկսվում են մայրաքաղաքի բազարներում և հասնում մինչև քարվանսարաները, այնտեղից տարածվում երկրի բոլոր կողմերը և հասնում ամենահեռավոր նահանգները: Մարդիկ իրենք իրենց հարց են տալիս, թե այս գործողությունների իմաստը ո՞րն է: Շատ տեղերում պարզորեն երևում են համընդհանուր դժգոհության արտահայտությունները, ... որոնք ամբողջովին արդյունք են նեխած իշխանության ազդեցության ընդարձակմանը: Բայց երկիրն օտարներին ծախելու մասին ժողովրդի ճիշը մի բան է, որի առաջ առնելը մինչև իսկ Աթաբեկ Ազամի պես զորեղ մարդու համար դժվար կլինի»[101]:

Ժողովրդական շարժմանն այդպիսի գնահատական է տալիս նաև Հասան Ազամ Ղոդսին իր «Իմ հուշերի գիրքը կամ հարյուրամյա պատմության լուսաբանումը» գրքում: Նա գրում է. «Պատմական տեսակետից իրանական հեղափոխությունը և ժողովրդական շարժումն սկսվեցին Նասր էդ Դին շահի օրոք և դրանց պատճառը ծխախոտի կոնցեսիայի հանձնումն էր օտարերկրացիներին...»[102]:

Ծխախոտի կոնցեսիայի և պարտքերի դեմ համաժողովրդական դիմադրության նշանակության մասին նման կարծիքի է նաև Մալեք զադեն:

«Անկասկած,—գրում է նա,—այն դիմադրությունը, որ առաջացավ Իրանի ծխախոտի մենաշնորհն անգլիական էմ ընկերության հանձնելու հետևանքով, Նասր էդ Դին շահի հիսունամյա թագավորության խոշորագույն իրադարձու-

---

101 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد ششم صفحه ۱۷۳۰

102 حسن اعظام قدسی، کتاب خاطرات من یا روشن شدن تاریخ صدساله، تهران ۱۹۶۳ صفحه ۳۸

թյուններից էր: Այս համընդհանուր շարժումը, որը կրոնական բնույթ ուներ, հետագայում մեծ չափով ազդեց Իրանում տեղի ունեցած իրադարձությունների վրա, որոնք ավարտվեցին սահմանադրական հեղափոխությամբ»[103]:

Այստեղ, անշուշտ, նկատվում է հոգևորականների դերի գերագնահատում: Ճիշտ է, արտաքուստ այդ շարժումը, ծխախոտի բոյկոտը, սկսվեց հոգևորականների կողմից տրված ֆեթվայով, սակայն նա ուներ ավելի խոր արմատներ և արտահայտում էր դասակարգային այն պայքարը, որը ծավալվում էր երկրում XIX դարի վերջերին և որը հասցրեց Իրանի 1905—1911 թթ. հեղափոխությանը:

Իրանական հեղափոխության պատմագիր Քասրավին ծխախոտի կոնցեսիայի դեմ երկրում ծավալված շարժումը բացատրում է մի փոքր այլ ձևով: Նա գրում է, որ երբ Նասր էդ Դին շահը ծխախոտի կոնցեսիան տվեց անգլիացիներին, ժողովուրդը նրա իմաստը չէր հասկանում, քանի որ ժողովրդական զանգվածները դեռևս չէին ըմբռնում երկրի լավն ու վատը և սովոր չէին միջամտել պետական գործերին: «Բայց երբ այդ կոնցեսիաների հետևանքով օտարերկրացիների թիվը Իրանում շատացավ,—գրում է նա,—հոգևորականները շհանդուրժեցին և սկսեցին դժգոհել ու գանգատվել, որը և բացեց ժողովրդի աչքերը, և շարժման ու դիմադրության շնորհիվ ծխախոտի կոնցեսիան բեկանվեց»[104]:

Մեկ այլ հեղինակ՝ Մոհամադ Հեջազին, ընդունելով, որ այդ շարժումը ժողովրդական էր և հսկայական չափեր ընդունելով հասցրեց կոնցեսիայի բեկանմանը, ավելի հոռետես է նրա հետագա հետևանքների հարցում:

Գնահատելով այդ հետևանքները, Մոհամադ Հեջազին գրում է. «Ռեժիի իրադարձությունը ժողովրդի արթնացման և բռնապետության դեմ դիմադրության զգացմունքների առաջացման պատճառ դարձավ: Բայց հետագայում նրանից ուրիշ արդյունքներ ստացվեցին. նա հյուսիսային և հարավային երկու հարևանների ազդեցության համար հող պատրաստեց, այն իմաստով, որ կառավարությունը Ռեժիի ընկերության վնասները վճարելու համար հինգ հարյուր հազար

103 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران تهران صفحه ۲۷۱

104 احمد کسروی، تاریخ مشروطه ایران تهران صفه ۱۵

ստեռլինգ պարտք վերցրեց անգլիական բանկից: Դա օտարերկրացիներից պարտք վերցնելու շրջանի և Իրանի դժբախտության սկիզբը հանդիսացավ»[105]:

Ծխախոտի կոնցեսիայի հետ կապված դեպքերի ընթացքը, հետագայում, այսպիսին էր. երբ Նասր էդ Դին շահը զգաց, որ ցարական Ռուսաստանը պահանջում է չեղյալ հայտարարել ծխախոտի կոնցեսիան, իսկ անգլիացիները համառորեն ցանկանում են այն պահպանել, խիստ անհանդըստացավ: Նա, միաժամանակ, սարսափում էր նաև երկրում ծավալված շարժման հետագա ընդարձակումից: Սկզբում շահը մտադիր էր զորք ուղարկել Ադրբեջան և շարժումն այդ մեջ խեղդել: Սակայն, հետագայում, հրաժարվեց այդ մտքից և հույսը կապեց ցարական Ռուսաստանի միջնորդության ու հարցի խաղաղ լուծման հետ: Ցարական Ռուսաստանը, նախնական հաջողություններից ոգևորված, ձգտում էր գործը մինչև վերջ հասցնել, և ուժեղացնում էր շահի և իրանական կառավարության վրա գործադրվող ճնշումը: Շահն ակամա որոշում է դիմադրել անգլիացիներին, չնայած գիտեր, որ կոնցեսիան բեկանելու դեպքում բացի այն, որ կկորցնի Անգլիայի հովանավորությունը, հարկադրված կլինի նաև մեծ գումարի փոխհատուցում վճարել: Նա նույնիսկ ստիպում էր, որ ռուսական հյուպատոսը Թավրիզից հեռագրի այն մասին, թե իբր փոխհատուցման հարցը կարգավորելուց անմիջապես հետո կոնցեսիան չեղյալ կհամարվի: Թագաժառանգին ևս այդպիսի բովանդակությամբ հեռագիր ուղարկելով, շահը ձգտում էր հանգստացնել հասարակական կարծիքը:

Հարցի լուծման համար ելք փնտրելու դիտավորությամբ Նասր էդ Դին շահը և Ամին էս Սոլթանը բազմաթիվ հանդիպումներ ունեցան անգլիական և ռուսական դիվանագիտական ներկայացուցիչների հետ: Անգլիան զգալով, որ մթնոլորտն իր օգտին չէ, նոր դեսպան ուղարկեց Թեհրան, հուսալով, այդպիսով, իր քաղաքական անհաջողության առաջն առնել: Ցարական Ռուսաստանը նույնպես փոխեց Իրանում իր

---

105 محمد حجازی، خلاصه تاریخ ایران تا انقراض قاجاریه تهران ۱۳۲۵ صفحه ۲۳۸

դեսպանին՝ գործը մինչև հաղթական ավարտ հասցնելու մտադրությամբ:

Թեյմուրին այն կարծիքն է հայտնում, որ Նասր էդ Դին շահը գիտակցում էր, որ այս պատմությունը, անկախ նրա ելքից, բոլոր դեպքերում ի վնաս իրեն է վերջանալու: Եթե կոնցեսիան բեկաներ, պալատականների ստացած կաշառքներն ինքը պիտի փոխհատուցեր: Եթե ժողովրդի դեմ պայքարի դուրս գար, դրա լուրջ հետևանքները նրա թագավորության վրա էր անդրադառնալու: Համենայն դեպս Նասր էդ Դին շահը համաձայնեց կոնցեսիան բեկանելու համար անգլիացիների հետ բանակցությունների մեջ մտնել: Ինչպես գրում է Թեյմուրին, Ամին էս Սոլթանը, համոզված, որ դա կհարվածեր թագավորության հեղինակությանը, շահին խորհուրդ էր տալիս այդպիսի քայլի չդիմել: Նա միաժամանակ հորդորում էր անգլիացիներին հրաժարվել բանակցություններից[106]:

Անգլիան լավատեղյակ էր Իրանում տիրող դրությանը և տեսնում էր ժողովրդի դժգոհությունն ու բողոքը: Բայց նա, Թեյմուրիի կարծիքով, «հույս էր դրել Նասր էդ Դին շահի ստորագրության հեղինակության, կաշառք տրված դրամի հզորության և իրանական ղեկավարների փողասիրության ու ստորության վրա»[107]: Հաջողության հասնելու նպատակով անգլիացիները շարունակում էին ընդարձակել մոնոպոլիայի գործունեությունը և, այդպիսով, է՛լ ավելի զրգռում ժողովրդական մասսաներին:

Ի վերջո, անգլիացիները տեսնելով երկրում առաջացած համընդհանուր դժգոհությունն ու իրանական կառավարության կատարյալ անկարողությունը, ինչպես նաև իր նկատմամբ Իրանում տարբեր երկրների դեսպանների և, հատկապես, ռուսական դեսպանի անբարյացակամությունը, Անգլիայի հեղինակությունը է՛լ ավելի չարատավորելու նպատակով, այնուամենայնիվ համաձայնվում են բանակցություններ սկսել: Նրանք հարցի լուծումն արագացնում էին նաև ընկերությանը հետագա ծախսերից ու վնասներից զերծ պահելու նպատակով:

---

106 ابراهیم تیموری، قرارداد ۱۸۹۰ رژی... صفحه ۹۹

107 Նույն տեղում, էջ 100:

Սակայն, ինչպես վկայում է Թեյմուրին, ժողովրդի օրեցօր սաստկացող դիմադրությունն այնպիսի չափերի էր հասել, որ դաջարական դինաստիային կործանման լուրջ վտանգ էր սպառնում: Մյուս կողմից երկրում ծավալված ծխախոտի օգտագործման համընդհանուր բոյկոտի հետևանքով գնալով մեծանում էր ընկերության նյութական վնասները և արատավորվում Անգլիայի քաղաքական հեղինակությունը: Այս ամենը հասցրեց այն բանին, որ իրանական կառավարությունը և Անգլիան համաձայնվեցին բանակցություններ սկսել՝ խնդիրը երկու կողմերի համար ընդունելի պայմաններով լուծելու համար[108]:

Աբբաս Միրզա Մալեք Արան հավաստում է, որ իրանական ղեկավարները անգլիացիներից մեծ գումարներ կաշառք էին վերցրել և այժմ վախենում էին մերկացվել: Բացի այդ, նրանք լավ գիտեին, որ կոնցեսիան բեկանվելու դեպքում, ընկերությունը կպահանջի իր վնասների հատուցումը, ուստի նրանք բոլորը, չնայած միմյանց նկատմամբ տածած թշնամանքին, ստեղծված նոր պայմաններում իրենց ընդհանուր շահերը պաշտպանելու համար միացել և բարեկամացել էին: Ամին էս Սոլթանը մոնոպոլ ընկերության կառավարիչին մեծ գումար էր խոստացել, պայմանով, որ վերջինս չհրապարակի նրանցից յուրաքանչյուրին տրված կաշառքի չափը[109]:

«Երբ բանակցություններն սկսվեցին,—գրում է Թեյմուրին,—անգլիացիները հանդես եկան անտեղի հավակնություններով: Ընկերության կառավարիչը պնդում էր, որ կոնցեսիոն իրավունքը ձեռք բերելուց հետո, գործի նախապատրաստական աշխատանքների համար Իրանում ծախսել է ավելի քան մեկ միլիոն երկու հարյուր հազար թուման: Այդ գումարից ավելի քան չորս հարյուր հազար թումանը որպես նվեր տվել էր կառավարության ղեկավարներին»[110]: Այդ բանակցությունների մանրամասնությունների մասին տեղեկություններ չեն պահպանվել և այդ մասին որևէ արձանագրություն էլ չի մնացել, սակայն Նասր էդ Դին շահի էթեմադ

---

108 Նույն տեղում, էջ 175:

109 Նույն տեղում, էջ 205:

110 Նույն տեղում, էջ 206:

էս Սալթանեին գրած մի նամակից հայտնի է դառնում, որ անգլիացիների հավակնությունները շատ մեծ էին և առաջարկված պայմանները՝ շատ ծանր։ Նամակում գրված է. «պետք է հարցնել, թե մեզանից պահանջվող վնասների այդ գումարը որտեղի՞ց է գոյացել։ Արդյոք անգլիական կառավարությունը կամ Ռեժիի ընկերությունը մեզ հետ ի՞նչ ըսկըզբունքով են վարվում՝ որպես քաղաքակիրթ ժողովրդի ու պետությա՞ն, թե՞ որպես անիրավ բարբարոսների հետ»[111]։

Ինչպես հայտնի է, այս ամբողջ պատմությունն ավարտվեց հօգուտ Իրանի։

Քննարկելով այդ հաղթանակի պատճառները, Թեյմուրին հանգում է այն եզրակացության, որ «չնայած այս պայքարում անգլիացիների պարտության հիմնական պատճառն իրանական ժողովրդի դիմադրությունն ու պայքարն էր, սակայն, քանի որ իրանական թատերախմբում Անգլիայի հզոր մրցակիցը Ռուսաստանն էր և այս պարտությունից հետո ակնհայտ էր, որ ցարական Ռուսաստանի ազդեցությունը փոխարինելու է անգլիականին, ուստի իրանական կառավարության ղեկավարները, նույնիսկ շահը, գեմքները դարձնում են դեպի հյուսիսային հարևանը, դեպի ռուսական դեսպանությունը»[112]։

Հետաքրքիր է նշել, որ ֆեոդալական ազնվականության շահերի արտահայտիչ, մեր կողմից արդեն հիշատակված Յահյա Դավլաթաբադին առաջ է քաշում տարօրինակ մի տեսակետ։

Նա գրում է. «Ռուսաստանի քաղաքականության ծանրակշիռ դառնալը և նրա գերազանցությունը անգլիական քաղաքականությունից մեզ համար վտանգավոր էր։ Ոչինչ չէր կարող Ռուսաստանի քաղաքականությունը սահմանափակեր, բացի անգլիացիներին տրված հենց այս կոնցեսիայից[113]։ Բայց ահա Դավլաթաբադիի հաջորդ իսկ արտահայտությունը ցույց է տալիս նրա մտավախության իսկական շարժառիթը։ Նա գրում է. «Երկրում ծավալված շարժման հիմքն արհեստական է և անգլիացիներին չեզոքացնելու հա-

---

111 Նույն տեղում։

112 Նույն տեղում, էջ 215։

113 یحیی دولت آبادی، حیات یحیی جلد اول تهران ۱۹۵۷ صفحه ۱۰۷

մար է։ Բայց այն կարող է ուղղվել պետության դեմ, քանի որ շարժումը կույր է, և ինչ կողմ ասես կարող է գնալ»[114]։

Ինչպես տեսնում ենք, հեղինակին անհանգստացնում է այն հանգամանքը, որ կոնցեսիայի դեմ ծավալված շարժումը կարող էր ուղղվել ամբողջ հասարակական կառուցվածքի դեմ և խորտակել ֆեոդալական հասարակարգը՝ ի դեմս զաջարական դինաստիայի։

Ծխախոտի կոնցեսիայի դեմ երկրում ծավալված համընդհանուր շարժման պատմության շարադրանքը մեր խնդրից դուրս է։ Սակայն մենք կուզենայինք կանգ առնել միայն երկու հարցի վրա։

Դրանցից առաջինը կապված է շարժման դրդապատճառների խնդրին, որին մենք արդեն անդրադարձել ենք։ Որոշ հեղինակներ փորձել են հիշյալ շարժման հիմնական հրահրիչ համարել պանիսլամիզմի հիմնադիր Սեյեդ Ջամալ էդ Դին Աֆղանիին, որի հակաիմպերիալիստական տրամադրություններն ակնհայտ էին։ Մահմուդ Մահմուդը իր աշխատության հինգերորդ հատորում վստահորեն հայտարարում է. «... ոչ մի կասկած չկա, որ Իրանում ծխախոտի դեմ ծավալված շարժումը հիմնականում Սեյեդ Ջամալ էդ Դինի միջոցառումը պետք է համարել»[115]։

Հայտնի է, որ Ջամալ էդ Դինը դեմ էր իմպերիալիստական տերությունների տնտեսական և քաղաքական ներթափանցմանը մուսուլմանական աշխարհ, այդ թվում և Իրան։ Ակնհայտ է նաև, որ Ջամալ էդ Դինը հրահրում էր շիական հոգևոր ղեկավարներին պայքարել ծխախոտի կոնցեսիայի դեմ։ Սակայն նրան, իհարկե, դժվար թե կարելի լինի համարել շարժման գլխավոր շարժիչ ուժերից մեկը։

Այս հարցին, մեր կարծիքով, ավելի ճիշտ բացատրություն է տալիս Նազեմ օլ էսլամ Քերմանին։ Նա գրում է, որ Իրանի ժողովուրդը հասկացավ կոնցեսիայի վտանգավորությունը երկրի հետագա զարգացման համար։ «Նա գիտեր,— գրում է Քերմանին,—որ այսօր օտարերկրացիները ծխախոտն են վերցնում, վաղն էլ, ընչին գումարի դիմաց աղը, ցախը, ածուխը, ջուրը և այլն կվերցնեն։ Ստացած գումարները

114 Նույն տեղում, էջ 107։

115 محمود محمود، تاریخ روابط سیاسی...جلد پنجم صفحه ۱۲۱۴

երկրի բարեկեցության համար չեն ծախսվելու, այլ գնալու են այսինչ արքայազնին՝ որպես ռոճիկ, այսինչ աղայի որդուն որպես նպաստ, կամ վատնվելու են Եվրոպա կատարած ճամփորդությունների կամ ինչ-որ գեղեցկուհու քմահաճույքները բավարարելու համար: Ժողովուրդը վնաս է կրում, օտարները օգուտ են քաղում և իրենց կատարյալ տիրապետությունը հաստատում երկրի վրա»[116]:

Չի կարելի համաձայնվել նաև մի քանի հեղինակների հետ այն հարցում, որ Նասր էդ Դին շահը և նրա կառավարությունն, իբր, ինչ-որ հանգամանքներից ելնելով բռնի միջոցների չէին դիմում ծխախոտի կոնցեսիայի դեմ ծավալված ժողովրդական շարժումը ճնշելու համար:

Էթեմադ էս Սալթանեն, որը, ինչպես նշել ենք, այդ ժամանակ վեզիր էր, վկայում է, որ «երբ հեռագիրը Շիրազի ապստամբության լուրը Թեհրան բերեց, ընկերության կառավարիչը և անգլիական դեսպանը իմ մոտ եկան և ասացին. քանի դեռ շուտ է, պետք է լուրջ կերպով այս խռովությունը ճնշել, եթե ոչ այս հիվանդությունը ուրիշ տեղեր էլ կվարակի և Իրանի ոչ մի նահանգում գործերն առաջ չեն գնա»[117]:

Իսկ Աբոլֆազլ Ղասեմին, խոսելով ծխախոտի կոնցեսիայի դեմ երկրում ծավալված շարժման և նրա դեմ կառավարության կիրառած միջոցառումների մասին, մեջբերում է ժամանակի մեծ վեզիրի վկայությունը Ֆարսի խոշոր կալվածատեր Ղավամ օլ Մոլքի կատարած վայրագությունների մասին:

Փաստաթղթում ասված է. «Այն ժամանակ, երբ ծխախոտի մոնոպոլիայի պատմությունը անհաջող ընթացք ընդունեց և հանդիպեց ժողովրդի ուժգին դիմադրությանը, Շիրազում նույնպես մեծ խռովություն ծագեց և ժողովուրդն ըմբոստացավ: Ես մի նամակ գրեցի Ղավամ օլ Մոլք Շիրազիին և նրան հանձնարարեցի ճնշել խլրտումը:

Ֆարսի նահանգապետ Մոթամեդ օլ Մոլքը վախկոտ մի

---

116 ناظم الاسلام کرمانی، تاریخ بیداری ایرانیان مجلد اول تهران صفحه ۱۱

117 اسرار انحطاط ایران یا خواب نامه مرحوم اعتمادالسلطنه مشهد صفحه ۱۰۶

անձնավորություն էր, և Կավամ օլ Մոլքը իր զորքով շարժվեց դեպի կենտրոնական մզկիթը, ուր հավաքվել էր ժողովուրդը և պահանջում էր կոնցեսիայի բեկանումը: Ղավամի մարդիկ անմեղ ժողովրդին դնդակոծեցին և խեղճ մարդկանց սվինահարեցին: Անզեն ժողովուրդը մզկիթից փախավ դեպի էմամ զադե Շահչերաղ և այնտեղ ապաստան գտավ, բայց Ղավամի արյունարբու և դաժան ծառաները արյունահեղությունը չդադարեցրին, և մուտք գործելով էմամ զադե՝ այնտեղ էլ կոտորած կազմակերպեցին»[118]:

Թեհրանում ևս ծխախոտի կոնցեսիայի դեմ գաղտնի նամակների տարածումից հետո պետական անվտանգության մարմինները գործի անցան, խուզարկեցին կասկածելի տները և բազմաթիվ մարդկանց ձերբակալեցին:

Ինչպես տեսնում ենք, իրանական կառավարությունը և անձամբ շահը ամենադաժան եղանակներով փորձում էին ճնշել երկրում ծավալված շարժումը, և պարսիկ որոշ հեղինակների պնդումը նասր էդ Դին շահի ժողովրդասիրության կամ մեղմության մասին միանգամայն անհիմն է:

Ինչպես նշեցինք, որոշ հեղինակներ այն կարծիքն են հայտնում, որ ծխախոտի կոնցեսիայի բեկանումով թուլանում էր Անգլիայի ազդեցությունն Իրանում և, համապատասխանորեն, ուժեղանում էր ցարական Ռուսաստանի ազդեցությունը: Իրանական իշխող շրջանները նույնպես, ելնելով իրադրությունից, հակվեցին դեպի ցարական Ռուսաստանը: Ինչպես նշում է Մահմուդ Մահմուդը, մեծ վեզիր Ալի Ասղար խան Աթաբեկը, որ մինչև ծխախոտի կոնցեսիայի բեկանումը ծառայում էր Անգլիային և «անգլիական դեսպան Դորթմունդ Վոլֆի հաջողությունները շահի պալատում ամբողջովին Աթաբեկի համագործակցության և օժանդակության հետևանքով էին»[119], կոնցեսիայի բեկանումից հետո Իրանում Անգլիայի քաղաքականության առաջընթացի միակ արգելքն էր համարվում: Այցելելով ռուսական դեսպանատուն, Աթաբեկը խոստանում է օգնել ցարական Ռուսաստանին և «քանի կենդանի է հովանավորել Իրանում ռուսական

---

118 ابوالفضل قاسمی، تاریخ سیاه یا حکومت خانواده‌ها در ایران
I خانواده قوام‌الملك--۱۹۵ صفحه ۲۰

119 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد ششم صفحه ۱۶۷۹

կայսրության քաղաքականությունը»[120]: Մահմուդն ավելացնում է, որ Աթաբեկը նաստ էդ Դին շահին ևս կարողացավ համոզել, և դրանից հետո Իրանում Անգլիայի քաղաքական ազդեցությունն իր տեղը զիջեց ցարական Ռուսաստանի քաղաքական ազդեցությանը:

Մի ուրիշ տեղ Մահմուդ Մահմուդը նորից կրկնում է, որ Անգլիայի և Իրանի հարաբերությունները փչացան, սկսած ծխախոտի կոնցեսիայի բեկանումից, և որ այդ քայլով շահն ու Աթաբեկը անգլիացիներից կտրվեցին և միացան ռուսներին: «Շահը և Աթաբեկն այնպես էին խաբվել,—գրում է նա,—որ այլևս ուրիշ ելք չունեին, քան ապավինել ռուսներին: Ռուսների օժանդակությունը և հովանավորությունն ապահովելուց հետո էր, որ շահը համարձակվեց Ռեժիի կոնցեսիան բեկանել: Անգլիացիներն ընդամենը մի քանի հազար ստերլինգ էին ծախսել, մինչդեռ շահը ստիպված եղավ հինգհարյուր հազար ստերլինգ վճարել և իրեն փրկել»[121]:

«Ընդհանրապես այդ թվականից հետո,—գրում է Մահմուդը,—Ռուսաստանի և Իրանի նկատմամբ Անգլիայի քաղաքականությունը գործնականում փոխվում է: Հենց այդ թվականին է (1892), որ Էդվարդ Գրեյը պաշտոնի է անցնում և մշակում իր հայտնի ծրագիրը, որի արդյունքն եղավ 1907 թ. պայմանագիրը»[122]:

Հայտնի է, որ Անգլիան իր կորցրած հեղինակությունը վերականգնելու համար փոխեց իր քաղաքականությունն Իրանում: Նախ, Անգլիան միջոցառումներ ձեռնարկեց Աթաբեկին իշխանությունից հեռացնելու համար, իսկ հետո դիմեց նաև մի շարք այլ քայլերի, որոնք հեռուն գնացող հետևանքներ ունեցան Իրանի համար:

Մահմուդ Մահմուդը գտնում է, որ այդ միջոցառումներից մեկն էլ Իրանում ֆրամասոնական կազմակերպությունների ստեղծումն էր: «Դա մի հրդեհ էր,—գրում է հեղինակը,—որն այրեց Իրանը և իրանական ժողովրդին տարբեր տանջանքներ և զրկանքներ պատճառեց: Հավատացեք, որ այն օրվանից, երբ ֆրամասոն անունը այս երկիրը մտավ և լոն-

---

120 Նույն տեղում:

121 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد ششم صفحه ۱۷۶۷

122 Նույն տեղում, հատ. 4, էջ 1200:

դոնի թելադրանքով Իրանում ստեղծվեց նրա գաղտնի կազմակերպությունը, հենց այդ օրվանից էլ սկսվեց իրանական ժողովրդի դժբախտությունն ու սև օրը։ Հենց որ դժգոհ տարրերը և միամիտները, իսկ հետագայում ավանտյուրիստներն ու ժուլիկներն այդ կազմակերպության շուրջը հավաքվեցին, այդ օրվանից էլ Իրանի պետության հիմքերը քայքայվեց և անվտանգությունը երկրից վերացավ»[123]։

* * *

Իրանի տնտեսական ստրկացման կարևոր օղակ էր նաև մաքսատների տնօրինությունն օտարերկրացիներին հանձնելը։ Հայտնի է, որ արտաքին առևտուրը ինչ-որ չափով հսկողության էր ենթարկվում մաքսատների կողմից, որոնք, չնայած, առանձնապես լավ չէին կազմակերպված, սակայն, այնուամենայնիվ, երկրում տիրող տնտեսական համընդհանուր անարխիայի պայմաններում այդ բնագավառը կարգավորող միակ հիմնարկներն էին։ Մաքսատները ոչ միայն կանոնավորում էին օտարերկրյա ապրանքների ներմուծումն, այլև պետական բյուջեի խոշոր աղբյուր էին հանդիսանում, մի հանգամանք, որը արտակարգ նշանակություն էր ստանում գանձարանի մշտական ճգնաժամային վիճակի հետևանքով։ Եվ պատահական չէ, որ օտարերկրյա գաղութարարներին առաջին հերթին հետաքրքրեց հենց մաքսատների հարցը, որոնց վրա իրենց հսկողությունը հաստատելով, նրանք փաստորեն անարգել կարող էին ընդարձակել իրենց ներմուծումները և իրանական կառավարությանն իրենցից կախման մեջ գցել։

Պետք է ասել, որ այդ բնագավառը նույնպես անգլոռուսական մրցակցության և հակամարտության առարկա դարձավ։ Հատկապես XIX դարի վերջերին և XX դարի ընկզբներին Իրանի մաքսատների հարցը բավական սրվեց և իմպերիալիստական երկրները տնտեսապես իրենցից կախման մեջ ընկած իրանական կառավարությանը տարբեր պարտքեր տալու գործը կապում էին մաքսատների վրա հսկ-

---

[123] Նույն տեղում, էջ 1219։

կողություն հաստատելու իրավունքի հետ: Իրանական կառավարությունը մաքսատների գործը կարգավորելու համար մասնագետներ էր հրավիրել Բելգիայից, որոնք, սակայն, ամբողջովին ծառայում էին իմպերիալիստական պետությունների շահերին: Երբ 1903 թվականի ապրիլին, Ամին էս Սոլթանի մեծ ջնեզիրության ժամանակ, անգլիական իմպերիալիստները հերթական պարտքը տվեցին Իրանին, ապա դա տեղի ունեցավ անգլո-իրանական մաքսային պայմանագրի կնքումից հետո միայն: Ազատվելով աշխարհի տարբեր մասերում ունեցած հոգսերից, հատկապես հարավային Աֆրիկայում բուրերի դեմ մղվող պատերազմից, անգլիական կառավարությունը սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել Իրանում իր դիրքերի ամրապնդման գործին: Իրանի շահին պարգևատրելով բարձրագույն շքանշանով, Անգլիան իրանական կառավարությանը ստիպեց ստորագրել 1903 թվականի փետրվարի մաքսային պայմանագիրը, և, այնուհետև, նրան երկու հարյուր հազար ստեռլինգ պարտք տվեց՝ ձրկնորսության, կապի և հարավի մաքսատների եկամուտների երաշխիքի դիմաց: Այդ գումարը, իբր, պարտք էր տալիս Հնդկական իշխանությունը՝ «Շահնշահի բանկի» միջոցով:

Դրանից դեռևս չորս տարի առաջ, ինչպես արդեն նշել ենք, ցարական Ռուսաստանը, նույնպես, 22,5 միլիոն ռուբլի պարտք տվեց իրանական կառավարությանը՝ հյուսիսային շրջանների մաքսատների երաշխիքի դիմաց: (Մաքսատների խորհրդատուն այդ ժամանակ Բելգիացի Նոուզն էր, որը բավական բացասական դեր է կատարել Իրանի նոր պատմության մեջ): Այդ պարտքից հետո ցարական Ռուսաստանը իր հսկողությունը հաստատեց Իրանի մաքսատների վրա: Ցարական Ռուսաստանը, իրանական մաքսատների եկամուտներն ավելացնելու նպատակով, փոխեց մաքսային տարիֆները, իհարկե, հօգուտ իրեն: Հետագայում, երբ Մոզաֆար էդ Դին շահը երկրորդ անգամ պարտք խնդրեց ցարական կառավարությունից, ապա վերջինս համաձայնվեց պարտք տալ տասը միլիոն ռուբլի, պայմանով, որ ռուսական բանկին կոնցեսիա տրվի Ջուլֆայից Ղազվին խճուղի կառուցելու համար և մաքսային տարիֆը փոխվի հօգուտ Ռուսաստանի: Էբրահիմ Թեյմուրին դեռևս Թուրքմենչայի պայմանագրով

հաստատված և 80 տարի գոյություն ունեցող մաքսային տարիֆը փոխելու ցարական կառավարության այս առաջարկությունը բացատրում է նրանով, որ Ռուսաստանում զարգանում էր արդյունաբերությունը, ընդարձակվում էր առևտուրը և անհրաժեշտ էր հարմար շուկաներ ձեռք բերել։ Թույլ և պարտքերի մեջ խրված Իրանն, այդ իմաստով, ամենահարմար օբյեկտն էր, քանի որ ռուսական ապրանքների ներմուծման ընդարձակումով, բացի առևտրական շահերից, Իրանի արհեստավորական ձեռնարկությունները կքայքայվեին, առևտուրը, գյուղատնտեսությունը, անասնապահությունը մեծապես կվնասվեր, ժողովուրդը ստիպված դեպի ռուսական քաղաքները կքոչեր և երկիրը այնպիսի ծանր վիճակի մեջ կընկներ, որ ցարական կառավարությունը հեշտությամբ կկարողանար իր տիրապետությունը հաստատել Իրանի հյուսիսային նահանգների վրա[124]։

Թեյմուրին հիշեցնում է, որ մեծ վեզիր Ամին էս Սոլթանը ռուսական կողմնորոշում ուներ, և մինչև իր իշխանության վերջը միակողմանի քաղաքականություն էր վարում։ Մաքսատան Բելգիացի մասնագետները, հետևելով մեծ վեզիրին, իրենց ամբողջ գործունեությունը համապատասխանեցնում էին ցարական շահերին։ Հատկապես Նոուզը վայելում էր ցարական Ռուսաստանի հովանավորությունը և նրանց օգնությամբ շուտով դարձավ ամբողջ մաքսային գործի միակ ղեկավարը՝ մաքսատների կառավարիչը, իսկ հետո նաև վեզիրը։ Թեյմուրին գրում է. որ «Բելգիացի խորհրդատուներն այնպես էին պաշտպանում Ռուսաստանի շահերը, որ Իրանի ժողովրդի մեծ մասը բելգիացիներին համարում էր ռուսահպատակ և ցարական ներկայացուցիչներ»[125]։

Մաքսային տարիֆները իր օգտին փոխելու հարցն առաջ քաշելով, ցարական կառավարությունը քաջ գիտակցում էր, որ այդ քայլը մեծապես կհարվածի Անգլիայի առևտրին։ Եթե անգլիացիներին չհաջողվեր մաքսային տարիֆները նույնպես իրենց օգտին փոխել, ապա նրանք կարող էին, ելնելով հավասար իրավունքների սկզբունքից, վկայակոչել իրանա-օսմանյան մաքսային պայմանագիրը և պահան-

---

124 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۳۹۱

125 Նույն տեղում, էջ 393։

ջել, որ օսմանյան հպատակների նման անգլիական հպատակներից ևս չորս տոկոս մաքսագանձվի, որը ոչ միայն չէր համապատասխանում ցարական Ռուսաստանի հետապնդած նպատակներին, այլև մեծապես կհարվածեր նրա առևտրին: Ուստի, անգլիացիների այդ ուղին փակելու և իրանա-օսմանյան մաքսային պայմանները իրանա-ռուսական պայմաններին ենթարկելու համար, 1901 թվականի իրանա-ռուսական մաքսային պայմանագիրը գաղտնի պահվեց, մինչև որ 1902 թվականի օգոստոսին փոխվեց իրանա-օսմանյան մաքսային պայմանագիրը:

Իրանա-օսմանյան մաքսային պայմանագիրը փոխելու համար ցարական կառավարությունը Բելգիացի Նոուղին ուղարկում է Ստամբուլ, և իրանական ու օսմանյան կառավարություններին ճնշման տակ դնելով, ինչպես նաև որոշ կաշառքներ տալով հասնում է իր նպատակին:

Այսպիսով, ռուս-իրանական մաքսային տարիֆի փոփոխումը տեղի ունեցավ 1901 թվականի հոկտեմբերի 27-ի պայմանագրով՝ Իրանին նոր պարտք տալու բանակցությունների ժամանակ:

Ինչ վերաբերում է պայմանագրի տնտեսական հետևանքներին, ապա այն, նախ և առաջ, քայքայում էր Իրանի արհեստագործական արդյունաբերությունը: Ցարական կառավարությունը շահագրգռված էր միայն Իրանի հումքով, ինչպես օրինակ՝ բոդով, բամբակով, կանեփով, կաշվի հումքով և այլն: Մինչդեռ իրանական արտադրանքի և գործվածքեղենի մուտքը Ռուսաստան արգելվում էր, կամ նրանց վրա մեծ մաքսեր դնում: Իրանական առևտրականների վկայությամբ, Իրանի արտահանման ապրանքներից մի քանիսը զրկվում էին իրենց շուկայից: Ռուսական ապրանքների ցածր մաքսերի պատճառով ներքին արդյունաբերության դիմադրությունը և մրցակցությունը դժվարանում և անհնար էր դառնում: Ռուսական ներմուծվող ապրանքների, հատկապես շաքարի, կտորեղենի, նավթի մաքսերը շատ ցածր էին:

«Վերջապես,—գրում է Թեյմուրին,—եթե նոր տարիֆը Իրանի տնտեսությունը խեղդելու տարիֆ անվանենք, չափազանցրած չենք լինի, քանի որ նրա նպատակն Իրանում ռուսական առևտրի և գյուղատնտեսության զարգացումն էր,

իրանական առևտրի արգելակումը Ռուսաստանում: Դա իր հետ բերում էր իրանական շուկայի գրավումը ցարական Ռուսաստանի արդյունաբերության և առևտրի կողմից»[126]:

Իրանի մաքսային տարիֆը փոխելով, ցարական Ռուսաստանը նաև նպատակ էր հետապնդում ավելացնել անգլիական և հնդկական ապրանքների մաքսերը, որպեսզի նրանք չկարողանային մրցակցել ռուսական ապրանքների հետ: Այդ պատճառով էլ, Անգլիայի բողոքից խուսափելու համար, ինչպես արդեն նշել ենք, սկզբնական շրջանում պայմանագիրը գաղտնի պահվեց: Թեհրանում անգլիական դեսպանությունն այդ մասին որոշ տեղեկություններ ստացել էր, բայց չէր կարողանում հավատալ, որ իրանական կառավարությունն առանց Անգլիայի համաձայնության այդպիսի քայլի դիմի: Աղբյուրները վկայում են, որ երբ ռուս-իրանական մաքսային պայմանագիրը հրապարակվեց, անգլիական մամուլը մեծ աղմուկ բարձրացրեց և այն դատապարտող բազմաթիվ հոդվածներ տպագրեց, մեղադրելով նաև անգլիական կառավարությանը, որ նա պայմանագրի կնքումը կասեցնելու հարցում թերացել է[127]:

Ռեզա Սաֆա Նիան, իր «Իրանի մաքսային անկախությունը» գրքում, քննարկելով ցարական Ռուսաստանի՝ Իրանին պարտադրած մաքսային այս պայմանագիրը, գրում է. «Ռուս-իրանական մաքսային այս պայմանագիրը մեծապես վնասաբեր էր, նույնիսկ, կարելի է ասել, որ այդ պայմանագիրն անհամեմատ ավելի ծանր էր, քան Գոլեստանի և Թուրքմենչայի պայմանագրերը»: Հեղինակն այն կարծիքն է հայտնում, որ նոր պայմանագիրն Իրանի համար աղետաբեր և կործանիչ էր թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական տեսակետից: Քաղաքական առումով այն զրկում էր Իրանին իր մաքսատները տնօրինելու, մաքսային տարիֆները փոխելու, ներմուծումների ու արտահանումների մաքսերը պակասեցնելու կամ ավելացնելու իրավունքից: «Այսպիսով,—գրում է հեղինակը,—պայմանագրի յոթ հոդվածները փաստորեն յոթ օղակներ էին, որոնք կաշկանդում էին Իրանի ձեռքն ու ոտքը և երկիրը գցում այնպիսի վիճակի մեջ, որն ավելի վատ էր,

---

126 Նույն տեղում, էջ 403:

127 Նույն տեղում, էջ 405:

քան խնամատարության տակ գտնվող կամ, մինչևիսկ, գաղութային երկրի վիճակից»[128]:

Ռուս-իրանական մաքսային այդ պայմանագիրը, Անգլիայի քաղաքական ներկայացուցիչների կարծիքով, ամենամեծ հարվածն էր, որ հասցվել էր Իրանում բրիտանական քաղաքական և տնտեսական շահերին: Ինչպես գրում է Մահմուդ Մահմուդը, Անգլիայի արտաքին գործերի մինիստրությունը շտապ կերպով Թեհրան ուղարկեց Լորդ Դեոնին, որն իր հետ շահի համար բարձր շքանշան էր բերում, և որին հանձնարարված էր նման մի մաքսային պայմանագիր կնքել Իրանի հետ, որպեսզի ռուս-իրանական պայմանագրի իրականացման դեպքում Անգլիայի առևտուրն Իրանում չտուժեր[129]: Անգլիական կառավարությունն այն կարծիքին էր, որ Թեհրանում անգլիական ներկայացուցիչներին փաստորեն խաբել են և այդ պայմանագիրն ստորագրելով, իրանական կառավարությունը հանցանք է գործել, քանի որ առանց Անգլիայի գիտության և ամբողջովին ի վնաս նրան է այդ քայլին դիմել:

Ամեն պարագայում, անգլիական կառավարության որոշ հնշումից հետո, 1903 թվականի փետրվարի 9-ին, ռուս-իրանական պայմանագրի օրինակով, նույնպես յոթ հոդվածից բաղկացած, մի պայմանագիր կնքվեց Իրանի և Անգլիայի միջև: Հետաքրքրական է, որ Ռուսաստանի ու Անգլիայի հետ կնքած մաքսային այդ պայմանագրերի հինգերորդ հոդվածում ուղղակիորեն նշված էր, որ «Մաքսային վարչությունը պետք է մի ընդհանուր կանոնադրություն կազմի՝ ռուսական և անգլիական դեսպանությունների համաձայնությամբ[130]:

Էբրահիմ Թեյմուրին, գնահատելով 1901 թվականի ռուս-իրանական և 1903 թվականի անգլո-իրանական մաքսային պայմանագրերը, գրում է, որ դրանք «տնտեսական ստրկության նենգ շղթաներ էին, որ Մոզաֆար էդ Դին շահի թագավորության օրոք, Միրզա Ալի Ասղար խան Ամին էս Սոլթանի

---

128 رضا صفا نیا، استقلال گمرکی

129 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد ششم صفحه ۱۶۷۳

130 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۴۰۹

միջոցով հագցվեցին իրանական ժողովրդի ձեռքերին ու ոտքերին[131]։

*

* *

Իրանի տնտեսական ստրկացման և ընդհանրապես իմպերիալիստական տերությունների ռազմա-ստրատեգիական պլանների իրականացման տեսակետից մեծ կարևորություն ուներ ճանապարհների կառուցումը և նրանց հսկողությունը։ Այդ բնագավառը ևս դուրս չմնաց Անգլիայի և ցարական Ռուսաստանի ուշադրությունից։

Իմպերիալիստական այս տերություններին հատկապես հետաքրքրում էր Կասպից ծովը Պարսից ծոցին միացնող երկաթգծի կառուցման հարցը։

Հայտնի է, որ անգլիացիները այդպիսի երկաթգիծ կառուցելու իրավունք ստացան 1872 թվականի կոնցեսիայով։

Ինչպես արդեն նշել ենք, կոնցեսիան նախատեսում էր Անգլիային տրամադրել ամբողջ Իրանի բնական հարստությունների շահագործումը, ինչպես նաև երկաթուղիների ու ճանապարհների կառուցումը[132]։

Այս կոնցեսիայի իրականացումը հանդիպեց մեծ դժվարությունների, մասնավորապես ցարական Ռուսաստանի խիստ դիմադրությանը։ Պարսիկ հեղինակ Մահմուդ Մահմուդը չի գտնում, սակայն, որ անգլիացիների պլանների խափանման հիմնական պատճառը ցարական դիմադրությունն էր։ Նրա կարծիքով, իրենք անգլիացիներն էլ, դեռևս այն ժամանակ գիտակցում էին նման պլանի իրականացման անհնարինությունը, և այդ քայլին դիմեցին միայն քաղաքական ցուցադրական նպատակներով։ Նրանք, ըստ Մահմուդի, կոնցեսիան օգտագործում էին ցարական կառավարությանն սպառնալու և ուրիշ հարցերում նրանից զիջումներ կորզելու նպատակով։ Որպես օրինակ նա բերում է Աֆղանիստանի հարցը. հենց որ ցարական կառավարությունը այդ հարցում տեղի տվեց, և անգլիացիները հասան իրենց նպատակին, ապա Կասպից ծովը Պարսից ծոցին միացնող եր-

---

131 Նույն տեղում, էջ 391։

132 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد پنجم صفحه ۱۲۲۸

կաթգծի կառուցման հարցը ևս օրակարգից դուրս եկավ[133]։ Հեղինակն, այնուհետև, շարունակում է, որ Անգլիան ձգտում էր երկաթգծի կառուցման իրավունքն իր ձեռքը վերցնել մասամբ նաև այն պատճառով, որ վախենում էր, թե ռուսներն այդ հարցում իրենց կկանխեն։ Նրանք շահին և իրանական մյուս ղեկավարներին համոզում էին, որ ռուսները դեմ են Իրանի զարգացմանը և արգելակում են ամեն մի բարեփոխություն։ Եթե այժմ ցարական Ռուսաստանը հակադրվում է այդ երկաթգծի կառուցման պլաններին, ապա պատճառն այն է, որ ցանկանում է Իրանի հետամնացությունը պահպանել և թույլ չտալ նրա առաջընթացն ու բարգավաճումը[134]։

Սակայն, չնայած երկաթգծի կառուցման պլանները ձախողվեցին, անգլիական իմպերիալիստներն, այնուամենայնիվ, ձեռնամուխ եղան մի շարք ճանապարհների կառուցման, որոնք անհրաժեշտ էին երկրի հարավում նրանց տնտեսական և քաղաքական տիրապետությունն հաստատելու համար։

Ռեյտերին տված կոնցեսիայի համաձայն, 90-ական թվականներին անգլիացիները կառուցեցին մի շարք ճանապարհներ։ Դրանցից էին, օրինակ, Թեհրանից Ղոմ և Սուլթանաբադ, Թեհրանից, Էսֆահան տանող ճանապարհը և այլն։

Իրանի հարավային շրջանում մեծ ակտիվություն էր հանդես բերում «Լինչ եղբայրների» ընկերությունը, որն, ինչպես Հոսեյն Սաադաթ Նուրին է գրում, Նասր էդ Դին շահի որդի Զել էս Սուլթանին նվիրված իր գրքում, «Տարիներ շարունակ առևտրական գործունեության պատրվակով երկրի հարավային շրջանները կողոպուտի էր ենթարկում և տարբեր առիթներով օգտագործում էր իր ազդեցությունը և միջամտում կառավարական հիմնարկների գործերին»[135]։

Այդ նույն ընկերությունն էր, որ 1898 թվականին իրա-

---

133 Նույն տեղում, էջ 1229։

134 Նույն տեղում, էջ 1234։

135 حسین سعادت نوری، ظل السلطان، تهران ۱۳۴۸، جلد اول، صفحه ۱۹۸

Լինչը դեռևս երիտասարդ ժամանակներից մեծ եռանդ էր երևան բերում Իրանում անգլիական ազդեցությունը և տիրապետությունը ընդարձակելու ուղղությամբ։ Նույն տեղում, էջ 246։

վունք ձեռք բերեց կառուցել և վերահսկել Ահվազից Էսֆահան և Շուշթարից Էսֆահան տանող ճանապարհները։

Ճանապարհների կառուցման և վերահսկման բնագավառներում, հատկապես, լայն գործունեություն ծավալեց ցարական Ռուսաստանը։ Թեյմուրին գրում է. «Ցարական Ռուսաստանի ներկայացուցիչներն երկաթուղիներ ու խճուղիներ կառուցելու, հանքեր շահագործելու, գործարաններ կառուցելու մեծ թվով կոնցեսիաներ են ձեռք բերել։ Այսպիսի դեպքերում ցարական կառավարությունը միշտ ռազմական, տնտեսական կամ հատուկ քաղաքական նպատակներ է ունեցել և երբեք իրանական ժողովրդի նվազագույն շահն անգամ հաշվի չի առել»[136]։ Հեղինակի կարծիքով, տարիներ շարունակ ցարական կառավարության ուշադրության կենտրոնում էր ճանապարհների և երկաթգծերի կառուցման հարցը, որը պետք է հեշտացնել փոխադրումները հյուսիսային Իրանում և նպաստեր ցարական տնտեսական ու քաղաքական ազդեցության ուժեղացմանը։ Իրանում Ռուսաստանի առևտուրն ընդարձակելու և տարբեր քաղաքներում ռուսական ապրանքներ վաճառելու կարևորագույն միջոցներից էր այդ քաղաքները միմյանց կապող ճանապարհների կառուցումը։ Այսպիսով, իր քաղաքական և ռազմա-ստրատեգիական պլաններից ելնելով ցարական կառավարությունը հատուկ ուշադրություն էր դարձնում այդ հարցին։

Երկաթուղիներ և ճանապարհներ կառուցելու կոնցեսիաներ ձեռք բերելիս ևս ի հայտ էր գալիս Անգլիայի և ցարական Ռուսաստանի մրցակցությունը։ Երբ ռուսները ձեռնամուխ էին լինում որևէ ճանապարհի կառուցման, հանդիպում էին անգլիացիների դիմադրությանը, և ընդհակառակը, երբ անգլիացիները հարավում պատրաստվում էին որևէ ճանապարհ կառուցել, ռուսները դեմ էին դուրս գալիս։ Իրանական կառավարությունն էլ թե՛ տնտեսական անկարողության և թե՛ քաղաքական նկատառումներով, վախենալով, որ ճանապարհների կառուցումը հյուսիսում կամ հարավում կարող էր հակասել երկու մրցակիցներից որևէ մեկի շահերին, այդ հարցին ուշադրություն չէր դարձնում[137]։

---

136 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۲۴۱

137 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۳۵۱

Երբ անգլիական իմպերիալիստները պայքար սկսեցին Քարուն գետի նավարկության իրավունքը ձեռք բերելու համար, ռուսական դիմադրությունը մեղմացնելու նպատակով իրանական կառավարությունը որոշեց Ադրբեջանում խճուղիներ կառուցելու իրավունք տալ իրանական և օտարերկրյա հպատակներից կազմված մի որևէ ընկերության, որի կազմակերպման արտոնությունը վստահվեց Ամիր Նեզամին: Այդ ընկերությանը տրված կոնցեսիայի ժամկետը 99 տարի էր: Նրան էր հանձնվում նաև Ջուլֆայից Արաքս գետի ափերը ճանապարհ կառուցելու իրավունքը: Այդ ընկերությանը թույլատրվում էր Ադրբեջանի տարբեր վայրերում կառուցել նաև շաքարի, մոմի, ապակու և թղթի գործարաններ: Թավրիզից Ղազվին տանող ճանապարհի կառուցումը կազմակերպելու ուղղությամբ ընկերության ջանքերը որևէ արդյունքի չհասան, և իրանական կառավարությունն այդ գործի արտոնությունը տվեց ռուսական բանկին:

Նասր էդ Դին շահի Եվրոպա կատարած երրորդ ճանապարհորդությունից հետո, բանակցություններ տեղի ունեցան իրանական կառավարության և ցարական դեսպանության միջև, որի հետևանքով 1891 թվականին ռուս կապիտալիստ Պոլյակովը ստացավ Իրանի տրանսպորտի կոնցեսիան՝ 75 տարի ժամկետով: Կոնցեսիան իր տնօրինության տակ էր վերցնում ամբողջ Իրանի տրանսպորտը: Նրան պետք է ենթարկվեին նաև կապի հիմնարկները:

Կոնցեսիոն այդ պայմանագիրը բաղկացած էր 12 հոդվածներից: Նրա կենտրոնական գրասենյակը գտնվում էր Թեհրանում, բայց նա կարող էր մասնաճյուղեր հիմնադրել երկրի բոլոր ծայրամասերում:

Սպահովության հարցի շուրջը համաձայնության չհանգելու պատճառով Պոլյակովի այս կոնցեսիան, նույնպես, չիրականացավ: Բայց, հետագայում, ճանապարհների կառուցման համար ռուսական և իրանական կապիտալիստներից մի ընկերություն ստեղծվեց, որին թույլատրվեց, հատկապես Ռաշտից Ղազվին, Ղազվինից Թեհրան, Ղազվինից Համադան տանող խճուղիների կառուցումը, ինչպես նաև Էնզելի ծովածոցի մաքրման և խորացման աշխատանքների իրականացումը: Թեյմուրին գրում է, որ տարիներ առաջ ցարական

կառավարությունը ճնշում էր գործադրում իրանական կառավարության վրա, որպեսզի Ռաշտից Թեհրան տանող ճանապարհի կառուցման իրավունքը տրվի ռուսական ընկերությանը: Իրանական կառավարությունը խուսափում էր այդ ճանապարհը ամբողջովին ռուսների տրամադրության տակ դնել, բայց ցարական դեսպանության և Ամին էս Սոլթանի միջև մղված բանակցություններից հետո որոշվեց այդ իրավունքը տալ իրանական և ռուսական կապիտալից կազմված խառն ընկերությանը[138]:

Աղբյուրները վկայում են, որ ռուս-իրանական սահմանից մինչև Թեհրան տանող ճանապարհի կառուցումը երկար ժամանակ ցարական կառավարության ուշադրության կենտրոնում էր: Այդ կապակցությամբ տարբեր մարդկանց արտոնություններ էին տրվել, բայց դրանցից ոչ մեկը չէր իրականացել: «Եվ ահա միայն Հ. 1319 թվականին էր,— գրում է Թեյմուրին,— երբ իրանական կառավարությունն երկրորդ անգամ իր մուրացիկ ձեռքը երկարեց ցարական Ռուսաստանից պարտք վերցնելու, ռուսներն առիթն օգտագործելով, իրանական կառավարությանը մի շարք առաջարկություններ արեցին, այդ թվում և պահանջեցին Թավրիզից Թեհրան տանող ճանապարհի կառուցման կոնցեսիայի հանձնումը Ռուսական բանկին»[139]:

Ռուսական ընկերություններն արտոնություններ ստացան նաև մի շարք այլ խճուղիների կառուցման համար, ինչպես օրինակ՝ Էնզելի—Թեհրան, Համադան—Աստարա—Արդաբիլ և այլն:

Ցարական ընկերությունների կողմից կառուցվող ճանապարհները գնալով ընդարձակվում էին:

Միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո՝ 1921 թվականին, կնքված սովետա-իրանական պայմանագրով, սովետական կառավարությունը հրաժարվեց Իրանում ցարական Ռուսաստանի ունեցած բոլոր մենաշնորհներից, այդ թվում նաև Ռուսաստանի կողմից կառուցված Էնզելի—Թեհրան, Ղազվին—Համադան, Ջուլֆա—Թավրիզ խճուղիներից, Ջուլֆա—Թավրիզ և Սոֆիան—

---

138 Նույն տեղում, էջ 353:

139 Նույն տեղում, էջ 357:

Ուրմիո լիճ երկաթգծից՝ իրենց բոլոր շինություններով, շոգեքարշերով, վագոններով և բնակարաններով հանդերձ: Անվերադարձ կերպով իրանական ժողովրդին տրվեցին Ուրմիո լճի նավահանգիստները, շոգենավերը, նավակները, նրանց պատկանող բոլոր շինությունները, ինչպես նաև էնզելիի նավահանգիստն իր ապրանքային շտեմարաններով, էլեկտրակայանով և այլ շենքերով:

*

* *

Պարսից ծոցում և ընդհանրապես հարավային Իրանում իրենց տիրապետությունը հաստատելու համար անգլիական իմպերիալիստները հատուկ ուշադրություն էին դարձնում նաև Քարուն գետում ազատ նավարկության իրավունք ձեռք բերելու հարցին: Դա հնարավորություն կտար անգլիական իմպերիալիստներին խորանալ երկրի ներսը և է՛լ ավելի ընդարձակել իրենց տնտեսական ազդեցությունը հարավային Իրանում:

Քարուն գետում անգլիական նավերի ազատ նավարկության հարցը նույնպես երկար պատմություն ունի: Միանգամայն ճիշտ է նշում Էբրահիմ Թեյմուրին, որ Քարուն գետին տիրելը, բացի այն, որ կընդարձակեր անգլիացիների քաղաքական ազդեցությունը, կուժեղացներ նրանց հսկողությունը հարավային Իրանի տարբեր շրջանների վրա, նաև առևտրական շահերի տեսակետից մեծ նշանակություն կունենար: Օգտագործելով այդ բնական ճանապարհը, անգլիական և հնդկական ապրանքները հեշտությամբ կհասնեին կենտրոնական Իրանի քաղաքները[140]:

Անգլիայի և իրանական կառավարության միջև երկար բանակցություններ էին մղվում Քարուն գետի նավարկության կոնցեսիայի վերաբերյալ: Աղբյուրների վկայությամբ Անգլիան առաջարկում էր Իրանին տալ Հերաթը և դրա դիմաց ստանալ Քարուն գետում ազատ նավարկության իրավունք: Թեյմուրին վկայում է. «Չնայած այն բանին, որ Քարուն գետում նավարկությունը Նասր էդ Դին շահը Հերաթի գրավմանը համարժեք էր համարում, մի քանի տարի հետո

---

140 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۱۵۱

այն ձրի և ավելի վնասաբեր հետևանքներով հանձնեց անգլիացիներին»[141]։ Իրանական կառավարությունը շատ լավ գիտեր, որ եթե Քարուն գետի նավարկության իրավունքը տրվեր անգլիացիներին, ռուսները նույնպես ավելի ծանր պայմաններով նման արտոնություն կպահանջեին հյուսիսային Իրանում։ Թեյմուրին նշում է, որ իրանական կառավարությունը Քարուն գետում ազատ նավարկության իրավունքի հանձնումից խուսափում էր ցարական Ռուսաստանի հակառակության պատճառով, «քանի որ դա թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական տեսակետից մեծ հարված էր իրանում նրանց շահերին»[142]։

Քանի որ իրանական կառավարությունը ռուսական հակառակությունը պատճառաբանելով մերժում էր նրանց այս պահանջը, ապա անգլիացիներն առաջ էին քաշում Քարուն գետը բոլոր երկրների նավարկության համար բաց հայտարարելու նախագիծ, լավ գիտենալով, որ առկա պայմաններում միայն Անգլիան կարող էր լայնորեն օգտվել այդ արտոնությունից։

Իրանի մեծ վեզիրն այդ ժամանակ Միրզա Ասղար խան Ամին էս Սոլթանն էր, որը սերտ հարաբերությունների մեջ էր Անգլիայի հետ և, «ինչպես հայտնի է, ոչինչ չէր ձեռնարկում առանց Վոլֆի հետ խորհրդակցելու»[143]։

Հենց այդ ժամանակ էր, որ Նասր էդ Դին շահը պատրաստվում էր իր երրորդ ճամփորդությանը դեպի Եվրոպա։ Նախքան մեկնելը, սակայն, նա պետք է բավարարեր անգլիական դեսպանի պահանջները և, ամենից առաջ, թույլատար օտարերկրյա նավերի ազատ նավարկությունը Քարուն գետում։ Աղբյուրները վկայում են, որ շահը խիստ վախենում և խուսափում էր այդ քայլին դիմել[144], բայց, վերջապես, չդիմանալով անգլիական դեսպանի ճնշմանը և սպառնալիքներին և ընդառաջելով Ամին էս Սոլթանի ցանկությանը, կարգադրում է խորհրդակցություն գումարել կառավարության և մի շարք այլ գործիչների մասնակցությամբ,

---

141 Նույն տեղում, էջ 152։

142 Նույն տեղում, էջ 168։

143 Նույն տեղում, էջ 165։

144 Նույն տեղում, էջ 166։

ու վճռել այդ հարցը: Մի շարք բանակցություններից հետո, վերջապես, որոշվում է Քարուն գետի նավարկությունն առանց բացառության բոլոր երկրների համար ազատ հայտարարել: Այդ որոշումը կայացվում է 1888 թվականի հոկտեմբերի 30-ին, որի մասին պաշտոնապես հայտնվում է Թեհրանում օտարերկրյա բոլոր ներկայացուցիչներին:

Չնայած այն բանին, որ Քարուն գետի նավարկությունն ազատ հայտարարվեց բոլոր երկրների համար, բայց իրականում, ինչպես արդեն ասվել է, դրանից կարող էին օգտվել միայն անգլիացիները, քանի որ, բացի նավարկության ընդարձակ միջոցներ ունենալուց, Անգլիան տիրում էր Պարսից ծոցում, և այդ շրջանի առևտրի մոնոպոլիան գտնվում էր նրա ձեռքում: Բազմաթիվ անգլիական ընկերություններ, ինչպես օրինակ՝ Զիգլերի, Լինչ եղբայրների և այլն, ընդարձակ առևտուր էին ծավալել այդ շրջանում[145]:

Քարուն գետի ազատ նավարկության շահական ֆիրմանից և Ռուսաստանի խիստ հակառակությունից հետո, Նասր էդ Դին շահը Լոնդոնում իրանական դեսպան Մալքոմին ուղղված նամակում Իրանի նկատմամբ անգլիական և ռուսական քաղաքականության և իր հոգսերի մասին գրում էր. «Իրանի կառավարության վիճակը նման չէ որևէ այլ կառավարության վիճակին: Իրանի կառավարությունը դարձել է Անգլիայի և Ռուսաստանի մրցակցության առարկա: Եթե մեր երկրի շահերից ելնելով որևէ բան ենք ուզում ձեռնարկել երկրի հարավում, ինչպես օրինակ՝ ճանապարհների կառուցում և այլն, ռուսական կառավարությունն ասում է՝ Անգլիայի օգտին եք անում: Օրինակ, այդպես են ասում Քարուն գետի հարցում: Եթե այդպիսի միջոցառումների ենք դիմում Իրանի հյուսիսում, արևմուտքում և արևելքում, անգլիացիներն ասում են՝ ռուսների շահերից ելնելով եք անում: Ինչպես օրինակ՝ Ղուչանի ճանապարհի կառուցման, կամ Կասպից ծովի ափերին, Մահմուդաբադի մոտ, Հաջ Մոհամադ Հասանի ձեռնարկած երկաթգծի կառուցման ժամանակ էին ասում: Մեր գործը դժվարացել է և օրեցօր դժվարանում է: Մնում է, որ Անգլիան ու Ռուսաստանը միանգամից գան և ասեն, որ Իրանն անկախ երկիր չէ...: Ռուսաստանի և Անգլիայի մրցակ-

145 Նույն տեղում, էջ 176:

ցակցությունն այն աստիճանի է հասել, որ, օրինակ, եթե ուզենաք զբոսանքի կամ որսի գնալ երկրի հյուսիսը, արևելքը կամ արևմուտքը, պետք է անգլիական կառավարության հետ խորհրդակցենք, քանի որ այն ռուսական սահմանների կողմն է, կարող է նա ինչ-որ բան մտածել ու նեղանալ: Եթե ցանկանանք հարավ գնալ, պետք է ռուսական կառավարության հետ խորհրդակցենք»[146]:

Այնուամենայնիվ, Քարուն գետի նավարկության իրավունքի հանձնումն անգլիացիներին մեծ դավաճանություն էր Իրանի իշխող շրջանների կողմից:

Միանգամայն ճիշտ է Մահմուդ Մահմուդը, ասելով, որ «Եթե գնահատենք կարճ ժամանակամիջոցում անգլիացիներին տրված բոլոր կոնցեսիաները, միանգամայն պարզ կդառնա, որ դեպի անգլիացիներն հակված բոլոր մեծ վեզիրների դավաճանությունների շարքում, Աթաբեկի դավաճանությունը ամենամեծն էր»[147]:

Անգլիացիները վաղուց էին ձգտում ներթափանցել դեպի Խուզեստան: Իրենց կողմնակից մեծ վեզիրների օրոք նրանք փորձում էին այդ անել, բայց ռուսների հակառակությունը խանգարում էր:

Սակայն, ինչպես նշում է Մահմուդը, Աթաբեկը այդ խնդիրը լուծեց և Քարուն գետի նավարկության արտոնությունը տրամադրեց Անգլիային: Հայտնի է, որ հետագայում Աթաբեկը հակվեց դեպի ցարական Ռուսաստանը: Մահմուդն այդ կապակցությամբ գրում է. «անգլիացիները Աթաբեկին լավ էին ճանաչում, գիտեին, թե ինչպիսի խոհեմ և հմուտ քաղաքագետ է, և շատ էին ցավում, որ նրան կորցրեցին: Այժմ արդեն բոլոր արտոնությունները տրվում էին ռուսներին»[148]:

* *

Իրանի գաղութացման վճռական գործոն էր նաև օտարերկրացիների ազդեցության տարածումը իրանական բանակի վրա:

---

146 Նույն տեղում, էջ 13—14:

147 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد ششم صفحه ۱۷۹۳

148 Նույն տեղում:

XIX դարի երկրորդ կեսին Իրանում կանոնավոր, կազմակերպված բանակ չկար։ Առանձին ֆեոդալներ ու խաներ ունեին զինված ջոկատներ, որոնք անհրաժեշտության դեպքում տրամադրվում էին կենտրոնական կառավարությանը։ Հատկապես ռուս-պարսկական և հետագայում Հերաթի գրավման համար մղված պատերազմներում ակնհայտորեն բացահայտվեց իրանական բանակի անկարողությունը[149]։

Նասր էդ Դին շահը մտահոգված էր այդ հարցով և մտածում էր ստեղծել ժամանակակից բանակ, թեկուզ միայն իր գահը պաշտպանելու համար։ Եվ ահա, առիթից օգտվելով, ցարական Ռուսաստանը ներխուժեց նաև այդ բնագավառ։ Նախնական համաձայնությամբ 1872 թվականին Թեհրան ժամանեց գնդապետ Դոմանտովիչը, իր հետ բերելով երեք այլ սպաներ և մի շարք աստիճանավորներ։ Շահի խնդրանքով նրանք կազմակերպեցին իրանական կանոնավոր զորամասեր՝ կոզակային գնդերի օրինակով։ Այդ ուժերը շուտով վերածվեցին բրիգադի, իսկ ավելի ուշ՝ դիվիզիայի։

Իրանական, այսպես կոչված, «կոզակային բրիգադի» հրամանատարները պետք է լիներին գնդապետի աստիճան ունեցող ռուս սպաներ։ Այդ բրիգադում ծառայող պարսիկ զինվորները, որոնք մեծ մասամբ հավաքագրվում էին իշխող խավերի զավակներից, ենթարկվում էին իրենցից ավելի ցածր աստիճաններ ունեցող ռուս զինվորականներին։

Բրիգադի ծախսերը հետագայում տարեկան կազմում էին մոտ 900,000 թուման, որը ռուսական վարկատու բանկը տալիս էր բրիգադի ռուս հրամանատարին, որպես մաքսատներից ստացված եկամտի մի մասը։ Բրիգադի զորամասերը կենտրոնացված էին Իրանի տարբեր քաղաքներում։ Բացի

---

149 Ընդհանրապես, կարելի է ասել, որ իրանական բանակը փոքրաթիվ չէր։ XIX դարի երկրորդ կեսին անկանոն հեծելազորը կազմում էր մոտ 150—200 հազար մարդ։ Կառավարությունը, փաստորեն, ի վիճակի չէր հավաքել 80 հազարից ավելի զինվոր, որոնց մարտունակությունը, նաև, շատ թույլ էր։

1870 թ. զորակոչիկների համար հաստատվում է հետևյալ կարգը. այն գյուղերը, որոնք տարեկան 20 թուման հարկ էին վճարում, պետք է հատկացնեին 16 տարեկան հասակ ունեցող մեկ զինվոր։ Զինվորներ էին տրամադրում բոլոր գյուղերը, բացառությամբ մոջթեհիդներին, Շեյխ օլ Իսլամին և պատվո զգիներին պատկանող գյուղերի։

Թեհրանից, նրանք կայազորներ ունեին Թավրիզում, Ռաշտում և Համադանում, իսկ հետագայում նաև Էսֆահանում, Արդաբիլում և Ուրմիայում։

Չնայած բրիգադը կոչվում էր իրանական կոզակային բրիգադ, սակայն միանգամայն հասկանալի է, որ նրա ռուս հրամանատարները ենթարկվում էին ռուսական գլխավոր շտաբին և կատարում նրանց հրամանները։

Իրանական պատմագրությունը քննարկել է նաև կոզակային բրիգադի դերը Իրանը կիսագաղութի վերածելու գործում։

Անդրադառնալով այդ բրիգադի կազմակերպման պատմությանը, Իսա Սադեղը վկայում է, որ սկզբում իրանական կառավարությունը բանակը կարգի բերելու համար ավստրիացի զինվորականներ հրավիրեց։ Սակայն ցարական Ռուսաստանը ճնշում գործադրեց, և կառավարությունը ստիպված եղավ ավստրիացիներին վտարել։ Դրանից հետո, 1879 թ. հրավիրվեցին ռուս սպաները, որոնք կազմակերպեցին կոզակային զորամասը։ Այն իր գոյությունը պահպանեց մինչև 1922 թ. և ամբողջ ժամանակ ապահովում էր ռուսական ազդեցությունն Իրանում[150]։

Այդ հարցն է արծարծում նաև Մահմուդ Մահմուդը։ Նա, մասնավորապես, ռուս սպաների հրամանատարությամբ կոզակային բրիգադի ստեղծումը համարում է Բեռլինի կոնգրեսի արդյունք, քանի որ, ինչպես նշում է, «այդտեղ էր, որ Անգլիան ու Ռուսաստանը համաձայնվեցին, որ Ռուսաստանը հրաժարվի Աֆղանստանից, իսկ Անգլիան չառարկի, որպեսզի ռուս զինվորականները Իրանում կոզակային զորամաս կազմակերպեն։ Սակայն, քանի որ Անգլիան մոտ հարաբերությունների մեջ էր Ավստրիայի հետ, ապա Լորդ Սոլզբերիի և Ավստրիայի պրեմիեր մինիստր ու արտաքին գործերի մինիստր Քոնտ Անդրալիի միջև գաղտնի համաձայնություն կայացվեց, որպեսզի ավստրիացի զինվորականները ուղարկվեն Իրան՝ նոր բանակ կազմակերպելու համար»։ Այնուհետև, հեղինակը գրում է, որ չնայած XIX դարում օտարերկրյա շատ զինվորականներ են Իրան եկել, սակայն միայն ռուս-

150 عیسی صدیق، سیر فرهنگ در ایران و مغرب زمین، تهران ۱۳۳۲ صفحه ۵۷۷

ներն էին, որ Իրանում երկար մնացին և ղեկավարում էին կոզակային բրիգադը, որը գոյություն ունեցավ ավելի քան 40 տարի, և որից «Իրանը և իրանցիները նյութական ու բարոյական մեծ վնասներ կրեցին և անչափ ու անսահման կորուստներ ունեցան»[151]:

Կոզակային բրիգադի դերը ավելի խորն է ուսումնասիրել Էբրահիմ Թեյմուրին: Նա նշում է, որ երբ Իրանում ռուս սպաների հրամանատարությամբ կազմակերպվեց կոզակային բրիգադը՝ ռուսական քաղաքական ներկայացուցիչներն ու հյուպատոսները, դեսպանատան և հյուպատոսությունների պաշտպանության անվան տակ Իրանի տարբեր մասերում մեծ թվով կոզակներ վարձեցին: Դեսպանատունը և հյուպատոսարանները տարիներ շարունակ հայրենիքի դավաճանների և ավազակների ապաստարաններն էին: Սովորաբար, դեսպանատան վարձու անձինք կարող էին ամեն տեսակ արարքներ թույլ տալ և հետո, վտանգի դեպքում, պատսպարվել այդ հիմնարկներում և խուսափել պատժից: Թեյմուրիի վկայությամբ, ցարական ներկայացուցիչները բացահայտ հովանավորում և պաշտպանում էին այդպիսի մարդկանց[152]: Թեյմուրին կոզակային բրիգադի ստեղծումը համարում է ցարական Ռուսաստանին տրված այն արտոնություններից մեկը, որը տարիներ շարունակ պատուհաս դարձավ Իրանի և իրանական ժողովրդի համար: Կոզակների բրիգադն իրականում այն ուժն էր, որն իրականացնում էր ռուսական դեսպանատան և ցարական գործակալների՝ Իրանի դեմ ուղղված դիտավորությունները և տարբեր ձևերով ու եղանակներով միջամտում էր երկրի բոլոր գործերին: Ռուս սպաները չնայած իրանական կառավարության ծառայության մեջ էին համարվում և նրա բյուջեից էին ռոճիկ ստանում, սակայն ուղղակի կամ անուղղակի կերպով ենթարկվում էին կովկասյան հրամանատարությանը[153]:

Այդ մասին նույն կարծիքի է նաև Ալի Ասղար Շամիմը: Նա գրում է, որ 1879 թվականին կազմակերպված կոզակային բրիգադի միջոցով ռուսական զինվորական կցորդները

---

151 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد چهارم صفحه ۹۰۶–۹۰۴

152 ابراهیم تیموری، عصر بی‌خبری... صفحه ۲۴۰

153 Նույն տեղում, էջ 309:

փաստորեն իրենց ենթարկեցին Իրանի պաշտպանական ուժերը։ Այդ բրիգադն աստիճանաբար վերածվեց մի անկախ ուժի, որն «ազդեցիկ միջոց էր բռնապետական ռեժիմի ամրապնդման, ազատասերների ճնշման և կովկասյան հրամանատարության ու ցարական պալատի հրամանները իրագործելու համար»[154]։

Մալեք զադեն նույնպես կոզակային բրիգադի ստեղծումը համարում է ցարական Ռուսաստանի հաջողություններից մեկը, որով նա մեծ չափով ուժեղացրեց իր ազդեցությունն Իրանում։ «Կոզակային բրիգադը,— գրում է նա,— համարվում էր իրանական կառավարության միակ կանոնավոր ուժը և բոլոր կարևորագույն հանձնարարությունները նրան էին տրվում։ Մինչդեռ, քանի որ նրա հրամանատարները ռուս սպաներ էին, ուստի նրանք իրենց կառավարության հրամաններն էին կատարում. և ենթարկվում էին կովկասյան հրամանատարությանը և Թեհրանի դեսպանատանը[155]։

Վերլուծելով կոզակային բրիգադի ամբողջ գործունեությունը, Մալեք զադեն հանգում է այն ճիշտ եզրակացության, որ «նասր էդ Դին շահի խոշորագույն սխալներից մեկը ռուս սպաների հրամանատարության ներքո կոզակային բրիգադի ստեղծումն էր։ Հենց այդ ուժի վրա հենվելով Ռուսաստանն իր ազդեցությունն ուժեղացրեց Իրանում, իսկ հետագայում սահմանադրական հեղափոխությամբ ստեղծված ազգային կառավարությունը տապալվեց հենց այս բրիգադի ձեռքով»[156]։

Սակայն պետք է նշել, որ հեղինակն անտեսում է այն շատ կարևոր մոմենտը, որ ֆեոդալական քայքայված հասարակարգում, որպիսին տիրում էր Իրանում XIX դարի երկրորդ կեսին, շահը և իշխող շրջանները, իրենց գոյությունը պաշտպանելու համար, կարիք ունեին նման մի ուժի։ Այդ բանը դրսևորվեց հատկապես ծխախոտի կոնցեսիայի դեմ ծավալված ժողովրդական շարժման ժամանակ։ Ճիշտ է

---

154 علی اصغر شمیم، ایران در دوره سلطنت قاجار، تهران ۱۳۴۲ صفحه ۱۹۷

155 مهدی ملکزاده، تاریخ انقلاب مشروطیت ایران، تهران صفحه ۱۱۵–۱۱۶

156 Նույն տեղում, էջ 142։

նշում Մահմուդ Մահմուդը, որ 1892 թվականից շահը և մեծ վեզիրն իրենց հույսը կապեցին ռուս սպանների կողմից ղեկավարվող կողակային բրիգադի հետ և սկսեցին ավելի ուժեղացնել այն, չնայած երկրի շահերի տեսակետից դա նույնպես խոշորագույն սխալ էր[157]։

---

157 محمود محمود، تاریخ روابط سیاسی... جلد ششم، صفحه ۱۴۳-

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Աբբաս Միրզա 22
Ադամիաթ Ֆերեյդուն 23, 73, 120, 145
Ազոդ օլ մոլք Նայեբ էս Սալթանե 153
Աթաբեկ 48, 64, 78, 88, 98, 115, 119, 122, 125, 166, 184, 192, 193, 208
Ալա օլ Սալթանե Մոհամեդ Ալիխան 61
Ահմեդ շահ 48
Ամին էդ դոլե 154, 163, 166
Ամին էս Սոլթան 66, 67, 85, 97, 98, 113, 114, 115, 117, 118, 119, 123, 124, 131, 139, 162, 163, 164, 165, 186, 187, 195, 196, 199, 204, 206
Ամին Հոզուր 154
Անդրալի 210
Ասեֆ էդ Դոլե 108
Ատրպետ 41
Աֆշարներ 8
Բրաուն Էդվարդ 102, 107, 180
Գլադստոն 123
Գորչակով 64
Գրեյ Էդվարդ 193
Գրենվիլ 64, 65
Դավոր Ֆիրուզ 22, 23
Դ'Արսի 142
Դոլգոռուկի 91, 117, 118, 154, 155, 157
Դոմանտովիչ 209
Դուլաթաբադի Հաջ Միրզա Յահյա 55, 67, 78, 84, 105, 107, 110, 126, 130, 176, 189
Եգանեգի Էսֆանդիար Բահրամ 37
Զել էս Սոլթան Սուլթան Մասուդ 8, 100, 101, 102, 201
Ջեքա օլ Մոլք Մոհամեդ Հոսեյն 53
Ջիգլեր 207
Էթեմադ էս Սալթանե 5, 6, 7, 8, 64, 153, 154, 155, 179, 189, 191
Էղբաղ օլ Մոլք 154
Էյն էդ Դոլե 78, 100
Թաբրիզի զադե Ջավադ 41
Թեյմուրի Էբրահիմ 10, 11, 14, 52, 54, 56, 57, 61, 64, 65, 66, 118, 131, 138, 146, 147, 148, 149, 155, 157, 158, 161, 162, 166, 170, 178, 179, 182, 183, 187, 188, 195, 196, 197, 199, 202, 204, 205, 206, 211
Լենին 28
Լեսան օլ մոլք 5, 7, 8
Լինչ 207
Կուլիզադե Ջամիլ Մամեդ 28
Կուրոպատկին 35, 36
Հաբիբ օլահ Մոխթարի 12
Հաղայեղ նեգատ Միրզա Ջաֆարխան 6, 8
Հասան Հալաջ 12, 25, 32, 49, 102, 103, 113
Հաքեմ օլ Մամալեք 154

Հեշմաթ էդ Դուլե Համզե Միրզա 94
Հեջազի Մոհամադ 185
Հեսամ էս Սալթանե 94
Հոսեյն Աղա Մահդավի 100
Ղայեմ Մաղամի 93
Ղասեմի Աբոլֆազլ 93, 99, 191
Ղավամ Շիրազի 94, 98, 99
Ղոդսի Հասան Աղամ 184
Մալեք Աբա Աբբաս Միրզա 188
Մալեք զադե Մեհդի 13, 15, 23, 24, 26, 29, 33, 53, 54, 71, 112, 159, 165, 184, 211
Մալքում խան 25, 113, 172
Մահմուդ Մահմուդ 16, 17, 18, 19, 46, 47, 58, 70, 73, 74, 75, 76, 81, 83, 84, 86, 91, 92, 95, 96, 98, 106, 108, 109, 110, 119, 120, 121, 122, 124, 125, 129, 132, 133, 139, 141, 142, 166, 168, 184, 190, 192, 193, 199, 200, 208, 210, 213
Մարքս 31
Մաքքի Հոսեյն 48, 56
Միրզա Թաղի խան Ամիրքաբիր 25, 54, 55, 87, 88, 89, 90, 91, 92, 105, 132
Մոզաֆար էդ Դին շահ 14, 50, 60, 66, 100, 139, 140, 162, 165, 168, 169, 170, 195, 199
Մոխթարի Հաբիբ Օլահ 49, 50
Մոթամեդ Մահմուդ Ֆարհանի 19, 20, 62, 79, 91, 93, 103, 104, 107, 108, 115, 116, 117, 123, 127, 128, 144,
Մոխբեր էդ Դուլե 154
Մոյին օլ Մուլք Հաջ Հոսեյն խան 154
Մոշիր էդ Դուլե 111, 115, 144
Մոսթաշար էդ Դուլե 137
Նաջմ Աբադի 25
Նասր էդ Դին շահ 5, 8, 12, 13, 15, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 65, 66, 67, 82, 83, 88, 89, 93, 95, 97, 101, 105, 112, 113, 114, 116, 117, 118, 119, 131, 132, 133, 134, 136, 137, 139, 140, 147, 149, 150, 154, 155, 161, 168, 169, 177, 182, 183, 184, 185, 186, 187, 188, 191, 193, 201, 203, 205, 207, 209, 212
Նաֆիսի Սայիդ 128, 129
Նիքոլսոն Արթուր 124
Նուրի Հոսեյն Սաադաթ 201
Նուրի Միրզա Աղախան 85, 89, 90, 91, 93, 94, 99, 106
Շահ Սուլթան Հուսեյն 47, 88
Շամիմ Ալի Ասղար 7, 8, 15, 72, 77, 89, 90, 91, 94, 112, 137, 138, 156, 211
Շիրազի Հաջի Իբրահիմ խան 86
Շիրազի Միրզա Սալեհ 22, 135
Չիրոլ 120, 184
Պոլյակով 157, 203
Ջահանգիր Միրզա 8
Ջամալզադե Մոհամեդ Ալի 159
Ջամալ էդ Դին Աֆղանի 6, 25, 67, 68, 133. 135, 136, 137, 170, 190
Ռազի Աբդոլահ 22, 48, 53, 88
Ռալինսոն Հենրի 81
Ռային Իսմայիլ 21, 134, 150, 151
Ռասել Ֆրանկ 124
Ռեզա Ղոլի խան Հեդայաթ 6, 7, 9
Ռեզաշահ 9
Ռեյտեր Ջուլիոս 64, 95, 96, 115, 142, 143, 144, 145, 146, 147, 149, 150, 151, 152, 154, 155, 160, 161, 201
Ռուստամ Միսլ 51
Սադեղ Իսա 89, 132, 210

Սանի էդ Դուլե 5, 58
Սաֆանիա Ռեզա 198
Սաֆավիներ 7
Սեփահսալար 20, 27, 35, 65, 81, 85, 95, 96, 97, 113, 116, 122, 123, 146, 147, 151, 161
Սոլգբերի 123, 210
Վաջիհ Օլահ Միրզա 78
Վիլսոն Առնոլդ 101
Վոլֆ Դորթմունդ 80, 84, 97, 117, 118, 123, 124, 131, 155, 192
Տալբոն 172
Քալանթարի Միրզա Իբրահիմ 93
Քամրուն Միրզա 173
Քաշանի Միրզա Մոհամեդ թաղի Սեփեհր 5
Քասրավի Ահմադ 27, 71
Քերզոն 32, 34, 76, 80, 83, 84, 95, 99, 131, 148
Քերմանի Միրզա Ռեզա 13, 59, 132, 133, 180
Քերմանի Նաղեմ օլ Իսլամ 135, 171, 177
Օզլի Դոր 81
Ֆաթհ Ալի շահ 45, 46, 48, 50, 88, 138
Ֆարահանի Դայեմ Մաղամ 86
Ֆարհադ Միրզա 20
Ֆրեյզեր 45

ՀԱՅԿ.ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԵԳԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Գլուխ առաջին

Իրանի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը XIX դարի երկրորդ կեսին 30

Գլուխ երկրորդ

Իմպերիալիստական Անգլիայի և ցարական Ռուսաստանի քաղաքականությունը Իրանում և անգլո-ռուսական մրցակցությունը . 69

Գլուխ երրորդ

Մոնոպոլիստական կապիտալի ներթափանցումը Իրան . . . 134

ՀԱՄԼԵՏ ՄՆԱՑԱԿԱՆԻ ԵԳԱՆՅԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՈՒԹԱՏԻՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ XIX դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ)

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Ա. Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Նկարիչ
Հ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Գեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱԼՅԱՆ

Տեխնիկական խմբագիր
Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սրբագրիչ
Ջ. Գ. ՆԱԹԱՆՅԱՆ

ИБ 193

ՎՖ 04663 Պատվեր 767 Հրատ 5176 Տպաքանակ 1000

Հանձնված է շարվածքի 19.09 1979 թ.: Ստորագրված է տպագրության. 7.05. 1980 թ.: Տպագրական 13,5 մամուլ. պայման. 11,34 մամուլ, հրատ. 9,96 մամուլ: Հարթ, տառատեսակ «Գրքի սովորական»: Թուղթ № 1 84×108 1/32 գինը 1 ռ. 65 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 19, Բարեկամության 24 գ.
Издательство АН АрмССР. 375019, Ереван, Барекамутян, 24-г.
Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության Էջմիածնի տպարան
Типография Издательства АН Арм. ССР., г. Эчмиадзин

Ա-ii
64091

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220064091